

892.7

7-14

ՀԱՋԱՐ ՈՒ ՄԷԿ ԳԻՂԵՐՆԵՐ

170
171
172
173
174
175
176

ՀԱՋԱՐ ՈՒ ՄԷԿ ԳԻՂԵՐՆԵՐ
ԳԻՂԵՐՆԵՐ
ՄԷԿ
ՀԱՋԱՐ

ՀԱԶԱՐ ՈՒ ՄԷԿ ԳԻՇԵՐՆԵՐ

ԱՐԱՊԱԿԱՆ ՎԷՊԵՐ

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ

Մ. Մ.

ՀԱՏՈՐ ՎԵՑԵՐՈՐԳ

ՏԷՐ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԷ

ՏԻԳՐԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷՆԱՆ

ԶՄԻՒՆԻՄ.

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷՆԱՆ

1871

82-4833

3942

ՀԱԶԱՐ ՈՒ ՄԷԿ ԳԻՇԵՐՆԵՐ

ԱՐԱՊԱԿԱՆ ՎԷՊԵՐ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱԼԻ ՊԱՊԱՅԻ ԵՒ ԳԵՐԻՒ ՄԸ
ՉԵՌՕՔ ՍՊԱՆՆՈՒԱԾ ՔԱՌՍՈՒՆ ԳՈՂԵՐՈՒ

Ձեր վեհափառութեան և քրիստոնեական սահմանադրին մօտ՝ Պարսկաստանի մեկ քաղաքին մէջ, ըստ Շէհերազատ Շահրիարի, երկու հղբարք կային որոց մին Գասիմ և միւսն Ալի Պապա կ'անուանէր։ Որովհետև հօրենական ժառանգութիւնը քիչ էր և հաւասար մաս բաժներ էին, կ'երևէր թէ երկուքնին ալ մի և նոյն նիւթական վիճակն ունէին, սակայն դիպուածն ուրիշ կերպով անօրինեց։

Գասիմ կին մ'առաւ որ՝ իր ամուսնութենէ քիչ ատեն ետքը՝ ժառանգեց ապրանքով լեցուն խանութ մ'աւ մթերանոց մը, հողեր՝ արով քիչէն էրիկը հարուստ դարձաւ և քաղաքին ամենէն ունեւոր վաճառականներէն մէկն եղաւ։

Իսկ Ալի Պապա՝ որ իրեն պէս աղքատ կնկան մը հետ կարգուեր էր, խիստ անշուք տուն մը կը բնակէր և իր բնասիրքը նայելու համար ուրիշ արհեստ չունէր, բայց եթէ մօտակալ անտառէն փայտ կտրել, և երեք էշի վրայ բեռնաւորելով՝ որոնք իրեն ստացուածքն էին, քաղաքը բերել ծախել։

Օր մ'Ալի Պապա անտառն էր և էշերը բեռնաւորելու համար բաւական փայտ կտրեր էր, և խիստ փոշի մը տեսաւ որ դէպ ՚ի վեր կ'ել-

22294-59

նէր, և իր կողմը կգար: Աշագրութեամբ նայեցաւ և ձիւտորներու բազմամթիւ խումբ մը տեսաւ:

Թէև նոյն երկրին մէջ՝ դողեր չկային, սակայն Ալի Պապա մտածեց որ թերևս դողեր են անոնք: Առանց իր էշերուն հողը ամանելու՝ մտածեց իր անձն աղատել: Խոշոր ծառի մը վրայ ելաւ, որոց ձիւղերը բարձր այլ կլորածն ըլլալով՝ և իրարու մօտ՝ պզտիկ միջոցով մ'իրարմէ կը զատուէին: Ալի Պապա նոյն նեղ տեղն ելաւ նստաւ, ասպհով ըլլալով՝ որ առանց տեսնուելու անցնող դարձողը կրնայ տեսնել. իսկ ծառը չորս կողմը բաց ժայռի մ'ուտքն էր, որ ծառէն բարձր և սեպաձև ըլլալուն դադաթն ելնելու ճամբայ մը չունէր:

Ձիւտորներն՝ որ մեծահասակ, զօրաւոր և ամէնքն աղւոր ձիեր ու գէնքեր ունէին, ժայռին մօտ եկան և վար իջան: Ալի Պապա՝ համբերելով տեսաւ որ քառսուն հոգի են. և անոնց կերպարանն ու հագուստէն անկասկած եղաւ որ դողեր են: Իր կասկածն անհիմն չէր. իրօք դողեր էին անոնք, որ առանց մօտակայ կողմերը կողոպտելու, իրենց աւազակութիւնը հեռաւոր տեղեր կ'ընէին և իրենց ժամադրութեան տեղն էր. իսկ երբ անոնց բրածը գիտեց՝ բոլորովին իր կարծիքին մէջ հաստատուեցաւ:

Ամէն մէկ ձիւտոր իր ձիուն սանձը հաննեց, կապեց, վզէն դարիկ պարկ մ'անցուց, զօր գաւակին վրայ գրեր էր, և իր պայուսակն իր շալակն առաւ. պայուսակներէն շատերն այնքան ծանր երեցան Ալի Պապային, որ կարծեց թէ ոսկիով և դրամով լցուած էին:

Անոնց մէջէն ամենէն երեւելին՝ որ դողերուն գլխաւորը կը կարծուէր, միւսներուն պէս պայուսակը կրնալը նետած՝ ժայռին մօտեցաւ, և Ալի Պապային ասպախած ծառին քով եկաւ. յետոյ քանի մը թփերու մէջէն անցնելով՝ յստակ կերպով սա խօսքերն արտասանեց. «Սուսամ (չուշմայ), բացուէ» և Ալի Պապա զանոնք լսեց: Այն ինչ դողերուն գլխաւորն այն խօսքն ըսաւ. որ դուռ մը բացուեցաւ, և իր առջևէն բոլոր մարդիկն անցնելէն և ներս մտնելէն ետ՝ ինքն ալ ներս մտաւ և դուռը դոցուեցաւ:

Գողերն երկար ատեն ժայռին մէջ կեցան, և Ալի Պապա՝ վախնալով որ պրծելու համար իր տեղէն ելնելուն՝ մէկ քանի գող կամ ամէնքը

չլսեն, ստիպուեցաւ ծառին վրայ մնալու և համբերութեամբ սպասելու: Սակայն ներսէն եկաւ վար իջնել, երկու ձի առնուլ, մէկը հեծնել և միւսը սանձէն բռնելով՝ ամանիլ և քաղաքը հասնիլ՝ իր առջևէն երեք էշերն ալ քշելով. բայց ստոյգ չըլլալով այս դէպքին ելից վրայ, ասպհով ճամբան բռնեց մնալու:

Աերջապէս դուռը բացուեցաւ. քառսուն գողերը դուրս ելան, և գլխաւորն որ ամենէն ետքը ներս մտեր էր, այս անգամ ամենէն առաջ ելաւ, և անոնց իր առջևէն անցնիլը տեսնելով՝ Ալի Պապա լսեց որ դուռը դոցել տուաւ՝ այս խօսքերն արտասանելով. «Սուսամ, փախուէ:» Յետոյ ամէն մէկն իր ձիուն դարձաւ, սանձը դրաւ, պայուսակը կապեց և վրան հեծաւ: Երբ գլխաւորը տեսաւ վերջապէս որ ամէնքը ճամբայ ելնելու պատրաստ էին, անոնց գլուխն անցաւ և իրենց եղած կողմէն դարձան:

Ալի Պապա մէկէն ծառէն չիջաւ. ինքն իրեն ըսաւ. «Արեւի էբան մը մտցած ըլլալով՝ նորէն կը դառնան, և այն ատեն կը բռնուիմ:» Առաի աչքով անոնց հետեւեցաւ մինչև որ աներեւոյթ եղան, և աւելի ասպհով ըլլալու համար մէկէն վար չիջաւ: Արովհետև դողապետին խօսքերը մտքը պահեր էր երբ դուռը բանալ դոցել տուաւ, հետաքրքիր եղաւ փորձելու թէ արդեօք նոյն խօսքերն ինքն ալ արտասանելուն՝ նոյն աղիքութիւնը կ'ունենան թէ ոչ: Տունկերուն մէջէն անցաւ և անոնց ծածկած դուռը տեսաւ: Առաջ անցաւ և ըսաւ. «Սուսամ, բացուէ» և անմիջապէս դուռը բացուեցաւ:

Ալի Պապա կը կարծէր թէ մութ ու խաւարին տեղ մը սխաի տեսնէ, սակայն զարմացաւ խիստ լուսաւոր, ընդարձակ, լայն վայր մը գտնելով, որ մարդու ձեռք փորուած էր բարձր կամարածն և ժայռին սարէն լոյս կ'ընդունէր լուսամուտէ մը: Նոյն տեղը տեսաւ շատ մ'ուտելիք, գէզադէզ ասպնաք, մետաքսեայ և գիպակէ կերպաններ, մեծազին գողեր, մանաւանդ ոսկի և արծաթ դրամ, որոնք պարկի կամ կաշիէ քսակներու մէջ գրուած էին իրարու վրայ. այս ամէն բաները նկատելով՝ իրեն այնպէս երեցաւ որ մինակ տարին բով ժողոված չեն անոնք, այլ դարերէ վեր նոյն քարայրն իրարու յաջորդող դողերու

կայանն եղած է :

Ալի Պապա բռնելիք ճամբուն վրայ չվարանկցաւ . քարայրը մտաւ ,
և ներս մանելուն պէս դուռը դոցուեցաւ , բայց հոգ չըբաւ . զայն բա-
նալ տալու գաղտնիքը գիտէր : Արծաթ գրամին շմտեցաւ այլ ոսկիին
որ պարկերու մէջ դրուեր էր : Բաւական վերցուց որպէս զի իր երեք
էշերը կարելի եղածին չափ բեռնաւորէ : Իր էշերն՝ որ ասղիս անդին
ցրուեր էին , ժողվեց և զանոնք ժայռին մտեցնելն եաւ՝ պարկերով
բեռնաւորեց և զանոնք պահելու համար վրան փայտեր դրաւ , այնպէս
որ ոչ ոք կրնար հասնալ : Երբ գործն աւարտեց , դրան առջև եկաւ և
այն ինչ ա խօսքերն արտասանեց «Սուսամ , դոցուէ՞» որ դոցուեցաւ .
որովհետեւ ամէն անգամուն որ ներս մտեր էր դուռը դոցուեր էր ինքն
իրեն և քանի դուրս ելեր բաց մնացեր էր :

Այս ընելն եաւ՝ Ալի Պապա քաղաքը դարձաւ , և իր տունը հաս-
նելով՝ էշերը պղտիկ բակը մացուց և զգուշութեամբ դուռը դոցեց : Ե-
շերուն վրայ դանուած քիչ մը փայտը վար առաւ և ոսկելիք քսակները
տունը տարաւ , իր կնկանն առջև շարեց , որ բազմեցի վրայ նստեր էր :

Իր կինը պարկերը քննեց , և երբ տեսաւ որ ստակով լեցուն են ,
կարծեց թէ էրկիը դողցած է զանոնք , այնպէս որ երբ ամէն պարկե-
րը ներս կրեց՝ կինն ստիպուեցաւ ըսելու . «Ալի Պապա , արդեօք չա-
րութիւն մը գործելու յանդգնեցա՞ր . . . » Ալի Պապա անոր խօսքը
կարեց . «Առութիւն , կինս , ըսաւ , մի շփոթիր . ես դող չեմ , միայն
թէ դողութիւն չհամարուի ինչ որ գողերէն կ'առնունք » Արաս ունե-
ցած ծուռ կարծիքդ պիտի շակեաւ երբ իմ բազըս քեզ պատմեմ :»

Պարկերը պարսեց , և ամէնը մէկ ահագին ոսկիի կոյտ մը եղաւ և
կինը շլացաւ . յետոյ իր արկածին պատմութիւնը պատմեց՝ սկիզբէն
մինչև վերջն , և լինցնելով՝ մանաւորապէս խնդրեց որ գործը դադանի
պահէ :

Այնն՝ իր երկիւղը փարատելով՝ իր էրկան հետ խնդաց իրենց հա-
սած երջանկութեան վրայ , և իր առջև դանուած գրամը մէկիկ մէկիկ
համբել ուզեց :

«Այնս , ըսաւ անոր Ալի Պապա , ըրածդ խելք չէ . ի՞նչ ըսել կ'ու-
զես : Ե՛րբ պիտի կարենաս համբել և լինցնել : Երթամ պիտի փոս մը

փորելու և ոսկին պահելու . պէտք չէ ժամանակ կորսնցնել :

— Աղէկ կ'ըլլայ , վրայ բերաւ կինն , որ գէթ վեր ՚ի վերոյ գիտ-
նանք թէ ո՞րչափ ստակ կայ : Գրացիէն պղտիկ չափ մը պիտի երթամ
առնում , և զայն պիտի չափեմ մինչդեռ դու փոսը պիտի փորես :

— Այն , ըսաւ Ալի Պապա , ընելիքդ օրուտ մը չունի , աւելի ըս-
կընես եթէ այդ գործէն ետ կենաս : Սակայն դարձեալ դու գիտես ,
բայց նայէ որ մարդու բան չըսես :»

Ըսածն ընելու համար Ալի Պապայի կողակիցը դուրս կ'եկնէ , և
Գասիմի տունը կ'երթայ , որ մօտ էր : Գասիմ տունը չէր , և անոր
համար կ'աղաչէ որ իրեն չափ մը փոխ տայ քանի մը վայրկեանի համար :
Գասիմի կինը կը հարցնէ թէ արդեօք մե՞ծ թէ փոքր չափ մը կ'ուզէ ,
և Ալի Պապայի կինն ալ փոքրիկ մը խնդրեց :

«Շատ աղէկ , ըսաւ Գասիմի կողակիցը , քիչ մը սպասէ , հիմակ
պիտի երթամ բերեմ :»

Այնը դնաց , չափը դտաւ և զիմնալով Ալի Պապային աղքատութիւ-
նը , հետաքրքիր եղաւ հասկնալու թէ ի՞նչ տեսակ ցորեն պիտի չափե-
անուի , զրիւին տակ ճարպիկութեամբ մը ճարպ քսեց : Յետոյ դար-
ձաւ , և Ալի Պապային կնկան ներկայելով՝ ներում խնդրեց որ այնչափ
սպասել տուաւ զինքը զրիւը փնտռելու համար :

Ալի Պապային կինը տուն դարձաւ , գրիւն ոսկի կոյտին վրայ դրաւ ,
լեցուց և բազմոցէն քիչ մը հեռու թափեց , և այսպէս լինցուց . դո՛հ
եղաւ բազմութիւնը գրիւ ոսկի գանելուն և էրկանն իմացուց , որ փոսը
փորեր լինցուցեր էր :

Մինչդեռ Ալի Պապան ոսկին կը պահէր հողին տակ , իր կինն իր
ճշտութիւնն ու ժրջանութիւնը ցուցնելու համար Գասիմի կնոջ , գրիւ-
ւը տեղը դարձուց , բայց չէր գիտած որ գրիւին տակն ոսկի մը փա-
կեր էր :

«Սիրելիս , ըսաւ անոր գրիւը տալով , կը նայիս որ գրիւդ երկար
ատեն չպահեցի , շնորհակալ եմ , և ահա քեզի կը դարձնեմ զայն :»

Այն ինչ Ալի Պապային կինն իր կրնակը դարձուց որ Գասիմի կինը
գրիւին տակը քննեց , և անպատում դարմանք զլաց փակած ոսկի մը
տեսնելով : Իսկոյն սիրտը նախանձը պաշարեց :

«Ի՞նչ, ըստ, Ալի Պատան գրիւով ոսկի ունի, բայց այն թշուառականն նուկից գտաւ այնչափ ոսկի :»

Ինչպէս որ ըսինք, Գասիմ եղբայրը տունը չէր, այլ իր խանութն, ուսկից իրկունը պիտի գտնար միայն : Իր կնկան համար սպասած ժամանակը դար մ'երեցաւ, որովհետեւ անհամբեր էր անոր յայտնելու այն լուրն որմէ իրեն չափ պիտի զարմանար և իր էրիկը :

Երբ Գասիմ տուն դարձաւ, «Գասիմ, ըստ անոր կինը, դու կարծես թէ հարուստ ես, կը սխալիս. Ալի Պատան քեզնէ չտիպողանց աւելի է, քեզի պէս իր ոսկին չհամբեր այլ գրիւով կը չափէ :»

Գասիմ այս հանելուկին բացատրութիւնը խնդրեց, և կինը գործը բացատրեց՝ հասկցնելով թէ ի՞նչ վարպետութիւն բանեցուցեր էր այս գիւտն ընելու համար. յետոյ գրիւին յատակը փակած գտած ոսկին անոր ցոյց տուաւ. հին գրամ մ'էր, և անոր վրայ գրուած թագաւորին անունն անձանութ էր :

Գասիմ՝ փոխանակ ուրախանալու իր եղբորն երջանկութեան վրայ՝ յիշերիմ նախանձ մ'զգաց : Գրեթէ առանց քննադատ անցուց բոլոր զիշերը : Հետեւեալ օրը՝ դեռ չլուսցած եղբորը տունը գնաց : Զանի եղբայր չկուցեց, այս անունը մտոցեր էր քանի որ հարուստ որբեակրին հետ ամուսնացեր էր :

«Ալի Պատան, ըստ անոր մօտենալով, կը նայիմ որ գործերդ շատ զաղանի կը սրահես. աղքատ, թշուառ, մտբայիկ մէկը կ'երեւիս և միւս կողմէն ոսկին գրիւով կը չափես :

— Եղբայր իմ, վրայ բերաւ Ալի Պատան, չգիտեմ ի՞նչ ըսել կ'ուզես. խնդրեմ միտքդ բացարձակ յայտնէ :

— Գու չգիտնալու կը զարնես» վրայ բերաւ Գասիմ, և իր կնկանը տուած ոսկին անոր ցոյց տալով, «Ասանկ քանի հատ ունիս, յարեց նա, կինս երեկ գտաւ զանի փակած այն գրիւին յատակը, զոր մեզնէ եկեր փոխ առեր էր քու կինդ :»

Այս խօսքիս վրայ՝ Ալի Պատան հասկցաւ որ Գասիմ և անոր կինն (իր կնկան կամակորութենէն) արդէն իր զաղանիքն ինացեր էին. բայց յիշարմունքն եղեր էր, կարելի չէր զարմաննլ : Իր եղբորն ոչ զարմանք և ոչ ցաւ յայտնելով՝ բանն անոր խոստովանեցաւ, և հասկցուց

թէ ի՞նչ գիպուածով աւաղակներուն քարայրն երևան հաներ է, և առաջարկեց որ՝ եթէ զաղանիքը սրահէ, զանձին մէկ մասն անոր տայ :

«Անշուշտ, վրայ բերաւ Գասիմ վէս կերպով մը. բայց յարեց նա, կ'ուզեմ նաև իմանալ թէ ո՞ր է այն գանձը, նշաններն, և ի՞նչպէս էս ալ կրնամ մտնել անոր մէջ՝ եթէ փափարս բռնէ, եթէ ոչ քեզ ստիպանութեան ձեռքը պիտի տամ : Եթէ մերժես ինդ իրս, ոչ միայն բան մը չես կրնար յուսալ, ձեռք ձղածդ ալ պիտի կորուսես, մինչդեռ ես՝ իմ մտանութեանս իբր վարձք՝ տտակեց մաս մը պիտի ընդունիմ :»

Ալի Պատան իր անուշ բնավորութենէ քան թէ բարբարոս եղբորը լիբը սպառնալիքէն յորդորուեցաւ անոր ամէն բան յայտնելու, նոյն իսկ քարայրին գուռը բանալու ու գոցելու համար գործածած բառերն ալ իմացուց :

Գասիմ աւելի բան չհարցուց Ալի Պատանին. ձղեց գնաց, և որպէս զի անորմէ առաջ զանձին տեղը հասնի, հետեւեալ օրը յուսով լցուած առտու կանուխ ճամբայ ելաւ վեց էշ առնելով հետը մտուկով բեռնաւորուած բոլոր զանձն անոնց մէջ լեցնելու, և եթէ չբաւեն նորէն զառնալու և երկրորդ անգամ լեցնելու մտօք : Ալի Պատանին նշանակած ճամբան կը բռնէ, ժայռին կը մօտենայ և քարայրին նշաններն ու Ալի Պատանին տարտնամ ծառը կը տեսնէ : Գուռը կը փնտռէ կը գտնէ, և զայն բանալու համար սա խօսքերը կ'արտասանէ. «Մուսամ, բացուէ :»

Գուռը կը բացուի, ներս կը մտնէ և շուտ մը կը գոցուի : Քարայրը քննելով՝ յետին ծայր կը զարմանայ Ալի Պատանին սրտմտած հարստութիւններէն աւելի շատ գտնելով, և իր զարմանքը հետզհետէ կ'աւելնայ քանի ամէն բան զատ զատ կը քննէ : Ինքը ճոխութեան սիրահար և կծծի ըլլալուն՝ այսչափ ոսկիով իր աչքերը ճարակելու յօժարակամ պիտի անցնէր բոլոր օրն, եթէ եկած չըլլար զանոնք բառնալու և իր վեց ջորին բեռնաւորելու համար : Աւելցնել կրցածին չափ պարկեր կ'առնու, և երբ դէպ ՚ի գուռը կը գառնայ որ բանայ, միտքն ուրիշ բաներով սրաշարուած ըլլալով քան թէ ինչ որ իրեն կարեւոր էր, պէտք եղած խօսքը կը մոռնայ և Մուսամ ըսելու տեղ, կ'ըսէ. «Գարի, բացուէ» և կը զարմանայ կը մնայ գիտելով որ գուռը գոց կը մնայ : Աւ-

ըիչ ունդերու անուններ կտայ , բայց պէտք եղածը չյիշեր և դուռն ալ չբացուիր :

Գասիմի միտքէն այսպիսի դէպք մը չէր անցներ : Տեսնելով որ մեծ վտանդի մէջ է , սարսափը կ'առնու զինքն , և որչափ որ կը ճգնի Սուսամ բառը միտքը բերելու՝ այնչափ յիշողութիւնը կը շփոթի , և քիչ ատենէն բոլորովին չլսածի պէս այն բառը կը մոռնայ : Այն ժամանակ շաղակն առած պարկերը դետինը կը նետէ , քարայրին մէջ վեր վար կը ստորի արտորնօք , և տեսած բոլոր հարստութիւններն իր աչքին չեն : Թողունք Գասիմն որ իր վիճակն ողբայ , քանի որ արդար հատութեան արժանի չէ :

Ահսօրի մօտ գողերն իրենց քարայրը դարձան , և երբ մօտեցան և ժայռին բոլորտիքը Գասիմի ջորիները տեսան , սանձարձակ յառաջանացան և զանոնք քշեցին , վասն զի Գասիմ զանոնք չէր կապած և թողեր էր որ արածուն , այնպէս որ անտառին այլ և այլ կողմերը ցրուեցան , այնչափ որ քիչ ատենէն բոլորովին անհետ եղան :

Գողերը ջորիներուն խուէն վազելն աւելորդ սեպեցին , այլ իրենց միտքն անոնց տէրը գտնել էր : Մինչդեռ ոմանք ժայռին բոլորտիքը կը դառնան զանի գտնելու , գողապետը միւսներուն հետ վար կ'իջնէ և շիտակ դուռը կ'երթայ՝ սուր ՚ի ձեռին , պէտք եղած խօսքերը կ'արտասանէ և դուռը կը բացուի :

Գասիմ՝ որ քարայրին մէջէն ձիերուն դափրը լսեց , հասկցաւ որ գողերն են եկողներն , և իր մահը դուշակեց : Սակայն վերջին ճիգ մը ընելով անոնց ձեռքէն խոյս տալու միտքը դրաւ , և դուռը բացուելուն դուրս նետուելու պատրաստուեցաւ : Եւ իրօք դուռը բացուելուն՝ Սուսամ բառին վրայ՝ որ յիշողութենէն ելեր էր , դուրս սրացաւ , այնչափ յանկարծուտ , որ գողապետը դետին սապալեց : Սակայն միւս գողերուն ձեռքէն չարժաւ , որ ձեռքերնին սուրը բռնած կեցեր էին և անմիջապէս զանի զարկին սպաննեցին :

Աւաղակներն անմիջապէս քարայրը մտան , իր ջորիները բեռնաւորելու համար Գասիմի առած պարկերը դրան առջև դտան և առին իրենց առջի տեղը դրին , թէև բնաւ չգիտեցին որ Ալի Պասային առածները պակաս են : Գողերն այս դէպքին վրայ խորհուրդ ընելով ,

քաջ իմացան թէ ինչպէս Գասիմ քարայրէն դուրս ելեր էր , սակայն բնաւ չէին կրնար ըմբռնել թէ ինչպէս ներս մտեր է : Անդամ մը մտածեցին որ թերևս ժայռին սարէն իջած ըլլայ , բայց լուսամտան այնքան բարձր էր և սարն անմատչելի գրեհն , ամէնքը խոտտովանեցան որ այս բանս իրենց համար գաղտնիք մ'էր : Իսկ միւս կողմէն բնաւ չէին երևակայեր որ դռնէն մտած ըլլայ , միայն թէ դուռը բանալու գաղտնիքը գիտցած ըլլար : Սակայն ստոյգ էին որ այս գաղտնիքն ոչ ոք կրնար գիտնալ , և այս մասին կը սխալէին , որովհետև չէին գիտեր որ Ալի Պասպա լրտեսելով նոյն գաղտնիքն իմացեր էր :

Սակայն այս դէպքն ինչ կերպով որ պատահած ըլլար , քանի որ իրենց հարստութիւնն սպահովելու հարկ կար , որոշեցին Գասիմի գիտակը չորս կողմ ընել և դրան առջև դնել , քարայրին ներսի դին , այնպէս որ երկու կողմը մէկ կողմէն , և երկուքը միւս կողմէն տեսնուին , որպէս զի եթէ ուրիշ անգամ այսպիսի յանդուութիւն մ'ընող գտնուի , զարհուրի և իր ձեռնարկութենէ ետ կ'ենայ . որոշեցին նաև որ զիտակին գարշահուութիւնը ցրուելէն ետև՝ նորէն քարայրը գան : Այս որոշումն ընելէն ետև՝ զայն ՚ի դորձ դրին , և երբ տեսան որ ուրիշ արդեւ մը չկայ՝ իրենց դուրը բաւ մը գոցեցին , նորէն ձի հեծան և կարաւաններու անցած մեծ ճամբաներ յաճախելու գացին , որպէս զի անոնց վրայ յարձակին և իրենց սովորական աւազակութիւնները շարունակեն :

Սակայն Գասիմի կինը մեծ մտատանջութեան մէջ էր գիտելով որ զիտակը կոխեց և տակաւին էրիկը չէ դարձած : Տաղնապետը Ալի Պասպային տունը գնաց և անոր ըսաւ .

«Տաղրս , անշուշտ գիտես որ Գասիմ եղբայրդ անտառը գնաց և ինչպատճառաւ երթան ալ գիտես : Տակաւին չգարձաւ և ահա մութը կոխեց , կը վախնամ որ զլիսին փորձանք մ'եկած չըլլայ : »

Ալի Պասպա իր եղբօրն ըսած խօսքերէն դուշակեր էր անոր ճամբորդութեան նպատակն , և այս պատճառաւ նոյն օրը չէր ուղած անտառն երթալ որպէս զի անոր կասկած մը չտայ : Ալի Պասպա՝ առանց ծանր խօսք մ'ընելու իր եղբօրը կնկան դէմ , որպէս թէ նա կենդանի ըլլար , մինակ ըսաւ որ պէտք չէ այլայլի , և թէ ըստ երևոյթին Գասիմը

սիմ յարմար դադած է շատ ուշ քաղաքը դառնալ :

Գասիմի կինն ալ այսպէս կարծէր, նա մանաւանդ երբ մտածեց որ քանի՛ կարևոր է որ էրիկն իր ձեռնարկութիւնը գաղտն ու գողի լինեցընէ : Ուստի իր սուներ դարձաւ, և մինչև կէս գիշեր համբերութեամբ անոր սպասեց : Յակոբն նոյն ժամէն ետքն՝ իր հողերն աւելցան, և արտութիւնն այնքան սաստիկ ու բուռն էր որչափ որ չէր կարող բացէ ՚ի բաց յայտնել և սիրտիլ աղաղակներով, քանի որ իր ցաւերուն պատճառը դրացիներէն դաղանի պահելու ստիպուած էր : Այն ստենն եթէ իր սխալմունքն անդարմանելի դառնար, չափազանց պիտի զղջար իր յիմարական հետաքրքրութեան և գատապարտելի նախանձին վրայ, որով իր տաղրին և անոր կնիկանը գործերը թափանցելու ելեր էր : Բոլոր գիշեր լալով անցուց, և երբ լուսցաւ՝ իսկոյն անոնց սուներ վաղեց գնաց և իր երթալուն պատճառն իր արտառ քովը յայտնեց քան խօսքովը :

Ալի Պապա չսպասեց որ իր եղբօրը կինն աղաչէ զինքն որ երթայ նայի թէ Գասիմ ի՞նչ եղեր է, այլ ինքնին անմիջապէս ճամբայ ելաւ երեք էշերովը, յորդորելով իր հարսն որ ցաւը մեղմէ, և անտառը գնաց : Ժայռին մօտենալով՝ չտեսաւ ճամբուն վրայ ոչ եղբայրն և ոչ վեց շորիներն, և զարմացաւ գիտելով դրան առջև թափուած արիւնը, զոր չարագուշակ նշան մը համարեց : Յետոյ դրան առջև եկաւ, խօսքն արտասանեց, դուռը բացուեցաւ և աչքին զարկաւ իր եղբօրը գիակն որ չորս կտոր ըրեր և դրան ետին տեղաւորեր էին : Անմիջապէս իր եղբօրը վերջին պարտաւորութիւնները կատարելու չվարանեցաւ, մտնալով թէ նրչափ քիչ էր անոր եղբայրական սէրը : Գիակին երկու մասերը զատ զատ ծրարներ ըրաւ, իր էշին մէկը բեռնաւորեց և վրան փայտ դրաւ որ ծածկէ : Միւս էշերն ալ օսկիով բեռնաւորեց, դարձեալ վրան փայտ գնելով, և երբ ամէն բան լինուց և հրամայեց որ դոցով զէպ ՚ի քաղաքը դարձաւ. բայց անտառին ծայրը բաւական ժամանակ կեցաւ որ գիշերը քաղաք մտնէ : Ոսկի բեռնաւորած էշերը միայն իր սուներ մնցուց. և թողլով որ կինն անոնց բեռը վար առնու և կապէ, պէտք եղածն ըսաւ քանի մը խօսքով Գասիմի հասած փորձանքին վրայ՝ միւս էշն եղբօրը կնոջ սուներ տարաւ :

Ալի Պապա դուռը զարկաւ, և Մօրկիան բացաւ, այս Մօրկիան ճարպիկ, խոհեմ աղախին մ'էր և ամենէն դժուարին գործերը յաջողցընելու համար հնարքներ գիտէր, և Ալի Պապա ալ անոր հնարագիտութիւնը կը ճանչէր : Երբ գտնիք մտաւ՝ էշին վրայի փայտն ու երկու ծրարը վար առաւ, և Մօրկիան մէկդի քաշելով,

«Մօրկիան, ըսաւ անոր, ամենէն առաջ քեզնէ բան մը կը պահանջեմ, այս անբունարարելի՞ դաղանիք մ'է. պիտի տեսնես թէ նրչափ կարևոր է, թէ քու տիրուհւոյդ և թէ ինձ : Ահա տիրոջ մարմինն այս երկու ծրարներուն մէջն է, պէտք է զանի թողել, որպէս թէ իր բնական մահաւամբ մեռած ըլլայ : Խմացուր տիրուհւոյդ որ իրեն խօսիլ կուզեմ և ուշադիր միտ դիր անոր ըսելիքս :»

Մօրկիան ձայն սուաւ տիրուհւոյն, և Ալի Պապա՝ որ անոր ետեւէն կ'երթար, ներս մտաւ :

«Ըլաւ ուրեմն, տաղրս, հարցուց Գասիմի կինն Ալի Պապային անհամբեր կերպով մը, էրիկէս ի՞նչ լուր ունիս : Երեսիք վրայ միտթարական բան մը չեմ տեսներ :»

— Հարսս, պատասխանեց Ալի Պապա, չեմ կրնար քեզ բան մ'ըսել մինչև որ չխոստանաս թէ առանց բերան բանալու ինձ ականջ պիտի կախես մինչև վերջը : Թէ քեզի և թէ ինձ անհրաժեշտ է որ պատահած բանը խիստ ծածուկ պահես :

— Ահ, գոչեց կինը ձայնը բարձրացնելով, այդ յորդորդ կը յայտնէ ինձ որ էրիկս մեռած է, բայց դարձեալ ըսածդ դաղանի պահելու հարկը կը հասկնամ. պէտք է որ բունի ինքզինքս զսպեմ, խօսէ, մտիկ կ'ընեմ քեզ :»

Ալի Պապա իմացուց իր հարսին իր ճամբորդութեան յաջող ելքը, մինչև Գասիմի գիակին հետ վերադարձը :

«Հարսս, յարեց նա, անտարակոյս քեզի համար այս բանս մեծ ցուտի պատճառ մ'է, նա մանաւանդ որ անոր չէիր սպասեր : Թէ և այս չարիքն անդարմանելի է, եթէ միտթարական բան մը կայ, կ'առաջարկեմ միայն Աստուծոյ ինձ շնորհած քիչ մը հարստութիւնը քու կենիք վրայեղ, քեզի հետ կարգուելով և ապահովելով որ կինս բնաւ պիտի նախանձի այս բանին վրայ և սիրով պիտի ապրիք մէկտեղ : Ե»

Թէ այս առաջարկութիւնս քեզի յարմար թուի՝ պէտքէ այնպէս մը ցոյց տալ որ եղբայրս իր բնական մահովը մեռած է, և այս հոգը միայն Յօրկիանի կրնաս յանձնել, և ես ալ իմ կողմէն ձեռքէս եկածը պիտի ընեմ։»

Գասիմի որբեւորին լուսադոյն ճամբայ չէր կրնար բռնել քան Ալի Պասպային առաջարկածէն, քանի որ իր էրկանը մահուան վրայ անոր ունեցած ստացուածով իրմէ աւելի հարուստը կը գտնէր, և այն դանձր դանկելով աւելի հարուստ կրնար դառնալ։ Ուստի Ալի Պասպային առաջարկութիւնը չմեծեց, մանաւանդ միտիթարութեան առիթ մը սեպեց զայն։ Իր արտաւրը սրբեց զոր առատօրէն թափելու սկսեց էր, իրենց էրիկը կորուսող կանանց յատուկ ողբն ու կոծը գաղբեցոյց, և ասով ըստ բաւականին յայտնեց Ալի Պասպային որ անոր առաջարկութիւնը կ'ընդունի։

Ալի Պասպա՝ Գասիմի որբեւորին այս տրամադրութեան մէջ թողոյց, և Յօրկիանի ապսպրելով որ իր դերը լաւ խաղայ, էշովը տուն դարձաւ։

Յօրկիան բան մը զանց չըրաւ, Ալի Պասպային հետ դուրս ելլաւ և մօտակայ դեղալաճառի մը գնաց, դուռը զարկաւ և բացին, դեղալաճառին կ'ըսէ որ իրեն տեսակ մը դեղ տայ որ շատ օգտակար է վտանգաւոր հիւանդութեանց։ Գեղալաճառը՝ տուած ստակին համեմատ՝ այն դեղէն տուաւ, հարցնելով թէ տունն ո՞ր հիւանդ է։

«Ա՛հ, ըսաւ նա հառաչելով, նոյն իսկ Գասիմն է՝ իմ տէրս։ Ըջիտցուիր թէ ի՞նչ է հիւանդութիւնն, ոչ կը խօսի և ոչ կերակուր կ'ուտէ։»

Այն դեղը կ'առնու Յօրկիան և տուն կը տանի, թէև Գասիմ այն դեղէն պէտք չունէր։

Հետեւեալ օրը նոյն Յօրկիան մի և նոյն դեղալաճառին խանութը կը գայ և արտասուային կը խնդրէ շուր մ'որ միայն հոգեվար հիւանդներու կը տրուի, և եթէ այն շուրն ազգեցութիւն չունենար՝ հիւանդէն ամէն յոյս կը կտրէին։

«Աւա՛ղ, ըսաւ դեղը դեղալաճառին ձեռքէն առնելով, վախճամ որ այս դեղն ալ միւսին պէս օգուտ մը չպիտի ընէ։ Ա՛հ, իմ ամենաբարի

տէրս պիտի կորուսեմ։»

Միւս կողմէն, որովհետև ամէն մարդ Ալի Պասպան և կ'ինքն տեսաւ որ տրտում տխուր Գասիմի տունը կը մանէին կ'ենէին, ոչ որ զարմացաւ երբ երեկոյեան գէմ Գասիմի կնոջ ողբերը լսուեցան, մանաւանդ Յօրկիանի, որ կ'իմայնէր թէ Գասիմ մեռեր է։

Հետեւեալ օրն՝ այն ինչ լուսնալու վրայ էր, Յօրկիան՝ որ դիտէր թէ մօտերս կարուակ մը կար խիստ ծեր որ ամէն օր շատ կանուխ իր խանութը կը բանար, դուրս կ'ենէ և կ'երթայ զանի գտնելու։ Երբ անոր մօտենալով բարի լոյս կ'ըսէ, ոսկի մ'ալ կտայ անոր ձեռքը։ Պասպա Մուստաֆա որ այս անունովն ամենուն ծանօթ էր, և բնականապէս զուարթ, և խնդայնելու համար կատակը պատրաստ ունէր, երբ ոսկին տեսաւ, զայն լաւ մը դիտեց՝ որովհետև զեռ մեծ էր, և երբ ստուգեց որ ոսկի է, «Աղբոր կազանդ չէք մ'է այս, ի՞նչ կայ արդեօք, ահա սրտաբաստ եմ ծառայելու։

— Պասպա Մուստաֆա, ըսաւ անոր Յօրկիան, կարելու համար պէտք եղած բաներդ առ և շուտով ինձի հետ եկուր, բայց օտ սրայ մանաւ որ աչքերդ պիտի կապեմ երբ տեղ մը հաննիք։»

Այս խօսքին վրայ Պասպա Մուստաֆա ծանրէն քաշեց։

«Հօ՛, հօ՛, ըսաւ նա, ուրեմն իմ խղճիս և սրտոյս դէմ բան մ'ընել տալու միտք ունիս։»

Անոր ձեռքն ոսկի մը տալով՝ «Աստուած չընէ, վրայ բերաւ Յօրկիան, որ քեզնէ անպատիւ բան մը սրահանջեմ։ Մինակ եկուր ետեւս և բանէ մը մի վախնար։»

Պասպա Մուստաֆա անոր խօսքին անսաց, և Յօրկիան, որոշած տեղն անոր աչքերը կապելէն ետեւ՝ իր վախճանեալ տիրոջ տունը տարաւ, և անոր աչքին թաշկինակը քակեց այն խուցին մէջ ուր մարմնոյն բոլոր մասերը միացուցեր էր։ Երբ անոր աչքը բացաւ, «Պասպա Մուստաֆա, ըսաւ անոր, ահա սա քանի մը կտոր բաները կարելուդ համար քեզ կանչել տուի։ Թամանակ մ'անցներ, և դործդ աւարտեղէդ ետեւ տրիշ ոսկի մ'ալ պիտի տամ քեզ։»

Երբ Պասպա Մուստաֆա աւարտեց, Յօրկիան նորէն անոր աչքերը կապեց նոյն սենեկին մէջ, և խոստացած երրորդ ոսկին ալ տալէն և

22294-58

դործը դադանի պահելու արարելէն ետե՛ գարձեալ այն տեղը տարաւ ուր աշերը կայեր էր առաջին անգամ տունը բերելու միջոցին . յետոյ թաշկինակը հանեց, զանի ազատ թողուց որ իր տունը դառնայ, մինչև աշքէն հեռանալն անոր ետեւէն զիտեց զազանի որ զինքը զիտելուն համար անոր հետաքրքրութիւնը չշարժէ : Գօրկիան Գասիմի մարմինը լուարու համար ջուր տարջնել տուեր էր . ուստի Ալի Պասպա՛ որ Գօրկիան տուն դառնալուն՝ եկեր էր, մնուելը լուաց, խնկեց և սովորական արարողութեամբ սրասանքեց : Ատաղձազորը զազազը բերաւ , ինչպէս որ Ալի Պասպա կանխաւ ասպարեւր էր :

Որպէս զի ատաղձազորը բան մը չհասկնայ , Գօրկիան զազազը դռնէն առաւ , անոր ստակը վճարեց և Ալի Պասպային օղնեց որ զիտալն անոր մէջ դնէ , և երբ Ալի Պասպա լաւ մը վաշի տախտակները դառնց , Գօրկիան մղկիթը գնաց , որպէս զի իմաց տայ թէ թաղման համար ամէն բան սրատրաստ է : Գղկիթին մարդիկն՝ որ սրաշտոն ունէին մնուելները լուարու , առաջարկեցին որ դան իրենց դործը կատարեն , բայց ըսաւ անոնց որ արդէն մարմինը լուացեր են :

Գօրկիան ՚ի գարձին տուն՝ տեսաւ որ մղկիթին իմասն ու միւս պաշտօնեաներն եկեր են : Գրացիներէն չորս հօղի զազազն ուսերնուն վըրայ առին , և իմասն ետեւէն երթալով , որ աղօթք կ'ընէր , գերեզմաննոցը տարին : Գօրկիան լալով և զլուխը բաց՝ աղիողորմ՝ ձայներ կ'արձակէր իրը վախճանելոյն աղախինը՝ կոծքը կը զարնէր և մաղելը կը փետէր . իսկ Ալի Պասպա ետեւէն կ'երթար ուրիշ գրացիներու հետ՝ որ հետզհետէ կ'երթային զազազն առնլու և տանելու մինչև որ զերեզմանատունը հասան :

Սակայն Գասիմի կինն իր տունը նստաւ , դրացի կանանց հետ՝ ողբ ու կոծ արձակելով , որոնք ըստ սովորութեան թաղման արարողութիւնը տեսնելու համար եկեր էին , և իրենք ալ իրենց ողբը տան տիրութիւն միացնելով՝ բոլոր թաղը արամութեամբ լցին :

Այս կերպով Գասիմի դժոգակ մահը ծածուկ մնաց Ալի Պասպային , կնկանը , Գասիմի որբւարիին և Գօրկիանի մէջ , այնչափ զուշտութեամբ որ քաղքին մէջ ոչ ոք իմացաւ և ոչ իսկ կասկած մ'առաւ :

Գասիմի թաղմանէ երեք չորս օր ետքն՝ Ալի Պասպա ունեցած քանի

77-18303

մը կարասին , դողերու քարայրէն առած ստակով իր եղբորը կնկան տունը փոխադրեց զիշերանց , որպէս զի այն տեղ հաստատուի . և այսպէս ամէն մարդ իմացաւ իր ամուսնութիւնը քննիին հետ : Եւ որովհետև այս տեսակ ամուսնութիւններ սակեց կը սրատահին մեր մէջ , ոչ ոք զարմացաւ :

Իսկ Գասիմի խանութն Ալի Պասպա իր ունեցած մէկ որդւոյն տուաւ , որ արդէն մեծ վաճառականի մը քով աշակերտութիւն ըրած և բարի վարքին համար վկայութիւն ստացեր էր : Այն խանութը տալով ըսաւ նաև որ իր վիճակին յարմար կնկան մը հետ պիտի կարգէ զինքն եթէ խելօք վարուի :

Հինակ թողունք Ալի Պասպան իր նոր բաղդին մէջ , և քառսուն դողերուն վրայ խօսինք : Ասոնք արդէն իրենց որոշած ժամանակին անտառէն քարայրը դարձան , սակայն շատ զարմացան երբ Գասիմի մարմինը չգտան և իրենց զարմանքն աւելցաւ երբ իրենց ոսկէ լի սարկերը նուազած գտան :

«Երեւան ելանք և սլոտի կորսուինք , ըսաւ աւագակապեան , եթէ հող չաանինք , և խախտն ասոր դարման մը չրերենք , անոցայօրէն մեծ աշխատութեամբ մեր և մեր նախնեաց զիգած գանձերը պիտի ձեռքէ հաննք : Այս մտի հասած փնտէն սա միայն կրնանք հետեւցնել որ մեր բռնած գողը քարսոյրին դուռը բանալու զազանիքը զիտէ հողը , և պատեհ ժամուն հասեր ենք՝ անոր մեկնիլն արդիկելու համար : Բայց այն գողը մինակ չէր , նոյն զազանիքն ուրիշ մ'ալ պիտի գիտնայ : Գողին մարմինն առեր տարեր են , մեր գանձէն խորեր են , և ասկից կը հասկցուի որ ուրիշ գառակից մը կայ . և որովհետև հաւանական չէ որ երկու հօղիէ տեւի այս մեր զազանիքը զխոցած ըլլայ , մէկը սպաննելէն ետեւ պէտք է որ միւսին կեանքն ալ վերցընենք : Ինչ կ'ըսէք ասոր , քաջ մարդիկ , միթէ դուք ալ իմ կարծիքէս չէք :»

Գողերու գլխաւորին առաջարկութիւնն իր ընկերներն այնքան բանաւոր գտան , որ ամէնքը հաւանեցան և որոշեցին որ ամէն գործ մէկ զի ձգեն և մի միայն ասոր ետեւէն իյնան զլուխ տանելու համար :

«Այդ միաձայնութիւնը ձեր քաջութիւնէ և արիւթիւնէ կը յուսայի , վրայ բերաւ աւագակապետը . բայց ամէն բանէ առաջ , պէտք է որ

ձեռքէ Զարպիկ , յանդուզն , յաջողակ մէկը քաղաքն երթայ առանց
 դէնքի և օտար ճամբորդի մը հաղուստով և բոլոր իր վարպետութիւնը
 բանեցնէ հասկնալու համար թէ արդեօք ինչպէս որ արժանի էր , մեր
 սպաննած մարդուն վրայ կը խօսին , թէ ո՞վ էր այն և ո՞ր տունը կը
 բնակէր : Ամենէն կարևոր բանն այս է , պէտք չէ որ անխոհեմ կեր-
 սով վարուինք որ ետքէն չզղջանք և չճանչցուինք այնպիսի քաղքի մը
 մէջ ուր երկար ատենէ վեր անձանօթ ենք : Քայց որպէս զի այս բանս
 յանձն առնողը վառուի և չխարուի , ճշմարտի տեղ անհիմն տեղեկու-
 թիւն մը տալով՝ կը հարցնեմ ձեզ թէ արդեօք սրտաշած չէք դատեր որ
 այս սարաղայիս մէջ այն մարդը մահուան դատապարտուի :»

Գողերէն մէկն ուրիշներուն կարծիքին չսպասելով , ըսաւ . «Ես
 պատրաստ եմ այս պաշտօնը վրաս առնլու և իմ կեանքս վտանգի մէջ
 դնելու ինձի փառք կը սեպեմ : Եթէ չյաջողիմ , դո՞նէ պիտի յիշէք որ
 մեր խմբին համար յօժարակամութենէ և արիւթեանէ զուրկ չէի :»

Այս առաջին իր բնկերներուն և զլխաւորին գովասանքը լսելէն
 ետե՛ւ այնպէս մը ծպտեցաւ որ ոչ ոք կրնար հասկնալ թէ ո՞վ է : Իր
 խմբէն զտուրելով՝ դիշեր ատեն մեկնեցաւ և այնպիսի զգուշութիւն-
 ներ ըրաւ որ այն ինչ արեն երևելու ատեն քաղաք մտաւ : Մինչև հրա-
 պարակը գնաց , ուր մինակ խանութ մը բաց տեսաւ , և այս խանութն
 ալ Պապա Մուստաֆայինն էր :

Պապա Մուստաֆա իր աթոռին վրայ նստեր էր ձեռքը հերիւնք
 բռնած՝ և իր դործը սկսելու վրայ էր : Գողն անոր մօտենալով բարձր
 լոյս ըսաւ , և երբ անոր տարիքը դիտեց , «Միամիտ մարդ , ըսաւ ա-
 նոր , շատ կանուխ դործի կ'սկսիս , կարելի բան չէ որ այս տարիքիդ
 մէջ որոշ տեսնես , և եթէ լոյս ալ ըլլար , չեմ կարծեր թէ կարելու
 համար աչքերդ դօրեն :

— Գու ո՞վ որ ես , վրայ բերաւ Պապա Մուստաֆա , կ'երևի թէ իս
 չես ճանչեր : Թէ և ձեր եմ , բայց աչերս լաւ կը տեսնեն , և դու ալ
 ըսածիս պիտի հատարիր եթէ տեսնէիր որ քանի մ'օր առաջ մեռել մը
 կարեցի , թէ և ասկէ աւելի լոյս չկար :»

Գողը շատ ուրախացաւ որ քաղաքը մտնելուն՝ անմիջապէս այնպիսի
 մարդու մը դիմեց որ անդէտս իրեն ուզած տեղեկութիւնները կը հա-

ղորդէր , առանց հարց ու փորձ բնելու :

«Մեռել մը» վրայ բերաւ զարմանօք : Եւ զանի խօսել տալու հա-
 մար , «Կնչու համար մեռել մը կարեցիր , յարեց նա : Կ'երևի թէ բնել
 կուզես որ մեռելին պատանքը կարեցիր : — Աչ , ըսաւ Պապա Մուս-
 տաֆա , ես իմ ըսածս դիտեմ : Միւրքդ լեզու թափել տալէ ինձ , բայց
 բերնէս ուրիշ բան մը չես կրնար առնուլ :»

Գողն աւելի տեղեկութեան պէտք չունէր համոզուելու համար որ
 փնտաւորը դատած է : Ոսկի մը հանեց քսակէն և Պապա Մուստաֆային
 ձեռքը տալով , անոր ըսաւ . «Միւրքս գողանիքդ իմանալ չէ , թէ և
 կրնամ հաւատուի որ եթէ իմացնես անգամ՝ ուրիշին չպիտի յայտնեմ :
 Մինակ կ'աղաչեմ որ ելնես ինձ այն տունը ցոյց տալու շնորհ ընես ուր
 մեռելը կարեցիր : — Եթէ կամք ունենամ անգամ ինդիրդ կատարելու ,
 ըսաւ Պապա Մուստաֆա՝ իր ձեռքը բռնած ոսկին ետ տալու սրտա-
 րատուելով , հաւատի եղիր որ չեմ կրնար յանձն առնուլ , և պէտք
 է որ խօսքիս հաւատ ընծայես : Եւ ահա որա՞ծառ որ սա է . իս առին
 տեղ մը տարին և աչքերս կապեցին , և անկից առին իս և տունն ա-
 ռաջնորդեցին . նոյն տան մէջ իմ դործս լինցնելէն ետե՛ւ նստէն առին իս
 և նոյնպէս կապուած աչերով առջի տեղը բերին : Աստի կը տեսնես
 որ անկարելի է ինձ ինդրածդ կատարել :

— Գո՞նէ դիտես թէ աչքերդ գոց որչափ ճամբայ քալեցիր :
 Խնդրեմ ինձի հետ եկուր . ես ալ քու աչերդ նոյն տեղը պիտի կա-
 պեմ , և միատեղ նոյն փողայներէն պիտի անցնինք որպէս զի պէտք ե-
 դածը յիշես , և որովհետեւ ամէն նեղութիւն իր վարձքն ընդունիլ
 պէտք է , ահա քեզի ուրիշ ոսկի մ'ալ կտամ : Աստի եկուր , և քեզ
 ըրած ինդիրս կատարէ :» Այս ըսելով գողն անոր ձեռքն ուրիշ ոսկի
 մը տուաւ :

Պապա Մուստաֆա այս երկու ոսկիները տեսնելուն չկրցաւ գիմա-
 նալ , երկուքն ալ իր ձեռքին մէջ պահ մը դիտեց առանց բառ մ'ընե-
 լու , և առանձին մտածելով բռնելք ընթացքին վրայ : Աերջապէս
 ծոցէն քսակը հանեց և ոսկիներն անոր մէջ դնելով , «Ձեմ կրնար
 ճշտիւ բնել թէ որչափ ճամբայ կարելուտիս ինձ , բայց որովհետեւ կը
 սնդկես , ելիր երթանք :»

Պատգամաբան ընդ ելաւ, զոգը չամազանց զոհութիւն զցոց և ճերունին առանց խանութը զոցելաւ, քանի որ անոր մէջ մեծ բան մը չունէր կորուսելու, զոգըն հետ գնաց մինչև այն տեղն ուր Յօրկիան իր աչքը կապեր էր: Երբ որոշեալ տեղը հասաւ, «Ահա այս վայրս աչքերս կապեցին, ըսաւ Պատգամաբան, և զիտածիս պէս դարձեր էի:» Գողն որ թաշկինակը սրտաբաստեր էր, աչքերը կապեց, և անոր քովէն քալեց կէս մ'անորմէ առաջնորդուելով կէս մի ալ ինքը քալեցնելով մինչև որ տեղ մը կանկ առաւ:

«Կ'երևի թէ ասկից աւելի հեռուն չգաղինք» ըսաւ Պատգամաբան: Եւ արդարև Գասիմի զբան առջևը կը դանուէր, և այն ատեն նոյն տան մէջ կը բնակէր: Գողը Պատգամաբանին աչքերը չբացած՝ դրան վրայ շուտ մը կախձով նշան մ'ըբաւ, և երբ քակեց հարցոց անոր թէ այն տունն որունն էր: Պատգամաբան ըսաւ անոր որ նոյն թաղը չբնակիր, և այսպէս չէր կրնար անոր ճիշտ տեղեկութիւն մը տալ:

Գողը տեսնելով որ Պատգամաբանին ուրիշ տեղեկութիւն մը չէ կարող ստանալ, շնորհակալ եղաւ անոր որ իրեն համար յոգնեցաւ, և իր խանութն երթալու համար Պատգամաբան թողլէն ետև ինքն անտառին ճամբան բռնեց, հաւատարի ըլլալով որ լաւ ընդունելութիւն մը պիտի գտնէ:

Գողը Պատգամաբանին դատուէին քիչ մ'ետքը՝ Յօրկիան գործի համար Ալի Պատգամաբանին տունէն դուրս ելաւ, և ետ դառնալուն գողին բրած նշանը դրան վրայ տեսաւ. կանկ առաւ աղէկ մը դիտելու, և յետոյ ինքն իրեն ըսաւ. «Այս նշանն ի՞նչ կը նշանակէ, արդեօք մէկը տիրոջս մնան հասցնել կ'ուզէ, և կամ արդեօք կատմի կ'ուզեն ընել: Ի՞նչ զիտանմը որ այս նշանն եղած է, պէտք է զգուշանալ:» Այս բնեղով շտա կտոր մը կախձ կ'առնու, և որովհետև Ալի Պատգամաբանին վերի և վարի կողման գուները նման էին, մի և նոյն կերպով անոնց վրայ նշանը ըբաւ, և տուն մտաւ առանց իր տիրոջ կամ տիրուհւոյն բան մ'ըբելու:

Յակայն գողն որ իր ճամբան կը շարունակէր՝ անտառը հասաւ և կանուխիկի խմբին միացաւ: Երբ հասաւ իր տեղն ուղեորութեանը յա-

ջող ելքը պատմեց չամազանցելով նոյն ուրախութիւնը զոր զպսեր էր իսկոյն մարդու մը հանդիպելուն, որ առանց հարց ու փորձ ընելու իր ուզածն իրեն խնայուցեր էր: Բոլոր գողերն անոր ուշի ուշով մտիկ ըրին, և զլիաւորն անոր արթնութիւնը գովելով ըսաւ ամենուն.

«Ընկերներ, ժամանակ չկորուսենք, զինուած ճամբայ ելնենք, մեր զէնքերը պահելով, և երբ զատ զատ քաղաքը մտնենք իբարու ետևէն, որպէս զի ուրիշներու կասկած չտանք, մեծ հրապարակը գումարուելու խօսքը մէկ ընենք, մինչդեռ ես մեր ընկերին հետ նշանակած տունը պիտի երթամ, քանի որ այսպիսի աղբը լուր մը բերաւ, որպէս զի ես ալ մեր բռնելիք ճամբան որոշեմ գործադրելու համար:»

Աւազակապետին այս առաջարկութիւնն ամենքն ընդունեցան, և ճամբայ ելնելու պատրաստուեցան: Երկերկու երեքական հողի յառաջ անցան, և իրարմէ բաւական հեռու քալելով առանց կասկած մը տալու քաղաքը մտան: Գողապետն ու լրաբերն ամենէն վերջը մնացին: Այս վերջինն Ալի Պատգամաբանին նշանակած տունը տարաւ իր ընկերն, և երբ այն տուներէն մէկուն առջև հասաւ, որոց Յօրկիան նշան դրեր էր, ըսաւ թէ այն տունն է: Բայց առանց կանգ առնելու ճամբանին շարունակելով՝ որպէս զի կասկած չազդեն, գողապետը դիտեց որ միս քովի գուռն ալ նոյն կերպով նշանակած էր, և հարցոց առաջնորդին թէ երկուքէն ո՞րն է: Առաջնորդը շփոթած մնաց և ինչ բնելիքը չգիտէր, նա մանաւանդ երբ տեսաւ որ հետոյհետէ ուրիշ գուներ ալ կախձով նշաններ ունէին: Գողապետին երդմամբ հաւատսեց որ մինակ մէկ գուռ նշանակիր էր: «Չգիտեմ, յարեց նա, թէ ով նոյն ձևով նշաններ ըրեր է միս գուներուն վրայ, և այս շփոթութեան մէջ կը խոստովանիմ որ չգիտեմ թէ ո՞րն է իմ նշանակած գուռն:»

Աւազակապետը տեսնելով որ իր խորհուրդը պարտադ ելաւ, հրապարակը գնաց, և գողերուն մէկուն միջոցաւ միաներուն խնայուց թէ անօգուտ տեղ այս ուղեորութիւնն ըրեր են, և թէ պէտք էր եկած տեղերնին գառնալ: Ուստի ինքը ճամբայ ելաւ առաջ, և միաներն ալ նոյն կարգով անոր հետեւեցան:

Երբ խումբն անտառը ժողովեցաւ, աւազակապետն խնայուց անոնց թէ ի՞նչ պատճառաւ զանոնք ետ դարձուցեր է: Անմիջապէս բոլոր գո-

զերը միտարան վճռեցին որ իրենց առաջնորդը մահուան արժանի է . այս ալ ինքզինքը յանցաւոր դատեց , ըսելով թէ սպարաւոր էր աւելի մեծ զդուշտ թեամբ շարժիլ . ուստի վիպն երկնցոց աներկիւղ զլուխը կտրելու համար ներկայացողին և այսպէս սպաննուեցաւ :

Բայց աւագակներուն սրաշտպանութեան համար իրենց եղած վնասն անսպասիժ լծողու հարկը բլլալով ուրիշ զողմ առաջ անցաւ և ինչգրեւ լով որ ինքը մնանողին սրաշտօնը վրան առնու , խոստացաւ աւելի զգուշութեամբ վարուիլ յաջողելու համար : Այս երկրորդ դոյն ընդունուելով իսկոյն ճամբայ կեցնէ և քաղաքը կգայ , Պապա Մուտաֆան կաշառով կը շահի առաջնոցն պէս , և այս ձերուսին նորէն աչքերը կարած կեցնէ Ալի Պապային տունն անոր կը ցուցնէ : Գողը տան վրայ կարմիր նշան մը կը կընէ այնպիսի տեղ մը որ շտեմուիլ , յուսալով որ ձերմակ նշանէն կ'որոշուի և աւելի գիւրաւ կը գտնէ տունը :

Մակայն քիչ մ'ետքը Մորկիան տունէն դուրս ելաւ , առջի օրուան պէս , և երբ դարձաւ , իր սրտուս աչքէն չվրիպեցաւ կարմիր նշանն : Առջի անգամուան պէս սկսաւ խորհիլ այս դէպքին վրայ , և նորէն մտախայ տուները կարմիր մատիտով նշանակից նոյն տեղերը :

Գողն անտաւը դառնալով իր ընկերներուն մօտ՝ բռնած զգուշաւոր միջոցը յայտնեց , իբր անվրէպ , և յուսար որ այսպէս Ալի Պապային տունը միւսներուն հետ չէր շփոթեր : Գողպպեան ու իր մարդիկն անոր հետ կը կարծեն որ այս անգամ ալ կը յաջողին : Աւստի նոյն կարգով և զգուշութեամբ քաղաք կ'իջնեն , զինեալ , և պէտք եղած հարուածը տալու յուսով , և զողպպեան առաջնորդին հետ Ալի Պապայի փողջը կը զիմէ , սակայն առջի անգամուան պէս մի և նոյն դժուարութեան կը հանդիպին , զողպպեար կը զայրանայ , և առաջնորդն ալ իր նախորդին պէս մեծ շփոթութեան մէջ կ'իջնայ :

Աւստի զողպպեան իր մարդոց հետ նոյն օրը տեղը դառնալու կը ստիպուի առջի օրուան պէս դժգոհ : Առաջնորդը՝ կամուկին յանձն առած գործը չյաջողցնելուն համար սրատիժը կը կրէ :

Աւագակայետը տեսնելով որ իր երկու քաջերը կորոյս , վախցաւ որ այսպէս հետզհետէ ամէնքը շիրտնոյնէ ելնէ գործն անոնց յանձնէ : Անոնց ընթացքէն հասկցաւ որ մինակ առ ու աւար ընելու յաջողակ են

և չէ թէ դժուարին սպարազաներու մէջ ինքնովին շարժելու : Աւստի ինքն անձամբ գործը վրան առաւ , քաղաք լծաւ և Մուտաֆայի օղնութեամբ Ալի Պապային տան առջև դնաց և աւելորդ սեպեց անոր նշան մ'ընելու , այլ լաւ մը գիտեց անոր առջևէն քանի մ'անգամ անցնելով , այնպէս որ չէր կրնար մտնալ :

Գողպպեան իր ուղեորութեան վրայ գոհ անտաւը դարձաւ , և երբ իր խմբին գննուած քարայրը գնաց , Քլ'նկերներ , բաւ անոնց , ալ արդեւք մը չկայ մեզ եղած վնասուց վրէժն առնլու . յանցաւորին տունը ստուգապէս գիտեմ , և սլատեմու սլատրաստ եմ . իսկ ճամբան դպուտտենս մտածեցի թէ ինչ միջոց բանեցնել պէտք է ճարպիկութեամբ յաջողելու և երեան չեցնելու համար , վասն զի մեր նախատակը սխտի բլլայ ճանչցուիլ և մեր գանձը չկորուսել , ապա թէ ոչ այս ձեռնարկութիւնն աւելի դժնդակ կընայ լինիլ մեզ քան օղտակար : Այս նպատակին հասնելու համար ահա առիկ մտածած միջոցս :

Քլմ յատակապիծս ձեզ յայտնեցին ետե՛ կ'ի՞նչ ձեզնէ մէկը լաւազոյն հնար մը գիտէ , կրնայ զայն հաղորդել ինձ : Այն ատեն բացատրեց անոնց թէ ինչ կերպով գործը յառաջ պիտի տանէր , և երբ ամէնքը հաւանութիւն տուին , ապապեց անոնց որ շրջակայ գեղերն ու աւանները ցրուին , և ջորիներ գնեն , տան ինն հատի չափ , նոյնպէս երսուն ութ հատ պղնձէ սափորներ ձէթ գնելու համար , թէ և մէկը լեցուն , միւսները սլարապ պիտի թողու :

Երկու երեք օրուան մէջ զողերն այս ամէնը գնեցին : Արովհետեւ պարսպ սափորներուն բերանը քիչ մը նեղէր , աւագակայետը զանոնք լայնցուց իր խորհուրդն 'ի գործ գնելու համար , և ամէն մէկուն մէջ իր մարդիկներէն մին տեղաւորելէն ետեւ պէտք եղած զէնքերով , կտրած մասերը բաց ձգել տուաւ որպէս զի շունչ առնուն , և այնպէս մը գոցեց որ կարծես թէ եղով լի էին , և որպէս զի բոլորովին իր հնարքը ծածկէ , դրսէն եղով շփել տուաւ լեցուն ամանէն առնլով :

Այսպէս ամէն բան կարգապրեցնէն ետեւ՝ երբ ջորիներն երսուն եօթ զողերով բեռնաւորեցան՝ բաց 'ի գողպպեան , ամէն մէկը սափորի մը մէջ նստելով , նոյնպէս լեցուն ամանով , զողպպեան իբր առաջնորդ այս ջորիներուն գլուխն անցաւ և քաղքին ճամբան բռնեց : Արեւ մտրը

մանեղէն ժամ մ'եւորը քաղաքը հասաւ, ինչպէս որ մատարեր էր : ներս մտաւ և շիտակ Ալի Պապային առնը գնաց, անոր դուռը զարնելու և հիւրընկալութիւն խնդրելու գիտամար : Գուռը զարնելու հարկ չկար, վասն զի Ալի Պապա սեմին վրայ կեցեր ընթրիքէն ետքն օր կ'առնուր : Աւստի ջորիները կեցոց և խօսքն Ալի Պապային ուղղելով, «Տէր իմ, ըսաւ, ինչպէս որ կը տեսնես շատ հեռուէն այս իւղեքով կը գամ որպէս զի վաղը շուկայ տանիմ սպրանքս ծախեմ, իսկ այս ժամուս չգիտեմ ուր պէտք է երթալ իջեանիլ : Եթէ ձեզ ծանրութիւն չըլլար, շնորհ ըրէ տունդ ընդունելու իս որպէս զի այս զիշեր անցընեմ, շատ շնորհակալ պիտի ըլլամ :»

Թէև Ալի Պապան անտառին մէջ իրեն խօսողը տեսեր և մինչև անգամ ձայնը լսեր էր, բայց չէր կրնար ճանչել զինքն այն ձիթավաճառի հազուստովը :

«Բարի առաքեցաք, ըսաւ անոր, ներս մտէք :» Եւ այս խօսքերն ըսելով, անոր ճամբայ բացաւ որպէս զի ջորիներովը ներս մտնէ, ինչպէս որ կ'ըսէր :

Նոյն միջոցին Ալի Պապա զերի մը կանչեց ներսէն և ապաքեց որ ջորիներուն բեռն իջեցնելէն ետև՝ զանոնք ախոռը տանի և յարդ ու զարի տայ : Կնքն անձամբ խոհանոցը գնաց և Վօրկիանին ըսաւ որ նորեկ հիւրին համար անմիջապէս ուտելիք պատրաստէ և սենեկի մը մէջ անկողին մը շինէ :

Այս բաւական չէ, Ալի Պապա իր հիւրը լաւ ընդունելու համար, երբ տեսաւ որ իր հրամանները տեղնիտեղ կատարուեցան, գնաց զանի առաւ և ընդունելութեան սրահն առաջնորդեց, ըսելով որ բնաւ չպիտի թողու որ բակը սրահի : Գողապետը նախ չուղեց ընդունիլ, սա գաղտնի նպատակով որ իր խորհուրդն առելի աղատութեամբ 'ի գործ գնէ, սակայն վերջապէս Ալի Պապային բարեմիտ թախանձանքին զիջաւ :

Ալի Պապա՝ բաւական չտեսեց իր կենաց զաղտնի դաւաճանողին հետ նստիլ, այլև՝ մինչև ճաշին պատրաստութիւնն՝ իր հիւրին հետ շատ մը խնդիրներու վրայ խօսեցաւ : Հաճելք պատճառելու մտօք, և անոր քովէն հեռացաւ միայն երբ ընթրիքն աւարտեց :

«Էլ իմակ քեզ ազատ կը թողում, ըսաւ անոր, ինչ որ պէտք ունիս կրնաս խնդրել, ամէնքը տանս մէջ քեզ ծառայելու պատրաստ են :»

Գողապետն Ալի Պապային հետ ոտք ելաւ, և մինչև գուռն անոր հետեւեցաւ, և մինչդեռ Ալի Պապա խոհանոցը գնաց Վօրկիանի խօսելու, ինքը բակը մտաւ ախոռն երթալու և տեսնելու համար թէ արդեօք ջորիներուն բան մը կը սրահի :

Ալի Պապա Վօրկիանի նորէն պատուէր տուաւ որ հիւրին պէտք եղածը հոգայ և ըսաւ. «Միմայնեմ նաև քեզ որ վաղն առտու կանուխ բաղնիք պիտի երթամ, նայէ որ ձերմակեղէններս պատրաստես և Այտալլահին տաս (այս էր զիբիին անունը), նոյնպէս արգանակ մ'եփես որպէս զի 'ի գարձիս խմեմ :» Այս հրամանները տալէն ետև՝ պատկելու գնաց :

Սակայն գողապետն՝ ախոռէն ելնելուն՝ իր մարդիկներուն գնաց և հասկցոց թէ ինչ պիտի ընեն : Առաջին տափօրէն սկսելով մինչև յետինն՝ ամէն մէկուն ըսաւ. «Երբ պառկած սենեկէս մանր քարեր նետեմ, ձեր ամանէն իսկոյն դուրս ելէք ձեր քովը զանուած զանակով, ես ալ իսկոյն ձեր քովը պիտի գամ :»

Գողապետին յիշած զանակը սրածայր էր և այս պարագայիս յարմար :

Այս պատուէրը տալով ետ դարձաւ, և որովհետև խոհանոցին դրան մօտ եկաւ, Վօրկիան կանթեղն առաւ և հիւրը պատրաստած սենեակը տարաւ : Հարցոց թէ արդեօք բանի մը պէտք ունի, և ապա ձգեց գնաց : Գողապետը կասկած չտալու համար՝ լոյսը մարեց և հազուած պատկեցաւ, որպէս զի առաջին քունն առնէն ետև՝ պատրաստ գտնուի ելնելու :

Վօրկիան Ալի Պապային հրամանը չմոռցաւ, անոր բաղնիքի լաթեքը կը պատրաստէ, Այտալլահին կտայ, և անոր կրակին վրայ կը դնէ որ արգանակն եփէ, այն միջոցին որ արգանակին եփը կ'ենէր՝ լոյսը կը մարի : Տան մէջ եղը հատեր էր, և կանթեղին մէջն ալ չկար, ինչը նեղ պէտք էր : Սակայն լոյս պէտք էր որ կերակուրն եփէ, և այս հոգն Այտալլահին կը յայտնէ :

«Կը նայիմ որ բոլորովին շփոթեր մնացեր ես, ըսաւ անոր Այտալլ-

ըահ : Գնա բալը դրուած մէկ սափորէ քիչ մ'եղ առ բեր և դործդ տես :»

Մօրկիան Ապտալլահին խորհուրդը հաւնեցաւ , և մինչդեռ նա Ալի Պապային սենեկին մօտ խոց մը պառկելու կ'երէնէ որպէս զի առտու հետը բաղնիք երթայ , ինքն եղամանը կ'առնու և բալը կը դիմէ : Իր առջևն ելած առաջին սափորին մօտենալուն՝ անոր մէջ դանուող գողը ցած ձայնով հարցոց . «Ժամանակն է :»

Թէև գողը ցած ձայնով կը խօսէր , Մօրկիան շուտով լսեց անոր ձայնը , վասն զի գողապետը՝ ջորիններուն բեռը վար առնէն ետե՛ ոչ միայն այն սափորը բայց և էր , այլև միւսներն , որպէս զի իր մարդիկներուն հով տայ , բանի որ այն ամաններուն մէջ անհանգիստ էին , թէև շունչ առնու չափ տեղ ունէին :

Եթէ Մօրկիանէն զատ ազախին մ'ըլլար՝ ամանի մը մէջ մարդ մը տեսնելով՝ փոխանակ եղի , անշուշտ վրվուկը կը թողուր և մեծ դժբաղդութեան առիթ կ'ըլլար : Բայց Մօրկիանն իր նմաններուն պէս կնամարդի չէր , իսկոյն հասկցաւ որ պէտք է զազանի պահել այս զէպքն , որպէս զի թէ տիրոջն և թէ իր գանուած վտանգը չաւելցնէ և անոր առաջն առնու անմիջապէս առանց աղմուկ հանելու . ուստի իր խորադիտութեամբն , իսկոյն հնարքը գտաւ : Պահ մը մտածեց , և առանց այլայլելու , գողապետին տեղն անցաւ և գողին հարցման պատասխանեց : «Գեռ ժամանակը չէ , պահակէ մը :» Անոր ետեւէն գանուող սափորին մօտեցաւ և այն հարցումն եղաւ և այսպէս շարունակեց մինչև որ յետին ամանին հասաւ որ եղով լեցուն էր , և մի և նոյն հարցման նոյն պատասխանը կտար :

Մօրկիան իսկոյն հասկցաւ որ իր տերն Ալի Պապան՝ կարծելով թէ եղովաձառի մը հիւրընկալութիւն կ'ընէ , երաւն գողերու մուտ տուեր է տան մէջ , անոնց գողապետն ալ ընդունելով : Իսկոյն իր եղաւ մանր լեցուց եղով խոհանոցը դարձաւ , ուր կանթեղը վտտելէն ետե՛ մեծ կաթնայ մ'առաւ , բալը դարձաւ , եղով լցուց գողերուն ամանէն : Յետոյ խոհանոցը բերաւ , կրակին վրայ գրաւ շատ մը փայտ նետելով տակը , վասն զի որչափ եղը շուտով եռար , այնչափ շուտով պիտի աղատէր բոլոր տունը սպառնացող վտանգէն : Աերջապէս եղը

կ'սկսի եռալ , կաթնան կ'առնու , և կ'երթայ ամէն մէկ սափորին մէջ այն եռացող եղէն բաւական կը թափէ՝ առաջինէն սկսեալ մինչև վերջինն , որպէս զի գողերը խզէ և սպաննէ , ինչպէս որ իրօք մտացոյց :

Այս գործն որ Մօրկիանի քաջութենէ կ'սպասուէր , առանց աղմկի կատարելէն ետե՛ կաթնայով խոհանոցը դարձաւ և դուռը գոցեց : Յետոյ վառած կրակը մարեց , և Ալի Պապային արգանակն եփելու չափ կրակ ձղեց : Աերջը կանթեղը մարեց և լուռ ու մունջ սպասեց , միտքը դնելով չարախիլ , մինչև որ տեսնէ թէ ինչ պիտի պատահի , խոհանոցին մէկ սրտուհանէն դիտելով՝ որ բակին վրայ կը նայէր , որչափ որ գիշերուան մթութեամբ տեսնել կարելի էր :

Մօրկիան քառորդի մը չափ սպասելէն ետե՛ դիտեց որ գողապետն արթնցաւ : Ոտք կ'երէնէ սա , սրտուհանը կը բանայ կը նայի , և որովհետև ոչ լոյս կը տեսնէ տան մէջ և ոչ ձայն կը լսէ , այլ ամէն բան խորին հանդարտութեան մէջ կը գտնէ , նշան կտայ մանր քարեր նետելով՝ որոյմէ շատերը սափորներուն մէջ ընկան , ինչպէս որ ականջին հասած ձայնէն հասկցաւ : Գողապետն ականջ կը կախէ , և գողերուն կողմանէ բան մը չտեսնէր , ոչ ձայն կը լսէ և ոչ շարժում մը կը տեսնէ : Գողապետը կ'սկսի տագնապիլ , երկրորդ և երրորդ անգամ մանր քարեր կը նետէ . սափորներուն վրայ կ'իջնան և սախայն գողերէն և ոչ մին կենդանութեան նշան կտար , և ատոր պատճառը չլինար հասկնալ : Բակը կ'երէնէ տաղնապալի , կարելի եղածին չափ աղմուկ չհանելով . առաջին սափորին կը մօտենայ և երբ գողին հարցում մ'ընելու կը պատրաստուի , կարծելով թէ ողջ է այլ քնացած , տաք եղի հոտ մը կ'առնու որ սափորէն գուրս կ'երէնէր , և ասկից կը հասկնայ որ Ալի Պապային դէմ նիւթած դաւադրութիւնն՝ որով անոր կեանքը պիտի բառնար , տունը պիտի թալլէր , և եթէ հնար ըլլար քարայրէն գողցուած բաները պիտի վերցնէր , ի գերեւ ելած է : Աերջը միւս սափորին և հետցհետէ ամանուն . քովէն կ'անցնի , և կը նայի որ իր մարդիկը մի և նոյն մահուամբ մեռած են . իսկ դիտելով որ իւզալի ամանին եղն ալ պակտեր էր , կը հասկնայ թէ ինչ հնար գործածեր են իր մարդիկները սպաննելու և զինքն անոնց աջակցութենէ զրկելու համար : Իր ձեռնարկութիւնը

արարայ երևելուն վրայ յուսահատ՝ Ալի Պապային պարտիզին դուռը բացաւ, որ բակին վրայ կը նայէր, և պատերէն անցնելով պարտեղէ պարտեղ խոյս տուաւ դնաց :

Երբ Յօրկիան աղմուկ չլսեց և դողապետին գալը չտեսաւ, քիչ մը տանն սպասեց, և խօսիչն հասկցաւ որ դողապետը պարտիզէն խոյս տուած է, փոխանակ տան դռնէն դուրս ելնելու, որ կրկին կըզակով գոցուած էր : Յօրկիան չափազանց ուրախ և զոհ ըլլալով բոլոր անցիկքն ասդահով վիճակի մէջ դնելու յաջողեալուն, զնաց պատկելու և վերջապէս քնացաւ :

Սակայն Ալի Պապա չլուսցած տունէն ելաւ և բաղնիք դնաց՝ իր հետն առնելով իր դերին, և բնաւ չզիտէր թէ քնացած ատենն ինչ զարմանալի դէպք մը պատահեր էր իր տան մէջ, վասն զի Յօրկիան չէր ուզած զանի արթնցնելու, քանի որ այն վերահաս վտանգին մէջ պէտք չէր ժամանակ կորուսել, և աւելորդ համարեր էր իր տիրոջը հանդատութիւնը վրդովել վտանգին առաջն առնելն ետքը :

Երբ Ալի Պապա բաղնիքէն դարձաւ և տուն եկաւ, արեն արդէն ելեր էր, զարմացաւ տեսնելով որ եղի ամանները տակաւին նոյն տեղն են և վաճառականն իր ջորիներուն հետ շուկան չէր իջած, ուստի պատճառը հարցուց Յօրկիանի, որ դուռը բանալու եկեր և ամէն բան մի և նոյն վիճակին մէջ թողեր էր, որպէս զի իր տէրը անտնէ և անոր պահպանութեան համար ըրած բաներն զգալի կերպով բացատրէ :

«Իմ բարի տէրս, ըսաւ Յօրկիան Ալի Պապային պատասխան տալով, Աստուած քեզ երկայն կեանք տայ, նոյնպէս բոլոր ընտանիքիդ : Քեզի ավէն բան ցոյց տալէս ետե՛ւ աւելի լաւ պիտի հասկնաս թէ ինչեր ըրի, խնդրեմ ինձի հետ եկուր :»

Ալի Պապա Յօրկիանի կտեղն դնաց : Երբ դուռը գոցեց, նախ առաջին եղի սափորին քով տարաւ զանի, և ըսաւ. «Նայէ սա ամանին մէջ, նայէ որ ի՞նչ կայ :

Ալի Պապա նայեցաւ, և երբ մէջի մարդը տեսաւ, ետ քաշուեցաւ ահ ու դողով և մեծ աղաղակ մ'արձակեց :

«Բանէ մը մի վախնար, ըսաւ անոր Յօրկիան, մէջի մարդը քեզ չկրնար վառել, արդէն չարիք ըրած է, բայց այսուհետեւ նոյն չարու-

թիւնը կրկնելու անկարող կը դանտի, ոչ քեզի և ոչ ինձի, վասն զի մեռած է :

— Յօրկիան, զօչեց Ալի Պապա, ինչ կը նշանակէ այս ինձի ցոյց տուած մարդդ, խնդրեմ՝ գործը բացատրէ ինձ :

— Ամէն բան պիտի բացատրեմ, ըսաւ Յօրկիան, սակայն չափառութե՛զ զարմանալդ, և զբացինեբուն հետաքրքրու թիւնը մի գողութիւն յայտնելով թէ զիտես այնպիսի բան մը զոր գաղտնի պահելու պարտաւոր ես : Նախ միւս սափորներն ալ աչքէ անցուր :

Ալի Պապա բոլոր միւս սափորներն ալ հետզհետէ աչքէ անցուց, առաջինէն մինչև վերջինն՝ ուր իսկ կար, և այս իսկն ալ բաւական նուազեր էր. ոյս քննութիւնն ընելէն ետե՛ւ գրեթէ անշարժ մնաց, երբեմն ամաններուն վրայ աչք կը նետէր, երբեմն Յօրկիանի կը նայէր առանց խօսք մ'ըսելու, այնչափ մեծ էր իր զարմանքը : Աւերջապէս՝ որպէս թէ լեզուն բացուեցաւ, «Հապա վաճառականը, հարցուց նա, ինչ եղաւ :

— Վաճառականը, պատասխանեց Յօրկիան, ինձի տէ՛ս՝ վաճառական ըլլալու շատ հայ կ'ուզէ : Բայց պատմութիւնը պիտի պատմեմ քեզ երբ խոյր երթաս հանդէս. վասն զի ատեն է՝ քու առողջութեանդ համար՝ որ երթաս արդանակդ ըմբիս բաղնիքէն ելնելէն ետե՛ւ :

Մինչդեռ Ալի Պապա իր խոյր կ'երթար, Յօրկիան խոհանոցը դնաց արդանակը բերելու. երբ մեծարեց, Ալի Պապա ուտելէն առաջ ըսաւ. «Խնդրեմ սկսէ զոհ ընել իմ անհամբերութիւնս, և պատմէ այդ տարօրինակ պատմութիւնն իր բոլոր պարագաներովը :»

Յօրկիան Ալի Պապային հնաղանդելու համար ըսաւ. «Տէր իմ, երէկ իրկուն, երբ քնանալու համար անկողին մտար, ես ալ բաղնիքի լաթերը պատրաստեցի, ինչպէս որ պատուիրեր է իր ինձ, և Ապտալը լահին տուի : Յետոյ կրակ վառեցի որ արդանակն եփեմ, այն միջոցին՝ կանթեղին եղը հատաւ և յանկարճ մարեցաւ, սափորին մէջ կաթիլ մը ձէթ չկար : Քանի մը պատրոյզ վնասեցի և չցտայ : Ապտալահ իմ՝ շիթթութիւնս տեսնելով՝ միտքս ձեզի բակը դանտած եղով ի սափորներն, ինչպէս որ չէր կասկածեր մեզի պէս որ անոնց մէջ ի՞նչ կայ :

Աւստի սափորն առի և դէպ ամենէն մօտ ամանին դիմեցի : Քայց երբ մօտեցայ , անոր մէջէն ձայն մ' ելաւ և հարցուց . Թամանսին է : Ես չլիտցայ , այլ սուտ վաճառականին նենդութիւնը հասկնալով , առանց վարանման պատասխան տուի . Սպասէ , դեռ ասե՛ք ձե : Վերջը միւս ամանին մօտեցայ . ուրիշ ձայն մը նոյն հարցումն ըրաւ , և ես ալ նոյն կերպով պատասխանեցի : Հետո՛հետէ միւս ամաններէն անցայ , և առ մէն անգամուն որ նոյն հարցումը կը լսէի , ես ալ մի և նոյն պատասխանը կտայի , մինակ վերջին ամանին մէջ ձէթ գտայ և սափորս լցի : Երբ անսայ որ երսուն եօթ գող կայ տանդ բակին մէջ , որոնք իրենց զլիստորին հրամանին կ'սպասէին , զոր վաճառական կարծեր էիք , և բոլոր տունն իրար անցուցիր անոր աղէկ ընդունելութիւն մ' ընելու համար , ժամանակ չկորուսի , սափորս խոհանոցը տարի , կանթեղս վառեցի , և ամենէն մեծ կաթնայն սոււլով զայն ձէթով լցի , կրակին վերայ դրի , և երբ լաւ մ' ետաց , առի և դայի՛ ամէն մէկ սափորին մէջ այնչափ երած իւր թափել որչափ որ պէտք էր գողերուն չար խորհուրդն ՚ի դերեւ հանելու համար : Գործն այսպէս խորհածիս պէս կատարելէն ետե՛ նորէն խոհանոցը դարձայ , կանթեղը մարեցի , և պառկելէն առաջ՝ պատուհանէն սկսայ դիտել թէ սուտ վաճառականն ինչ հնար պիտի գործածէ : Քիչ մ' ատենէն ետքը՝ մանր քարերու ձայներ լսեցի , որոնք սափորներուն վրայ կ'իջնային : Երկու երեք անգամ նոյն քարերէն նետեց , բայց ձայն համող կամ շարժում ընող չգտնուելուն , վար իջաւ և տեսայ որ սափորէ սափոր մինչև վերջինը գնաց քննեց , յետոյ դիշերուան մթութեան պատճառաւ զինքն աչքիս առջեւէն կորուսի , պահ մ' ես գիտեցի , և տեսնելով որ ետ չէր դառնար , անտարակոյս պարտիղէն փախած պիտի ըլլայ ըսի , տեսնելով որ գործն անյաջող գնաց : Այսպէս , համոզուելով որ տունը վտանգէ ազատ է , անկողին մտայ : »

Խօսքն աւարտելու ատեն՝ Յօրկիան աւելցուց , «Ահա այս է հարցուցած պատմութիւնդ , և ստոյգ եմ որ այս գէպքը քանի մ' օրէ վեր ըրած դիտողութեանս արդիւնքն է , թէ և այս մասին քեզի բան մը չըսի . վրան զի առտու մը կանուխ քաղքէն դառնալու ատենս դիտեցի որ տան վրայ ձերմակ նշան մը կար , և հետեւեալ օրն ալ կարմիր նշան

մը տեսայ . չկրնայով հասկնալ թէ ինչ մարտի այն նշաններն ըրեր էին , ես ալ նոյն նշաններն ըրեր էի մեր դրացիներուն քանի մը գոնեւրան վրայ թէ վերի և թէ վարի կողմն : Եթէ այս ամէն պարագաները պատահած արեւածներուն միայնես , պիտի տեսնես որ բոլորն ալ անտառին գողերուն կողմէն պատրաստուած բաներ են , թէ և չդիտեմ թէ ինչ պատճառաւ աւազակներուն խմբէն երկու հոգի պակեր են : Կնք և է , հիմակ միայն երեք հոգի մնացած պիտի ըլլան : Ասկից կ'իմացուի որ քու կենացը դէմ դաւաճաներ են , և հարկ է որ զգուշանաս քանի որ այն խմբին մէջէն դեռ ևս մէկ քանի հոգի ողջ կը մնան : Իսկ ես , ամէն ձեռքէս եկածը պիտի ընեմ , ինչպէս որ սրարօքս է , քու կենացը պահպանութեան հսկելու : »

Երբ Յօրկիան խօսքն աւարտեց՝ Ալի Պապա իր աղախնին ունեցած երախտադիտութեամբ վստումով անոր ըսաւ . «Մինչև որ քեզ ըստ արժանոյն չվարձատրեմ չպիտի մոռնիմ , քեզի պարտաւոր եմ կենալս , և իմ երախտադիտութեանս առաջին մէկ նշանը յայտնուելու համար , այժմէն քեզ ազատութիւն կտամ , վերջէն աւելի մեծ վարձք մը տալու խոտանալով : Ես ալ քեզի հետ համոզուած եմ որ քոտտուն գողերը լարած պիտի ըլլան այս որդայիմն . Աստուած քու ձեռքդ ազատեց իս : Յուսամ որ իս միշտ պիտի պաշտպանէ անոնց անզգամութեան , և անոնց փորձանքն իմ զլիսէս հեռացնելով՝ վերջապէս աշխարհս անոնց չար խորհուրդներէն և դարաններէն պիտի ազատէ : Հիմակ ամենէն կարեւորն է մարդկային ազգի այս ժանտախաններուն գիտակները թաղել խիստ ծածուկ կերպով մը , որպէս զի մարդու մը կասկած չտանք , և ահա այս գործիս պիտի աշխատիմ Ապրտալլահին հետ : »

Ալի Պապային սրարտեղն երկուր էր և մեծ ծառերով շրջապատեալ : Առանց ժամանակ անցնելու սոյն ծառերուն տակը գնաց իր դերին հետ և թաղուելիք դիակներուն համար երկար ու լայն փոս մը փորեց : Հողը կակուղ ըլլալուն՝ փորելը դուրին էր , ուստի զայն ըմբոսելու համար շատ ատեն չանցուց : Իսկոյն դիակները սափորներուն մէջէն հանեցին և անոնց զէնքերը մէկըն դրին : Յետոյ սրարտիղին ծայրը տարին մեռելները , փոսին մէջ շարեցին և վրան հող ծածկելէն ետե՛

մնայածը չորս դին սիւնեցին, որպէս զի հողն առաջուան պէս շխտակ երևի: Ալի Պապա եղի ամաններն ու գողերուն զէնքերը խնամօք պահել տուաւ, իսկ ջորիներն՝ յորոց պէտք չունէր, գերիին ձեռօք շուկան դրկեց զատ զատ և ծախեց:

Մինչդեռ Ալի Պապա այս միջոցներն ՚ի գործ կը դնէր որպէս զի հասարակութեան ծածկէ թէ ինչ կիւրացի այնչափ հարստութեան տէր եղեր է, քառասուն գողերուն գլխաւորն անտառը գարձեր էր, սաստիկ վշտացած և յուզուած, կամ լաւ ևս ըսեմ, այնքան շփոթած էր իր լարած որովայնին երևան երևուուն՝ որ քարայրը մտեր էր առանց որոշում մ'ընելու ճամբուն վրայ թէ ինչ հարկ էր ընել կամ չընել Ալի Պապային:

Աւաղակապետն այն քարայրին մէջ խնդրիւքն առանձին գտնելուն տոկաց: Վեհ մարդիկ, ըստ նա, իմ ճգանց, արշաւանաց և աշխատութեանց ընկերներս, ներ էք: Ինչ կրնամ ընել առանց ձեր աջակցութեան: Միթէ այս դժուակ և ձեր արիւթեան անարժան փորձանքին տանելու համար ձեզ դամարեցի և ընտրեցի: Ձեր վրայ այնքան չէի ցաւեր ի թէ թուր ՚ի ձեռքն քաջերու պէս՝ վախճանէիք: Եթէ նորէն ձեզի պէս խումբ մը կազմեմ, և եթէ փորձ փորձեմ, պիտի կարենամ արդեօք, և այսչափ ոսկի, արծաթ և հարստութիւն ճարակ չպիտի թողում այն անձին որ արդէն անոնց մէկ մասով հարստացած է: Պէտք չէ, չեմ կարող այս բանիս մտածել: Ինչ որ ձեր հզօր օգնութեամբն անկարող եղայ ՚ի կատար հանել, ես ինչս պիտի կատարեմ, և երբ այս գանձս առ ու աւարէ ազատ պահելու յաջողիմ, պիտի աշխատիմ նաև որ մեռնելէս ետքն՝ առանց յաջորդի չմնամ, այլ բոլոր հարստութիւնս պահպանուի և օրէ օր աւելնայ:»

Այս որոշումն ընելէն ետև՝ գողապետը զայն գործադրելու համար պէտք եղած միջոցները փնտռեց, և այն աստի լի յուսով և հանդարտ քնացաւ և գրեթէ բաւական հանգիստ անցուց:

Հետեւեալ օրը՝ գողապետն առտու կանուխ արթնցաւ ինչպէս որ առաջագրեր էր, մաքուր զգեստ մը հագաւ իր խորհուրդը գործադրելու դիտմամբ՝ քաղաքն իջաւ, խանի մը մէջ սենեակ մը բռնեց. և կարծելով թէ Ալի Պապային տան մէջ անցած դարձածը մեծ ազմուկ

հասած պիտի ըլլայ՝ դռնապանին հետ խօսք բացաւ և հարցուց թէ ինչնոր բան կայ քաղքին մէջ, և դռնապանն ալ անոր անկալած նիւթէն տարրեր բանի վրայ սկսաւ խօսիլ: Գողապետը մտածեց թէ ինչ պատճառաւ Ալի Պապա գաղտնի կը պահէր գործն, և հասկցաւ որ չէր ուզեր նա մարդու մը յայտնել գանձին ուր ըլլայն ու անոր մէջ մտնելու հնարն, և քաջ գիտէր թէ ասոր համար իր կինաց զէմ դաս լաւանութիւն կ'ընեն: Այս մտածութեան վրայ աւելի ոգի առաւ և միտքը դրաւ իր կողմէն զորով գաղտնի պահելով նպատակին հասնելու:

Գողապետը ձի մը գնեց և անով շատ տեսակ կերպաններ և բարակ կտաններ իր քարայրն առաւ փոխադրեց՝ քանի մ'անգամ անտառէ երթեկելութիւն ընելով, և պէտք եղած զգուշութիւններն առնելով որպէս զի երևան չընէ իր քարայրը՝ սոյն սպառնքը ծախելու համար խանութ մը փնտռեց, զատ մէկ հաս, և զայն վարձու բռնելէն ետև՝ շտկեց և մէջը նստու: Իր վարձած խանութին դիմացը Գասէմի նստած և քանի մ'ատենէ վեր Ալի Պապային որդւոյն բռնած խանութն էր:

Գողապետն որ Հօճաւ Հիւսէյին անունն առեր էր իր նորեկ վաճառականն իր դրացիներն ըստ սովորութեան մեծարեց: Բայց որովհետև Ալի Պապային որդին նորահասակ, վայելչակազմ էր, և ոչ միայն խելք այլև միտնելէն աւելի առիթ ունէր նոր խանութպանին հետ տեսնուելու՝ շուտով անոր հետ բարեկամացաւ: Գողապետն այս բարեկամութիւնը մշակելու աւելի աշխատեցաւ, երբ իր հաստատութենէ քանի մ'օր ետքն՝ Ալի Պապան ճանչեց, որ եկաւ իր որդին տեսնելու, անոր հետ խօսակցելու նստաւ, ինչպէս որ ասան ատեն ընելու սովորութիւն ունէր, և երբ երգիէն խմացաւ, Ալի Պապային մեկնելէն ետև՝ թէ նա իր հայրն էր, զոր ըստ օրէ աւելի տաքցաւ անոր հետ: զանի զրուեց, մանր պարզեւներ տուաւ, և մինչև անդամ զանի ճանչի հրաւիրեց:

Ալի Պապային որդին ալ Հօճաւ Հիւսէյինի փոխարէն մեծարանք ունեց ընել, բայց իր տունը պզտիկ էր և իր փախարին պէս պէտք եղած դիւրութիւնները չունէր անոր հացկերոյթ մը տալու: Իր միտքն Ալի

Պապային խնայույց , և ըսաւ . թէ անվայելուչ բան մը պիտի ըլլայ եթէ
Հօճա Հիւսէյիսի մեծարանայ փոխարէն մեծարանք մը չտայ :

Ալի Պապա յօժարակամ յանձն առաւ հացկերջութ մը տալու : «Որ-
դեակ իմ , բսաւ , վաղը ուրբաթ է , և որովհետեւ Հօճա Հիւսէյիսի և
քեզի պէս մեծ վաճառականներ իրենց խանութը չեն բանար , անոր
հետ կէսօրէն ետեւ ժուռ դալու ելիք և դառնալու ատեն՝ այնպէս մը
բեր որ մեր տունէն անցնես և ներս հրամայես : Այսպէս աւելի յար-
մար կը գտնեմ՝ հրաւիրել քան թէ մեծ պատրաստութիւններ ընելով :
Ես ալ երթամ՝ Վօրկիանի ապսպրեմ որ ընթրիքը պատրաստէ և սեղանը
դնէ : »

Ուրբաթ օր Ալի Պապային որդին և Հօճա Հիւսէյիսի՝ կէսօրէն ետեւ՝
միացան որոշեալ պտոյտն ընելու համար : Ի դարձին Ալի Պապային
որդին իր ընկերը հօրը տունէն անցուց և անոր դրան առջև հաննե-
լով կանկ առաւ և դարնելով ըսաւ . «Այս է իմ հօրս տունն , ըսի
անոր թէ քու բարեկամութեամբդ իս կը պատուես , և ուղեց քեզի
հետ տեսութիւն ընել : Ուստի կ'աղաչեմ այս պատիւը մի մերժեր և
ներս մտիր : »

Թէև Հօճա Հիւսէյիսի իր նպատակին հասեր էր , այսինքն Ալի Պա-
պային տունը մտնել և անոր կեանքը բառնալ , առանց վտանգի մէջ
ընկնելու և աղմկի , սակայն դարձեալ ներում խնդրեց և հրաման ուղեց
հեռանալու , բայց Ալի Պապային դերին արդէն դուռը բացած ըլլա-
լուն , որդին Հօճա Հիւսէյիսի ձեռքէն բռնեց և ինքն առջևէն ներս
մտնելով՝ բարեկամը ներս քաշեց և ստիպեց որ մտնէ իբր ակամայ :

Ալի Պապա Հօճա Հիւսէյիսին ընդունեց անկեղծօրէն և սիրալիբ
կերպով . շնորհակալ եղաւ իր որդւոյն ցոյց տուած բարեսիրութեան
համար և ըսաւ . «Չեղ ունեցած երախտիքն , ինչպէս նաև իմն , այն-
չափ մեծ է , որչափ որ դեռ համբալի պատանի մ'է , և ձեր շնորհիւն
աշխարհս ճանչելու պիտի յաջողի : »

Հօճա Հիւսէյիսի այս քաղաքավար խօսքերուն մարդավարութեամբ
պատասխան տուաւ , ընելով որ՝ եթէ իր որդին տակաւին մէկ քանի
ծերունիներու պէս փորձառութիւն չունի , բայց խելացի է , և այս
խելքն ուրիշ շաղ մը փորձառութիւններու տեղը կրնայ բռնել :

Հօճա Հիւսէյիսի ուրիշ քանի մ'աննշան նիւթերու վրայ խօսակցեւէն
ետեւ՝ հրաման ուղեց երթալու : Ալի Պապա չթողուց և ըսաւ . «Տէր
իմ , ուր պիտի երթաք , խնդրեմ շնորհ ընէք մեզի հետ ընթրելու . ի-
բաւ է որ ձեզի արժանի չէ իմ ընթրիքս , բայց ինչ որ է , յուսամ որ
կ'ընդունիք զայն սիրով , ինչպէս որ սրտագին ձեզի կը հրաւիրեմ : »

— Տէր իմ Ալի Պապա , վրայ բերաւ Հօճա Հիւսէյիսի , հաւաստի
եմ որ անկեղծօրէն կը հրաւիրէք իս , բայց կ'աղաչեմ մի ներանայք թէ
ձեր ընթրիքը կը մերժեմ և կը խնդրեմ որ թողուք իս հեռանալու .
կ'աղաչեմ հաւատացէք որ չէ թէ անքաղաքավարութենէ և արհամար-
հանքէ դրդեալ չեմ ընդունիր հրաւերդ , այլ վասն զի պատճառ մ'ու-
նիմ զոր օրինաւոր պիտի գտնէք եթէ ձեզի յայտնի ըլլայ :

— Եւ ի՞նչ կրնայ ըլլար այդ պատճառը , տէր իմ , վրայ բերաւ Ալի
Պապա , արդեօք կրնամ հարցնել ձեզ : — Արնամ պատճառը յայտնել ,
պատասխանեց Հօճա Հիւսէյիսի , այս է որ աղած միս և խորտիկ չեմ
ուտեր . հիմակ երեակայեցէք թէ ի՞նչ կերպարանք պիտի առնում ձեզի
սեղանակից ըլլալով : — Եթէ միմակ այդ է պատճառը , յարեց Ալի
Պապա , պէտք չէ զրկէ մեզ ձեզի հետ ընթրելու պատիւէն , եթէ
կամք ունիս : Կախ իմ տանս հացին մէջաղ չկայ , իսկ այն կերակուր-
ներն որ ձեզի պիտի մեծարուին՝ աղ չպիտի ունենան , ապահով եղիք
այս մասին , և հիմակ պիտի երթամ խոհարարին պէտք եղածն ապս-
պրելու : Ուստի խնդրեմ մնայէք , քիչ ատենէն պիտի դառնամ գամ : »

Ալի Պապա խոհանոցը դնաց և Վօրկիանին ապսպրեց որ մեծարե-
լիք մտին աղ չզնէ , նոյնպէս նոր խորտիկները շուտով եփէ առանց ա-
ղի հիւրին համար :

Վօրկիան որ կերակուրը պատրաստելու վրայ էր , իր դժգոհութիւ-
նը յայտնեց այս նոր հրամանին վրայ և պատճառ հարցուց Ալի Պա-
պային : «Ո՞վ է այս դէպ մարդն որ աղ չուտեր , ըսաւ Վօրկիան : Ընթ-
րիքը մնալով պիտի համը փակի :

— Մի ներանար , Վօրկիան , վրայ բերաւ Ալի Պապա , բարեւեղ
մարդ մ'է , քեզի ըսածս ըրէ՛ դու : »

Վօրկիան հնազանդեցաւ , և հետաքրքիր եղաւ տեսնելու այն մարդն
որ աղ չէր ուտեր : Երբ կերակուրը պատրաստեց և Ապտալլահ սեղա-

որ գրաւ , սնակնեքը տանելու անոր օգնեց : Կօրկիան տեսնելով Լօճա
 քիւսէյինը դիտեց որ դողապետն է , թէև ծպտեալ էր , և աւելի
 մտադրութեամբ նայելով դաշոյն մը նշմարեց որ հիւրն իր զգեստին
 քիւրքէ պահեր էր : « Ել չեմ զարմանար , ըսաւ ինքն իրեն , թէ ինչն
 համար այս անզգամը տիրոջս հետ աղուտել չուզեր . իր ամենէն սիւն-
 թիւթ շնամին է , զանի սպաննելու միտք ունի , բայց պիտի արդիւրմ : »

Երբ Կօրկիան կերակուրը սեղան դրաւ Ապտալլահի միջոցաւ , ժա-
 մանակ գտաւ՝ մինչդեռ կ'ընթրէին՝ պէտք եղած սրտորաստութիւնները
 տեսնելու յանգուզն խորհուրդ մ'ի դործ դնելու համար . այն ինչ իր
 գործը լինցեր էր , երբ Ապտալլահ եկաւ իմաց տալու որ մրցեղնը
 մեծարելու աստնն է : Կօրկիան միտքը բերաւ , և Ապտալլահ սեղա-
 նին վրայի բաները վերցնելուն՝ զայն մեծարեց : Յետոյ Ալի Պապային
 մօտ փոքրիկ սեղան մը դրաւ և երեք թատով զինին տեղաւորեց . դուրս
 ելնելու ասին Ապտալլահն իր հետը տարաւ , որպէս թէ միասին կե-
 րակուր ուտելու կ'երթան և Ալի Պապային ժամանակ կ'ուզեն տալ ,
 քսպ սովորութեան՝ ազատօրէն իր հիւրին հետ խօսակցելու և զինի
 խմցնելով զուարճանալու :

Այն ատեն սուտ Լօճա Էլուսէյին , կամ աւելի ճիշտ ըսեմ , քառ-
 սան գողերու գլխաւորը կարծեց թէ Ալի Պապան սպաննելու յաջող-
 քամը հասած է : « Էլիմակ , ըսաւ ինքն իրեն , հայրն ու որդին պիտի
 զինով ցնեմ , և որդին՝ որուն կեանքը պիտի բաշխեմ , չպիտի արդիւ-
 ից դաշոյնս հօրը սիրաբ մղելու . և ինչպէս արդէն ըրի՝ պարտիզն
 պիտի փախիմ , այն միջոցին որ խոհարարուհին և դերին տակաւին ի-
 րենց ընթրիքը լինցած պիտի չըլլան , կամ խոհանոցը քնացած պիտի
 ըլլան : »

Կօրկիան ընթրիք ընելու տեղ Լօճա Էլուսէյինի չար խորհուրդն 'ի
 դէրե հանելու մտածեր էր , որովհետև ամէն ինչ դուշակեր էր : Գու-
 րանի մը մարտը հագուստ հագաւ , յարմար գլխանոց մը դրաւ , ոսկե-
 քօճ գօտի մը միջքը կապեց , անկից դաշոյն մը կախեց , որուն կոթն ու
 պատեանը նոյն մետաղէ էր , նոյնպէս դէմքին վրայ աղոր դիմակ մը
 գրաւ : Երբ այնպէս ծպտեցաւ , Ապտալլահ ըսաւ . « Ապտալլահ ,
 թու դափող առ , և երթանք մեր տիրոջ կողնակաւին այս գրօսանքը

տանք , ինչպէս որ ստէպ կասնք իրեն : »

Ապտալլահ գափը ձեռք կ'առնու , կ'սկսի խաղալ , Կօրկիանի առ-
 ջևէն երթալով և սրահ կը մտնէ : Կօրկիան՝ անոր ետևէն մտնելով՝
 խորին յարդանօք կը բարևէ մտախոհ կերպարանք մը ցոյց տալով որ-
 պէս զի իրեն նային , և իր տաղանդը դործածելու հրաման տան :

Երբ Ապտալլահ դիտեց որ Ալի Պապան խօսիլ կ'ուզէր , գափին
 ձայնը դադրեցուց :

« Ներս մտիր , Կօրկիան , ներս մտիր , ըսաւ Ալի Պապա . Լօճա
 Էլուսէյին պիտի անձամբ դաստէ քու տաղանդդ և իր կարծիքը պիտի ը-
 սէ : Գոնէ , տէր իմ , ըսաւ նա Լօճա Էլուսէյինին կողմը դառնալով ,
 մի կարծէք թէ այս զուարճութիւնը ձեզի տալու համար ծախսէ կ'ել-
 նեմ : Իմ տանս մէջի մարդիկ են դուստաններն , և կը տեսնէք որ մէկը
 զերիս է , միւսն ալ իմ խոհարարուհին և սնտեսուհին . յուսամ որ ան-
 ախորժ չէք դտներ : »

Լօճա Էլուսէյին բնաւ չէր յուսար որ Ալի Պապա այս զուարճու-
 թիւնն ալ պիտի աւելցնէ տուած ընթրիքին : Ասկէ վախ մը մտաւ
 սրտին մէջ թէ արդեօք իր խորհուրդն 'ի դործ դնելու յարմար առիթը
 պիտի ձեռքէն երթայ : « Եթէ երբէք այսպիսի ձախտը պարագայ մը
 պատահէր , պիտի մխիթարուիմ , կ'ըսէր , այն յուսով որ նորէն պա-
 տեհ առիթ մը ձեռք կը ձգեմ հօրն ու որդւոյն բարեկամութիւնը մշա-
 կելով : » Այսպէս՝ թէև աւելի գոհ պիտի ըլլար եթէ Ալի Պապա
 այս գրօսանքն իրեն չտար , սակայն գոհութիւն կեղծեց , և ըսաւ թէ
 անոր հաճելի եղած բանը հարկաւ իրեն ալ հաճոյք պիտի պատճառէ :

Երբ Ապտալլահ դիտեց որ Ալի Պապա և Լօճա Էլուսէյին իրենց
 խօսքը դադրեցուցին , իր գափն սկսաւ զարնել և պարելու երգ մը եր-
 դեց . Կօրկիան որ ամենէն ճարպիկ դուստաններէն կը դերազանցէր ,
 զարմանք պատճառելու չափ լաւ կաքաւեց , նոյն իսկ ներկայ գտնուող
 ընկերութենէ տարրեր տեսարանի մ'արժանի կերպով պարեց , թէև
 Լօճա Էլուսէյին թերևս այնչափ ուշադրութիւն չէր ընել անոր :

Մի և նոյն շնորհքով և զօրութեամբ շատ մը պարեր պարելէն ետև՝
 վերջապէս դաշոյնը քաշեց , և ձեռքը բռնելով՝ նոր պար մը խաղաց
 որ բոլորն ալ գերազանցեց , նոր նոր ձևեր թէթև շարժումներ , վար-

մանալի ստոստումներ և հրաշալի ճիգեր ընելով՝ իր դաշոյնովը՝ զոր երբեմն ընդ առաջ կ'երկնցներ որպէս թէ շարժիլ կ'ուզէր, երբեմն ինքզինքը զարնելու կերպով կը դարձնէր :

Վերջապէս շունչը կտրելով՝ Ապտալլահին ձեռքէն դափն առաւ, և աջ ձեռքը դաշոյնը բռնած՝ զնաց Ալի Պապային ներկայացոյց դափն խորշը՝ սրարդնելու կերպով՝ որպէս զի հանդիսականներէն ստակ ինդրեն : Ալի Պապա Վօրկիանի դափին մէջ ոտի մը նետեց : Յետոյ Վօրկիան Ալի Պապային որդոյն դիմեց, որ իր հօրն օրինակին հետեւեցաւ : Հօճաւ Հիւսէյին տեսնելով որ իր կարգը կ'ոյ՛ ծոյն արդէն քակը հաներ էր որպէս զի իր բնծան տայ, և ձեռքն անոր մէջ կը խօթէր՝ այն միջոցին որ Վօրկիան մինչև ցարդցոյց սուած արիւթեամբ և հաստատամտութեամբ դաշոյնը Հօճաւ Հիւսէյինի սիրտը մղեց, այնչափ աստիկ որ անոր հողին ելնելէն ետև քաշեց հանեց :

Ալի Պապա և իր որդին՝ այս սպանութենէ զարհուրելով ազազակ մ'արձակեցին : «Ահ, թշուտական, դուք Ալի Պապա, ինչ բրիւր, միթէ իմ և ընտանեացս կորնատը կ'ուզես :

— Այս գործս բրիւ, պատասխանեց Վօրկիան, չէ թէ ձեզ կորուսելու, այլ ազատելու համար :»

Այն ատեն Հօճաւ Հիւսէյինի պատմութեանը բանալով՝ Ալի Պապային ցցոյց անոր բովի դաշոյնն ու ըսաւ. «Նայեցէք թէ ինչ սովալի թշնամի մը տան մէջ ընդուներ էիք, զիտեցէք անոր դէմքը, պիտի ճանչէք եղի սուտ վաճառականն և քառսուն գողերուն գլխատորը : Միթէ չտեսնոր որ քեզի հետ աղ ուտել չուզեց, իր փետակար խորհուրդը համեալու համար ասկից առելի զօրաւոր փառս մը կը խնդրես : Չանի տեսնելէն առաջ՝ արդէն կասկած ծներ էր միաբխ մէջ, երբ իմացայ որ այնպիսի հիւր մ'ունիս : Ետքը տեսց զանի, և կը նայիս որ իմ կասկածս անհիմն չէր :»

Ալի Պապա՝ տեսնելով որ երկրորդ անգամ իր կեանքը Վօրկիանի սրարտաւոր է, զանի գրկեց և ըսաւ. «Վօրկիան, քեզի ազատութիւն տուի, և այն ատեն խոստացայ նաև որ վարձքդ ասով չպիտի լրանայ, այլ անոր չափը պիտի լեցնեմ : Ահա ժամանակը հասաւ, և քեզ իմ հարստ կ'ընեմ :» Եւ յետոյ իր որդոյն դառնալով՝ «Քրդեակ իմ, յա-

րեց Ալի Պապա, զիտեմ որ բարի զտակ մ'ես և չես դժկամակիր եթէ առանց հաւանութիւնդ ինդրելու Վօրկիանը քեզի կտտութեան կը տամ : Գու ալ ինձի չափ պարտաւոր ես անոր : Կը նայիս որ Հօճաւ Հիւսէյին քեզի հետ գիտմամբ բարեկամացեր էր որպէս զի մասնութեամբ իմ կեանքս բառնալու յաջողի. և եթէ յաջողէր, տարակոյս չկայ որ քեզ ալ իր վրէժխնդրութեան պիտի զօհէր : Նայնպէս նկատեանգամ մ'որ Վօրկիանի հետ կարգուելով իմ ընտանիքիս նեցուկը պիտի առնուս, որչափ որ ապրիմ, և քու ընտանեացդ ալ օգնականը պիտի բլլայ մինչև կենացդ վերջը :»

Ալի Պապային որդին՝ ոչ միայն գոգոհութիւն չ'այայտեց՝ այլև այս ամուսնութեան իր հաճութիւնը սիրով ցցոյց, նախ անոր համար որ չէր ուզեր իր հօրն անհնազանդ դատուիլ, երկրորդ՝ յատուկ համակրութիւն մը կ'զգար Վօրկիանի համար :

Յետոյ գողապետին մարմինը՝ միւս գողերուն մօտ թաղելու դրաղեցան, և այս ալ այնչափ դաղանի կերպով կատարեցին, որ շատ տարիներ անցնելէն ետև՝ իմացուեցաւ սոյն նշանատ որ գէտքն, որուն յայտնութիւնն և ոչ մէկու մը կրնար փաստել :

Քանի մ'օրէ ետքն՝ Ալի Պապա իր որդոյն և Վօրկիանի հարսնիքը հանդիսաւոր կերպով կատարեց, և սովորական ինջոյք, պարեր և գանազան խրախմանութիւններ տեղի ունեցան : Ալի Պապա մեծ գոհութիւն զգաց տեսնելով որ իր բարեկամներն ու գրացիները՝ զոր հբախրեր էր առանց այս ամուսնութեան բուն շարժառիթը յայտնելու, թէև Վօրկիանի ընտիր յատկութիւններն ամէնքը կը ճանչէին, չտիազանց կը դուրսն տան սիրով վեհանքութիւնն ու բարեսրտութիւնը :

Ամուսնութենէ ետքն՝ Ալի Պապա իր Գասիմ եղբայրը քարայրէն մնաած բերելէն վեր առած սակինելով՝ նորէն նոյն վայրը գտնաւու չէր յանդգնած՝ նոյն իսկ երառն ութ գողերուն և ասոնց գլխատորին մահուանէ ետքը, վասն զի կը կարծէր որ միւս երկուքն՝ որոց ձակատաղիքն իրեն անյայտ էր, տակաւին ողջ պիտի բլլան :

Սակայն տարիէ մ'ետքը՝ տեսնելով որ իրեն գէմ գաւաճանութիւն մը չկայ, հետաքրքիր եղաւ նոր ճամբորդութիւն մ'ընելու գէտքի քարայրն իր սպահովութեան համար պէտք եղած զգուշութիւններն

քննելով : Ուստի ձին հեծաւ , և երբ քարայրին մօտ հասաւ , բարե-
 դուշակ նշան մը համարեց մարդու կամ ձիու մը հետքը չտեսնելն :
 Ուստի վար իջաւ , ձին կատելց և դրան առջև դալով , սա խօսքերն
 արտասանեց . « Ըուշմայ , բացուէ » զոր չէր մտցած : Գուռը բացուե-
 ցաւ , ներս մտաւ , և քարայրին մէջամէն բան իր առջի վիճակին մէջ
 տեսնելուն՝ հասկցաւ որ սուտ Հօծաւ Հիւսէյին քաղաք իջնելով խա-
 նութ վարձու բռնելէն վեր մարդ մը չէր մտած այն տեղ , և այն ա-
 տնէն վեր գողերուն խումբը ցրուեր և ջնջուեր էր : Այլ ևս կասկած
 չմնաց թէ ինքը միայն նոյն քարայրը բանալու գաղտնիքն ունէր և թէ
 անոր մէջի բոլոր գանձին աէրն ինքն էր : Իր հետը պարկ մը բերեր
 էր , իր ձիուն տարածին չափ անոր մէջ ոսկի լցուց և քաղաքը դար-
 ձաւ :

Այն ժամանակէն վեր՝ Ալի Պապա , իր որդին և ասոնցմէ ետքը
 բոլոր թոռները հետզհետէ քարայրը բանալու գաղտնիքը սորվելով՝
 իրենց հարստութիւնը չափաւորութեամբ վայելեցին , և հանգիստ
 կեանք մը վարելով քաղքին մէջ մեծ պաշտօններու հասան :

Շէհերազադա այս պատմութիւնը Շահրիար սուլթանին պատմելէն
 ետեւ՝ հեռեկանն ալ պատմեց տեսնելով որ տակաւին լուսցած չէ :



ՊԱՏՄԱՌԻԹԻՒՆ ՊԱՂՏԱՏԻ ՎԱՃԱՌԱԿԱՆ ԱԼԻ ՀՕՃԱՅԻ

Հարուն-ալ-Բաշիտի իշխանութեան ժամանակն , ըսաւ Շէհերա-
 զադ սուլթանուհին , Ալի Հօծաւ անուն վաճառական մը կար ՚ի Պաղ-
 տատ : Այս վաճառականն ոչ շատ հարուստ ոչ շատ աղքատ էր , և իր
 հօրենական տունը կը բնակէր անկին և անգաւակ : Այն միջոցին որ
 ինքն իր գործին աէրն ըլլալով՝ գոհութեամբ կ'ապրէր իր առուտուրի
 վաստակովն , երբք որ իրարու ետեւ երազի մէջ պատկառելի ձեր մը
 տեսաւ , որ խոժուրդի մօտ կը յանդիմանէր զինքը Մէքքէ ուխտի

չգնալուն համար :

Այս երազն Ալի Հօծան վրդովեց և մեծ շփօթութեան մէջ թողուց :
 Իբրև բարի մահձեւական մը , քաջ զիտեր թէ այս ուխտը կատարելը
 պարտք մ'է , բայց որովհետեւ իր տան , կահ կարասեաց և խանութին
 պահպանութեան հոգին իր վրան էր , միշտ կարծեր էր թէ այս պատ-
 ճառները բաւական զօրուոր էին սոյն ախտագնացութիւնը զանց ընե-
 լու , և անոր տեղ որդրում թիւններ և բարեգործութիւններ ընելու :
 Բայց երազ տեսնելէն վեր՝ իր խիղճն այնքան կը նեղէր զինքն որ
 գլխին ձիւն մը չգալու վտիւնն միտքը գրաւ որ առաջ իր բարեպաշտա-
 կան պարտքը կատարելու :

Նոյն տարին այս իր միտքը կատարելու կարող ըլլալու համար , Ա-
 լի Հօծաւ սկսաւ նախ իր կարասիները ծախել , յետոյ խանութն և անոր
 մէջի ապրանքին մեծ մասը ծախու հանել , մինակ Մէքքէ բշտող վա-
 ճառքները պահելով . իսկ տունն ալ՝ վարձուար մը գանելով՝ անոր
 վարձու տուաւ : Ամէն բան սցառելու կարողութիւն ետեւ ճամբայ ելնե-
 լու պատրաստ գանուեցաւ , այն միջոցին որ Մէքքէի համար կարաւա-
 նը Պաղտատէն պիտի մեկնէր : Մինակ բան մ'ունէր ընելու , այս է իր
 ունեցած հազար ոսկին ապահով տեղ մը դնել , որ ուղեորութեան ա-
 տնն իրեն ծանրութիւն չըլլայ , անոր մէջէն իր ծախուց և ուրիշ պի-
 տոյցից համար պէտք եղած գումարն առնելէն ետեւ :

Ալի Հօծաւ բաւական մեծկակ աման մ'առաւ , անոր մէջ դրաւ հա-
 զար ոսկին , և վրան ձիւնապտուղ լցուց : Ամանը լաւ մը խցելէն ետեւ
 իրեն բարեկամ վաճառականի մը տունը կը տանի և անոր կը բաւ :

« Եղբայր իմ , քաջ զիտես որ քանի մ'օրէն Մէքքէ ուխտի պիտի
 երթամ կարաւանով . կ'աղաչեմ շնորհ ընէիք պահել սա ձիւնապտուղի
 քաննն և մինչև վերադարձս քովդ պահելու : »

Վաճառականը բարեսիրտբարբ ըսաւ անոր . « Սհատապիկ , պա մթե-
 բանոցիս սա բանալին . դու ինքնին ամանդ տար և ուղած տեղդ դիր ,
 ապահով եղիր որ ՚ի դարձիդ դրած տեղդ պիտի գտնես զայն : »

Պաղտատ երթալու կարաւանին օրը հանելով՝ Ալի Հօծաւ ուղտի մը
 վրայ ընտրած վաճառքը բեռնաւորեց և հեծնելով կարաւանին գնաց
 միացաւ . Մէքքէ անխտանց հասան : Բոլոր միւս ուխտաւորներուն

հետ տաճարը պարտեցաւ , որ այնչափ երևելի է և աշխարհիս ամեն կողմերէն մահճակտականներ կը յաճախեն , և այն տեղ ամէն հրամայած արարողութիւնները կը կատարեն խափ : Իր ուխտաւորութեան ամէն պարտաւորութիւնները կատարելէն ետե՛ իր հետը բերած վաճառքը ծախելու կամ ուրիշ բանի հետ փոխանակելու համար շուկայ հանեց :

Երկու վաճառականներ՝ որ անկից անցնելով Ալի Լօճային ապրանքը տեսան , այնչափ աղոր դասն որ կանկաւին զանոնք նկատելու , թէ և պէտք չունէին : Երբ իրենց հետաքրքրութիւնը դո՛հ ըրին , մին միւսին ըսաւ հեռանալու ատեն . « Եթէ այս վաճառականը զիսմար թէ որչափ շահ պիտի ընէր այս ապրանքէն Գահիրէի մէջ , անշուշտ զանոնք այն տեղ կը փոխադրէր փոխանակ այս տեղ ծախելու , քանի որ այս քաղքիս մէջ շատ ավան են : »

Ալի Լօճա այս խօսքը լսեց , և որովհետեւ հազար անգամ Եղիպտոսի գեղեցիկ բաներու դովեստը լսեր էր , որոշեց այս առիթէն օգուտ քաղել իսկոյն և զէպ 'ի Գահիրէ ուղևորիլ : Այսպէս՝ իր ապրանքը ծրարելէն և հակի մէջ գնելէն ետե՛ փոխանակ Պաղատա դառնալու Եղիպտոսի ճամբան բռնեց , Գահիրէի կարաւանին միանալով : Երբ Գահիրէ հասաւ , այս որոշման վրայ չղջաց . այնչափ հաւնեցաւ քաղաքն որ քանի մ'օրէն իր ամէն ապրանքը ծախելի իր անկալած զինէն աւելի սուղ : Առած դրամով ուրիշ ապրանք գնեց , Գամասիոս անցնելու զխամար , և որովհետեւ վեց շարթէն պիտի ելնէր կարաւանը , սպասեց և ոչ միայն Գահիրէի մէջ ամէն հետաքրքրական բաները տեսաւ , գնաց նաև բուրգերը տեսնելու . Կեղոսին վրայէն բաւական հեռու ճամբայ ըրաւ , և երկու եղերքի վրայ շինուած երևելի քաղաքները պարտեցաւ :

Գամասիոս ուղևորելու ատենն՝ որովհետեւ կարաւանն Երուսաղեմէն պիտի անցնէր , մեր Պաղտատցի վաճառականն այս առիթու ուղեց նաև տաճարը տեսնել , որ՝ Մէքքէէն ետքն՝ ամենէն նուիրականն է բոլոր մահճակտականաց աչքին , և ասոր համար սուրբ քաղաք կ'անուանեն զայն :

Ալի Լօճա Գամասիոս քաղաքն այնպիսի զմայելի վայր մը դատաւ շնորու առատութեան , մարդերու և հրաշալի պարտեղներուն կողմէն ,

որ մեր պատմութեանց մէջ անոր ախորժելի բաներուն վրայ կարգաւ յաճն անոնց քով շատ տկար դատա , ուստի նոյն տեղ երկար ատեն բնակեցաւ : Բայց որովհետեւ Պաղտատցի ըլլալը չէր մտնար , վերջապէս իր երկիրը դառնալու համար ճամբայ ընկաւ . Բերիա հասաւ և այն տեղ ալ քանի մ'օր մնաց , և անկից ելաւ Եփրատի ճամբով Մուսուլի ճամբան բռնեց , Տիգրիսի վրայէն իջնելով աւելի շուտով վերադառնալու համար :

Բայց երբ Ալի Լօճա Մուսուլ հասաւ , Պարսիկ վաճառականներ՝ որոց հետ Բերիա եկեր և մեծ բարեկամութիւն կապեր էր , իր վրայ այնքան կ'իշխէին իրենց մարդասիրական վարմունքով և ախորժելի խօսակցութեամբ , որ զիւրաւ համոզեցին զինքը մինչև Շիրազ իրենց ընկերանալու . ուսկից , կ'ըսէին , շատ զիւրին պիտի ըլլայ Պաղտատ դառնալու մեծ վաստակ ընելէն ետե : Ուստի զանի առին և Մուլթանիէի , Բէշի , Կասի , Քաշանի և Իսպահանի քաղաքներէն անցնելով Շիրազ տարին , ուսկից գարձեալ հաճեցաւ անոնց հետ Հնդկաստան երթալու և միասին Շիրազ վերադառնալու :

Այս կերպով ամէն անցած քաղաքները բնակելով եթէ հաշիւ ընենք պիտի տեսնենք որ եօթ տարիէ վեր Պաղտատէն ելեր էր , երբ վերջապէս այս քաղաքը վերադառնալու որոշում ըրաւ , և մինչև այն ատեն՝ մեկնելէն առաջ այն բարեկամն՝ որուն ձիթապտուղով լեցուն աւմանը յանձնէր էր , որպէս զի պահէ , ոչ իրեն մտածեր էր և ոչ ամանին : Այն միջոցին որ Շիրազէն ելնող կարաւանով մը ճամբայ կը գտնուէր , իրկուն մ'իւր բարեկամն ընտանիքին հետ ընթրիք ընելու ատեն , ձիթապտուղի խօսք բացուեցաւ և կնկան սիրտն ուղեց , ըսելով որ բաւական ատենէ վեր անկից կերած չէ :

« Զիթապտուղ ըսելուդ , վրայ բերաւ էրիկը , միաքս ձգեցիր այն ձիթապտուղի ամանը զոր Ալի Լօճա Մէքքէ գնալու ատեն ինձի յանձնեց , եօթ տարի սուսջ , և ինքն անձամբ տարաւ մթերանոցիս մէջ գրաւ ամանն որ 'ի գարձին զայ առնու : Բայց Ալի Լօճա նր է : Իրաւ է որ կարաւանը վերադառնալուն՝ մէկն ըսաւ ինձ որ Եղիպտոս անցեր է : Անշուշտ այն տեղ մեռած պիտի ըլլայ , քանի որ այնչափ տարիէ վեր չեղեցաւ , այսու հետեւ կրնանք անոր ձիթապտուղներն ուտել եթէ :

լաւ են : Արայ և սնակ մը բերեք ինձ , երթամ քեզ մը ձիթապտուղ բերեմ որ ուտենք :

— Երկիս , վրայ բերաւ կինը , յանուն Աստուծոյ՝ կ'աղաչեմ որ չըլլայ թէ այդպիսի վատ դործ մ'ընեն : զիտես որ աւանդէ մ'աւելի նորիական բան չկայ : Արսես թէ Ալի Հօծաւ եօթ տարիէ վեր Մէքքէ դայած և չէ դարձած , բայց չըսինք քեզ որ Եզիպտոս անցեր է , և կարելի է որ Եզիպտոսէն աւելի հեռու տեղեր ալ գնաց : Քանի որ իր մահուան վրայ լուր մը չկայ , կրնայ վաղը կամ միւս օր դալ : Ինչ անուանարի բան մը կ'ըլլայ թէ քեզ և թէ ընտանիքիդ համար , եթէ դառնայուն իրեն յանձնած կերպով ամանը ձեռքը չյանձնէիր : Ահա կ'իմացնենք քեզ որ այն ձիթապտուղէն պէտք չունիմ և չպիտի ուտեմ՝ անկից : Եթէ սիրտս կ'ուզէ , ըսի , խօսք մ'էր անցաւ : Ասկից զատ կա՞րելի՞ր բան է որ այսչափ ժամանակէ ետքն այն ձիթապտուղները լաւ վիճակի մէջ մնայած ըլլան : Անտարակոյս աւրուած փտած են մինչև հիմա , և եթէ Ալի Հօծաւ վերադառնայ , ինչպէս որ նախագածութիւն մ'ունիմ , և տեսնէ որ իր աւանդին դպեր ես , ինչ կարծիք պիտի ունենայ քո բարեկամութեան և հաւատարմութեան վրայ : Մէկդի թող դիտահրութիւնդ , կը պարատիմ քեզ :

Աինն այսչափ երկար խօսեցաւ , որովհետև կը դիտէր որ էրկը կա՞մակորութեամբ միտքը յառաջ տանելու պիտի սնդէր : Եւ արդարև , այս արդարացի խորհուրդները մտիկ չըրաւ , ոտք ելաւ , մթերանոցը գնաց սնակ մը և ըրոյս առնելով իր հետը :

«Գոնէ յիշէ , ըսաւ կինն , այդ դործիդ մէջ մտա չունիմ , որպէս զի ետքէն յանցանքը վրաս չթողուս , եթէ երբէք ըրածիդ վրայ զոջաս :»

Աւաճառականը խօսք մտիկ ընել չուզեց և իր դիտաւորութեան մէջ յամառեալ կեցաւ : Երբ մթերանոցը կը հասնի , ամանը կ'առնու , զայն կը բանայ և ձիթապտուղները փտած կը դնէ : Հասկնալու համար թէ արդեօք տակիին ալ վրայիին պէս աւրուած է , սնակին մէջ կը թափէ , և ամանին տուած ցնդումէն , քանի մ'ոսկի անո՞ր մէջ ընկան ձայն հանելով :

Աւաճառականն որ բնականապէս չտես էր և ընչապէր , ամանին մէջ կը նայի և կը տեսնէ որ սնակին մէջ բոլոր ձիթապտուղը թափելէն ե՞

տե՛ս ամանին յատակն ընտիր ոսկիներովլի է : Ամանին մէջ մնացած քանի մը ձիթապտուղները նորէն կը լեցնէ , զայն կը դոցէ և կը վերադառնայ :

«Աինն , կ'ըսէ ներս մտնելով , իրաւունք ունիս . ձիթապտուղները փտեր են , և ամանն այնպէս մը դոցեցի որ Ալի Հօծաւն չպիտի հասկընայ որ ձիթապտուղներուն դպեր են , եթէ երբէք բնիկ երկիրը վերադառնայ :

— Աւելի լաւ կ'ընէիր եթէ խօսքիս հետևէիր , վրայ բերաւ կինն , և ամանին չըպէտէր : Երանի թէ փորձանք մը չըստասցէր :»

Աւաճառականն այս վերջին խօսքին ալ անաստ երեցաւ ինչպէս որ առջի յորդորներուն ալ ականջ չէր կախած : Գրեթէ բոլոր գիշերը մտածեց թէ արդեօք ինչպէս կարելի էր Ալի Հօծային տակիին վրայ նստիլ և այնպէս մ'ընել որ եթէ դառնայ անգամ չկարենայ իրմէ բան մը պահանջել : Հետևեալ օրը կանուխ , նոյն աարուան ձիթապտուղներէն գնելու կ'երթայ , և դառնալով՝ փտածներն ամանէն կը հանէ : Ոսկին կ'առնու և ապահով տեղ մը կը պահէ . յետոյ իր գնած նոր ձիթապտուղներով զայն լեցնելով , նոյն խօսով կը ծածկէ զայն և Ալի Հօծային դրած տեղը նորէն կը դնէ :

Գրեթէ ամիս մը կար որ վաճառականն այս վատութիւնը դործեր էր , որ իրեն սուղի պիտի նստէր , Ալի Հօծաւ Պարտաս հասաւ իր երկարատև ուղեորութենէ դառնալով : Արովհետև միկնէն առաջ իր առնը վարձու աուեր էր , խանի մը մէջ օթեան փնտուկ , խոց մը բունեց , մինչև որ տան վարձուրին իր շալուստն ինաց տալով առաջարկէ որ տունէն ելնէ ուրիշ տեղ երթայ :

Հետևեալ օրը՝ Ալի Հօծաւ գնաց իր բարեկամ վաճառականը գտնելու , որ զանի զրկելով հիւրընկալեց և անոր վերադարձին համար էր ուրախութիւնը յայտնեց այնչափ երկարատև բացակայութենէ ետև , որով , կ'ըսէր , զինքը տեսնելու յոյսը կորուսեր էր :

Փոխադարձ բարագրավարական խօսքերն ընկէն ետև՝ Ալի Հօծաւ աղաչեց որ անոր աւանդ ձղած ձիթապտուղի ամանն իրեն դարձնէ , ներում խնդրելով առած ծանրութեան համար :

«Իմ՝ սիրելի բարեկամս Ալի Հօծաւ , վրայ բերաւ վաճառականը :

պէսք չունին ներում խնդրելու . քու աւանդդ բնաւ ծանրութիւն մը չէր ինձ , և այսպիսի պարագայի մէջ ես ալ քու բռնած ընթացքդ պիտի բռնէի : Ահա , առ միժերանոցիս բանալին , և ամանդ վերցուր . դրած տեղդ պիտի գտնես զայն : »

Ալի Հօճա վաճառականին միժերանոցը գնաց և անկից իր ամանը բերաւ . յետոյ բանալին տիրջը յանձնեց , շնորհակալ եղաւ անոր մարդասիրութենէ , և խանը դարձաւ , ուր խուց մը բռնեց էր : Ամանը կը բնաց և ձեռքն անոր մէջ գնելով որպէս զի տեսնէ թէ պահած սակիննրը նոյն անոնն են , մեծապէս կը զարմանայ զանոնք չդանելով : Կարծեց թէ կը սխալի , և բողբոլին կասկածը փարատելու համար , իր ուղեորութեան ժամանակ հետը տարած պնտիններն և ուրիշ ամաններ կառնու . և անոնց մէջ կը թափէ բոլոր ձիթապտուղներն , առանց սակի մ'անդամ գտնելու : Զարմանքէն պահ մ'անշարժ կեցաւ , և ձեռքն ու աչքը դէպ ՚ի երկին բարձրացնելով , « Մի՞թէ կրտսերի ե , գոչեց նա , որ իմ բարեկամ կարծած մարդս այսպէս վատորէն իս խաբած ըլլայ : »

Ալի Հօճա՛ պոսպիսի մեծ կորուստ մ'ընելուն վրայ աստիկ ցաւելով , վաճառականին քովը կկայ և անոր կ'ըսէ . « Քարեկամ , մի զարմանար եթէ ետ կը դառնամ , կը խոստովանիմ որ միժերանոցդ դրած ձիթապտուղին ամանը ճանչցայ , բայց ձիթապտուղներուն հետ հազար ոսկի ալ դրած էի և հիմակ չեմ գտներ : Կարելի է դրամը պէտք ունեցար և առուստորիդ համար դորձածեցիր : Եթէ այսպէս ըրիր , փոյթս չէ , կրնաս այն դումարով դորձդ տեսնել : Մի՞նակ կաղաչեմ որ մտատա՛ջութիւնս փարատես և բանին էութիւնն ինձ իմաց տաս , և յետոյ երբ յարմար դատես այն տանն ստակս ինձ կը դարձնես : »

Վաճառականն որ կը յուսար թէ Ալի Հօճան պիտի զար այս լեզուն բանեցնելու , ինքն ալ պատասխանը պատրաստեց էր : « Ալի Հօճա , բարեկամդ իմ , ըսաւ անոր , երբ ձիթապտուղի ամանդ բերիր , մի՞թէ ձեռքն անոր դպցուցի : Մի՞թէ միժերանոցիս բանալին քեզի շտուխ մի՞թէ դու անձամբ շտարիր և դու ինքնին դրած տեղք չգտար , այն կերպով զայն չգտար : Եթէ անոր մէջ ոսկի գրիր , անշուշտ անոր մէջ գտած ես ոսկիդ : Ըսիր ինձ որ անոր մէջ ձիթապտուղից , ես ալ հաւ-

տոցի : Ահա բոլոր գիտցածս : Կուզես հատաւ , կուզես մի հատար , այս իրաւ է որ ամանիդ չդպայ : »

Ալի Հօճա մեղմ միջոցներով ջանաց յորդորելու որ վաճառականը ճշմարիտն ըսէ : « Աս միայն խողարութիւն կը սիրեմ , և շատ պիտի ցախիմ եթէ բուռն կերպեր բանեցնեմ որոնք քեզի կրնան պատիւ չբերել և ես ալ վշտանալով նոյնը պիտի դորձած եմ : Մտածէ անդամ մի որ քեզի պէս վաճառականներ ամէն շահ զոհել պէտք են իրենց յատուկ համբաւն անաղարտ պահելու : Կորէն կ'ըսեմ որ մեծ պիտի ըլլայցաւ , եթէ ստիպես ին քեզ դատաստանի կանչելու , թէ և ես աւելի սիրած եմ իրաւունքիս մէկ մասը կորուսել քան թէ դատերու եղնել :

— Ալի Հօճա , վրայ բերաւ վաճառականը , չես ուրանար որ իմ տանս մէջ պահածդ ձիթապտուղի աման մ'էր . նոյն ամանն առ իր տարիր , և հիմակ կկաս խոն : Հաղար ոսկի խնդրելու : Մի՞թէ կանխաւ բ'սիր ինձ որ այդ դումարն ամանիդ մէջ կը գտնուի . չլիտէի անդամ թէ անոր մէջ ձիթապտուղ կար , ինձիցոյց շտուխ : Կը զարմանամ որ ոսկի տեղ ինչոն համար մարդարիս կամ անգամանդ չես խնդրեր : Կնդրեմ զնա , որ իմ խանութիս առջև քու նկատաւարաւ մարդիկ չժողովն ին :

Արդէն խանութին առջև քանի մը հողի դումարուեր էին , և այն վերջին խօսքերը՝ զորս վաճառականն արտասանեց բարկութեան եղնոց մարդու մը սրէս , ոչ միայն ուրիշ մարդիկ՝ այլ և իր գրացի խանութպանները դուրս եղնելու և իր ու Ալի Հօճայի մէջ ծագած վէճը հասկնալու դողիւ եղան , թէ և խանութպանները ջանացին զանոնք հաշտեցնելու : Երբ Ալի Հօճա պատճառն անոնց բացատրեց , ամենէն առջև կեցողները հաբցուցին վաճառականին թէ ի՞նչ ունի պատասխանելու :

Վաճառականը խոստովանեցաւ որ Ալի Հօճային ամանն իր տունը պահեց էր , բայց անոր գպած ըլլալն ուրացաւ և երդում ըրաւ թէ Ալի Հօճային ըսելէն ետե՛ւ իմացիր է թէ նոյն ամանին մէջ ձիթապտուղներ կան , և թէ ամէնքը վկայ կը բռնէ մինչև անդամ իր խանութին առջև անոր ըրած թշնամանքին և նախատիքին համար :

— Գու ինքնին վրայ կը հրաւիրես նախատիքն , ըսաւ այն տունն Ալի Հօճա՛ վաճառականին թե՛էն բռնելով . բայց քանի որ այդպէս անողամորէն կը վարուիս , քեզ Աստուծոյ օրինաց առջև եղնելու կը

հրախրեմ' և նայիմ' թէ պիտի յանդգնիս զատուորին ներկայութեանը նոյն բանն ըսելու : յ

Այս հրաւերին վրայ՝ որուն ամէն բարի մահմետական հնազանդե- լու պարտաւոր է, և թէ չուզեր կրօնից դէմ ըմբոստ գատուիլ, վաճա- ռականը չհամարձակեցաւ դէմ կենալու : «Երթանք, ըստ, իմ ու- ղածս ալ այդ է. նայինք թէ մնա՞նք ի՞նչ է յանցաւորը, գո՞ւ թէ ես :»

Ալի Էօճա վաճառականն առաւ և դատարանը տարաւ, և այն տեղ ամբաստանեց զանի ըսելով թէ իր հազար ոսկի աւանդը խորեք է, և մեր ըսածին պէս եղելով թիւնը բացատրեց : Գատաւորը հարցոց Ալի Էօճային թէ արդեօք վկաներ ունի՞ : Գատաւորն տուաւ նա որ այս բանին չէ մտածել, վասն զի կարծեր էր թէ աւանդաւորսն իր բա- րեկամն է, և մինչև այն ատեն ուղիղ մարդու մը տեղ դրեր էր զանի :

Վաճառականն իր դատը պաշտպանելու համար Ալի Էօճային և դրացիներուն առջևն ըսածը կրկնեց, և խօսքն աւարտեց ըսելով թէ պատրաստ է երբմամբ հաստատել թէ ոչ միայն հազար ոսկին խորած ըլլալը զբարտաւթիւն մ'է, այլև բնաւ այս մասին տեղեկութիւն չէր ունեցած : Գատաւորը խնդրեց որ երբու մն ընէ, և այնուհետև զանի աղատ թողուց իբր անպարտ :

Ալի Էօճա՝ այնպիսի մեծ գումար մը կորուսանելուն վրայ սաստիկ սրտմտեղով այս գատաւորանին դէմ բողոքեց, յայտնելով գատաւորին որ իր զանդատը Հարուն-ալ-Բաշխի պիտի խնայե՞ և իր իրաւունքը պիտի հաստատէ. գատաւորն այս բողոքին վրայ չզարմացաւ, այլ ի- րենց գատը կորուսող ամէն անձերու յատուկ սրտմտութիւն մը սեպեց, և կարծեց թէ իր պարտքը կատարած է աղատ թողլով ամբաստանեալ մ'որուն դէմ ամբաստանը վկաներ յառաջ չէր բերած :

Մինչդեռ վաճառականն իր տունը կը դառնար և կ'ուրախանար որ Ալի Էօճային յաղթելով հազար ոսկին վրայ հեշտիւ պառկեր է, Ա- լի Էօճա գնաց աղերսագիր մը գրեց, և հետեւեալ օրն իսկ ամիրապե- տին կէսօրուան աղօթքն ընելով մղկիթէն ելնելուն սպասեց փողոցի մը մէջ, և երբ նա կ'անցնէր, ձեռքը բարձրացոց աղերսագիրը բռնելով. աղերսագիրնեան առելու պաշտօն ունեցող տղայ մ'որ ամիրապետին առջևէն կ'երթար, իր կարգէն ելաւ և եկաւ Ալի Էօճային թուղթն

առնելու որ ամիրապետին տայ :

Որովհետև Ալի Էօճա դիտէր թէ Հարուն-ալ-Բաշխ սովորու- թիւն ունէր՝ պայտաը գատաւորն՝ ճամբան ընդունած աղերսագիրները կարդալու, անոր ետեւէն գնաց, պալատը մտաւ և սպասեց որ իր ա- ղերսագիրն առնող սպայն ամիրապետին սենեկէն դուրս ելնէ : Պայայն դուրս ելնելով ըսաւ որ ամիրապետն անոր աղերսագիրը կարդացեր է. հասկցոց թէ որ ժամուն անոր ունկնդրութիւն պիտի ընէ, և վաճա- ռականին բնակարանն անորմէ իմանալէն ետեւ՝ մարդ դրկեց անոր ալ որ որոշեալ ժամուն պալատը դանտի :

Նոյն օրուան իրկունն՝ ամիրապետն իր ճեաֆէր վէղիբին և ներքի- նապետ Մէսրուբին հետ՝ քաղաքը գնաց՝ անոց պէս ծպտեալ, ինչ սրտոյն ընելու, ինչպէս որ ըսի Չեր վեհափառութեան, այսպիսի շրջաններ ընելու ատեն ատեն սովորութիւն ունէր :

Փողոցէ մ'անցնելու ատեն ամիրապետը ձայն մը լսեց. աւելի շուտ քալեց և գուռ մը հասաւ որ բակի մը վրայ կը նայէր, ուր տաս տասն երկու տղայք, որ տակաւին տուն դացած չէին, լուսնկային կը խաղային, ինչպէս որ այս բանս իմացաւ դրան մէկ ճեղքուած քէն նա- յելով :

Ամիրապետն՝ հետաքրքիր ըլլալով հասկնալու թէ այն տղայք ինչ կը խաղային, քարէ նտարանի մը վրայ նստաւ որ դրան մօտ կը գտնուէր. և որովհետև ճեղքուածքէն շարունակ կը նայէր, ամենէն աշխոյժ և արթուն տղու մը ձայնը լսեց որ միւսներուն կ'ըսէր. «Գա- տաւորի խաղը կը խաղանք : Ես գատաւոր կ'ըլլամ, ինձի բերէք Ալի Էօճան, և անորմէ հազար ոսկի կողոպտող վաճառականը :»

Տղուն այս խօսքին վրայ՝ ամիրապետը յիշեց իրեն նոյն օրը ներկա- յացուած աղերսագիրը, զոր կարդացեր էր, և այս բանիս վրայ իր ու- շաղբութիւնը կրկնասպասեց գատաւորանին ելքը տեսնելու համար :

Որովհետև Ալի Էօճային և վաճառականին գատը նոր էր և Պաղ- տատի մէջ մեծ տարածոյնութիւն կը հանէր մինչև անցամտոց մէջ, միւս տղաք ուրախութեամբ ընդունեցան այս առաջարկութիւնս և ամէն մէկն ինչ գեր խաղալիքն որոշեց : Ոչ ոք դէմ կեցաւ գատաւորութեան պաշտօն վարելու համար առաջարկութիւն ընող տղուն : Երբ գատաւոր

րի մը ծանրութեամբ ամբողջ նստաւ, ուրիշ տղայ մը՝ դատարանին իբր ձեռնհաս պաշտօնատար, ուրիշ երկու հոգի ներկայացուց՝ որոց մին Ալի Լօճա անուանեց և միւսը վաճառականն՝ որուն դէմ Ալի Լօճա կը բողոքէր :

Այն ատեն սուտ դատարոն սկսաւ խօսիլ և ծանրաբար հարց ու փորձ ընելով սուտ Ալի Լօճան անոր ըստ. «Ալի Լօճա, ի՞նչ պահանջես այս վաճառականէն?»

Սուտ Ալի Լօճան՝ խորին ակնածութեամբ՝ շինծու դատարոնին ամէն բան կէտ առ կէտ բացատրեց, և խօսքն աւարտելով՝ վերջացուց աղաչելով որ օրինաւոր վճիռ մ'արձակէ ահազին կորուստ մը չկրելու համար :

Կեղծ վաճառականը մէջ բերաւ բոլոր այն պատճառները զոր ճշմարեան ըսեր էր Պաղտատի դատարոնին, և առաջարկեց երգմամբ իսկ հաստատել որ ըսածը ստոյգ է :

«Այդչափ շուտով չերթանք, վրայ բերաւ կեղծ դատարոն, երդում ընել տալէն առաջ, կ'ուզեմ ձիթապտուղի ամանն անդամ մը տեսնել : Ալի Լօճա, յարեց նա՝ այս անգամք սուտ վաճառականին դատնալով, միթէ ամանդ բերի՞ր?» Պատասխան տուաւ որ բերած չէ : «Գնա հոս բեր, ըսաւ նա, և շուտով եկուր :»

Քիչ մ'ատենուան համար սուտ Ալի Լօճան աներկոյթ եղաւ, դատարոնին առջև աման մը դնել ձեացուց, ըսելով թէ ամբաստանեալին տունը ձգած և ետքէն առած ամանն այն էր : Արպէս զի դատարան ամէն ձեւերը գործադրուին, կեղծ դատարոնը կեղծ վաճառականին հարցուց թէ արդեօք կը խոստովանի որ նոյն ամանն է : Եւ երբ սուտ վաճառականն իր լուծեամբը հաստատեց որ նոյնն ըլլալուն չընար ուրանալ, հրաման տուաւ որ անոր խոփը բանան : Կեղծ Ալի Լօճան խոփը բանալ ձեացուց, և դատարոն անոր մէջ նայելու կերպ մը ցոյց տալով, «Ահաասիկ, ըսաւ, աղոր ձիթապտուղներ : հատ մը ճաշակեմ» : Այս ըսելով մէկ հատ առնլու և ուտելու պէս ըրաւ և յարեց :

«Իսկա ըստիք են :

— Բայց, յարեց սուտ դատարոնը, կարծեմ թէ եօթ սարի շարուսա՛յ պահուած ձիթապտուղներ չէն կրնար այսպէս աղոր ըլլալ : Կան-

չեցէք ձիթապտուղի վաճառականներ որ քննեն իրողութիւնը :»

Այս հրամանին վրայ երկու տղաք եկան՝ իրր ձիթապտուղի վաճառականներ : «Միթէ ձիթապտուղի վաճառականներ էք» հարցուց անոնց շինծու դատարոն : Երբ ըսին թէ իրենց նորհետն այս է : «Ուրեմն ըսէք ինձ, յարեց նա, թէ որչափ ատեն կրնան դիմանալ ձիթապտուղները : — Տէր իմ, պատասխան տուին վաճառականներն, որչափ ճիգ թափենք զանոնք պահելու, երրորդ տարուան մէջ կ'աւրուին, ոչ գոյն ոչ համ կ'ունենան, և մինակ կը նեւուին : — Եթէ իրաւ է ըսածդ, վրայ բերաւ սուտ դատարոնը, սա առջևդ կեցած ամանը նայէ, և ըսէ ինձ թէ որչափ ատենէ վեր ձիթապտուղ դրուած է անոր մէջ :»

Շինծու վաճառականները ձիթապտուղները քննելու և ճաշակելու պէս ըրին, և դատարոնին ըսին թէ այն ձիթապտուղները նոր են և աղոր :

«Գուք կը սխալիք, վրայ բերաւ շինծու դատարոն, ահա Ալի Լօճա կ'ըսէ թէ եօթ տարիէ վեր նոյն ամանին մէջ դրած է : — Տեարք իմ, պատասխան տուին կոչուած ձեռնհաս վաճառականները, սա կրնանք հաւատաւել որ այս ձիթապտուղներն այս տարուան բերք են, նոյնպէս կը սխալենք որ Պաղտատի ամէն վաճառականները մի և նոյն վկայութիւնը պիտի տան այս մասին :»

Սուտ վաճառականն որ սուտ Ալի Լօճայէն ամբաստանուեր էր՝ քննիչ վաճառականներուն դէմ խօսելու համար բերանը բանալ ուղեց, բայց դատարոն անոր ժամանակ չտուաւ : «Լուռ կեցիր, ըսաւ անոր, դու գող մ'ես. ուստի պէտք է որ կախեն քեզ :» Այսպէս լմնցուցին տղաք իրենց խաղը խնդութեամբ և ծափ զարնելով, և յանցաւոր վաճառականին վրայ դարձն ուղարկելու թէ կախելու տանիլ կ'ուզեն :

Կարելի չէ բացատրել թէ որչափ զմայեցեաւ Հարուն-ալ-Բաշիտ տղուն իմաստութեան վրայ, որ այնպիսի բանաւոր վճիռ մ'արձակեց այն գատին վրայ որ հետեւեալ օրն իր առջևը պիտի ելնէր : Ճեղքուածքէն նայելէն դադրելով և ոտք ելնելով՝ հարցուց իր վէզիւրին, որ տղոց մէջ անցած դարձած խաղին մտադիր էր, թէ կեղծ դատարոնին վճիռ ըսեց և թէ ինչ կը մտածէ այս պահին : «Իշխանդ հաւա-

տացի լոց , պատասխան տուաւ ճեւածէր վէզիբը , զարմանալով կը զարմանամ՝ այսպիսի պատանեկի մը տուած իմաստուն վճռոյն վրայ :

— Բայց , վրայ բերաւ ամիրապետը , գիտես արդեօք որ վաղն այսպիսի դատ մը պիտի կտրեմ՝ և թէ ճշմարիտ Ալի Հօճան աղերսալիբ մը մատուցած է ինձ այսօր : — Չեր վեհափառութենէ նոր կ'իմանամ այս բանը , պատասխանեց վէզիբը : — Միթէ կարելի է , վրայ բերաւ ամիրապետն , այդ տրուած վճռէն տարբեր վճիռ մը տալ : — Եթէ նոյն դասն է , պատասխանեց վէզիբը , չեմ կարծեր որ կարենաք ուրիշ կերպով քննել և ուրիշ վճիռ մը տալ :

— Քաջ գիտէ այս տունն , ըսաւ անոր ամիրապետն , և վաղն ինձի բեր տղան , որպէս զի իմ առջևս նոյն դատատանը կտրէ : Կոյնպէս իմանց տուր այն դատաւորին՝ որ զող վաճառականն իբր անպարտ ճամբեց՝ այն տեղ գանուելու , որպէս զի իր պարտքը տղէ մը սորվի : Նոյնպէս կը պատուիրեմ քեզ որ Ալի Հօճան կանչել տաս . թող իր ձիթապտուղի ամանը հետը բերէ , նոյնպէս ձիթապտուղի երկու վաճառականներ թող ներկայ գանուին դատին : »

Ամիրապետն իր պտոյան ընելու ատեն այս հրամանը տուաւ վէզիբին , և պալատը զարձաւ առանց ուշադրութեան արժանի ուրիշ բան մը տեսնելու :

Հետեւեալ օրը վէզիբն ելաւ գնաց այն տունն ուր տղաք դատաւորութիւն կը խաղային , և ուզեց տան տէրը տեսնել : Տանտէրը չգտնելուն տան սիրուհին տեսնել ուզեց : Աէզիբը հարցոց անոր եթէ գաւախներ ունի : Տան սիրուհին պատասխան տալուն թէ երեք հատ ունի , դանսը իր առջևը բերել տուաւ :

— Տղաքներս , ըսաւ անոնց վէզիբը , ձեզնէ ով դատաւոր եղբ է երէկ իրկուն երբ դատաւորութիւն կը խաղայիք : Ամենէն մեծն որ անբրանիկն էր , պատասխանեց թէ ինքն էր , և որովհետեւ չկտէր թէ ինչ պատճառաւ այս հարցմունքը կ'ընէր իրեն , գոյնը նետեց : « Արգեակ իմ , պատասխանեց վէզիբն , ինձի հետ եկուր , ամիրապետը քեզ տեսնել կ'ուզէ : »

Մայրը մեծ տաղանայի մէջ ընկաւ երբ տեսաւ որ վէզիբն իր որդին կանկրկու վէ : « Տէր իմ , ըսաւ , միթէ որդիս ձեռքէս առնլու համար

է որ ամիրապետը զանի վր ինդրէ : »
Աէզիբն ապահովցոց ընելով որ իր որդին ժամէ մը պիտի դառնայ , և ի դարձին պիտի իմանայ թէ ինչ պատճառաւ կանչուած է և շատ գոհ պիտի ըլլայ :

« Եթէ այսպէս է , տէր իմ , վրայ բերաւ տղուն մայրը , ներեցէք ինձ որ անոր աւելի մարուր հազուստ մը տամ , հաւատացեալ իշխանին առջև երևելու արժանի ըլլալու համար : » Եւ առանց ժամանակ կորուսելու մայրն իր տղան մարուր հազուեցոց :

Մեծ վէզիբն առաւ տղան և ամիրապետին ներկայացոց , ճիշտ այն ժամուն որ Ալի Հօճային և վաճառականին ալ ապսպրեք էր որ իրեն սպասեն :

Ամիրապետը տեսնելով որ տղան քիչ մը շուարած է , ուզեց զանի հանդարտեցնել որ ըսելիքն ընէ : Աստի անոր ըսաւ . « Եկուր , ինձ մտնեցիր , տղաս : Միթէ դուն չէիր երէկ Ալի Հօճային և վաճառականին դատը տեսնողը : Քեզ տեսայ և ըսածնեք մտիկ ըլի . քեզնէ շատ գոհ եմ : »

Տղան չձգիթեցաւ , այլ համեստութեամբ պատասխանեց թէ ինքն է : « Արեմն , որդեակ , վրայ բերաւ ամիրապետն , այսօր քեզի պիտի ցոյց տամ ճշմարիտ Ալի Հօճան և ճշմարիտ վաճառականն : Եկուր իմ քովս նստիր : »

Այն ատեն ամիրապետը տղուն ձեռքէն բռնեց , աթոռն ելաւ ու նստաւ , և երբ տղան իր քովը նստեցոց , հարցոց թէ ո՞ր են դատաւարներն : Իսկոյն երեցոցին Ալի Հօճան և վաճառականն , անոնց անունը տուին , մինչդեռ ասոնք դեռ ինքն իրենց անունը օթոցին վրայ իրենց ձակապը կը վարնէին : Երբ ոտք ելան , ամիրապետն անոնց վրայ իրենց ձակապը կը վարնէին : « Չեր դատը վարեցէք , այս տղան զօր կը տեսնէք ձեզ մտիկ ըսաւ . « Չեր դատը վարեցէք , այս տղան զօր կը տեսնէք ձեզ մտիկ պիտի ընէ և դատատանը պիտի կտրէ . և եթէ պակաս բան մ'ըսէ , ես այս պակասը պիտի լեցնեմ : »

Ալի Հօճան և վաճառական իրարմէ ետև խօսեցան , և երբ վաճառականը ինդրեց որ առջի անգամուան պէս երգում ընէ , տղան ըսաւ որ դեռ երգումի ժամանակը չէ , և թէ նախ հարկ է ձիթապտուղին ամանը տեսնել :

Այս բանին վրայ՝ Ալի Հօճա տանը ներկայացուց, ամիրապետին ուսից ներքև դրաւ և զայն բացաւ : Ամիրապետը ձիթապատ զնեքը տեսաւ, հաս մ'առաւ և բերանը դրաւ : Այս նպատակաւ կանչուած ձեռնհաս վարպետներուն տրուեցաւ ամանն որ քննեն, և սա կարծիքը յայտնեցին թէ ձէթեքը լաւ և նոր տարուան են : Տգան բաւ անոնց թէ Ալի Հօճա կը սխալէ որ եօթ տարիէ վեր զանոք ամանին մէջ դրած է, և ասոր նախորդ սուտ վարպետներուն տուած պատասխանը տուին և չարահայտեցին :

Թէ և ամբաստանեալ վաճառականը դիտեց որ երկու վարպետ խախտութեանն են իրեն դատապարտութիւնը վճռեցին, սակայն փորձ մը փորձեց պատճառ մը մէջ բերել ինքզինքն արդարացնելու համար . բայց սղան զգուշացաւ ըսելու որ կախուելու արժանի է, այլ ամիրապետին երեսը նայեցաւ, ու ըսաւ . «Իշխանդ հաւատացելոց, ասի երազ մը չէ . Ձեր վեհախառութեան կիցնայ յանցաւորն իբօք մահուան դատապարտելու, և չէ թէ ինձի, քանի որ ծիծաղելու համար երէկ այս դատը վարեցի իմ ընկերներուս հետ :»

Ամիրապետը՝ վաճառականին խարդախութեան լիովին տեղեկանալով՝ դահլիճներուն յանձնեց զանի որ կախեն, այս հրամանն ՚ի գործ դրուեցաւ, երբ յանցաւորը խոտտալանեցաւ թէ ուր պահած է հազար ասիին, որ Ալի Հօճային տրուեցաւ : Վերջապէս այս միապետն՝ որ արդար էր՝ առաջին վճիռն արձակող դատաւորին հասկցնելէն ետեւ որ զօնէ տղայէ մը սովորի իր պաշտօնն աւելի ճշտութեամբ կատարելու, տղան գրկեց և ոսկիով լի քսակ մը՝ իր իր առատաձեռնութեան նշան՝ անոր տալէն ետեւ՝ ձամբեց :



ԴԻՒԹԱՆԵՐ ԶԻՈՒՆ ԳԼՏՄՈՒԹԻՒՆԵՐ

Ընկերազատ՝ Հնգիսց սուլթանին իր վէպերն՝ որ շատ տխորժելի

էին անոր՝ պատմելու ատեն, նոյնպէս պատմեց զիս թահապ ձիւն վէպը :

Վեհախառ տէր, ըսաւ նա, ինչպէս որ քաջ զխտեք՝ Նէվրուզն՝ այսինքն՝ նոր տարւոյն և զարնան առջի օրն՝ այնպիսի հանդիսաւոր և հին տօն մ'է՛ Պարսկաստանի պետութեան մէջ՝ նոյն իսկ կոպտաշուքութեան ժամանակներէն ՚ի վեր, որ մեր մարդպէտն կրօնը՝ թէ և բոլորովին անարատ՝ չկրցաւ մինչև այսօր՝ զանի ջնջելու յաջողիլ, թէ և հեթանոսական սովորութիւն մ'է, և պահուած արարողութիւններն աւելորդապաշտական են : Թող մեծ քաղաքները, փոքրիկ ատան մը, զիւղ մը չկայ ուր այս տօնն արտաքոյ կարգի խրախմանութիւններով չհռչակուի :

Սակայն արքունիքը կատարուած խրախմանքը՝ հիանալի և նոր նոր տեսարաններու կողմէն զամէնքը կը գերազանցեն, և դրացի՝ նոյն իսկ հեռաւոր երկիրներէ բազմաթիւ օտարականներ այս հանդէսներուն կը զիմեն՝ որպէս զի հանդիսատես ըլլան թաղաւորներու ընծայած վարձքերուն՝ հնարաղխութեան և ճարտարութեան մէջ գերազանցող անձանց, այնպէս որ աշխարհիս միւս մասերուն մէջ Պարսից արքունիքը տեսնուած շքեղ հանդէսներուն պէս բան մը տեղի չունենար :

Այս հանդէսներուն մէկուն մէջ՝ երբ երկրին ամենէն ճարտար և հնարադէտ մարդիկ՝ Շիրազ եկող օտարականներուն հետ՝ արքունեաց ամէն տեսակ զուարճութիւններ և խրախմաններ տուին, և թաղաւորն՝ ամենուն արժանիքին համեմատ՝ պարզէներ բաշխեց՝ իրենց խաղացած արտաքոյ կարգի և հրաշալի խաղերուն համար, թաղաւորը կը պատրաստուէր քաշուելու և մին մեծ ժողովը ձամբելու, և ահա հնդկացի մ'երեցաւ անոր գահին ոտքը, պերճ թամբ, ասնձ և կազմած ունեցող ձի մ'առաջ քշելով . և այս ձին այնպիսի ճարտարութեամբ ներկայացուած էր, որ տեսողը կարծէր թէ ճշմարիտ ձի մ'է :

Հնդկացին աթուին առջև ծուեցաւ, և երբ կանգուն կեցաւ՝ թաղաւորին ջոյց տալով ձին՝ ըսաւ . «Թէ և ամենէն յետեւը կը ներկայանամ Ձեր վեհախառութեան առջև ասպարէզ մանելու համար, սակայն կրնամ հաւատաւոր այս հանդիսական օրս բնաւ չտեսած է այս ձիէն քաւելի զարմանալի և հրաշալի բան մը, որու վրայ աչք մը նետելնից

կը ինդրեմ :

— Այս ձիուն վրայ ուրիշ բան մը չեմ տեսներ, ըսաւ թագաւորը, բայց եթէ արհեստաւորին հնարաղիտութիւնն որով բնական ձիու կերպարան մը տուած է անոր : Սակայն ուրիշ գործաւոր մը նոյնը կրնայ ընել և թերեւս անկից աւելի զերազանցը :

— Տէր իմ, վրայ բերաւ հնդկացին, իմ ձիս իբր սքանչելիք մը Ձեր վեհափառութեան ներկայացնելով՝ մի կարծէք թէ անոր արտաքին կերպարանին վրայ ձեր ուշադրութիւնը հրաւիրել կ'ուզեմ, այլ անոր գործածութեան մէջ է՝ զաղանիքն և այս զաղանիքն ինչպէս ես նոյնպէս ուրիշ մը կրնայ իմ միջոցաւ սորվիլ և օգտիլ : Երբ վրան հեծնեմ, երկրիս որ հեռաւոր կողմն որ զանուիմ, եթէ ուղեմ՝ օդին մէջէն փոխադրուիլ, կարող եմ իմ կամքս իսկոյն կատարել : Մէկ խօսքով, տէր իմ, ահա ինչ բանի մէջ կը կայանայ իմ ձիուս հրաշալիքը, հրաշալիք մ'որո՞նչ վրայ առաջին անգամ կը խօսիմ, և պատրաստ եմ անոր փորձն ընել Ձեր վեհափառութեան եթէ հրաման տաք :

Պարսից թագաւորն որ ամէն հրաշալի բաներու համար յատուկ հետաքրքրութիւն մ'ունէր, և այս տեսակ բաներ շատ մը տեսնելէն և տեսնելու փափաքելէն ետեւ՝ բնաւ ասոր նման բան մը ոչ տեսած և ոչ լսած ունէր, Հնդկացիին ըսաւ թէ՝ մինա՛կ փորձը տեսնելով կրնայ համոզուիլ իր ձիուն զերազանցութեան վրայ և թէ պատրաստ էր այս իրողութեան ակնաստեւ ըլլալու :

Այն ատեն Հնդկացին ոտքն ասպատանին մէջ գրաւ, թեթեւաշար ժութեամբ մը ձին հեծաւ և երբ միւս ոտքն ալ ասպտանէն տնցուց և թամբին վրայ լաւ մը տեղադրուեցաւ, հարցուց Պարսից թագաւորին թէ ո՞ր կ'ուզէ զովեւ զինքը :

Շիրազէն երեք մղոն հեռու՝ որոշակի տեսնուող բարձր լեռ մը կար որ Պարսից թագաւորին արքունեաց հետ գտնուած տեղէն կ'երևէր :

Ենթ տեսնեմ սա լեռն, ըսաւ թագաւորը՝ հնդկացիին ցոյց տալով, ահա կ'ուզեմ որ այն տեղ երթաս, հեռաւորութիւնը մեծ չէ, բայց այսչափս բաւական է հասնիալու համար թէ ինչ արագութեամբ պիտի երթաս և դառնաս : Եւ որովհետեւ քեզ աչքով մինչև այն տեղ հեռեփեղ կարելի չէ, այն տեղ հասնելուդ իբր ստոյգ նշան՝ կ'ուզեմ որ

լեռան ոտքը գտնուած արմաւենիէն ինձի ոտ մը բերես :

Այն ինչ Պարսից թագաւորն այս խօսքով իր կամքը յայտնեց, որ հնդկացին սեպ մը միայն դարձուց՝ որ ձիուն վիզէն կը բարձրանար, թամբին դնդին մօտենալով : Անմիջապէս ձին դեմնէն վեր ելաւ և կայծակի պէս ձիաւորն օդին մէջ թոցուց այնչափ բարձր որ ամենէն սուր աչք ունեցողները զանի կորուսին, ՚ի մեծ զարմացումն թագաւորին և իր պալատականներուն և բոլոր հանդիսականներուն բարձր ազաղաներուն մէջ :

Հաղիւ բաւորդ մը կար որ հնդկացին մեկնէր էր, որ նորէն օդին մէջ տեսնուեցաւ, և ոտը ձեռքը բռնած ետ կը գառնար : Աւերջուպէս հրապարակին վերն եկաւ, շատ մ'ոստոտումներ ըրաւ՝ մինչդեռ բոլոր ժողովուրդն ու բախութեան ձայներ կ'արձակէր, մինչև որ իջաւ և թագաւորին գահին առջև կեցաւ, ճիշտ այն տեղն ուսկից ելեր էր, առանց ձիուն ամենաթեթեւ ցնցումն զգալու : Յետոյ հնդկացին ձիէն վար իջաւ, և գահին մօտենալով՝ երկիրը պագաւ և բերած ոտքը թագաւորին ոտից ներքև դրաւ :

Պարսից թագաւորն որ զարմացմամբ ականատես եղաւ այս անլուր տեսարանին, նոյն միջոցին մեծ փափաք մ'ունեցաւ ձիուն տէրն ըլլալու, և որովհետեւ հաստատ կը կարծէր թէ հնդկացիին հետ սակարկելով և ուզած զինը տալով կրնայ զայն ձեռք ձգել, արդէն իբր իր դանձուն ամենէն անգին և պերճ հարստութիւնը կը համարէր զայն :

Ե-հու ձիուդ արտաքին տեսքէն չէի կրնար երեակայել, ըսաւ թագաւորն, որ այդչափ մեծ արժէք մ'ունենայ : Շնորհակալ եմ որ իմ սխալ կարծիքս փարատեցիր, և հասկցնելու համար թէ որչափ մեծ յարգ ունի այն իմ աչքիս՝ պատրաստ եմ զայն դնելու եթէ ծախելու դիտաւորութիւն ունիս :

— Ահ հափառ տէր, վրայ բերաւ հնդկացին, տարակոյս չունէի որ քեզի պէս ամէն բանի յարգը ճանչող հզօր թագաւոր մը, իմ ձիուս այդպէս նպաստաւոր կերպով պիտի նայի, անոր արժանիքը յայտնելէն ետեւ : նոյնպէս դուշակեր էի որ չպիտի դժ ըլլայ անոր վրայ զմայլելէն և զովեստ տալէն, այլ նաև անոր տէրն ըլլալու պիտի փափաքի, ինչպէս որ իրօք կը փափաքի : Ես ալ իմ կողմէս, վեհափառ տէր,

թիւն Զիւռս արժէքը դիտեմ որչափ որ հարկ է դիմանալ և անոր տէրը
 դանտելուս անունս անմահ ընելու առիթ մ'ունիմ աշխարհին մէջ,
 սակայն դարձեալ այնչափ կապուած չեմ անոր որ Չեր վեհափառու-
 թեան աշխի փափաքը կատարելու մերժեմ: Բայց այս խոստովանու-
 թիւնն ընելով ուրիշ մ'ալ ունիմ ընելու այնպիսի պայմանի մը վրայ,
 առանց որոյ կարելի չէ ինձ իմ ձիւ ուրիշի ձեռք յանձնել, պայման
 մ'որ թերեւս ձեզի անսխորժ պիտի թուի:

«Աւստի Չեր վեհափառութիւնը չարամտի, շարունակեց հնդկացին,
 եթէ յայտնեմ որ այս ձին չգնեցի. զայն հնարողէն և շինողէն առի
 իմ մէջ հասիկ աղջիկս անոր կնուիթեան տալով ինչպէս որ խնդրեց.
 և նոյն միջոցին պահանջեց որ այս ձին ուրիշին չմտնեմ, և եթէ ձեռ-
 քէս հանեմ, իմ յարմար տեսած փոխանակութեամբ մը կատարեմ:»

Հնդկացին խօսքը շարունակել կ'ուզէր, սակայն փոխանակութիւն
 բառն արտասանելուն, Պարսից թագաւորն անոր խօսքն ընդմիջեց և
 պատասխան տուաւ.

«Ինչ փոխարէն որ խնդրես պատրաստ եմ տալու: Գիտես որ թա-
 դաւորութիւնս մեծ է; մեծ, զօրաւոր, հարուստ և շէն քաղաքներով
 ընցուն է: Քեզի կը թողում որ հաւանաձգ ընտրես և մինչև կենացդ
 վերջն իբր պալատուէն և ինքնիշխան ուղած տեղը սպրին:»

Պարսկաստանի արքունեաց արքայական փոխարէն մ'երեւցաւ թագա-
 ւորին առաջարկութիւնը, սակայն հնդկացին անկից բարձր բանի մը
 աչք ունէր. ուստի թագաւորին պատասխանեց.

«Ահ հափառ տէր, չափազանց շնորհապարտ եմ ձեր ըրած առաջ-
 արկութեան և խօսքով չեմ կարող իմ շնորհակալիքս յայտնել այս առա-
 տաձեռնութեան համար: Սակայն կը պաղատիմ որ չդժարիք եթէ հա-
 մարձակիմ ընելու որ ձիւ չեմ կարող ձեզ յանձնել մինչև որ իշխանուհի
 աղջիկդ ինձ կին չընեմ: Միտակ այս պայմանաւ կրնամ զիջանիլ այս
 ձին տալու:»

Պարսից թագաւորին բոլորովէն դանդաղ պալատահանները հնդկա-
 ցիին արտառոց պայմանը լսելով քահ քահ խնդացին: Բայց Ֆիրուզ
 շահ իշխանն որ թագաւորին անդրանիկ որդին և գահաժառանգն էր,
 այս պայմանը լսելուն մեծ զայրոյթ մ'զգաց: Իսկ թագաւորին կարծի-

քը տարբեր էր, և կը տրամադրուէր իր հետաքրքրութիւնը գոհ ընե-
 լու համար Պարսից իշխանուհին հնդկացիին զօհելու: Սակայն այժ
 որչա՛մն իսկոյն ընելու կը վարանէր:

Ֆիրուզ շահ իշխանն տեսնելով որ իր հայրը տալիք պատասխանին
 վրայ կը վարանէր, վախցաւ որ հնդկացիին ինդիքը չկատարէ. այս-
 պիսի բան մ'ոչ միայն արքայական արժանապատուութեան, այլև իշ-
 խանուհի քրոջն և իր անձին նախատական կը սեպէր: Աւստի բերանը
 բացաւ և իր հօրմէն սուաջ՝ «Ահ հափառ տէր իմ, ըստ, ներէ ինձ
 եթէ կը համարձակիմ հարցնելու թէ ի՞նչպէս կը վարանիս մերժելու
 վատանուն ձեռնածուի մը լիբը առաջարկութիւնն, և այսպէս անոր
 յոյս կտաս աշխարհիս ամենէն հօր թագաւորներէն մէկուն փեսան
 ըլլալու: Կ'աղաչեմ լաւ կըռես ոչ միայն քու անձնական սրախիզ,
 այլ նաև քու աստիճանիդ և նախնեացը ահոտականութիւնը:

— Արդեակ իմ, վրայ բերաւ Պարսից թագաւորը, քու յանդիմա-
 նութիւնդ չեմ մղաղղեր և կը դովեմ այդ եռանդդ որով ազգատոհ-
 միդ փայլը նոյն վիճակին մէջ պահելու կը ջանաս: սակայն այս ձիւն
 դերազանցութիւնը չես նկատեր, և ոչ կը մտածես որ հնդկացին, ե-
 թէ ինդիքը չկատարեմ, կրնայ ուրիշի մ'ընել իր առաջարկութիւնն,
 և պատոյ ինդիքը մէկդի թողլով իր պայմանն ընդունելի ըլլալ,
 այն ատեն աստիկ պիտի վշտանամ եթէ ուրիշ թագաւոր մ'ենէ-
 պարծի որ իզնէ աւելի վեհանձն է և այն ձին ստանալու փառքէն
 զիս գրեած է, քանի որ նոյն ձին աշխարհիս մէջ ամենէն եղական և
 հիանալի բանը կը նկատեմ: Սակայն ասով չեմ ուզեր ընել որ իր ու-
 ղածը կատարելու կը զիջանիմ: Կարելի է ինքն ալ կ'զգայ որ դրած
 սրբյանը չափազանց է, և իշխանուհի աղջիկս մէկդի թողլով կրնամ
 ուրիշ պայմանով մը գործը կարգադրել: Սակայն վերջնական սակար-
 կութիւնն ընելէն առաջ՝ կը փափաքիմ որ ձին դու անձամբ քննես և
 փորձ մ'ընես, և ըստ այնմ քու կարծիքդ յայտնես: Տարակոյս չունիմ
 հնդկացին յանձն պիտի աւնու այս փորձն ընելու:»

Արովհետեւ ընական է մարդուս իր փափաքին յուսալ, հնդկացին
 կարծելով որ Պարսից թագաւորին խօսքերէն կարելի է հետևցնել որ
 սոլորովին իր ինստութիւնը չպիտի մերժէ; իր ձին առաջարկած պայ-

մանին համեմատ ընդունելու, և թէ արքայորդին ալ ինչպէս որ կ'ընէր՝ փոխանակ հակառակելու, կրնար նպաստաւոր ըլլալ իրեն, ոչ միայն թագաւորին առաջարկութիւնը չմերժեց այլև ինդպիսի զայն ընդունեց. և իր հաճութիւնը ցոյց տալու համար ձիուն մօտենալով իմաց տուաւ արքայորդոյն որպէս զի ձին հեծցնելու անոր օդնէ և անոր հասկացոյց թէ ինչ կերպով պէտք էր վարել զայն:

Ֆիրուղ շահ իշխանը՝ հրաշալի ճարտարութեամբ մը՝ ձին հեծաւ առանց հնդկացիին օգնութեան, և այն ինչ իր ոտքն ասպատանին անցոյց որ առանց հնդկացիին հրահանդին սպասելու, զարձուց երիթը զոր անկէ առաջ տէրն ալ զարձուցեր էր հեծնելու ատենն: Երբ այն երիթը դարձոյ՝ ձին՝ աղիղէն թռող նետի պէս վեր ելաւ, և այսպէս՝ քիչ ատենի մէջ՝ թողաւորը, պալատականք և բոլոր հանդիսականները զանի աչքէ կորուսին:

Աչ ձին և ոչ Ֆիրուղ Շահն օդին մէջ չէին երևեր, և Պարսից թագաւորն ընդունայն կը ճղնէր զանի նշմարելու, երբ հնդկացին՝ այս դէպքին վրայ շուարելով՝ աթուին առջև ծռեցաւ և ստիպեց թագաւորն որ աչքն իր վրայ դարձնէ և լսելիքը լսէ:

«Ա. հ. հափառ տէր, ըսաւ, անշուշտ դիտեցիք որ արքայորդին այնչափ շուտով ձին հեծաւ որ ժամանակ չթողոյց ինձ յայտնելու թէ ինչպէս պիտի վարէ ձին: Իմ ըրածս ընելով՝ կարծեց թէ օդին մէջ ուղևորելու համար իմ խորհուրդէս պէտք չունի. բայց չգիտէ նա թէ ձին ետ դարձնելու միջոցն ինչ է: Աստի, տէր իմ, ձեր վեհափառութենէ՝ կը խնդրեմ որ եթէ արքայորդոյն դժբաղդութիւն մը պատահի, իմ վրաս յանցանք մը չլինէք, քանի որ արդարատէր էք և ես ալ բոլորովին անպարտ եմ այս մտինն:»

Հնդկացիին խօսքը չափազանց վշտացոյց Պարսից թագաւորն, որ հասկեցաւ թէ իր որդոյն դոնուած վտանգը մեծ է, եթէ իրաւ էր, ինչպէս որ հնդկացին կը հաստատէր, թէ ձին իր եղած տեղը դարձնել տալու դադանիք մ'ունի, ճամբայ հանելու դադանիքէն բոլորովին տարբեր: Թագաւորը հարցոյց թէ ինչո՞ւ համար իր որդին ետ չկանչեց այն միջոցին որ մեկնելու վրայ էր:

«Ա. հ. հափառ տէր, պատասխանեց հնդկացին, դուք ինքնին տեսաք

թէ ինչ արագութեամբ ձին և իշխանը ճամբայ ելան. զարմանքէս ասի ՚ի բերան մնացի, և տակուին կը զարմանամ, և երբ միտք ըրի զանկ կանչելու, արդէն այնքան հեռացեր էր որ ձայնս չպիտի լսէր, և թէ լսէր անգամ չպիտի կարենար ձին վարել և ետ դարձնել, քանի որ դադանիքը չգիտէր և անհամբերութենէ իղնէ խմանալու չսպասեց: Բայց, վեհափառ տէր, յարեց նա, յուսալի է որ իշխանն՝ այն տագնապին մէջ՝ ուրիշ մէկ երիթ մ'ալ պիտի տեսնէ, և այն ալ դարձնելով՝ ձին պիտի սկսի շուտ մը վար դէպ ՚ի երիթը իջնել, և այն տեղ ուղած տեղը կրնայ դադրել՝ սանձէն վարելով ձին:»

Հնդկացիին խօսքին չնայելով՝ թէ և շատ հաւանական էր, Պարսից թագաւորն իր որդոյն անխուսելի վտանգին վրայ մտածելով հարեկ ըսաւ.

«Ենթադրելով թէ և ստոյգ չէ, թէ իմ որդիս միւս սեպը տեսնէ և ըսածիդ պէս դարձնէ, միթէ դարձնալ ձին փոխանակ դեռինն իջնելու, չկրնար ըլլալ որ ժայռերու վրայ իջնէ, կամ անոր հետ ծովուն խորը դահաւիթի:

— Ա. հ. հափառ տէր, պատասխանեց հնդկացին, կրնամ այդ ձեր վախը փարատել. հաւատաւորով որ ձին ծովերէն կ'անցնի առանց իջնելու և միշտ ձիաւորը կ'առնու. ուղած տեղը կը փոխադրէ. ուստի կրնաք ապահով ըլլալ որ եթէ անգամ մը միւս սեպը տեսնէ իշխանը, ձին իրեն ուղած տեղը պիտի տանի գիրքն. և հաւատալի չէ չդադարի այնպիսի վայր մ'որ իրեն օդնութիւն չպիտի պակսի և ինքզինքը ճանչցնելու կարող պիտի ըլլայ:»

Հնդկացիին այս խօսքին վրայ՝ «Ինչ և իցէ, պատասխանեց Պարսից թագաւորը, քանի որ չեմ կրնար ըսածիդ վրայ վստահիլ, որդոյս կենացը կ'ըլլայ պատասխանատու պիտի մնայ, եթէ երեք ամուսն մէջ ողջ առողջ վերադարձը չտեսնեմ, կամ եթէ չխմանամ որ արդարև կենդանի է:»

Ասոր վրայ թագաւորը հրամայեց որ հնդկացին բռնեն և նեղբանտի մը մէջ դնեն, յետոյ իր սպառառ քաջու եցաւ սաստիկ տրամալով որ «Եվրոզի հանդէսն» որ Պարսկաստանի ամենէն նշանաւոր տունն է, այնչափ ցուալի վարձան մ'ունեցաւ իրեն և արքունիաց համար:

Սահայն Գիրուզ իշխանն ինչպէս որ արդէն լսինք, անհնարին արագութեամբ օդն ելաւ, և մէկ ժամու մէջ այնչափ բարձրացաւ որ երկրիս վրայ ոչ ինչ զանազանել չէր կարող, վասն զի լեռներն ու բլուրները դաշտերուն հետ խառնուեր էին:

Ահա այն ատեն արքայորդին մտածեց ելած տեղը դառնալու, և կարծեց թէ նոյն սեպը հակառակ կողմը դարձնելով նոյնպէս և սանձը կրնայ յաջողիլ. սակայն մեծ ճշտութեամբ իր գարմանքն երբ դիտեց որ ձին մը և նոյն արագութեամբ զինքը վեր կը բարձրացնէր: Նոյն սեպը քանի մ'անդամ ևս դարձուց, բայց ՚ի գուր: Այն ատեն քաջ զոյգ իր սխալմունքն և զղջաց որ մեկնեւէն առաջ պէտք եղած հրահանգը չխնդրեր էր հնդկացիէն ձին կառավարելու համար: Իր վտանգին մեծութիւնը տեսաւ, պահ մը խորին մտածեց, և ձիուն գլուխն ու վիզը քննելով ուրիշ սեպ մը տեսաւ ակննջին աջ կողմն, առաջինէն փոքր ու գրեթէ անյայտ: Նոյն սեպը դարձուց, և իսկոյն գիտեց որ գէպ ՚ի երկիրը կ'իջնէր, ձիւտ այն շտկութեամբ որ ելած էր թէ և աւելի ծանր կերպով:

Արդէն կէս ժամ կտր որ զիշերուան խառարը ծածկեր էր երկիրն, այն կողմն ուր Գիրուզ իշխանն ուղղահայեաց դժով կը գտնուէր՝ երբ սեպը դարձուց: Բայց որովհետև ձին իջնելը շարունակեց, արեն ալ մարը մտաւ, և ինքզինքը խորին մթութեան մէջ գտաւ: Աւտի ոչ միայն չկրցաւ տեղ մ'ընտրել որպէս զի կարենայ անվտանգ իջնել, այլ նախապես ամբար ձիուն վրայ արձակ թողուլ՝ սպասելով անհասարակ որ կանկ առնու, թէ և մեծ անհասարակութեան մէջ էր թէ արդեօք մարդաշէն, ամայի տեղ մը թէ գետի կամ ծովու վրայ պիտի կենար:

Ի վերջէ ձին կեցաւ և դադար առաւ: Ան ուրիշ անցեր էր, երբ Գիրուզ իշխանը ձիէն վար իջաւ յետին ծայր յողմած, վասն զի առաւօտէն ՚ի վեր ոչ ինչ չէր կերած: Այն մթութեան մէջ առաջին զործն ճշտութեամբ գիտել թէ արդեօք ուր կը գտնուի. տեսաւ որ փառաւոր պալատի մը պատշգամբն վրայ կը գտնուի՝ որ մարմարէ վանդակ մ'ունէր յոլորակէր կ'ընկնէր շափ բարձր: Պատշգամբ քննելով սանդուղը գտաւ ոսկից վեր կենլուէր, և դուռն ալ դոց չէր, այլ կէս մը բաց:

Եթէ Գիրուզ իշխանէն տարբեր մէկն ըլլար չպիտի համարձակէր անկից վար իջնելու՝ այն ստակալի մթութեան մէջ, նա մանաւանդ անոր համար որ չպիտի թէ արդեօք բարեկամը թէ թշամիլի մը ասն մէջ կը գտնուի. այս արդեւքն ալ զինքը չզսպից:

Եւ միտքս մարդու մը վնաս հասցնել չէ, ըսաւ ինքն իրեն, և կարելի է զիս առաջ պիտի տեսնեն, և պիտի նային որ ձեռքս զէնք չլայ մարդասիրարար ինձ մտիկ պիտի ընեն իմ կենացս վնասեւէն առաջ:

Աւտի քիչ մ'ևս դուռը բացաւ առանց ազմակ հանելու և մեծ զոռ շտկութեամբ վար իջաւ, որպէս զի սխալ քայլ մ'առնելով չիցնայ և մարդ չարթոյնէ: Արեջտակէս յաջող դնաց գործն, և սանդուղին վարի կողմը մեծ սրահի մը դուռը բաց գտաւ, և այն տեղ ալ լոյս կար:

Գիրուզ իշխանը դրան վրայ կեցաւ, և ակննջ կախելով ուրիշ աղամուկ չլսեց բայց եթէ խորունկ քնացող մարդոց այլ և այլ կերպով խրկալը: Սրահին դռնէն ներս մտնելով քիչ մ'առաջ դնաց, և լսալտերի մը լուսին տեսաւ որ քնացողները սեամարթ ներքինիներ են, և ամէն մէկը մերկ սուր մ'ունէր իր քովն. սակից հասկցաւ որ թագուհւոյ մը կամ իշխանուհւոյ մը սրահակներն են:

Իշխանուհւոյն քնացած սենեակն այն սրահէն կ'երթուէր, և դուռը բաց ըլլալով գիւրին էր նշմարել այն տեղ գտնուած պայծառ լոյսէն՝ որ բարակ մետաքսի դռնակէ մը կը թափանցէր՝ որ իրօք իշխանուհի մ'է:

Գիրուզ շահ մինչև դռնակն առաջանցաւ, մտաբերուն վրայ կոխելով առանց ներքինիներն արթնցնելու. դռնակը բացաւ, և երբ ներս մտաւ, սենեկին փառաւոր դարդարանքը քննելու չկեցաւ, որ արքայալիսն շքեղութիւն ունէին, և նոյն պահուն իր ուշադրութիւնը չէին կրնար զբաւել, այլ աւելի կարեւոր բանի մ'աչքը դարձուց: Շատ մը անկողիններ տեսաւ, մէկը բազմոյն վրայ և միւսները գետին փռուած: Իշխանուհւոյն նստիչները վարի մահճակներուն վրայ ննջեր էին, որպէս զի անոր պիտոյքը հոգան և մինակ չթողուն, իսկ իշխանուհին բազմոյն անկողին վրայ պառկեր էր:

Այս զանազանութիւնը գիտելով Գիրուզ շահ իսկոյն ընտրութիւն ըրաւ և շտակ իշխանուհւոյն մօտեցաւ, առանց մէկն արթնցնելու:

Երբ բառական մօտ գնաց, զմայրիցաւ և սաջի տեսքով Կ սէր բորբո-
րիցաւ :

«Երկին, զոչկ ինքնովին, իմ ճակատադիրս իս այս տեղ բերաւ
արդեօք որ աղտոտութիւնս ձեռքէ հանեմ, թէև մինչև այժմ անարատ
սրահած եմ: Միթէ անվրէպ ստրկութեան մէջ Զ պիտի ինամ, երբ
աչքերը բանայ, եթէ այս աչքերը վերջին վայլ ու կատարելութիւն
տան այսպիսի հրաշարի զեղեցիութեան: Կնչ օդուտ, պէտք է համ-
բերել, վասն զի եթէ քաշուիմ ինքնասպան պիտի ըլլամ, և հարկն
այսպէս կը սրահանջէ:»

Իր վիճակին և իշխանուհոյն զեղեցիութեան վրայ այս խորհրդա-
ծութիւններն ընելէն ետև՝ Ֆիրուզ շահ ծնկի վրայ եկաւ և իշխանու-
հոյն շապիկն կախուած թեւոցին ծայրէն բռնելով՝ որմէ ձիւնի պէս
կլոր թե մը դուրս կ'երնէր, թեթև մը քաշեց:

Իշխանուհին աչքը բացաւ, և վայելչակազմ, զեղադէմ ու աղոթ
հաղուած մարդ մ'իւր առջևը տեսնելուն զարմանալով՝ շուարեցաւ
մնաց, թէև երկիրդ Կնչան մը չյայտնեց:

Իշխանն այս պարագայէն օգուտ քաղելով, զլուին անոր ռաիցը
դորդին վրայ ծռեց և ապա վերցուց ու ըսաւ. «Յարդելի իշխանու-
հի, արաքոց կարգի և հիանալի դիպուածով մ'ռաիցը տակ կը տես-
նէք աղեքստրիւ իշխան մը, Պարսից թագաւորին որդին, որ երէկ
առտու իր հօրը մօտ կը դանուէր, հանդիսաւոր տօնի մը զուարճու-
թեանց տօնն, և ահա այս սրահուս անձանօթ երկրի մը մէջ կը
դանուի, և մուռնելու վտանգին մէջն է, եթէ ձեր բարետիրութեան և
վիհանձնութեան հավատակ անպաշտպան մնաց: Այս պաշտպանութիւ-
նը, պաշտելի իշխանուհի, ձեզնէ կը խնդրեմ, և վտահ հեմ որ չպիտի
մերժէք: Այս մասին համոզումն այնքան զօրաւոր է, որչափ որ կա-
րելի չէ այդ ձեր զեղեցիութեամբ, շնորհօք և վեհասիտութեամբ
անդժութիւն ունենայք:»

Ֆիրուզ շահին առջև դանուող իշխանուհին Պէնկալի իշխանուհին
էր, այս անուն տէրութեան թագաւորին անդրանիկ աղջիկն՝ որուն հա-
մար մայրաքաղքէն հեռու շինք էր այն սրահան՝ որ ստեպ կլար իշ-
խանուհին զի զայն զուարճութիւններ վայելելու: Ամեն փափաքելի

բարետիրութեամբ Ֆիրուզ շահին ըսածները մտիկ ընելէն ետև՝ նոյն
բարետիրութեամբ պատասխան տուաւ .

«Իշխան, անհոգ եղիւր. բարբարոս երկրի մը մէջ չես դանուիր .
ինչպէս Պարսկաստան՝ նոյնպէս Պէնկալի տէրութեան մէջ կը տիրեն
հիւրասիրութիւնը, մարդասիրութիւնն և քաղաքավարութիւնը:
Ինչդրած պաշտպանութիւնդ ևս չեմ շնորհողը քեզ միայն, այլ արդէն
կը վայելն զայն ոչ միայն սրահաւոր այլ նոյն խն բոլոր տէրութեանս
մէջ. կրնաս հաւտալ խօսքիս և վտահ ըլլալ:»

Պարսից իշխանը Պէնկալի իշխանուհոյն բարետէր շնորհաց իր ե-
րախտադիտութիւնը յայտնելու կը պատրաստուէր և իր զլուին արդէն
վար ծռեր էր Կնչան շնորհակալութեան, բայց իշխանուհին անոր
ժամանակ չտուաւ և ըսաւ .

«Թէև չափազանց հետաքրքիր եմ իմանալու թէ Կնչ հրաշքով
Պարսկաստանէն այս տեղ եկար հասար այսչափ սուղ ժամանակի մէջ,
և թէ Կնչ հմայութեամբ այս տեղ մտար զաղանի՝ այնպէս որ սրահակ-
ներս չիմացան, սակայն երևակայելով որ կերակուրի պէտք ունիս, լա-
ւաղոցն կը սեպեմ՝ համբերել մինչև վաղը, քանի որ հիմակ մեր հիւրն
ես, ուստի հրաման պիտի տամ կանանցս որ քեզ իմ սենեակներէս մէ-
կը բնակեցնեն, քեզ պէտք եղած կերակուրը մեծարեն, և թողուն որ
խոնջէնքդ առնուս, մինչև որ կարող ըլլաս իմ հետաքրքրութիւնս դոհ
ընելու և ես ալ քեզ մտիկ ընելու վիճակին մէջ դանուիմ:»

Իշխանուհոյն կիներն՝ որ արդէն Ֆիրուզ շահին խօսքերէն արթնցեր
էին, յետին ծայր զարմանալով թէ ինչպէս դադա ու գողի կարող եղեր
է իրենց սենեակը մտնելու առանց սրահակներն արթնցնելու, այս կի-
ները կ'ըսեմ, այն ինչ իմացան իշխանուհոյն զխաւորութիւնն որ
շուտ մը հազուեցան և սրահարատ դանուեցան անոր տակը հրաման-
ները կատարելու: Ամէն մէկն՝ իշխանուհոյն սենեակը լուսաւորող
մոմերէն հատ մը ձեռքն առաւ, և երբ իշխանը յարգանք քաշուելով
ուղեց դուրս ելնել, կիներն անոր առջևէն դացին և զեղեցիկ սենեակ
մը տարին, ուր ուննք անոր մահճի մը սրահարատեցին, մինչդեռ այլը
խոհանոցն ու շտեմարանը դացին պէտք եղած ուտելիքը բերելու:

Թէև անսպաս հ ժամանակ մ'էր, զարձեալ Պէնկալի իշխանուհոյն

նամ իշանն ըն երկար ատեն չսպասեցուցին Քիրուզ շահը : Շատ տեսակ կերակուրներ բերին : Իշխանը հաճածն առաւ , և փափաքածին չափ ուտելէն ետեւ՝ կիները վար իջան և ազատ թողուցին զինքն որ պառկի , ամէն պահարանները յոյց տալէն ետեւ՝ որպէս զի եթէ բանի մը պէտք ունենայ անկից առնու :

Պէնկալի իշխանուհին Պարսից իշխանին հրապուրելի կերպերուն , խեղճին և այլ և այլ կրից վրայ զմայլելով՝ այն կարճատե խօսակցութեան ժամանակ չկրցիր էր աչքը նորէն դոցել , երբ իր նամ իշանն ըրր զարձան որպէս զի պառկին : Հարցուց անոնց թէ արդեօք պէտք եղած ինամը տարլին և զո՛հ ըրին զինքն , եթէ ամէն պիտոյքը հողացին , և մանաւանդ հարց ու փորձ ըրաւ թէ ի՞նչ կարծիք ունին այն իշխանին վրայ :

Իշխանուհւոյն նամ իշանն իր առաջին հարցումներուն զոհացուցիչ պատասխան տալէն ետեւ՝ վերջին հարցման մասին ըսին .

« Իշխանուհի , չգիտեմք թէ զուրիշ կը խորհիս անոր վրայ : Իսկ մենք կարծենք թէ մեծ երջանկով թիւն մը կ'ըլլար մեզի համար եթէ թագաւոր հայրդ այսպիսի սիրալի իշխան մ'իրք ամուսին տար քեզի : Պէնկալի արբունիքն անոր նմանը չկայ , նոյնպէս չենք կարծեր որ մօտակայ տէրու թիւններու մէջ քեզի ալ ժանի իշխան մը գտնուի : »

Այս շոգումարար խօսքերը Պէնկալի իշխանուհւոյն հաճելի եկան , բայց որովհետեւ իր կարծիքն այս մասին յայտնել չէր ուզեր , խնդրեց որ լռեն : « Դուք շաղակաւ օրիորդներ էք , ըսաւ , գայէք պառկեցէք , և թող տուէք որ ես ալ քնանամ : »

Հետեւեալ օրն այն ինչ իշխանուհին անկողնէն ելաւ որ խնդրն վրան զլուխը շարկելու սկսաւ : Մինչև այն օրն այնչափ հոգ և խնամք տարած չէր զարդարուելով իր հօշոյիին առջև կենալով : Իր նամ իշանն ըրր մեծ համբերութիւն ունեցան քանի քանի անգամ անոր հաղուսան ու կապուսար շտկելու և աւրելու , մինչև որ լիովին զոհ ըլլայ :

« Պարսից իշխանին աչքին զարկի , ըսաւ նա ինքն իրեն , երբ անկապուստ էի , ուրիշ բան պիտի տեսնէ երբ լաւ մը զարգարտ լիմ : »

Ուստի զլուխը խոշոր և փայլուն անդամանդներ դրաւ , վրիզ մանեակ մը , թեկերուն անցուց սպարանջաններ և ակնակուռ գօտի մը

մէջքէն , ամենքն ալ մեծաղին . իսկ հաղած հաղուսար՝ Հնդկաստանի ամենէն ընտիր կերպուտ շինուած էր . կերպուս մ'որ մինակ թագաւորներու , իշխաններու և բամբիշներու համար կը յօրինէին և այնպիսի զոյն մ'ունէր որ իր բոլոր հրասպաններն երեսն կը հանէր : Քանի մ'անգամ ևս իր հայլին նայելէն և իր նամ իշանն ըրուն հարցնելէն ետեւ թէ արդեօք զարգարանքին բան մը կը պակսի , մարդ զրկեց իմանալու համար թէ արդեօք իշխանն արթնցեր է . և եթէ արթուն է և հագուած՝ աներկիտ ըլլալով որ պիտի խնդրէ զալ զինքը տեսնելու , ապսպրեց իր նամ իշխանն ըսելու թէ ինքն անձամբ պիտի գայ անոր սենեակն և թէ այսպէս վարուելու պատճառ ունի :

Պարսից իշխանն՝ զիշխուան կորուսած քունը ցորեկն առեր և իր տածանելի ուղեորութեան նեղութիւնները փարատեր էր , երբ Պէնկալի իշխանուհւոյն կողմէն բարի լոյսն ընդունեց նամ իշխան մը միջոցաւ :

Պարսից իշխանն՝ առանց ժամանակ տալու իշխանուհւոյն նամ իշխանն որ բնելիքը յայտնէ , հարցուց անոր թէ իշխանուհին կրնայ զինքն ընդունիլ որպէս զի իր յարգանաց պարտքը մատուցանէ : Սակայն երբ նամ իշխանն իրեն տրուած հրամանը կատարեց , Պէնկալի պալատին տիրուհին է , և ես ալ իր հրամանները կատարելու պատրաստ եմ : »

Երբ Պէնկալի իշխանուհին իմացաւ որ Պարսից իշխանն իրեն կ'ըստպասէ՝ անոր խոցն հեկաւ : Փոխադարձ բարեկներ տալէն ետեւ՝ իշխանը ներս մ'խնդրեց որ խորունկ քնացած ատեն իշխանուհին արթնցուցեր էր , և իշխանուհին ալ հարցուց թէ ի՞նչպէս անցուցեր է զիշխանն և ի՞նչ վիճակի մէջ կը գտնուի . ապա զնաց բազմեցին վրայ նստաւ , իշխանն ալ նոյնն ըրաւ յարպանօք քիչ մը հեռու նստելով :

Այն ատեն իշխանուհին սկսաւ խօսիլ այսպէս .

« Իշխան , կրնայի քեզ ընդունիլ այն խոցն ուր այս զիշխանն իս պառկած դատար , բայց որովհետեւ ներքինատեսան ազատութիւն ունի ներս մտնելու , մինչդեռ այս տեղ չէ կարող մտնել առանց իմ հրամանիս , հետաքրքիր ըլլալով իմանալու այն հիանալի դէպքն որով քեզ տեսնելու բարեբաղդութիւնն ունիմ , լաւագոյն համարեցի զալ անձամբ գտնել քեզ այս տեղ , քանի որ ոչ ոք կարող է մեր խօսակցութիւնն

ընդմիջել : Աստի կ'ազաչեմ որ իմ հետաքրքրութիւնս դո՛ճ ընելու շնորհ ընես :»

Պէնիւալի իշխանուհւոյն փառաբեր կատարելու համար՝ Ֆիլրուզ շահն իր սրասնութիւնն սկսաւ Նէվրուզի հանդիսական տօնէն, և մի առ մի յայտնեց այն ամէն զուարճալի տեսարաններն որ սովորաբար բոլոր Պարսկաստանի արքունեաց մէջ և յատկապէս Շիրազ քաղաքը կը կատարուին : Յետոյ դիւթահար ձիուն եկաւ, և անոր նկարադիրն ըրաւ : Այնպիսի նշանաւոր ժողովի մ'առջև հնդկացիինցոյց առած հրաշալի դործը լսելով իշխանուհին համոզուեցաւ որ աշխարհիս մէջ անկէ տեսելի հրանալի բան մը չկրնար ըլլալ :

«Իշխանուհի, շարունակեց Պարսից իշխանը, կրնաս դատել որ՝ հայրս թագաւորն՝ որ ոչ ինչ չինայեր ամէն տեսած հետաքրքրաշարժ և սնդիւտ բաներով իր դանձր ճոխայնելու, չափազանց փափաք մ'ուսեցաւ այն ձին ստանալու : Աստի հարցոյց հնդկացիին թէ ի՞նչ կը սլահանջէ այն ձիուն համար :

«Հնդկացին արտառոց սրտասխան տուաւ : Յայտնեց թէ ձին չէր դնած այլ իր միակ աղջիկը տալով փոխարէն ստացեր էր զայն, և որովհետեւ այսպիսի սլայմանաւ միայն կ'ուզէր յանձնել կենդանին, կը խնդրէր որ հայրս իրեն կնութեան սայ իմ՝ քոյրս յատուկ հաւանութիւնն առնելով :

«Հօրս դահին բոլորտիքը կեցող անհամար սրալատականներն՝ որ այս սլայմադակ սլահանջումը լսեցին, սկսան բարձրաձայն ծիծաղիլ . իսկ ես այնքան զայրացայ որ իմ զայրոյթս չկրցայ զսպել, նա մանաւանդ գիտեցի որ հայրս իր բռնելիք ճամբուն վրայ կը վարանէր և ինչ սրտասխան տալը չզրկուէր : Եւ արդարեւ գիտեցի որ քիչ մ'աւ սլիտի հաճէր հնդկացիին խնդիրը կատարելու, եթէ իսկոյն անոր չյայտնէի թէ ի՞նչ մեծ արատ պիտի բերէր իր արքայական փառաց այնպիսի խնամութեան առաջարկութիւն մ'ընդունելով : Սակայն իմ յանդիմութիւնս բաւական չեղաւ բոլորովին անոր միտքը փոխել, վասն զի միշտ կ'ուզէր այնպիսի զուակելի մարդու մը զոհել իր աղջիկը : Վարձեց թէ կրնայ համոզել իս եթէ ես ինքս անձամբ փորձեմ և իրեն սլես հասկընամ թէ սրչափ մեծ արժէք ունի այն ձին : Աստի ուզեց որ ես քննեմ

զայն, վրան հեծնեմ և ինքիին փորձ մ'ընեմ :

«Իմ հօրս կամքը կատարելու համար, ձին հեծայ, և հնդկացիին ըրածին սլես սեպ մը կար դարձուցի և օդն ՚ի վեր ելայ՝ առանց ուրիշ հրահանգ մը խնդրելու, և այնչափ շուտ սրացայ որ եթէ հաստարազուկ նետաձիգ մ'ետեւս սլաք մը նետէր չէր կրնար ինձ համարիլ :

«Քիչ տեսնուան մէջ՝ այնչափ հեռացայ երկրէն որ վարը բան մը չէի կարող զանաղանել, կարծէի թէ երկնային կամարին կը մօտենամ և զլուխս անոր պիտի երթամ զարնեմ : Այն արագընթաց շարժման և զլուխս անոր պիտի երթամ զարնեմ : Այն արագընթաց շարժման մէջ՝ գրեթէ ինքզինքս կորուսի և չէի տեսներ թէ ի՞նչ մեծ վտանգի մէջ կը գտնուիմ : Ազնոյի սեպը հակառակ կողմէն դարձնել, բայց օգուտ մը չբարեցի, վասն զի ձին իր ընթացքը շարունակեց երկնաձեւ և իս երկրէն հեռացնել : Աւերջապէս ուրիշ սեպ մը նշմարեցի, դարձուցի, և ձին՝ փոխանակ վեր սրանալու, սկսաւ գէպ ՚ի երկիրն իջնել, և որովհետեւ մութը կոխեր էր և չէի կարող երկնալար վարել որպէս զի ապահով վայր մը գաղար առնում, սանձը թողուցի և ճակատադիրս Աստուծոյ յանձնեցի :

Աւերջապէս ձին կեցաւ . վար իջայ, և իջած վայրս քննելով՝ այս սրալատին սրտոշղարմին վրայ գտայ ինքզինքս : Մանդլին դուռն՝ որ կիրաց էր, տեսայ, անձայն վար իջայ, և կէս մը լուսաւորուած սենեակ մ'առջևս ելաւ : Գլուխս երկնցոցի, և թէ և քնացած ներքինիներ և դռնակէ մը սլայծաւ լոյս մը տեսայ, այն ստիպողական վիճակս անխուսելի վտանգը մտցուց, և համարձակեցայ, չըսեմ յանդգնեցայ կամայուկ մ'առաջ անցնիլ և դռնակը բանալ :

«Աւերջող է, իշխանուհիս, սրտմութեանս միւս մասը սլատմել, քանի որ արդէն գիտես : Ար մնայ ինձ միայն քու բարութեանդ և վեհանձնութեանդ շնորհակալ ըլլալ, և ազաչել քեզ որ յայտնեք ինձ թէ ի՞նչ կրնայիմ արդեօք կարող պիտի ըլլամ այսչափ բարեաց փոխարէն հատուցանել և քեզ դո՛ճ ընել : Որովհետեւ՝ ըստ իրաւանց՝ քու ստորակը եմ և չեմ կարող անձս քեզ նուիրել, կը մնայ միայն սիրտս : Ի՞նչ կ'ըսեմ, իշխանուհիս, այս սիրտս այլ ինչ չէ, քու հրապոյրներով զբաւեցիր զայն, այնպէս որ՝ նչ միայն չեմ փափարիր զայն եւս ուզելու, այլ քեզի կը թողում լիովին : Այսպէս՝ ներքէ ինձ յայտնելու որ ոչ

միայն իբր իմ սրբին այլև կամացս իշխանութիս կը նկատեմ՝ քեզ ։»

Ֆիրուզ շահ այս վերջին խօսքերն այնպիսի կերպով ու ձայնով արտասանեց որ Պէնկալի իշխանութիս վայրկեան մը շտարակուսեցաւ իր գեղեցկութեան ըրած տոյաւորութեան վրայ ։ Բնաւ դժարը չեկաւ Պարսից իշխանին յայտարարութենէն՝ փոքր ինչ վաղահաս դանկով ։ Երեսը կարմրելուն՝ իշխանին աչքին աւելի գեղանի և սիրալիբ երևցաւ ։

Երբ Ֆիրուզ շահ խօսքը լսնցուց՝ Պէնկալի իշխանութիս ըսաւ .

«Իշխան , թէև մէկ կողմն շատ հաճոյք զգայի այդ հրաշալի բաները լսելով՝ միւս կողմն ահ ու դողս բռնեց երբ քեզ օգին բարձրագաւտունքը տեսայ . որչափ որ բարեբաղդ եմ՝ քեզ իմ առջևս ողջա ուղջ տեսնելուս , սակայն վախս այն ժամանակ միայն փարատեցաւ երբ իմացուցի ինձ որ հնգկայսիկն ձին եկաւ յաջողութեամբ մեր պալատին նշանադամին վրայ կեցաւ ։ Նոյն բանը կրնար ուրիշ տեղալ պատահիլ , բայց ուրախ եմ որ զիպուածը նախագաս համարեց կամ առիթ տուաւ ինձ յայտնելու որ նոյն զիպուածը քեզ ուրիշ տեղալ կրնար տանիլ , բայց չէ թէ այնպիսի տեղ մ'ուր ասկէ աւելի ցնծութեամբ և հաճոյքով ընդունուէիր ։

«Այսպէս , իշխան , զգալի վիշտ մը պիտի զգայի եթէ իրօք հաւտայի ըսածդ թէ գերիս ես , և եթէ այս խօսքդ քու բարեսրտութեանդ նշանը համարելու տեղ , անկեղծ զգացում մը տեսի . և իմ երէկուան ընդունելութիւնս կրնայ սպասում ընել քեզ որ ինչպէս հօրդ արքունիքը՝ նոյնպէս այս տեղ ազատ ես ։

Իսկ սրբին գալով , յարեց Պէնկալի իշխանութիս այնպիսի ձայնով որ մերժում չէր յայտնեց , որովհետև համոզուած եմ որ մինչև այսօր մէկու մը տուած ես և անոր արժանի իշխանութի մը դուած ես , շատ պիտի ցաւիմ եթէ անհաստատիմ՝ ըլլալուդ տեղի տամ ։»

Ֆիրուզ շահ Պէնկալի իշխանութիս բողբոջել ուղեց թէ Պարսկաստանէն ազատ սրտով եկած է . բայց այն միջոցին որ խօսքը պիտի շարունակէր , նածիշտ մ'եկաւ իմացուց որ ճաշը պատրաստ է ։

Այս ընդմիջումն ազատեց թէ իշխանն և թէ իշխանութիս այնպիսի բացատրութենէ մը որով երկուքնին ալ պիտի շփոթէին և պէտք ալ

չունէին ։ Պէնկալի իշխանութիս լիապէս համապետեցաւ Ֆիրուզ շահին անկեղծութեան վրայ , իսկ իշխանը՝ թէև իշխանութիս միտքը չյայտնեց՝ հասկեցաւ անոր խօսքերէն և ուշադիր ունկնդրութեան , թէ պէտք է դո՛հ ըլլայ իր երջանկութեան ։

Որովհետև նածիշտը դունակը բացի կ'սպասէր , Պէնկալի իշխանութիս քաղ երեսնով Պարսից իշխանին ըսաւ , որ նոյնպէս ուք ելաւ , թէ սովոր չէր այնչափ կանուխ ճաշել , բայց տարակոյտ չունենալով որ երեկոյին անշահ ընթրիք մը մեծարած են , հրաման տուեր էր որ սու վերականէն աւելի կանուխ պատրաստեն ճաշն . և այս խօսքերն ըսելով իշխանն առաւ և փառաւոր սրահ մը տարաւ . նոյն սրահին միջ պատրաստեց և առատ կերակրօք լիցուցի էին սեղանը ։ Սեղան նստան , իշխանութիս բազմութիւ ազախիններն՝ որ գեղանի էին և պերճօրէն հաղուած՝ զուարճալի խմբերդ մ'սկսան նուագարաններով և ձայնով , և այս երաժշտութիւնը մինչև ճաշին զաղբիլը շարունակեցին ։

Որովհետև խմբերդն անուշէր և այնպէս մեղմ որ իշխանութիս հոյն և իշխանին խօսակցութիւնը չէր խափաներ . և հապկերոյթին մեծ մասն անցուցին իրարու մեծարելով , իշխանութիս կը յորդորէր իշխանն որ ուտէ , և իշխանն ալ իր կողմն անոր դատած բաներէն անոր կը մեծարէր , և այնպիսի քաղաքավարական ձևեր ու բերաններ կը դործածէր որ ինքն ալ նոր նոր մարդավարական խօսքեր կը լսէր իշխանութիս կողմն , և այս սիրալիբ փոխադարձ յարարելութեան միջ սէրն աւելի յատաշարիմութիւն ըրաւ երկուստէք , քան թէ առանձին խօսակցութեան միջ՝ որ թեբևս կանխակալ համարուէր ։

Աւերջապէս իշխանն ու իշխանութիս սեղանէն ելան ։ Իշխանութիս առաւ Պարսից իշխանն և մեծ ու փառաւոր դահլիճ մը տարաւ , որ օսկեղոյն կատրոյտ էր , համեմատութեամբ շինուած և պերճ կարասօք զարդարուած էր ։ Բազմոցին վրայ նստան , այս բազմոցը պարտիզին վրայ կը նայէր և ախորժելի տեսք մ'ունենալով՝ Ֆիրուզ շահ չափազանց դո՛հ եղաւ զանազան ծաղկանց , տունիբուռն և ծառերուն նայելով , որոնք Պարսկաստանի բոյսերէն տարբեր էին և զերտզանց ։ Այս առթիւ իշխանութիս հետ խօսք բացաւ և անոր ըսաւ .

«Իշխանութի, կարծեր էի թէ մինակ Պարսկաստանի մէջ հոյակապ պալատներ, զմայլելի պարտէզներ կան, արքունի վեհախոտ թեան արժանի. բայց կը զիտեմ որ այն ամէն տեղերն ուր մեծ թագաւորներ կը գտնուին՝ թագաւորներն իրենց մեծութեան և զօրութեան յարմար ասպարաններ կրնան կառուցանել, և թէ շինութեան և երկրորդական մասերուն մէջ տարբերութիւններ գտնուին, դարձեալ շքեղութեան և մեծութեան կողմէն իրարու կը նմանին»:

— Իշխան, ըստ Պէնկալի իշխանուհին, որովհետեւ Պարսկաստանի պալատներու վրայ գաղափար մը չունիմ, չեմ կրնար ըրած բաղդատութեանդ վրայ կարծիք մ'ունենալ և ըստ այնմ գտնել, բայց որչափ անկեղծ ըլլաւ, դժուարաւ կը համոզուիմ որ իրաւացի ըլլայ կարծիքդ, կը ներես ինձ և թէ ըսեմ որ փոքր ինչ կողմնապահութիւն կայ ըսնին մէջ: Սակայն դարձեալ չեմ ուզեր որչափս կտրել քու առջևդ. ըստ աչքեր և ըստ ճաշակ ունենալուդ կ'երեւակայեմ որ քաջ կը գտես ամէն բան, բայց կը հաւատեմ քեզ որ իմ ասպարանս շատ պղտիկ բուն մը կ'երեւի ինձ երբ իմ հօրս պալատին հետ կը բաղդատեմ, քանի որ անոր պալատը թէ մեծութեան, թէ գեղեցկութեան և թէ հարստութեան կողմէն խմբէս գերազանց է: Գու ինքնին կրնաս գտնել երբ նոյնը տեսնես: Արովհետեւ դիպուածը քեզ այս թագաւորութեան մայրաքաղաքը բերաւ, տարակոյս չունիմ որ կը փափաքես զայն տեսնել և հօրս այցի գնալ, որպէս զի քեզի պէս բարձր և արժանի իշխանի մը վայել պատիւներ ընծայէ:

Իշխանուհին կը յուսար, որ և թէ յաջողի իշխանին հետաքրքրութիւնը շարժել Պէնկալի պալատն ու թագաւորը տեսնելու, իր հայրն այնպիսի վայելչակալով, իմաստուն և կատարուն իշխան մը գտնելով, թեքնս անոր առաջարկէր փեսան ընելու, և այսպէս ինքն ալ հաւատարի ըլլալով որ իշխանը գինքը կը սիրէ, և այս խնամութիւնն ընելու չպիտի մերժէ, իր փափաքին կատարման հասնելու կը յուսար, իրեն յարմար պատշաճութիւնը պահելով, քանի որ իր հօրը կամայ հլու երեւիլ կ'ուզէր: Բայց Պարսկի իշխանն իր ակնկալած կերպով չպատուականց այս կիտին վրայ:

«Իշխանուհի, վրայ բերաւ իշխանը, վիպյութեանդ համեմատ

չեմ տարակուսիր բնաւ որ Պէնկալի թագաւորին պալատը քուինէ գերազանց է: Իսկ հօրդ թագաւորին իմ յարգանքս նուիրելու ինչոյն պալով ոչ միայն մեծ հաճոյք, այլև մեծ պատիւ պիտի սեպեմ այս պարտքս կատարելով: Բայց, իշխանուհի, յարեց նա, քեզ գատաւոր կը բունեմ այս պարագայիս մէջ, միթէ կրնաս յորդորել իս՝ իբր բաղդախնդիր անձ մը, առանց սպասաւորի և իմ աստիճանիս յարմար հետեւորդներու ներկայանալ:

«Իշխան, պատասխանեց իշխանուհին, այս մասին բնաւ հոգ մի ընէր. բաւական է որ կամք ունենաս, ինչ սպասաւոր և զարդարանք որ պէտք է կարող ես պատրաստել, վասն զի ստակ պակաս չէ, ես որչափ ուզես կտամ: Այս տեղ շատ մը պարսիկ վաճառականներ կան, կարող ես անոնցմէ ուզածիդ չափ ընտրել պատուաւոր կերպով տուն մը պատրաստելու համար»:

Արեւդ շահ՝ Պէնկալի իշխանուհոյն միտքը թափանցեց, և իր սիրոյն այս զգալի նշանէն իր տուփանքն անոր համար աւելցաւ, բայց որչափ որ բուն էր իր սէրը, դարձեալ անով սպարքը չմոցաւ. ուստի առանց վարանելու պատասխան տուաւ.

«Իշխանուհիս, սրտովին պիտի ընդունէի այդ սիրալիք առաջարկութիւնդ, որուն համար մեծ է իմ շնորհակալիքս, և թէ իմ հեռաւորութեանս մասին հօրս զգայած մտատանջութիւնն արդեւք մը չըլլար: Ամէն ատեն ինձ ցոյց տուած բարեաց և գորովին անարժան պիտի ըլլամ, և թէ ըստ կարի անոր մօտ չգտնամ և սիրտը չհանդարտեցընեմ: Ար ճանչեմ զանի, և մինչդեռ քեզի պէս սիրաւուն իշխանուհոյ մը խօսակցութիւնը վայելելու բարեբաղդութիւնն ունիմ, հաւատարի եմ որ տածանելի ցաւերու մէջ ընկղմած և իս վերստին տեսնելու յոյսը կորուսած է: Յուսամ որ իրաւունք պիտի տաս ինձ և թէ պնդեմ որ մեծ ասկերախտութեան գործ մը և յանցանք մ'ըրած պիտի ըլլամ և թէ անոր մօտ երթալով կենդանութիւն չտամ, վասն զի և թէ ուշանամ թեքնս ցաւէն մեռնի:

«Ուստի, իշխանուհիս, շարունակեց Պարսկի իշխանն, և թէ ամուսինդ ըլլալու արժանի գտես իս, որովհետեւ հայրս ըսած է ինձ միշտ որ իմ ընտրութեանս հաւանութիւն պիտի տայ, կրնամ անորմէ զիս

բաւ հրամանն առնուլ և դառնալ, չէ թէ իբր անձանօթ մէկն, այլ իբր իշխան մը, և անոր կողմէն Պէնկալի թագաւորէն ինդրել որ իր սիրաստն աղջիկն ինձ կնու թեան տայ: Քաջայոյց եմ որ յօժարակամ սիրտի հաւանի երբ իմ բերնէս իմանայ թէ ինչ վեհանձնութեամբ հիւր ընկալեցիր իս իմ դժբաղդութեանս մէջ:»

Պարսից իշխանն այսպիսի բերան մը դորձածելուն՝ Պէնկալի իշխանուհին խոհեմութիւն սեպեց աւելի ևս չսնդել իր հայրը տեսնելու, և չուզեց պահանջել որ իր պարտաւորութեան և պատուոյն դէմ բան մը գործէ. սակայն մեծ տապնասիր մը ընկաւ, երբ դուշակեց որ շուտով սիրտի մեկնի, վասնց որ իրմէ հեռանալէն ետե՛ թերեւ ոչ միայն իր խոսքումը չբռնէ այլև զինքը բոլորովին մոռնայ: Ուստի այս խորհրդէն կասեցնելու համար, անոր ըսաւ.

«Իշխան, երբ քեզ առաջարկեցի որ պատրաստ եմ հայրս տեսնելու համար պէտք եղած պատրաստութեանց ծախուց մասնակցիլ, իմ սիրտս յառաջ բերած բանաւոր պատճառից զինադրել չէր, թէ և չէի գուշակած: Ես ալ ընելիք յանցանքիդ մասնակից սիրտի ըլլայի, եթէ այսպիսի կարծիք մը տածէի, բայց չեմ կրնար հաւանիլ որ այնչափ շուտով մեկնիս, ինչպէս որ կ'առաջագրես: Գոնէ իմ աղաչանքս մտիկ ըրէ, քիչ մ'ևս կենալով ինքզինքդ դտիր, և որովհետեւ իմ բարեբաղդութեանէս է որ Պէնկալայի տէրութեան մէջ եկար ընկար քան թէ անպատի մը, կամ սեպածե լերան մը զաղաթն ուսկէ դժուարին սիրտի ըլլար քեզ իջնելու, կը յորդորեմ քեզ աւելի երկար բնակիս այս տեղ որպէս զի ՚ի դարձիդ հայրենիք աւելի մանր տեղեկութիւններ տալու կարող ըլլաս:»

Պէնկալի իշխանուհին նպատակն այս խօսքերն ըսելով ուրիշ բան չէր, այլ Գիրուզ իշխանին միտքն ընել աւելի երկար ատեն բնակելու որպէս զի աւելի վառի իր դեղեցիլութեամբ, և Պարսկաստան դառնալու եռանդը մեղմելով յանձն առնու մարդկան երեւելու և Պէնկալի թագաւորին ինքզինքը ճանչցնելու: Պարսկաստանի իշխանը չըրցաւ բացէ ՚ի բաց մերժել իշխանուհոյն խնդրած շնորհը, քանի որ այնպիսի սիրալիբ ընդունելութիւն մը տեսնէր որ անոր կողմէն, ուստի քաղաքավարութեան դէմ չգործելու համար համութիւն ցցուց, և իշխան-

ուհին ալ անոր բնակութիւնն ախորժելի ընելու համար ամէն երեւակայելի զուարճութիւններ մտածեց և ՚ի դորձ գրաւ:

Ուստի շատ օրեր հանդէսներ, պարեր, խմիկերդներ և հացիկերոյթներ տուաւ, պարտիզին մը պտոյտներ և ծառաստանին մը որսորդութիւններ ընելով անցուց, և որսի համար ամէն տեսակ վայրի կենդանիներ կային, ինչպէս եղջերու, եղն, այծեամն, որ Պէնկալի յատուկ են և ասոնց որսորդութիւնն անվստանգ ըլլալով կրնար յարմարել իշխանուհոյն:

Այս որսորդութենէ ետքն՝ իշխանն ու իշխանուհին անտառին մէկ արևոր տեղն իբարու կը հանդիպէին, նստելու համար հանդարտ բարձելով օթոց կը փռէին խոտին վրայ: Այն տեղ իրենց յոյնութիւնը կ'առնուին, այն բուռն դրօսանքէն ետքն, և զանազան նիւթերու վրայ կը խօսակցէին: Մանաւանդ Պէնկալի իշխանուհին մեծ հոգ տանէր խօսքը Պարսկաստանի մեծութեան, զօրութեան, կառավարութեան և ճոխութեան վրայ դարձնել, որպէս զի Գիրուզ շահին առիթ տայ Պէնկալի և ասոր առաւելութիւններու վրայ խօսելու, և այս կերպով զանի համոզէ նոյն տեղը բնակելու. բայց իր առաջադրած նպատակին հակառակը պատահեցաւ:

Եւ արդարեւ՝ Պարսից իշխանն՝ առանց չտիպանցելու Պարսից տէրութեան վրայ այնպիսի նպատակ որ կերպով խօսեցաւ, այնչափ դժուար անոր ճոխութիւնն ու շքեղութիւնն, անոր զինուորական զօրութիւնը, ցամաքի և ծովու վրայ հեռաւոր աղիւրու հետ ունեցած առուտորը, բազմութիւ քաղաքներն, որ ամէնքն ալ բազմամարդ և շէն էին, և որոց մէջ զարգարուած պալատներ կային և ազատ էր ըստ հաճոյս յարասն դարուն մը վայելել, որ զեռ իշխանը խօսիլ չաւարտած իշխանուհին ամէն կերպով Պէնկալի երկիրը Պարսկաստանէն շատ ստորին գտաւ: Այնպէս որ երբ խօսքը լնցուց և ազառեց իշխանուհին որ Պէնկալի տէրութեան աղ որ բաներն իրեն նկարագրէ, իշխանուհին անոր թախանձաղին աղաչանաց միայն զիջանելով յանձն առաւ խնդիրը կատարելու:

Իշխանուհին այն ատեն իր նկարագրութիւնն սկսաւ, սակայն Պէնկալի երկրին շատ մը բաներն որ Պարսից երկրէն զերազանց էին, վեր

ի վերայ նկարագրեց : Այնչափ զգալի կերպով քայտարեց թէ արամադրութիւն ունի անոր հետ Պարսկաստան ընկերանալու , որ իշխանը գլխեց որ կարելի է սիրութիւն հաւանէր այս բանին եթէ միայն առաջարկութիւն մ'ընէր . սակայն կարծեց թէ պատահ ժամն եկած չէ այս առաջարկութիւնն ընելու , այլ պէտք է նախ յօժարութիւն ցոյցնէր առական ատեն անոր հետ ընակելու , որպէս զի անոր անխրատութիւնը յայտնէ եթէ երբէք իր հօրը քովը դառնալու անհրաժեշտ պարտաւորութեանը հակառակի :

Ամբողջ երկու ամիս Ֆիրուզ շահ Պէնկալի իշխանուհոյն կամոնցը դերի եղաւ , և անոր երեսակայած և տուած ամէն զուարճութիւնները վայելելու պարտատուութիւն ցցուց որպէս թէ բոլոր կեանքն անոր հետ անցնելու կը միաէր : Բայց երբ երկու ամիսն անցաւ , բացէ 'ի բայ յայտնեց որ բաւական ատենէ վեր իր պարտաւորութեան դէմ կը շարժի , և աղաչեց որ նոյնը կատարելու իրեն հրաման տայ , խօսք տալով նորէն վերագաւառալու անվրէպ , թէ իրեն և թէ անոր յարմար հետեւորդներով , և զինքը Պէնկալի թագաւորէն ըստ օրինի կնուծեան խնդրել :

Իշխանուհին , յարեց իշխանը , կարելի է որ խօսքերս կատկածելի գան քեզի , կարելի է նաև որ խնդրած հրամանիս վրայ այն ուխտագրուած սիրահարներու կարգը դերեր ես , որոնք իրենց սիրութիւնները կը մոռնան երբ անոնցմէ հեռանան : Բայց 'ի նշան անտու և անկեղծ սիրոյս որով հաւատի եմ թէ կեանքն ինձ ատրոժելի չպիտի երևի այլ միայն քեզի պէս սիրատենչ իշխանուհոյ հետ , որ իս կը սիրէ , ինչպէս որ ասարակոյս չունիմ , պիտի համարձակէի խնդրել որ չնորհ ընէ 'իք ինձի հետ գալու եթէ չվանայի որ իմ խնդիրս իբր թշնամանք չառնուս :

Արովհետև Ֆիրուզ շահ զխեց որ իշխանուհին այս վերջին խօսքերէն կարմրեցաւ առանց բարկութիւն յայտնելու և կը վարանէր թէ ինչ պատասխան տայ :

Իշխանուհին , յարեց նա , վտահ եղի որ հայրս յօժարակամ պիտի հաւանի այս միութեան և քեզ սիրով պիտի ընդունի : Իսկ Պէնկալի թագաւորն գալով , քանի որ այնչափ գոբալաղին սիրով կը սիրէ

քեզ միշտ , քու նկարագրած իմ հակառակ ընթացք սը պիտի բռնած ըլլայ , այսինքն հանդտութեանդ և երջանկութեանդ թշնամի պիտի ըլլայ եթէ յօժարակամ չընդունի մեր ամուսնութեան հաւանութիւնն իրմէ ստանալու համար հօրս զրկելիք դեարմանը : »

Պէնկալի իշխանուհին Պարսից իշխանին այս խօսքին բան մը չպատասխանեց . բայց իր ըլտութիւնն և ակնկոր նայուածքն իրեն ուրիշ որ և է յայտարարութեանն աւելի յայտնեցին որ Պարսկաստան հետ երթալու ընդդիմութիւն մը չունի և մտադիւր կը հաւանի : Մինակ այս դժուարութիւնը կը տեսնէր թէ չըլլայ որ Պարսից իշխանն անտորձ գանուի ձին կառավարելու և թէ առջի անգամուան պէս կը վախնար որ մի և նոյն սաղմապի մէջ չկնան : Բայց Պարսից իշխանն անոր այս վախը բողբովին վարատեց համոզելով որ կրնայ իրեն վտահիլ և թէ ունեցած փորձառութեամբը նոյն իսկ հնդկացիէն աւելի ճարտարութեամբ պիտի կարենայ ձին վարել . ասոր վրայ իշխանուհին մեկնելու համար պէտք եղած պարտատուութիւնները տեսաւ այնպիսի զաղանի կերպով մը որ իր պաշտօնին մէջ ոչ ոք կատկածեցաւ անոնց գիտաւորութեան վրայ :

Հետեւեալ օրը կանուխ ամէն ինչ պատրաստ էր , մինչդեռ բոլոր պալատականները խոր քունի մէջ էին . իշխանին հետ պատշգամն ելաւ , իշխանը ձին Պարսկաստանի կողմը դարձուց , այնպիսի տեղ մ'ուր իշխանուհին կրնար ինքնին ձիուն գաւակին վրայ դիւրաւ հեծնել : Նախ իշխանը հեծաւ , և երբ իշխանուհին իր տեղը հանդիստ նստաւ , ձեռքովը զանի գրկեց աւելի ազահովութեան համար , և ըստ թէ կրնան մեկնիլ , իշխանը դարձուց այն երկիժը զոր Պարսկաստանէն ելնելու ժամանակ դարձուցեր էր և ձին զիրենք օդն 'ի վեր հանեց :

Ձին իր սովորական արագութեամբ թռաւ , և Ֆիրուզ շահ այնպէս վարեց զայն որ զրկեթ երկուք ու կէս ժամու մէջ Պարսկաստանի մայրաքաղաքը գտաւ : Իր ելած հրապարակը չուղեց իջնել , և ոչ թագաւորին պալատն , այլ զիւղային սպարան մ'որ քաղքէն շատ հեռու չէր : Իշխանուհին առաւ և ամենէն դեղեցիկ սենեակը տարաւ , և ըստ անոր որ պարտ ու պատշաճ պատուով զինքն ընդունելու համար երթայ պիտի իրենց գալուստը սուլթանին խնայէ և քիչ ատենէն պի-

տի գառնայ . սակայն պալատին բարասանին պէտք եղած հրամանը տուաւ որ ամէն սխտոյքը հողայ :

Իշխանուհին այն սենեակը ձղելէն ետե՛ Գիրուզ շահ բարասանին պատուիրեց որ ձի չը պատրաստէ : Զին իրեն բերին և վրան հեծաւ , և բարասանն իշխանուհւոյն մօտ դրկելէն ետե՛ պատուիրելով որ կարելի եղածին շտի շուտով անոր նախաձաշիկ մը պատրաստէ , ինքը ճամբայ ելաւ , քաղքէն ա՛ցնելու ատեն մինչև պալատը ժողովորդը ցնծաւ թեան ձայներով զինքն ողջունեց , թէ և աներեւոյթ ըլլալէն վեր՝ չէր յուսար բնաւ որ արքայորդին վերատին պիտի տեսնէ : Գիրուզ շահին հայրը ժողովն էր երբ անոր առջև ներկայացաւ . ամէնքը սուգի մեջ էին սուլթանին պէս՝ ձին զինքը տանելէն վեր : Թագաւորը զանի ընդունեց և ուրախութեան արտաւք թափելով զրկեց . յետոյ շտապաւ հարցուց թէ հնդկացիին ձին ի՞նչ եղաւ :

Այս հարցման վրայ արքայորդին առիթ ունեցաւ իր հօրը պատմելու թէ ինչ տագնապի և փորձանքի մեջ ընկեր էր ձիով օդն ելնելէն ետքն . ինչ կերպով անկէ աղատեր էր , և ինչ կերպով Պէնկալի իշխանուհւոյն պալատը հասեր էր . նոյնպէս պատմեց անորմէ տեսած սիրալիք ընդունելութիւնը , պէտք եղածէն աւելի անոր հետ ժամանակ անցնելն , և անոր բարեարտութիւնն որով յանձն աւեր էր իր սիրոյն համար հետը Պարսկաստան գալ , զինքն իր կլինն ընելու խոտանալուն :

«Աստի , վեհափառ տէր , յարեց արքայորդին խօսքն աւարտելով , անոր խօսք տուի որ քու հաւանութիւնդ չպիտի զլանաս մեր ամուսնութեան համար , և հետևապէս միտքն ըրի զինքն այս տեղ բերել հնդկացիին երկվարով : Հիմակ Ձեր վեհափառութեան զիւզի մէկ ապարանը կը գտնուի իշխանուհին , և կ'ստպատէ որ երթամ իրեն իմաց տամ՝ որ իմ խոտումն կը հաստատես :»

Այս ըսելով՝ արքայորդին իր հօրն առջև երկիր պաղաւ որպէս զի հաւանութիւնը ստանայ . բայց սուլթանը զանի վերցուց նորէն զրկելով և ըսաւ .

«Որդեակ , ոչ միայն Պէնկալայի իշխանուհւոյն հետ ամուսնութեանը կը հաւանիմ , այլև կը փափաքիմ անձամբ զանի զիմաւորել , ՚ի մասնաւորի իմ հնորհակալիքս յայտնել և այսօր իսկ հարմարքն ընելու

համար զանի պալատս բերել :»

Այսպէս Պարսից թագաւորը հրամայեց որ սուզի հազուամներն ամէն մարդ հանէ , Պէնկալի իշխանուհւոյն ընդունելութեան պատրաստութիւններն ընեն և թմբուկներու , ծնծղաններու և փողերու ձայնին խրախմանութիւններն սկսին . նոյնպէս պատուիրեց որ հնդկացին բանտէն հանեն և իր առջևը բերեն :

Հնդկացին ներկայացաւ , և թագաւորն անոր ըսաւ . «Բու անձը ՚ի պահեստի դրեր էի որպէս զի կեանքդ , թէ և իմ բարկութեանս և վշտիս բաւական զոհ մը չէր այն , երաշխաւոր մնայ իմ որդւոյս կեանքը : Փնտք սուր Աստուծոյ որ որդիս գտայ , դնս ձիդ աւ և այսուհետև աչքիս առջև մ'երևիր :»

Երբ հնդկացին Պարսից թագաւորին քովէն հեռացաւ , որովհետև իմացեր էր զինքը բանտէն հանող մարդիկներէն որ Գիրուզ շահ դարձեր էր Պէնկալի իշխանուհին ալ իր զիւթահար ձիուն հետ բերելով , թէ ուր իջեր և ուր ձդեր էր , և թէ թագաւորը կը պատրաստուէր զանի առնելով պալատը բերելու , իսկոյն անոնցմէ առաջ իշխանուհւոյն գտնուած պալատը դնաց , և բարասանին զիսկելով ըսաւ թէ սուլթանին կողմէն կը պո՛ղ Պէնկալի իշխանուհին իր երկվարին գաւակին վրայ հեծնելու և օդին մէջէն թագաւորին տանելու , որ իր պալատին հրապարակը կ'ստպատէ , ըսաւ , զանի ընդունելու և իր պալատականաց և Շիրազ քաղքին սքանչելի տեսարան մ'ընծայելու :

Բարասանին ծանօթ էր հնդկացին , և զիտէր թէ թագաւորին հրամանաւ բանտ դրուեր էր , ուստի դժուարութիւն ընաւ չյայտնեց և անոր խօսքին հաւատց կարծելով թէ ազատ թողեր են որ թագաւորին հրամանը կատարէ : Հնդկացին Պէնկալի իշխանուհւոյն ներկայացաւ , և իշխանուհին իմանալով որ Պարսկաստանի թագաւորին կողմէն կը պո այն մարդը՝ հաւանեցաւ անոր հետ երթալու՝ կարծելով թէ իշխանին փափաքը կը կատարէ :

Հնդկացին իր անզլամութիւնն ՚ի դործ զնելու համար դուռ գլու թեան վրայ զմայլելով՝ ձին հեծաւ , իշխանուհին անոր դաւակն դբաւ բարասանին օգնութեամբն և երկթը դարձնելուն՝ ձին իսկոյն վերացաւ օդին մէջ :

Նոյն պահուն իսկ Պարսից թագաւորն՝ իր պալատականներուն հետ պալատէն կ'եննէր զիւզի ապարանն երթալու , և արքայորդին ալ առջեկն վազեր էր սրգէս զի Պէնկալի իշխանուհին այս ընդունելու թեան պատրաստէ . իսկ հնդկացին իր որսին հետ քաղքին վրայէն կ'անցնէր որդէս զի թագաւորէն վրէժ լուծէ կրած անիրաւ քանտարկու թեան համար , ինչպէս որ կը կարծէր :

Երբ Պարսից թագաւորը յափշտակիչը տեսաւ , և ճանչեց , զարմանօք կանկ առաւ և յետին ծայր վշտոցաւ որ չէ կարող այնպէս լրբաբար իրեն դէմ եղած անարգանաց վրէժն առնուլ : Ատաի թէ ինքն և թէ բոլոր պաշտօնատարներն որ այս ակներև լրբութեան և անման անդամութեան ակնատես էին , հնդկացիին դէմ անէծք թափեցին :

Հնդկացին այս անէծքներուն անդոյց մնալով՝ որոց ձայնը մինչև իր ակննջին հասաւ՝ իր ճամբան շարունակեց , մինչդեռ Պարսից թագաւորն իր պալատը մտաւ՝ սաստիկ զայբացած որ այսպիսի ստակալի անարգանք մ'ընդունեցաւ՝ անոր հեղինակը պատժելու անկարողութեան մէջ զստուելով :

Բայց Ֆիրուզ շահին վիշտն արչափ աւելի մեծ եղաւ երբ զիտեց որ իր աչաց առջև առանց դարման գտնել կարողանալու , հնդկացին իր ձեռքէն կը կորզէր Պէնկալի իշխանուհին , զոր այնչափ խնդալին կը սիրէր որ կարելի չէր իրեն առանց անոր ասրելու : Այս տեսարանին որ իր մտքէն չէր անցնէր , անշարժ կեցաւ , և որոշելէն առաջ թէ հնդկացիին դէմ նախատինք պիտի ժայթքէր , կամ իշխանուհոյն ողբայլի վիճակին վրայ պիտի ցատէր , թէ իր անդամութեան համար իշխանուհիէն ներսմ պիտի խնդրէր , այն որ լիովին ինքզինքն իրեն յանձնելով յայտներ էր թէ արչափ զինքը կը սիրէ : Ընդ որ անհաւատալի արագութեամբ երկուքնին ալ կը տանէր , իր աչքէն բոլորովին աներևոյթ եղաւ : Կնչ պէտք էր ընել . միթէ իր հօրը սուլ թանին պալատը գառնալով խույն երթալ փակուիլ պէտք էր՝ որ իր արտօնութեան մէջ թարդի , առանց յափշտակիչին ետեկն իյնալու , իշխանուհին աղատելու և առևանդիչը պատժելու մտօք իր վնհանձնութիւնն , իր սէրն , իր արիւթիւնը չեն ներեր որ այս ընթացքը բռնէ : Կր ճամբան կը շարունակէ մինչև զիւզի ապարանը :

Երբ այն տեղ կը հասնի բարասլանն որ իր զիւրահաւանութեան արդիւնքն արդէն տեսեր էր , իշխանին առջև կը ներկայի արտասուազին աչօք , անոր ոտքը կ'ընկնի , ինքզինքը կ'ամբաստանէ իրը յանցաւոր այս գործին համար և մահուան դատապարտելով ինքզինքը՝ կ'աղաչէ որ զինքը սպաննէ :

«Ոտք ելիր , կ'ըսէ անոր իշխանն , իմ իշխանուհոյս առևանդին պատճառը դու չես , այլ միայն ես եմ , իմ միամտութիւնս է : Առանց ժամանակ անցնելու դնա տէրվիշի զղեստ մը գաիր ինձ , և մարդու մը չըսես որ ինձի համար է : »

Գիւզի ապարանէն քիչ մը հեռի տէրվիշներու վանատուն մը կար , որուն շէյրը կամ զլիսաւորը բարասլանին բարեկամն էր : Բարասլանն անոր քովը դնաց բաւ՝ որ մեծանուն պաշտօնեայ մը թագաւորին վստահութիւնը կորուսելով երեսէ ընկեր էր , և ինքն ալ անոր բարիքը տեսած ըլլալուն , կը փափաքէր զանի թագաւորին բարկութենէ աղատելու հնար մը գտնել , ուստի տէրվիշի հաղուստն ամենէն յարմար կը սեպէր : Այս յայտարարութեան շէյրը կը հասայ և անոր խնդիրը կը կատարէ : Բարասլանը տէրվիշի զգեստը Ֆիրուզ շահին կը բերէ : Իշխանն իրը կը հանէ և զայն կը հաղնի : Այսպէս ծպտեալ՝ Պէնկալի իշխանուհոյն համար ընծայ բերած . առփ մը մարդարիտ և անցամանդ հետը կ'առնու ուղևորութեան ծախոց համար , և երեկոյեան դէմ զիւզի ապարանէն դուրս կ'եննէ , և թէպէտ անստոյգ էր թէ արձամբան պիտի բռնէ , բայց հաստատ միտքը դրած ըլլալով զվերագառնալ մինչև որ իր իշխանուհին չգտնէ և հետը չբերէ , Ֆիրուզ շահը յուզի կ'ընկնի :

Հիմակ գառնանք հնդկացիին . զի թագաւորն այնպէս մը վարեց որ՝ նոյն օրը՝ կանտիսիկի Գաշվիթի թագաւորութեան մայրաքաղքին մտա անտառ մը հասաւ : Արովհետև անօթի էր և իր վրայ զաշակելով որ իշխանուհին ալ կերակուրի պէտք պիտի ունենայ , նոյն անտառին մէջ վար իջաւ , և յստակ ու վճիտ ջուր ունեցող առուակի մը գալարաւէտ եղևրքը ձրից իշխանուհին որպէս զի ուտելիք հոգայ :

Հնդկացիին բացակայութեան ժամանակ՝ Պէնկալի իշխանուհին՝ զիւտելով որ անարդ յափշտակիչի մ'իշխանութեան ներքև կը գտնուէր և

անոր բռնութենէ կը վախնար, փախուստ տալու և սրատպարան մը փնտուելու երբ էր. բայց որովհետեւ առտում գեղի ապարանը հասնելուն շատ քիչ կերեր էր, իր խորհուրդն ՚ի դործ գնելու ատեն՝ այն պիտի մեծ տկարութիւն մ'զգայ որ ստիպուեցաւ զայն մէկդի թողլու և մինակ իր արիութեան մէջ դիմագրութեան միջոցներ փնտուելու. վասն զի հաստատապէս միաբը գրեր էր մեռնիլ քան թէ Պարսից իշխանին անհատարմութիւն մ'ընել: Աստի չսպասեց որ հնդկացիին կրկին և կրկին հրաւիրէ զինքը ճաշելու, այլ յօժարակամ կերաւ և բաւական ոյժ ստացաւ ճաշէն ետքը հնդկացիին լիբը առաջարկութեանց արիաբար պատասխան տալու: Շատ մը սպառնալիքէ ետքն, երբ իշխանուհին տեսաւ որ հնդկացիին բռնն միջոցներ գործածելու կը պատրաստուի, ոտք ելաւ անոր դիմագրելու՝ բարձր աղաղակներ արձակելով: Այս ձայներէն իսկոյն դռնը մը ձխաւոր զօրք հասաւ, որ երկուքնին ալ պաշարեցին:

Այս էր Գաշմիրի թագաւորութեան սուլթանն, որ իր սպաննով որսէն դառնալու ատեն, իշխանուհւոյն յաջող բաղդէն՝ անկից կ'անցնէր և ձայնը լսելուն վաղեր հասեր էր: Հնդկացիին հարցոյց թէ ո՞վ է, և այն կնկանէ ինչ կը պահանջէ: Հնդկացիին անխոհմարար պատասխանեց թէ իր կինն է՝ նա, և թէ իրաւունք չունի էրիկ կնկան կուռի խառնուելու:

Իշխանուհին՝ որ զինքն ազատելու համար այնչափ յարմար միջոցին վրայ հասնող անձին ոչ աստիճանն և ոչ սրաշոժը գիտէր, հնդկացիին խօսքը սուտ հանեց:

«Տէր իմ, ըսաւ իշխանուհին, ո՞վ որ ես, անշուշտ Աստուծոյ զօրութեամբն իմ օգնութեան կը հասնիս, գլխաւ թշուառ իշխանուհւոյ մը վրայ և այս խաբերացիին խօսքին հաւատ մի՛ բնծայեր: Աստուած չընէ որ այսպիսի անարդ և զրուելի հնդկացիի մը կինն ըլլամ: Գարշելի վհուկ մ'է՛ նա, որ զիս Պարսից իշխանին ձեռքէն կորոզեց, որուն ամուսինն ըլլալու ստիճանուած էի, և այս կախարդն իր զիւսհար ձեռն վրայ առաւ զիս այս անդ բերաւ:»

Պէնկալի իշխանուհին Գաշմիրի սուլթանը համոզելու համար ասիլէ աւելի խօսք ըսելու պէտք չունէր: Իր գեղեցիկութիւնն, իր իշխանա-

կան գեղն և արտասքն ըստ բաւականին կը խօսէին իրեն համար. թէ և աւելի շարունակելու ուղեց իր խօսքը, բայց Գաշմիրի սուլթանն իրաւամբ զայրանալով հնդկացիին ժպիւրհ ընթացքէն՝ անոր չորս զին պաշարել տուաւ և հրամայեց որ վրուխը կտրեն: Այս հրամանն իսկոյն ՚ի դործ դրուեցաւ, վասն զի հնդկացիին բանտէն ելնելու ատեն՝ ինք զինքը պաշտպանելու համար զէնք առած չէր:

Պէնկալի իշխանուհին՝ հնդկացիին բռնութենէն աղատելով՝ ուրիշ բռնութեան մը ներքև ընկաւ որ առաջինն նուազ վշտալի չէր: Սուլթանն անոր ձի մը տալէն ետև՝ իր պալատը տարաւ, իր խուցին մօտ փառաւոր սենեկի մը մէջ զանի բնակեցուց, անոր բազմաթիւ աղախիններ տուաւ, նոյնպէս իր պահպանութեան համար ներքինիներ: Ինքն անձամբ առաջնորդեց զանի սենեակն ուր առանց ժամանակ տալու անոր որ իր բարեգործութեան համար շնորհակալիքն յայտնէ, ինչպէս որ իշխանուհին խորհեր էր:

«Իշխանուհիս, ըսաւ անոր, անշուշտ հանգստեան պէտք ունիս, ազատ կը թողում՝ քեզ որ հանդէս: Ազադ ժամանակ պիտի ունենաս պատմելու ինձ քեզ հասած այլանդակ դէպքն:» Այս խօսքերն ըսելով քաշուեցաւ դնաց:

Պէնկալի իշխանուհին անպատում ուրախութեան մէջ կը գտնուէր որ այսչափ սուղ ժամանակի մէջ սոսկալի մարդու մը ձեռքէն ազատեցաւ, և յուսաց որ Գաշմիրի սուլթանը պիտի հաճի իր վեհանախութեան չափը ընուլ, զինքը Պարսից թաղաւորին դարձնելով, երբ յայտնէ անոր թէ ինչ կերպով անոր միացած է, և թէ պիտի աղաչէր որ իր փափաքը կատարէ. բայց իր ակնկալութեան լրումն այնքան շուտով չպիտի տեսնէր:

Եւ արդարև Գաշմիրի թագաւորը միտքը դրեր էր հետևեալ օրն իսկ անոր հետ ամուսնանալու, և առտու կանուխ հարսանեաց աւետիւսը թմբուկներու և փողերու ձայնով իմաց տուել էր ՚ի նշան ուրախութեան, և այս ցնծութեան աղաղակներն ոչ միայն իր պալատին այլ և բոլոր քաղքին մէջ կը հնչէին: Պէնկալի իշխանուհին այս աղմկալի նուազարաններու ձայնէն արթնցաւ, և ասոնց պատճառն ուրիշ բանի կտար քան նոյն իսկ հարսանեաց: Բայց Գաշմիրի սուլթանն՝ որ ար-

դէն հրամայեր էր որ իշխանութիւն այցելութիւն ընդունելու պատրաստ դանուելուն՝ զան իրեն իմաց տան , փութաց անոր սենեակն երթալու . և անոր որպիսութիւնը հարցնելէն ետև՝ յայտնեց թէ փողերու ձայնը հարսանեաց հանդէսն աւելի փառաւոր ընելու համար էր և խնդրեց որ այս ընդհանուր ուրախութեան մասնակցի . այս լուրին վրայ իշխանութիւն այնպիսի ահ ու դողի մէջ ընկաւ որ յանկարծ մարեցաւ :

Իշխանութեան ներքայ դանուող աղախիններն անոր օգնութեան հասան և նոյն ինքն սուլթանն ամէն ճիղ թափեց որ անոր խելքը գլուխը բերէ . բայց իշխանութիւն երկար ատեն նոյն նուազեալ վիճակին մէջ մնաց . վերջապէս ինքզինքին եկաւ , սակայն Պարսից իշխանին խոստացած հաւատարմութեան դէմ չդործելու համար՝ առանց իր հաւանութեան Վաշմիրի իշխանին պահանջած հարսանեաց հաճութիւն ցոյց տալով՝ որոշեց խենդ ձեւանալ և այնպէս մը ցոյցնել որ մարած ատեն ինչքը թուցեր է : Աստի սկսաւ խենդ ու խելքու թափել սուլթանին առջև , մինչև անդամ անոր վրայ յարձակելու համար ոտք ելաւ , այնպէս որ սուլթանն այս ցատակի պատահարին վրայ շատ ցաւ դրաց : Երբ տեսաւ որ իշխանութիւն չուշաբրէր , զանի իր կանանց հետ թողուց , ապապրելով որ քովէն չհեռանան և անոր վրայ ամէն հօդ տանին : Նոյն օրը ստէպ մարդ զրիկեց իմանալու համար թէ ինչ վիճակի մէջ կը գտնուի , և ամէն անդամուն անոր կրային իմաց տալու թէ նոյն վիճակին մէջ է , և կամ աւելի ծանրանալու վրայ է քան լաւնալու : Իշխանութեան հիւանդութիւնը գիշերուան դէմ կարծես թէ աւելի սաստկացաւ , և այս կերպով Վաշմիրի սուլթանն՝ ինչպէս որ իր յոսար՝ այն գիշեր երջանիկ չեղաւ :

Պէնկալի իշխանութիւնն ոչ միայն հետեւեալ օրն , այլև հետզհետէ ամէն օր շարունակեց իր այլանդակ խօսքերն , որ յիմարութեան ակնբեր նշաններ կ'երևէին : Վաշմիրի սուլթանը ստիպուեցաւ բժիշկներ թողվել պալատին մէջ , այս հիւանդութեան վրայ անոնց հետ խօսիլ և հարցնել թէ արդեօք զայն բուժելու դարման մը չունին :

Բժիշկներն իրենց մէջ խորհուրդ ընելէն ետև՝ միաբերան պատասխան տուին թէ այս հիւանդութիւնը տեսակ տեսակ աստիճաններ ունի , որոց մէկ քանին կարելի է բուժել , իսկ մէկ քանի տեսակն ալ

անբուժելի են . ուստի չէին կրնար ըմբռնել թէ Պէնկալի իշխանութեանն նր տեսակէն էր մինչև որ զանի չքննեն : Սուլթանը հրաման տուաւ որ բժիշկներն իշխանութեան սենեակը տանին իւրաքանչիւրին աստիճանին համեմատ իրարմէ ետև ներս մտցնելով :

Իշխանութիւնն անցած դարձածը դուշակելով վախցաւ որ եթէ բժիշկներուն թող տայ իրեն մօտենալու և իր երակը վնակելու՝ թերևս ամենէն անփորձը պիտի դուշակէ թէ ինքը քաջատղջ վիճակի մէջ է , և թէ հիւանդութիւնը կեղծիք մ'է . ուստի ամէն անդամուն որ բժիշկ մը ներս կը մտնէր՝ այնպիսի կատաղութեան նշաններ կը յայտնէր և զանոնք ձեռնելու կ'սպառնար , որ ոչ ոք համարձակեցաւ անոր մօտ դնալու :

Բժիշկներէն ոմանք ինքզինքնին միաներէն աւելի ճարտար կարծելով կը պարծենային որ մի միայն հիւանդին երեսէն կրնան դուշակել անոր հիւանդութեան տեսակն ու անոր պատուիրեցին որ իրենց լսելիք զեղաջուրը խմէ : Իշխանութիւնն ընաւ դժուարութիւն մը չէր ցոյցներ տուած զեղերնին աւելու , վասն զի ըստ հաճոյս հիւանդ երևելու ճարպիկութիւնն ունենալով՝ գիտէր որ այն զեղերն իր վրայ աղղեցութիւն մը չպիտի ունենային :

Երբ Վաշմիրի սուլթանը տեսաւ որ իր արբունեաց բժիշկներն իշխանութեան բուժելու անկարող եղան , իր մայրաքաղաքին բժիշկները կանչեց , որոց զիտութիւնը , փորձառութիւնն ու ճարտարութիւնը յաջող արդիւնք մը չունեցան : Յետոյ իր պետութեան ուրիշ երկիրներու բժիշկները բերել տուաւ , մանաւանդ անոնք որ մեծ համբաւ կը վայելէին իրենց արհեստին մէջ : Իշխանութիւնն մի և նոյն կերպով ընդունեց զանոնք և ինչ զեղ որ տուին օգուտ մը չտեսան : Վերջապէս ուրհանդակներ զրիկեց զբացի տէրութեանց երկիրներն ու արբունիքը՝ բժիշկներուն տրուելու համար իշխանութեան հիւանդութեան նկարագիրը տալով , ու միանդամայն խոստանալով որ լիուրի պիտի վարձատրէ անոնք որ Վաշմիրի մայրաքաղաքը զալու յանձն կ'առնուն հիւանդը բժշկելու համար :

Շատ բժիշկներ ճամբայ ելան , բայց անոնցմէ և ոչ մէկը կարող եղաւ պարծենալու որ միաներէն յաջողակ դասաւ . և ոչ մէկը կրցաւ իշ

խանութան հարցն խելքը գլուխը բերել . և իրօք այս բանս ոչ իրենցմէ և ոչ իրենց արհեստէն կախումունէր , այլ մի միայն իշխանութան հարցն կամբէն :

«Այն միջոցին Ֆիրուզ շահ» տելով իշի հարուստով շատ երկիրներ ու քաղաքներ պտրտեր , չարաչար նեղութիւն քաշեր էր մտքով , առանց ճամբու դժուարութիւնները հաշուի առնելու , և չլիտէր թէ իր փնտռած էակին վրայ լուր ստանալու համար բռնած ճամբան իր նպատակին կը ծառայէր թէ ոչ :

Ամէն անցած տեղէն ուշադիր մտիկ կ'ընէր ամէն ձայն ու արմուկ և 'ի վերջէ Հնդկաստանի մեծ քաղաք մը հասաւ , ուր շատերը կը խօսէին Պէնկալի իշխանութան մը վրայ և կ'ըսէին թէ խելքը թուոցեր է ճիշտ այն օրն որ Գաշմիրի իշխանն անոր հետ միանալու համար հարսանեաց պատրաստութիւններ կ'ընէր : Ֆիրուզ շահ՝ Պէնկալի իշխանութան անունը լսելուն Գաշմիրի մայրաքաղաքին ճամբան բռնեց , քանի որ այն էր իր ուղևորութեան նպատակը , նա մանաւանդ Պէնկալի արքունիքն ու իշխանութիւնն մը չկար՝ ինչպէս որ գիտէր և ելած ձայնը մինակ իր ճանչած իշխանութան կը վերաբերէր : Երբ Գաշմիրի մայրաքաղաքը հասաւ՝ խան մ'իջաւ և նոյն օրն իսկ խնայաւ Պէնկալի իշխանութան պատմութիւնն և հնդկացիին դժբաղդ վախճանն (ինչպէս որ արժանի էր անոր) որ դիւթահար ձիովը յափշտակեր տարեր էր դանի . այս պարագայն հաստատ ասրացոյց մ'էր որ իր փնտռած իշխանութիւնն այն էր , թէ սուլթանին բժիշկներու համար բրած ծախսն անօդուտ էր և թէ այս մասին բնաւ սխալմունք մը չկայ :

Պարսից իշխանն այս ամէն մանր պարագաներն իմանալէն ետեւ՝ միւս օր բժիշկի զոյնս մը շինել տուաւ և այս զոյնսին ու ճամբորդութեան ատենը ձգած երկար մօրուսին շնորհիւն , ինքզինքն իբր բժիշկ ճանչցուց փողոցները շրջապայելով : Պէնկալի իշխանութիւնն տեսնելու անհամբեր՝ սուլթանին պալատը փութաց , և սպայի մը խօսելու ինքրեց : Վսիցն բարասանապետին ներկայացուցին զինքը : Սուտ բժիշկին ըսաւ անոր որ թէ և բրածը յանդգնութիւն է , սակայն իբր բժիշկ կը ներկայի իշխանութիւնն բուժելու ճար մը գտնել , քանի որ շատերը փորձեր և չեն յաջողեր : Բայց ինքը կը յուսար իրեն միայն ծանօթ քանի մը գեղերու շնորհիւն անոր առողջութիւնը կազդուրել :

Բարասանապետն ըսաւ որ պատեհ ժաման հատեր է և թէ սուլթանը սիրով պիտի ընդունի զինքն , և եթէ յաջողի իշխանութիւնն բուժելով մեծ հաճոյք պիտի պատճառէ սուլթանին և լիուրի պիտի վարձատրուի : «Քիչ մը սպասէ ինձ , ըսաւ անոր , պահէ մը պիտի վերադառնամ» :

Բաւական ատենէ վեր բժիշկ մը պալատն եկած շունէր , և Գաշմիրի սուլթանը վշտադին սրտով յուսահատեր էր իշխանութիւնն իր նախկին քաջատուղ վիճակին մէջ տեսնել , և միանգամայն զանի իրեն կիներ ընելով յայտնել թէ որչափ կը սիրէ : Հետեւայլս հրաման տուաւ բարասանին որ շուտ մը նորեկ բժիշկն իրեն ներկայացնէ :

Պարսից իշխանը բժիշկի հարուստով Գաշմիրի սուլթանին ներկայացաւ , և սուլթանն՝ աւելորդ խօսքերով ժամանակ չանցնելու համար՝ յայտնեց որ Պէնկալի իշխանութիւնն անհնարին զայրացման մէջ կ'ընկնէր քանի բժիշկ տեսնէր և ստով իր հիւանդութիւնն կ'աւելնար . ուստի զանի բաձր դահլիճ մը հանեց և վանդակէ մ'իշխանութիւնն անոր ցցուց :

Իշխանութիւնն այն վշտալի վիճակին մէջ տեսնելուն աստիկ ցաւեցաւ , և արսաքին նշաններէն գիտեց որ անոր հիւանդութիւնը շինովի էր և մինակ իր սիրոյն համար այն բանազօտիկ և ողորմելի կացութեան մէջ կը գտնուէր . դահլիճն վար իջաւ , և սուլթանին խնայուց թէ ինչ էր իշխանութան հիւանդութեան տեսակն , ըսաւ թէ անբուժելի չէր և թէ անոր բժշկութիւն տալու համար հարկ էր որ հեան առանձնակի խօսի , իսկ բժիշկները տեսնելուն որչափ որ կը զայրանայ՝ կը յուսար որ զինքը յօժարակամ պիտի ընդունի և մտիկ պիտի ընէ :

Սուլթանն իշխանութան սենեկին դուռը բացաւ և Ֆիրուզ շահը ներս մտաւ : Երբ իշխանութիւնն անոր ներս մտնելը տեսաւ , կարծելով թէ բժիշկ մ'է , կատաղութեամբ ոտք ելաւ՝ անոր սպառնալով և նախատինք տեսնելով : Սակայն բժիշկը միշտ կը մօտենար և երբ ձայնը լսելի ընելու շափ մօտ դնաց , որովհետեւ մինակ անոր լսելի ըլլալը կ'ուզէր , ըսաւ անոր ցած և յարգական ձայնով մը . «Իշխանութիւն , ես բժիշկ չեմ , ճանչցիր , կը պաղատիմ , Պարսից իշխանն՝ որ եկաւ քեզի աղաւտելու» :

Իշխանութիւն իշխանին ձայնն ու երեսը զխտելով զանի ճանկեց, թէ և երկար մօրօսս մը ձղեր էր, և փոքր ինչ հանդարտեցաւ: Կսկոյն իր դէմքէն յայտնեց թէ սրչափ ուրախ է գտնելուն այն փափաքի ի էակն որուն չէր սպասեր: Ժամանակ մ'անձայն կեցաւ իշխանութիւնն զարմանաքէն և Ֆիրուզ շահ ասկից առ ի թ ունեցաւ իր յուսահատութիւնն՝ որով պաշարուեր էր՝ պատմելու, երբ հնդկացին զանի յափշտակեց, թէ ինչպէս նոյն պահուն որոշեր էր ամէն բան թողուլ և զինքը փնտուելու համար ճամբայ ելնել և ետ չդառնալ մինչև որ այն խարերային ձեռքէն չստատէ: Իբրևայէս բացատրեց թէ ինչպէս ձանձրալի և տածանելի ուղեորութենէ մ'ետքն անհնարին ուրախութիւն կ'զգայ զանի Քաշմիրի սուլթանին պարտըր գտնելուն: Երբ խօսքն աւարտեց խիստ համառօտ կերպով, աղաչեց իշխանութիւնն յայտնելու թէ ինչեր եկան զլուխն իր առեանդէն մինչև այն վայրէկանն որ իրարու հետ խօսելու բարեբազդութիւնն ունեցաւ, մանաւանդ հասկցոյց որ այն տեղեկութիւններն իմանալ կ'ուզէր որպէս զի սրբառ ու պատշաճ միջոցները ձեռք առնու, և Քաշմիրի սուլթանին բռնութենէ զանի ազատէ:

Պէնկալի իշխանութիւնն Ֆիրուզ շահին պատմելու շատ բաներ չունէր, վասն զի մինակ պիտի յայտնէր թէ ինչ կերպով հնդկացիին բռնութենէ ազատեր էր Քաշմիրի սուլթանին միջոցաւ, երբ օրէն կը գառնար, ինչպէս հետեւեալ օրն իսկ մի և նոյն բռնութիւնը տեսեր էր Քաշմիրի սուլթանէն կողմէն, որ առանց իր հաւանութիւնն ստանալու ուղեր էր իր հետը կարողել, ինչպէս այս բուն և բարբարոս ընթացքին վրայ մարեր և յիմարութեան մէջ ապաստան մը գտեր էր, որպէս զի ինքզինքը սրահէ անարատ այն իշխանին համար որուն հաւատարիմ մնալու խօսք տուեր էր, ինչպէս աչքն առեր էր մեռնիլ քան սուլթանին անձնատուր ըլլալ, քանի որ չէր սիրեր և չէր կրնար սիրել:

Պարսից իշխանը հարցոյց անոր թէ արդեօք զիտէ զիւթահար ձիուն ուր գտնուիլը հնդկացիին մահուանէ ետքը: «Չգիտեմ, պատասխանեց նա, թէ սուլթանն ինչ հրաման տուած է այս մասին, բայց նոյն ձիուն վրայ պատմածս լսելուն՝ անտարակոյս զայն սրահել տուած է:»

Ֆիրուզ շահ մտածելով որ Քաշմիրի սուլթանը հոգ տարած է զիւթահար ձին սրահելու՝ ըստ իշխանութիւնն որ գարձեալ այն ձին պիտի դորձածէ Պարսկաստան գառնալու համար: Իշխանութիւնն հետ խօսքը մէկ բրաւ թէ ինչ միջոցներ պիտի ՚ի դորձ գնէ յաջողելու, որպէս զի արդեւք մը չպատահի, ասրսպրեց յատկապէս որ փոխանակ անական զղեստով նստելու, հետեւեալ օրը հարկ է որ հազուի սղուի՝ սուլթանը քաղաքովարտութեամբ ընդունելու համար, երբ զանի բերէ, սուանց ստիպելու որ խօսի: Եւ այդ Պարսից իշխանը քաշտեցաւ գնաց:

Երբ Քաշմիրի սուլթանը Պարսից իշխանէն խնայաւ թէ առաջին այցելութենէ իսկ մեծ քայլ մ'առած է իշխանութիւնն բժշկութեան համար՝ մեծապէս ուրախ եղաւ: Հետեւեալ օրը զանի աշխարհիս առաջին բժշկին տեղը դրաւ երբ իշխանութիւնն այնպիսի կերպով մը ընդունեց զինքն որմէ համոզուեցաւ թէ իրօք բժշկութիւնը գտնելու մեծ յոյս կ'ուայ:

Սուլթանը բաւական համարեց բնելու իշխանութիւնն թէ չսփառ զանց ուրախ է տեսնելով որ քիչ առեւնէն առողջութիւնը լիովին պիտի գտնէ իշխանութիւնն, յորդորեց սր այն ճարտար բժշկին հրամաններն ուշադիր կատարէ, քանի որ բոլոր իր վտահաւթիւնն անոր վրայ դրած է, և սպա ձղեց գնաց առանց անոր բերնէն խօսք մը լսելու:

Պարսից իշխանն որ Քաշմիրի սուլթանին հետ սուտ հիւանդին սեղանակը մտեր էր, անոր հետ դուրս ելաւ, և հարցոյց անոր յարգանքը թէ ինչ զխաբածով Պէնկալի իշխանութիւնն մը Քաշմիրի պետութեան մէջ կը գտնուի, որ այնքան հեռու է իր բնիկ երկրէն, և այս հարցումն կամու ըրաւ որպէս զի խօսքը զիւթահար ձիուն վրայ բերէ և անոր բերնէն իմանայ թէ ինչ ըրած է այն ձին:

Քաշմիրի սուլթանն՝ որ չէր կրնար թափանցել թէ ինչ պատճառաւ Պարսից իշխանն այս հարցումը կ'ընէր իրեն, բացէ ՚ի բաց պատասխանեց, և Պէնկալի իշխանութիւնն իմացածն անոր յայտնեց, իսկ զիւթահար ձիուն գալով՝ գանձատան մէջ սրահել տուեր էր, իբր հազուադիւս բան մը, թէ և չգիտէր թէ ինչպէս կը դորձածեն:

«Տէր իմ, ըստ սուտ բժիշկը, Ձեր վեհափառութեան հաղորդած անընկալութիւնն ինձ նոր հնար մը կը յայտնէ իշխանութիւնն բողբոլին»

բուժելու : Արտիճեաւե նա այն ձիով եկաւ , և այն ձին ալ դիւթեալէ , նոյն դիւթութենէ վրան բան մ'եկած պիտի ըլլայ , զոր միայն տեսակ մը խնկերով կարելի է փարատել , և այս խոնկերն ինչ են դիւթեմ : Եթէ Ձեր վեհափառութիւնը կը հաճի իր ժողովողեան և բոլոր մայրաքաղքին սքանչելի տեսարան մ'ընծայել , թող վաղը ձին հրապարակը բերել տայ՝ իր սրբատին առջև , և մնացածն ինձ թողու : Արխոստանաւ ձեր և բոլոր արքունեաց աչքին ցոյց տալ քիչ ժամանակի մէջ՝ Պէնկալի իշխանուհին մտքով և մարմնով այնպէս մը բժշկուած որ երբէք կենացը մէջ եղած չըլլայ . և որպէս զի դորժը շքեղութեամբ 'ի կատար հանեմ , հարկ է որ իշխանուհին խիստ փառաւոր կերպով հաղուած ըլլայ , և Ձեր վեհափառութեան ունեցած բոլոր գոհարներով զարդարուի : »

Գաշմիրի սուլթանն իր փափաքին կատարումը տեսնելու համար , զոր մտայուտ կը կարծէր , Պարսից իշխանին խնդրած բաներէն աւելի դժուարին բաներ ընելու պատրաստ էր :

Նետեալ օրն իր հրամանին համեմատ՝ դիւթեալ ձին գանձատունէն հանեցին և կանուխ բերին սրբատին հրապարակը կեցուցին . և խիջն քաղքին մէջ ձայն ելաւ թէ արտաքոյ կարգի բան մը կատարելու համար մեծ պատրաստութիւն կը տեսնուի . ուստի բոլոր թաղերէն խուռն բազմութիւն մը սկսաւ այն կողմը վաղել : Սուլթանին սրահայան զօրքը չորս դին շարուեցան որպէս զի անկարգութիւն մը չպատահի և դիւթեալ ձիուն բոլորովքը սրբապ ձգուի :

Ի վերջէ Գաշմիրի սուլթանն երեցաւ . և երբ գահի մը վրայ նստաւ չորս կողմն արքունի սրաշոճասարներով սրաշարուած՝ Պէնկալի իշխանուհին սուլթանին սահմանած աղակիներով՝ դիւթահար ձիուն մտեցաւ և իր կիներն օդնեցին անոր որ վրան հեծնէ : Երբ թամբին վրայ ելաւ նստաւ , սաներն ասպատաններուն անցուց՝ սանձը ձեռք տաւ , սուտ բժիշկը ձիուն չորս դին անուշահոտ խոնկեր գնել տուտ կրակով լի սաներու մէջ : Յետոյ ինքզինքն ամփոփելով՝ ակնկոր և ձեռները կուրծքին վրայ դրած՝ ձիուն բոլորովքն երեք անգամ դարձաւ , և այնպէս ձեացուց թէ գանազան խօսքեր կ'արտասանէ , այն միջոցին որ սաներէն խիստ թանձր մտի մը կ'եննէր և իշխանուհին

պատեր էր , այնպէս որ հազիւ թէ կը տեսնուէր , նոյնպէս և ձին , յարմար առիթ գտաւ և իշխանուհոյն ետին՝ ձիուն դաւակին վրայ նետուեցաւ , խիջն երիթը դարձուց , և այն միջոցին որ ձին գաննը դէպ 'ի վեր կը վերցնէր , սա խօսքերն արտասանեց այնպիսի յստակ ձայնով մ'որ ինքն սուլթանը լսեց : «Գաշմիրի սուլթան , երբ քու պաշտպանութիւնդ հայցող իշխանուհիներու հետ կարողուելու փափաքիս՝ աշխատէ որ նախ անոնց հաւանութիւնը ստանաս : »

Ահա այսպէս Պարսից իշխանը Պէնկալի իշխանուհին գտաւ և ազատեց և նոյն օրը քիչ ժամանակի մէջ Պարսկաստանի մայրաքաղաքը տարաւ : Այն տեղ ոչ զիւղատունն իջաւ այս անգամ և ոչ հրապարակն , այլ սրբատին մէջ տեղ թաղաւորին սենեկին առջևն : Իսկ Պարսից թաղաւորն՝ անոնց ամուսնութիւնը չուշացուց , այլ արարողութիւնը շքեղ գործելու և իր խնդակցութիւնը յայտնելու համար պէտք եղած սրատրատութիւններն ընելու չափ ժամանակ անցուց :

Երբ հանդիսին համար որոշեալ օրերն անցան՝ Պարսից թաղաւորին առաջին հոգն եղաւ Պէնկալի թաղաւորին դեսպան դրիւել , բոլոր անցած դարձածն անոր իմաց տալու և սոյն խնամութեան համար հաւանութիւնն ստանալու : Պէնկալի թաղաւորն ամէն պէտք եղած անդէկութիւններն առնելն ետև՝ սրտիւ և բարեբաղդութիւն համարեց խնդրուած հաւանութիւնը տալու :



ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՀՄԷՏ ԻՇԽԱՆԻՆ ԵՒ ԲԱՐԻ-ՊԱՆՈՒ ՓԷՐԻՒՆ

Շէհերազատ սուլթանուհին դիւթեալ ձիուն պատմութիւնն աւարտեւէն ետև՝ Ահմէտ իշխանին և Բարի-Պանու փէրիին մէջն ալ սրատմաց , և խօսքը շարունակելով՝ ըսաւ .

Վեհափառ տէր , ձեր նախորդներէն մին՝ որ շատ տարիներ խաղաղութեամբ կառավարեց շնորհաց պետութիւնն՝ իր ծերութեան ատեն՝

մեծ գոհունակութեամբ տեսաւ որ իր առաքինութեանց հեանորդ եւ թեք իշխանապետն որդիքն և իր եղբոր աղջիկ իշխանուհին իր արքունեաց զարգեցն էին : Իր որդւոց անդրանիկը Հիւսէյնն կը կոչուէր , երկրորդն՝ Ալի , կրտսերն՝ Ահմատ և իշխանուհին՝ Նուրունիհար :

Նուրունիհար իշխանուհին՝ սուլթանին կրտսեր եղբորն աղջիկն էր . սուլթանն իր եղբորը մեծ եկամուտ մը ստահաներ էր , տակաջն իր ամուսնութենէ քանի մը ասրի ետքը մեռեր էր՝ իր աղջիկը խիստ փոքր որք թողլով : Սուլթանն իր եղբորը սիրոյն՝ որով միշտ զինքը յարգեր էր և սիրեր էր անկեղծօրէն՝ անոր աղջկան գաստիարակութեան հոգ տարեր և իր պալատը բերել տուեր էր զանի որ իր երեք որդւոց հետ կը թուի : Այս իշխանուհին ոչ միայն եզակիան զեղութիւն և մարմնային ընտիր ընտիր ձիւքեր ունէր , այլև մեծ խելք մը , իսկ իր անարատ վարքին և բարբին կողմէ բոլոր միւս բանիւններն երևելի էր :

Իշխանուհւոյն հօրեղբայր սուլթանն՝ որ միտքը դրեր էր զանի կարգել՝ գրայի իշխաններէն մէկուն հետ՝ երբոր տարիքը ներքեր , այս գիտաւորութիւնն ՚ի գործ գնելու իրօք կը պատրաստուէր , երբ տեսաւ որ երեք որդիքը կաթողին կը սիրեն իշխանուհին : Ասոր վրայ մեծ յատ դպաց : Իր մտադրած միութիւնն ՚ի կատար հանելու արդելք մը տեսնելուն համար այնչափցաւ չէր զգացած , որչափ որ կը վախեար որ մեծ դժուարութիւն պիտի ծագէր զանոնք մխարանելու և յորդորելու որ երեք որդիէն երկուքն իշխանուհին անդրանկին թողուն : Աստի դատ դատ երեքին հետ ալ խօսեցաւ , հասկցուց անոնց թէ ինչ անկարելիութիւն կար իշխանուհի մ'երեք հոգիի կին ընել , թէ մեծ շփոթութեան առիթ պիտի տան եթէ իրենց խորհրդին մէջ յարատեան : Ամէն ձիւք թափեց համոզելու համար զանոնք որ կամ անարտուծ հպատակին իշխանուհւոյն ընելիք ընտրութեան , և կամ երեքնին ալ ետ կենան իրենց սրահանջումն , և ուրիշ սիրուհիներ փնտռեն , քանի որ ազատ կը թողու որ այս մասին իրենց ուղած կինն ընտրեն , սա պայմանաւ որ իրենք ալ ներեն որ իշխանուհին օտար իշխանի հետ ամուսնանայ : Քայց երբ սուլթանը գիտեց որ իրենց սիրոյն մէջ յամուտալ կը մնան , երեքնին ալ իր առջևը կանչեց և ստպէս խօսեցաւ .

«Որդիներս , ըստ անոնց , քանի որ իմ բոլոր ջանքս անօգուտ եղան՝ ձեր հանգստութեան համար համոզելու ձեզ որ իմ եղբոր աղջիկ և ձեր հօրեղբոր աղջիկը կնութեան առնու զիտաւորութենէ ետ կենայք , քանի որ չեմ ուզեր իմ իշխանութիւնս գործածելով ձեզնէ մէկն աւելի նախադաս համարիմ և անոր հետ կարդեմ , կարծեմ թէ ձեզ գոհ ընելու , և ձեր մխարանութիւնն անվրդով պահելու հնար մը գտայ , և թէ իմ խորհուրդս մտիկ ընել ուղէք և զայն ՚ի գործ գնելու փոյթ տանիք :

«Արդ՝ ես պատշաճ կը դատեմ որ ձեզնէ ամէն մէկը դատ դատ ճակբողութիւն ընէ տարբեր երկիր մը , այնպէս որ բնաւ իրարու չհանդիպիք : Եւ որովհետեւ գիտեք թէ շատ հետաքրքիր եմ մանաւանդ ամէն հազուադիւս և եզակիան բաներու համար , իմ եղբորս աղջիկը կը խոստանամ անոր որ ինձի անլուր և տարօրէն բան մը բերէ : Այսպէս ձեր բերած և իրարու մօտ գնելով բազդատած բաներուն զերազանցութիւնն ինքնին պիտի գատեք , անաւարակոյս միջանակի արժանի եղողն ալ պիտի որոշէք առանց դժտութեան : Իսկ ճամբորդութեան ծախուց և այն անդիւս բանը գնելու համար՝ ձեր աստիճանին պատշաճ գումար մը պիտի տամ ամէն մէկուն , սա պայմանաւ որ նոյն գումարը սպասաւորներու համար չգործածեք , վասն զի ոչ միայն սպասաւորները կրնան ձեր աստիճանը մասնել , այլ նաև ձեզի պէտք եղած աղաւտութենէն՝ որոշեալ նպատակին համեմատ , զրկել , նոյնպէս չէք կրնար ձեր ուշադրութեան արժանի բաները քննել և ձեր ուղեորութենէն ըստ կարի օգուտ քաղել :»

Որովհետեւ երեք իշխանները միշտ հնազանդ էին իրենց հօրը սուլթանին կամայն , և միւս կողմն ամէն մէկը կը յուսար որ բաղին իրեն կրնայ նպատակել և Նուրունիհարը ստանալու յաջողիլ , ամէնքը միաբերան յայտնեցին որ պատրաստ են հնազանդելու : Սուլթանն՝ առանց ժամանակ անցնելու խոստացած գումարն անոնց համբել տուաւ , և նոյն օրն իսկ՝ ճամբայ եղելու համար պէտք եղած պատրաստութիւններն ընելու հրաման տուին : Որպէս զի առտու կանուխ ճամբայ ելանն՝ առջի իրկուսէ՝ սուլթանին իրենց հրածարակիան բարեւ տուին : Լաւ ձիւր հեծած , կալմ և վաճառականի զրեատ հաղած քաղբին մը

Ե նոյն դռնէն դուրս ելան , իւրաքանչիւրը հաւատարիմ սպայ մը միասին առնելով՝ դերիի հաղուստով՝ և առաջին օթեւանն իջան , ուր ճամբան երեքի կը բաժնուէր և ամէն մէկը զատ շաւիղ մը բռնելով իր ուղեորութիւնը սխտի շարունակէր : Արք իրկուը միասին սեղան նստելու ճաշ պատրաստել առին , որոշեցին որ իրենց ճամբորդութիւնը տարի մը անէ և նոյն օթեւանն ՚ի դարձին հանդիպելու ժամայիր եղան , խոստանալով որ ամենէն առաջ համողը միւս երկուքին սպասելու պարտաւորի , որպէս զի միասին իրենց հօրը ներկայանան ինչպէս որ միասին անորմէ հեռացեր էին : Հետեւեալ օրն այդուն՝ զիբար գրկելէն և յաջող ուղեորութիւն իրարու մաղթելէն ետե՛ ձի հեծան և իւրաքանչիւրը մէյմէկ ճամբայ բռնեց՝ առանց դժուարութիւն ցոյց տալու ընտրութեան մէջ :

Հիւսէյին իշխանն՝ երեք եղբարց մէջ անդրանիկն՝ որ Պիտակար թագաւորութեան մեծութեան , զօրութեան և հարստութեան վրայ շատ սքանչելի բաներ լսեր էր , իր ճամբան շարունակեց Հնդկաստանի ծովուն կողմը զարնելով , և երեք ամիս անընդհատ ուղեորելէն ետե՛ զանազան կարաւաններու հետ՝ մերթ անապատներէն և խոտան լեռներէ՛ մերթ բազմամարդ՝ բերրի և խիստ ծաղկած երկիրներէ անցնելով՝ Պիտակար հասաւ , որուն անուամբը կը կոչուի նաև բոլոր թագաւորութիւնն , և արքայանիստ քաղաքն է : Օտար վաճառականներու յատկացած օթեւանն իջաւ , և իմանալով որ չորս դիւստոր թաղեր կան նոյն քաղաքին մէջ՝ ուր զանազան սպրանք ծախող վաճառականներ խանութներ ունէին , որոց մէջ անդը թագաւորին պալատը կը գտնուէր՝ իր բեքաղքին կեդրոնն , որ երեք շրջապատ ունէր և երկու մընն սարածութիւն մէկ դռնէն միւս դուռը՝ հետեւեալ օրը Հիւսէյին այս թաղերէն մէկը գնաց :

Հիւսէյին իշխանը հիանալով տեսաւ այն թաղն ուր կը գտնուէր . ընդարձակ էր , շատ մը կամարակապ փողոցներ ունէր , և արևուն ջերմութեանէ ազատ , թէև լուսաւոր : Խանութները նոյն մեծութիւնն ու համեմատութիւնն ունէին , և այն վաճառականներն որ նոյն սպրանքը կը ծախէին , ասդիս անդին ցրուած չէին այլ նոյն փողոցը կը գտնուէին . նոյնպէս էին նաև արհեստաւորաց խանութները :

Արպակներուն շատութիւնն , որոնք տեսակ տեսակ վաճառ բով լի էին , ինչպէս շղարշ , զոճաւոր կտաւ , որ խիստ բնական կերպով կը ներկայէին մարդիկներ , գաշտանկարներ , ծառեր , ծաղիկներ . մետաքսէ կերպաններ և զիպակներ , թէ Պարսկաստանի , թէ Չինաստանի և որիշ կողմերէն բերուած՝ նոյնպէս ճարմնի և Չինի յանձնապակ , այլ և այլ մեծութեամբ օթոցներ , այս ամէն բաներն այնչափ զարմանք պատճառեցին իրեն որ չէր կրնար տեսածին հաւատալ : Բայց երբ ակնավաճառաց և ոսկերչաց կրպակները հասաւ , որովհետև այս երկու արհեստները մի և նոյն վաճառականները կը բանէին՝ դրեթէ որանչացաւ մնաց այն ոսկիէ և արծաթէ գործերը անանելով՝ և շլացաւ այն տեղ ծախու դրուած առատ առատ մարդարտի , անդամանդի , սուտակի , զմրտխտի և շափիդայի սրայծառութեանն : Աթէ մի և նոյն տեղը հաւարուած այսչափ հարստութեանց վրայ զմայլեցաւ , որչափ աւելի հիացաւ երբ նոյն տէրութեան բոլոր ճոխութիւններն աչքին առջև բերաւ և զիտեց որ բայ ՚ի սլրահմաններէն (քահանայ) և քուրմներէն՝ որ աշխարհային բաներէ հեռու մնացու ուխտեր էին , բոլոր երկրին մէջ չկար հնդկացի և հնդկացուհի մ՝որ մանեակներ , ասպարձաններ և ոտքերուն ու սրունքներուն զարդեր և զոհարներ չունենար , որոց վայելութիւնն այնչափ աւելի աչքի կը զարնէր որչափ որ ամէնքը սև էին , և այնպիսի սևութիւն որով անդամանդներն աւելի ևս կը շողային :

Հիւսէյին իշխանն ուրիշ նշանաւոր բան մ՝ալ տեսաւ , այս է վարդ ծախողներու ամբոխ մ՝որով փողոցները կը խռնէին : Հիւսէյին ասկից դուշակեց որ հնդկացիք շատ կը սիրեն վարդը , վասն զի ամէն մարդ վաճառ մ՝ունէր ձեռքը , կամ վարդեայ պսակ մը գլուխը . նոյնպէս ամէն խանութպան իր կրպակին վրայ վարդի թաղար մ՝ունէր , այնպէս որ շուկայն թէև մեծ՝ բոլորովին վարդի հօտ կը բուրէր . վերջապէս Հիւսէյին իշխանը բոլոր թաղին փողոցները պարտելէն ետե՛ երեւակալութիւնը տեսած ճոխութիւններով լի , հանդ չելու պէտքն զգաց : Այս պէտքը վաճառականի մը յայտնեց , և վաճառականն ալ մարդաւար կերպով հրաւիրեց զինքն որ իր խանութը նստի : Հիւսէյին այս հրահրէին ընդունեց : Շատ ատեն չկար որ կրպակը նստեր էր , երբ մանեակի մը տեսաւ որ վեց քառակուսի սոք ունեցող զոյր մը թնր

զարկած՝ աճորդի հաներ էր երսուն քսակի : Մունետիկը կանչեց և ինդրեց որ դորդը տեսնէ , և անոր զինը չափազանց գտաւ , ոչ միայն փոքրութեան այլ խիստ ընտիր տեսակէն ըլլալուն համար : Երբ դորդը լաւ մը քննեց մունետիկին ըսաւ թէ չէ կարող ըմբռնել որ ինչո՞ւ համար այնպիսի պզտիկ և անշահ գորդ մ'այնչափ սուղ ըլլայ :

Մունետիկն որ կարծէր թէ Հիւսէյին վաճառական մ'է , իբր պատասխան ըսաւ անոր . «Տէր իմ , եթէ ասոր զինը չափազանց կ'երեւի քեզ , դարմանքդ աւելի պիտի աւելնայ եթէ ըսեմ որ մինչև քառսուն քսակի հանելու հրաման ունիմ և այս գումարը վճարողին միայն պիտի յանձնեմ՝ սոյն գորդը :

— Ուրեմն , ըսաւ Հիւսէյին , պէտք է որ ինձի անձանութ թանկագին յատկութիւն մ'ունենայ այս գորդը :

— Քաջ գուշակեցիք , տէր իմ , վրայ բերաւ մունետիկն , և դու ինքնին պիտի խոստովանիս այս բանս , երբ իմանաս թէ սոյն գորդին վրայ նստելու՞ անոր հետ փափարած տեղը անարդեւ կրնաս փոխադրուիլ :»

Այս բայցատրութեան վրայ՝ Հիւսէյին զիտելով որ իր ճամբորդութեան նպատակն էր հօրն եղական և անլուր բան մը տանիլ , մտածեց որ սուլթանին դոհոնախոթիւնն պատճառող ասկից աւելի յարմար բան մը չէր կրնար գտնել : «Եթէ դորդն , ըսաւ Հիւսէյին , ըսած յատկութիւնդ ունի , ոչ միայն ինդրած քառսուն քսակը բարձր զին մը չպիտի համարիմ , այլև նոյն զինը տալէս ետև՝ քեզի ալ ընծայ մը պիտի ընեմ որմէ դոհոնախոթ ըլլաս :

— Տէր իմ , վրայ բերաւ մունետիկն , ես քեզի ճամբորդութիւնը յայտնեցի , և դիւրին է քեզ նոյնը ստուգել , երբ քառսուն քսակի սակարկութիւնն ընես , սա պայմանաւ որ աչքիդ առջև փորձով ցոյց տամ : Աւստի , քանի որ հիմակ քառսուն քսակը քովդ չունիս , և թէ պէտք է ինձ նոյն գումարը ստանալու համար՝ իբր օտարական նստած խանդ գալ , առ այժմ այս խանութին տիրոջ հրամանաւ կրնանք կրպակին ետևի կողմն երթալ . այն տեղ դորդը գետինը կը փռեմ , և երբ վրան նստիմք միասին , և խանը վարձու բռնած սենեակը փոխադրուելու իրձդ յայտնես , եթէ իսկոյն իրձդ չկատարուի , մեր սակար-

կու թիւնը թող աւրուած սեպուի և դու ալ ազատ ըլլաս գորդս չգնելու : Իսկ ընծային գալով՝ թէ և նոյն գորդը ծախողէն վարձքս առնու պարտաւոր եմ , դարձնալ քու կողմէդ ալ շնորհակալութեամբ պիտի ընդունիմ ընելիք շնորհդ :»

Իշխանը մունետիկին խօսքին վրայ այս պայմանն ընդունեց և սակարկութիւնն ըրաւ . յետոյ խանութին ներսի կողմը մտաւ խանութանին հրաւանաւ : Մունետիկը գորդը գետինը տարածեց , երկու քնին ալ վրան նստան , և այն ինչ իշխանն իր խանի սենեակը փոխադրուելու փափաքը յայտնեց որ մունետիկին հետ նոյն զիբքով այն տեղ գտնուեցաւ : Որովհետև գորդին այս յատկութիւնը փորձով տեսնելուն ամէն կասկած փարատեր էր , մունետիկին համրեց քառսուն ոսկի քսակն , և անոր քսանն ոսկի և սուլթանի ընծայեց :

Այս կերպով Հիւսէյին իշխանը գորդին տէրն եղաւ , և չափազանց ուրախութիւն զգաց որ Պիսնակար գալուն՝ այսպիսի հաջողալուս բան մը ձեռք ձգեր էր , և որով անկասկած էր Նորունիհար իշխանուհին իրեն կին ընելու : Եւ արդարև՝ անկարելի կը համարէր որ իր միւս փոքր եղբայրները կարող ըլլան իրենց ուղեւորութենէ իր յաջողութեամբ ստացած գորդին նման բան մը բերն : Առանց Պիսնակար աւելի ընտելու՝ կրնար՝ դորդին վրայ նստելով՝ նոյն օրը ժամագիր եղած տեղը հասնիլ , բայց այս ընելով՝ անոնց շատ ատեն պիտի սպասէր . հետևապէս լուաղոյն սեպեց համրերել և հետաքրքիր եղաւ Պիսնակարի թաղաւորն , արքունիքը տեսնել , երկրին զօրաց , օրինաց , բարոց և կրօնին վրայ տեղեկութիւններ ստանալ : այս նպատակաւ քանի մ'ամիս իր հետաքրքրութիւնը դոհոնախոթ ընելու դիմանալէ այն տեղ անցնել որոշեց :

Պիսնակար թաղաւորին սովորութիւնն էր շարաթն անդամ մը թողուր օտար վաճառականներն իրեն ներկայանան : Ահա այս անուամբ Հիւսէյին իշխանն որ ինքզինքը յայտնել չէր ուզեր , քանի մ'անդամ թաղաւորը տեսաւ , և որովհետև իշխանն որ մարմնով վայելչակազմ էր՝ շատ խելք ունէր և յետին ծայր քաղաքավար էր (և այս յատկութեամբը միայն թաղաւորին ներկայացող վաճառականներն կը դանազանէր) թաղաւորն ամենէն աւելի անոր հետ կը խօսէր որպէս

զի Հնդկաստանի սուլթանին, անոր զօրաց, հարստութեան և կառավարութեան վրայ տեղեկութիւն ստանայ :

Իսկ միւս օրերը կ'անցնէր Հիւսէյին իշխանն քաղքին մէջ և շրջափակելով զանուամ նշանաւոր բաները տեսնելու : Այլ և այլ շէնքերէ զատ՝ զմայլեցաւ հրատան մը վրայ՝ որուն շինութիւնը բոլոր պղնձէ էր : Տաս դրկաչափ քառակուսի լայնութիւն և տասն հինգ բարձրութիւն ունէր . այս հրատան ամենէն նշանաւոր գեղեցիկութիւնը միանշոյլ ոսկի արձանն էր, մարդու հասակաւ, որուն աչքերն երկու սուտակն էին, և այնպիսի ճարտարութեամբ շինուած որ անոր նայողները կարծէին թէ իրենց վրայ կը դարձնէ իր աչքերն որ կողմն որ տեսնեն : Ուրիշ մ'ալ տեսաւ որ նոյնչափ հիանալի էր : Գիւղի մը մէջ՝ դաշտավայր մը կար շուրջ տասն արտավար՝ որ զմայլելի և վարդերով և անասակ անասկ ծաղիկներով լեցուն պարտէզ մ'էր . այս հողը կ'ընկերու չափ բարձր պատով մը սրտած էր, որպէս զի կենդանիները ներս չմտնեն : Գաշտին մէջ տեղը՝ մարդու բարձրութեամբ պատշգամ մը կը տեսնուէր՝ իրարու միացած քարերով պատած այնպիսի խնամօք և ճարտարութեամբ որ կարծես թէ միակտուր քար մ'էր : Տաճարն որ զմերթապարէս էր՝ յիսուն դրկաչափ բարձր և սրտաշգամին միջևը կանգուն էր՝ այնպէս որ մղոններով հեռուէն գիւրին էր զայն նշմարել : Երսուն գրկաչափ երկարութիւն և քսան լայնութիւն ունէր . իսկ կարմիր մարմարն՝ որով շինուած էր, խիստ յղկուն էր : Գմբէթին կամարն երեք կարգ փալփլուն նկարներով զարդարուած էր խիստ վայելուչ և բոլոր տաճարն առ հասարակ այնչափ պատկերներով, քանդակներով և արձաններով լի էր որ տեղ մը չէր մնացած վերէն վար որ նկար մը չունենար :

Գիշեր ցորեկ այս տաճարին մէջ մնապաշտական արարողութիւններ կը կատարէին, որոց կը հետևէին խաղեր, խմբերգներ, նուազածութիւններ, սրբեր, երգեր և խնջոյքներ . իսկ տաճարին պաշտօնեաներն և տեղ ոյն ընդհանրն երամովին ու խախեկող անձնրու պարզաներով կ'այլուէին, և այս անձինք շատ անգամ տէրութեան հեռաւոր երկիրներէն սոյն ուխտատեղին կը գիւնէին իրենց կրօնական պարտաւորութիւնը կատարելու :

Հիւսէյին իշխանն ուրիշ հանդիսաւոր տօնի մ'ալ հանդիսատես եւ զաւ . այս հանդէսն ամէն տարի Պիսնակարի տէրութեան մէջ տեղի կ'ունենար, ուր կուտականեր, բերդերու հրամանատարներ, քաղքի կառավարիչներ և դատաւորներ և ամենէն կրօնազէտ սլաւամանները պարտաւոր էին ներկայ գտնուելու : Այնպիսի հեռաւոր երկիրներէ և կողներ կային որ հազու թէ չորս ամիս ճամբայ ընելէն ետե որոշեալ տեղը կը հասնէին : Այս ժողովն՝ որ անհամար հնդկացիներէ կը բաղկանայ՝ ընդարձակ դաշտի մը մէջ կը դումարուի, որ աչք առածի չափ հիանալի տեսարան մը կ'ընծայեն : Այս գաշտին կեդրոնը վայր մը կար խիստ երկար ու լայն, որուն մէկ կողմէն ինն գատիկներ տախտակա ման հոյակապ շէնքով մը զոցուած՝ քառասուն սլաներու վրայ կառուցած էր, և թագաւորին, արքունեաց և շարքին անգամ մ'իւր ունկնդրութեամբը պատուած օտարներու յատկացած տեղ մ'էր : Կերպի կողմը շքեղօրէն զարդարուած և կահաւորած էր, իսկ դրսէն նկարներ էին բնական կերպով դաշտանկարներ, ուր ամէն տեսակ կենդանիներ, թռչուններ, միջատներ, նոյն իսկ ճանձեր կը տեսնուէին . նոյնպէս ուրիշ շէնքեր ալ կային չորս հինգ գատիկներով բարձր, և զրեթէ իրարու նմանութեամբ նկարուած որ միւս երեք կողմերը կը կազմէին . այս տախտակամանները սա յատկութիւնն ունէին որ ժամէ ժամ անոնց կերպարանն ու զարդերը կը փոփոխէին :

Նոյն վայրին ամէն մէկ կողմն՝ իրարմէ քիչ հեռու՝ հազար փիղ շքեղ թամբերով և ոսկեղօծ փայտէ շինուած քառակուսի աշտարակներով բեռնաւորուած՝ շարուեր կեցեր էին, իւրաքանչիւր աշտարակի մէջ նուազածուներ և ծաղրածուներ կային : Այս փիղերուն խումբն, իրենց ականջներն ու մարմինը խրուկով և ուրիշ ոյցներով ներկած էին և ծաղրական նկարներ կը ներկայէին :

Այս տեսարանին մէջ՝ Հիւսէյինի զարմանքն աւելի շատ զոգոտին եղաւ՝ հնդկային ճարտարութեան և հանճարի մասին փիղ մը, ամենէն հոժկուն և խոշորն որ չորս ոտքն ուղղահայեաց և դեանէն երկու ոտք գուրս գերանի մը վրայ դրած կը խաղար իր պատիճովն եղանակը զարնելով՝ նուազարմաններու ձայնին : Նոյնպէս զարմացաւ առաջնոյն չափ հզօր՝ ուրիշ փղի մը վրայ, որ դեանէն տասն ոտք բարձր ցլի մը

վրայ շեղակի գրուած դերանի մը ծայրը կեցած՝ որուն միւս ծայրն՝ իբր հակակշիւն՝ ահագին խոշորութեամբ քար մը կաներ էին, ասոր միջոցաւ՝ երբ վար և երբեմն վեր ելնելով՝ կը նշանակէր՝ ՚ի ներկայութեան թաղաւորին և արքունեաց՝ իր մարմնոյն և պատիճին շարժում ներուլը՝ նուազարանաց եղանակն, ինչպէս միւս փիղը ։ Հնդկացիք հակակշիւ քարը դերանին կապելէն ետեւ՝ մարդու զօրութեամբ միւս ծայրը մինչև գետին ծուեր և փիղն անոր վրայ հասներ էին ։

Թէև Հիւսէյին իշխանը կրնար աւելի երկար ատեն Պիսնակարի պետութեան մէջ բնակելով՝ ուրիշ անհամար սքանչելիք տեսնել և մինչև եղբարցը հետ ժամադիր եղած տեղն ու ժամանակը՝ զուարճութեամբ տարին անցնել, սակայն արդէն բոլոր տեսած բաներէն լիուրի գոհ ըլլալով՝ ըստ որում՝ միտքն անդադար իր սիրոյ առարկայով պաշարած էր, և իր գորզը գնելէն վեր՝ Նորունի հար իշխանուհոյն դեղութիւնն ու չնորհքն օր քան զօր իր սուսանքը կը ստորկայնէին, կարծեց թէ իր սիրան աւելի պիտի հանդարտէր և իր եղբանկութեան աւելի մօտ պիտի դառնէր՝ եթէ իշխանուհոյն մօտենար ։ Կր թունած սենեկին վարձքը տալէն՝ և դռնասլանին ասպարեղէն ետեւ թէ որ ժամուն կրնայ դալ և գրան վրայէն բանալին առնուլ, առանց բտելու թէ ինչ կերպով պիտի մեկնի, սենեակը մտաւ դուռն իր վրայ դոյնելով և վրան բանալին թողլով ։ Գորզը գետինը փռեց և իր հետն եկող սարսիկն հետ անոր վրայ նստաւ ։ Այն ատեն ինքզինքն ամփոփեց, և տեսչանօք փախաբեղէն ետեւ որ իր եղբարց երթալիք օթեանը փոխադրուի, տեսաւ որ իրօք փոխադրուեր և հասեր է այն տեղ ։ Նոյն օթեանը դադար առաւ, և ինքզինքը վաճառականի տեղ անցնելով՝ այն տեղ եղբարցը սպասեց ։

Ալի իշխանը՝ Հիւսէյինի կրտսեր եղբայրն, որ միտքը գրեթէ Գարակաստան ուղեւորել, Հնդկաց սուլթանին փոխարին հասնմամտ՝ իր միւս երկու եղբայրներէն զտուրէն ետեւ՝ ճամբայ ելեր էր կարաւանի մը միանալով ։ Չորս ամիս շարունակ ճամբայ ընելէն ետեւ՝ հասաւ վերջապէս Շիրազ քաղաքն, որ այն ատեն Պարսից թաղաւորութեան մայրաքաղաքն էր ։ Արտհետեւ ճամբան՝ ինքզինքն ակնավաճառի տեղ անցնելով՝ քանի մը վաճառականներու հետ բարեկամացեր էր, անոնց

հետ մի և նոյն օթեանն իջաւ ։

Հետեւեալ օրը մինչդեռ վաճառականներն իրենց ապրանքին հակերը կը բանային, Ալի իշխանն՝ որ լոկ իր զուարճութեան համար կ'ուզէր բերն, և աւելորդ բաներ հետը չէր առած որ ծանրութիւն չըլլայ իրեն, իր հագուստը փոխելէն ետեւ՝ գոհացներ, օտիկ և արծաթ գործեր, մետաքսէ կերպաններ, բարակ կտաւ և ուրիշ թանկագին և հագուազիւս բաներ ծախուած շուկան դնաց ։ Այս շուկան որ ընդարձակ և հաստատուն կերպով շինուած էր, կամար ունէր, կամարը խոշոր սիւնակներու վրայ նստած էր, սրոց բոլորտիքը, նոյնպէս պատերուն երկայնքը խանութներ կային, թէ ներսի և թէ դրսի կողմն, և Շիրազի մէջ այս շուկան Պէրէսիէն անուամբ կը ճանչցուէր ։ Նախ Ալի իշխանը վեր վար բոլոր պէտէսթէնը շրջեցաւ, և հիացմամբ դատեց՝ որչափ հարստութիւններ փակուած են այն տեղ տեսած անձիւ և թանկագին ապրանքներու շատութենէն ։

Շատ մ'անցնող դարձող մուսնեթիկներու մէջ՝ որ զանազան ապրանք կը ծախէին, աճուրդի հանելով՝ զարմացաւ Ալի տեսնելով՝ մուսնեթիկ մ'որ շուրջ ոսք մ'երկայն և ըթամատե մը քիչ մ'աւելի խոշոր փղովքէ խողովակ մը ձեռքը թունած՝ երսուն քսակի է կը կոչէր ։ Նախ կարծեց թէ մուսնեթիկը խելքը կորուսեր է ։ Այս բանս հասնալու համար, խանութպանի մը մօտեցաւ և անոր ըստ՝ մուսնեթիկը ցոյց տալով ։

«Տէր իմ, ըսէ ինձ կ'աղաչեմ թէ արդեօք կը սխալիմ, այս մարդն որ փղովքէ փոքրիկ խողովակի մը համար երսուն քսակ կը պահանջէ, միթէ յիմար է ։

— Տէր իմ, պատասխանեց վաճառականն, եթէ երեկ խելքը թուցած չէ, կրնամ ասորհովել քեզ որ մեր մուսնեթիկներուն ամենէն գործունեայն ու խելացին է, և երբ ծանրացին բան մը ծախելու հարկ ըլլայ ամենէն շատ անոր կը վատահինք զայն, իսկ երսուն քսակի աճուրդի հանած խողովակին գալով՝ պէտք է որ նոյն և աւելի արժէք ունենայ այն ապրանքն այնպիսի յատկութեան մը համար որ մեղի անուտանելի է ։ Մուսնեթիկը հիմակ պիտի անցնի, զանի պիտի կանչենք և դու ինքնին տեղեկացիր գործին, առ այժմ՝ բազմոցիս վրայ նստիր, հանդիստ առ ։»

Ալի իշխանը խանութպանին բարեսէր հրաւերը չմերժեց, և նստե-
լէն քիչ մը ետքը՝ մունեստիկն անցնելը տեսաւ: Երբ խանութպանն ա-
նոր անունը տալով կանչեց՝ մունեստիկը մօտեցաւ: Այն ատեն Ալի իշ-
խանն անոր ցոյց տալով, ըսաւ .

«Պատասխան տուր այս օտարական պարոնին՝ որ կը հարցնէ թէ
արդեօք խնդրես որ զժողին փղտակրէ խողովակի մը համար երսօն
քսակ կ'ուղես: Ես ալ պիտի զարմանայի եթէ չլիանայի որ խոհական
մարդ մ'եմ:» Մունեստիկն Ալի իշխանին դառնալով անոր ըսաւ .

«Տէր իմ, դու մինակ իս խնդրես ինչ որ այս խողովակին առթիւ .
սակայն դու ինքնին պիտի դատես հիմակ եթէ իրօք յիմար եմ, եթէ
անոր յասկութիւնը քեզի յայտնեմ, և յուսամ որ այն ատեն խողովակիս
զինը պիտի աւելցնես ինչպէս որ ըրին անոնք որ թէ իմ և թէ խողո-
վակիս վրայ դէշ գաղափար մ'ունէին:»

«Նախ, աէր իմ, շարունակեց մունեստիկն իշխանին ներկայելով խո-
ղովակը, նկատես որ այս խողովակն երկու ծայրէն ապակիով զոյգուած
է, և դիտես որ երկուքէն մէկը նայելով ինչ որ տեսնելու փախաբիս
կրնաս տեսնել անմիջապէս:»

— Պատրաստ եմ քեզ հաստցում ընել, պատասխանեց Ալի իշխանն,
եթէ ըսածիդ ճշմարտութիւնը հաստատես:» Եւ որովհետեւ խողովակը
ձեռքն էր, երկու կողմէն ապակիները դիտելէն ետեւ՝ «Յոցուր ինձ,
յարեց նա, մակից նայել պէտք է որպէս զի լաւ մը հասկնամ դոր-
ծը:»

Մունեստիկը ցցուց զայն: Իշխանը դիտեց և Հնդկաստանի սուլթան
իր հայրը տեսնելու փախաբելով իր անթոռին վրայ՝ խորհրդարանին
մէջ տեղ կատարեալ սուղջութեան մէջ տեսաւ զանի: Յետոյ՝ որովհե-
տեւ սուլթանէն ետքը՝ Նուրունիհար իշխանուհոյն չափ իրեն սիրա-
կան անձ մը չկար, փախաբեցաւ զանի տեսնելու և զիտեց որ իր նա-
ժիշաներէն շրջապատեալ՝ հայրիկն առջև կեցեր վրան զլուրը կը
շտկէր և զեղածիծաղ ու զուարթագին դէմք մ'ունէր: Ալի իշխանն
այս փորձը բաւական համարեց համոզուելու համար որ այն խողովակն
ոչ միայն Շիրազ քաղքին այլ բոլոր աշխարհին մէջ ամենէն անդին
բանն էր, կարծեց որ եթէ՝ զանց ընէր այն խողովակը ծախու առնելու՝

ընտ այնպիսի անդլաւ բան մը չպիտի գտնէր ոչ ՚ի Շիրազ և ոչ այլ-
ուր: Աւտի մունեստիկն ըսաւ .

«Նամահիմն կարծիրս կ'ուղընմ, և կը զղջամ որ քեզ յիմարի տեղ
դրի. սակայն կարծեմ թէ լիովին պիտի գոհ լինիս իմ այն հաստց-
ման համար զոր ընելու պատրաստ եմ, խողովակը գնելով: Որովհետեւ
շատ պիտի ցախմ եթէ իզնէ զատ ուրիշ մը գայն գնէ, ինքրեմ լուէ ինձ
թէ մաճառողն ինչ զին կ'ուղէ. փոխանակ աւելի ևս պուալու և եր-
թալ դարով յողնելու, ելիր ինձի հետ եկուր, և զօմարն խկոյն պի-
տի վճարեմ քեզ:»

Մունեստիկը հաւաստեց երգմամբ որ քառսուն քսակ խողովակին տի-
րոջ տանելու պարտաւոր է, և եթէ այս մտին կասկած ունի, կրնայ
ինքն անձամբ տանիլ զօմարն և տիրջը յանձնել: Հնդկացի իշխանն
անոր խօսքին հաւատ ընծայեց, իրեն հետ տարաւ և ընտիր ոսկի տա-
լով քառսուն քսակը համրեց, և այսպէս փղտակրէ խողովակին աէրն
եղաւ:

Երբ Ալի իշխանն այս խողովակն առաւ, այնչափ մեծ եղաւ իր ու-
րախութիւնն որ կարծէր թէ իր իշխան եղբայրներէն, ինչպէս որ կ'ե-
րեակայէր, այնպիսի անուր և հիանալի բան մը գտած չպիտի ըլլան,
և այսպէս Նուրունիհար իշխանուհին իր ուղևորութեան յոյնու-
թեանց վարձքը պիտի ըլլայ: Աւտի մասածեց միայն Պարսից արքունի-
քը տեսնել, առանց ինքզինքը յայտնելու, և Շիրազի ամէն հետա-
քըքրական բաներն աչքէ անցնել, մինչև որ այն կարաւանն որով եկեր
էր Հնդկաստանի ճամբան բունէ: Արդէն իր հետաքրքրութիւնը գոհ
ըրեր էր, երբ կարաւանը ճամբայ ելնելու պատրաստ եղաւ: Իշխանը
փութաց անոր միանալու և ուղի ընկաւ: Իր ուղևորութեան ատեն
արկած կամ արգելք մը չպատահեցաւ, և միայն ճամբուն երկարու-
թեան նեղութիւնները քաշելով՝ ժամագրութեան տեղը հասաւ ան-
մաս, որ Հիւսէյին իշխանն արդէն հասեր էր: Ալի իշխանը զանի
այն տեղ գտաւ և անոր հետ մնաց Ահմէտին գալտտեան սպասելով:

Իսկ Ահմէտ իշխանը Սըմրղանաի ճամբան բունէր էր, և որովհետեւ
իր հասած օրուան հետեւեալ օրն՝ իր երկու եղբորց օրինակին հետե-
ւելով պէտէսթէնի կողմը դիմեց և ներս մտաւ, և ահա մունեստիկ մը

անոր առջև ներկայացաւ և արհեստական խնձոր մ'ի ձեռին, քսան հինգ քսակ կը պոռար : Ահմէտ մունետիկը կեցուց և անոր ըսաւ .

«Յոյց տուր ինձ այդ խնձորն և հասկցուր ինձ թէ կարդէ դուրս ինչ յատկութիւն կրնայ ունենալ այդ որ այդչափ բարձր զին մը կը պահանջես : «Տէր իմ, ըսաւ անոր մունետիկին՝ խնձորն անոր ձեռքը տալով քննելու համար, այս խնձորն եթէ լոկ դրսէն նային, բան մը չերևիր աչքի, սակայն եթէ անոր ներքին հանդամանքը քննես, անոր հիանալի գործածութիւնն՝ որով շատ բարիք կարելի է ընել մարդոց, նկատես, այն ատեն պիտի խոստովանիս որ զին չունի, և այս իրաւ է որ այս խնձորն ունեցողը գանձ մ'ունի : Եւ արդարեւ՝ չկայ հիւանդ մը որ ինչ մահաբեր հիւանդութեամբ որ տառապի, ինչպէս անընդհատ տենդ, կարմիր տենդ, կողացաւութիւն, ժանտախտ և ասոր նման ուրիշ ցաւեր, նոյն խի օրհասական, որ չբուժէ և անմիջապէս հիւանդին առողջութիւն չտայ, այնպէս որ պիտի կարծէ թէ իր կենաց մէջ միշտ ունիս և քաջառողջ դանուած է . այս բանս խիստ սրբազմիջոցաւ կարելի է ձեռք ձգել, վասն զի բաւական է որ հիւանդը զայն հոտուրայ :

— Եթէ ըսածիդ հաւտամ, ըսաւ Ահմէտ իշխանն, իրաւ է որ խնձորդ հրաշտի յատկութիւն մ'ունի, և իրօք զին չունի . բայց ինձի պէս ուղղափրոտ մարդ մ'ինչպէս կրնայ համոզուիլ այս մասին՝ երբ զայն դնելու դիտաւորութիւն ունենայ, և վտահ ըլլայ որ գովեստիդ մէջ ոչ խաբէութիւն և ոչ չափազանցութիւն կայ :

— Տէր իմ, վրայ բերաւ մունետիկը, բոլոր Յըմրղանտի քաղքին մէջ ծանօթ է այս խնձորին զօրութիւնն, և առանց հեռուն երթալու, հարցուր այս տեղ հաւաքուած վաճառականներուն, պիտի տեսնես թէ ինչ պիտի ըսեն, և այնպիսի մարդիկ ալ պիտի տեսնես որ այսօր չպիտի սպրէին, ինչպէս որ իրենք պիտի վրայեն, եթէ այս ընտիր դեղը չգործածէին : Քեզ լիովին համոզելու համար՝ բաւական է ըսել որ այն խնձորը քաղքին հռչակաւոր մէկ փիլիսոփայի մ'առման և պնտութեանց պտուղն է, փիլիսոփայ մ'որ բոլոր կեանքն անցուցեր էր՝ բոյսերուն և հունարեուն յատկութիւնը հասկնալու, և վերջապէս յաջողէր էր այս տեսած քաղաղութիւնդ ընելու, որով այնպիսի ծանր հի-

ւանդներ բժշկեց որ իր յիշատակն անջինջ պիտի մնայ : Յանկարծահաս մահ մը գալով՝ չկրցաւ ինքն իր անձին դեղն ընել և քիչ ատենի մէջ մեռաւ . և իր որբեալին՝ որուն շատ քիչ բան և բազմաթիւ մանր զաւակներ ձգեց, վերջապէս մտորը գրաւ այս խնձորը ծախելու որպէս զի թէ ինքն և թէ ընտանիքը քիչ մը ստակի երես տեսնեն :»

Մինչդեռ մունետիկն Ահմէտին կը յայտնէր արհեստական խնձորին յատկութիւնները, շատ մարդիկ կանկ առին և անոնց չորս զին պաշարեցին . շատերը մունետիկն ըսածները հաստատեցին, և երբ անոնցմէ մին ըսաւ թէ յուսահատ վիճակի մէջ գանուող բարեկամ մ'ունի, և թէ յարմար առիթ մ'էր Ահմէտ իշխանին փորձն ընել, իշխանն ասոր վրայ մունետիկն ըսաւ թէ քառսուն քսակ կտայ եթէ այն հիւանդն իր աչքին առջև բժշկէ :

Մունետիկն որ այն դնով ծախելու հրաման ունէր, «Տէր իմ, ըսաւ Ահմէտ իշխանին, երթանք փորձն ընելու, խնձորը քեզի պիտի գայ . և այս բանս այնպիսի վստահութեամբ կ'ըսեմ որ անուբանալի է թէ իր ազդեցութիւնը պիտի ցույնէ, քանի որ մահտան վտանդի մէջ գանուող շատ հիւանդներ բուժելու կարող եղած է :»

Այս փորձը յաջողեցաւ . և իշխանն մունետիկն համրեց քառսուն քսակն, արհեստական խնձորն առաւ, և Հողկաստան դառնալու համար առաջին կարաւանին սպասեց : 'Նոյն միջոցին՝ Յըմրղանտ, շրջակայ տեղուանքն և ինչ որ ուշադրութեան արժանի էր տեսնելով անցուց, մանաւանդ Սոխի հովիտն, որ այսպէս կը կոչուի զայն ջրող դետին անունէն, և Արասները կը նկատեն զայն իբր տիեզերաց չորս դրախտներն մին, թէ դաշտերուն և թէ սրբաբնիկներուն գեղեցիկութեան, սրբաբնութեան և թէ դարնան ընծայած բերկրութեանց համար :

Վերջապէս Ահմէտ իշխանը փութաց միանալու Հողկաստան երթալու համար ճամբայ կ'սող առաջին կարաւանին : Թէև երկար ճամբորդութեան գծուարութիւնները քաշեց, անփնս հասաւ Հիւսէյնի և Ալիի սպասած օթեանը :

Ալի իշխանն Ահմէտ իշխանէն քիչ մ'առաջ գալով կանխաւ եկող Հիւսէյնի իշխանին հարցուցիւր էր թէ որչափ ժամանակէ վեր հասեր

էր : Երբ իմացաւ անորմէ թէ գրեթէ երեք ամիս կայ , «Ուրեմն , ըստ անոր , հեռու տեղեր գացած պիտի չըլլաս : — Առ այժմ՝ բան մը չպիտի բռնմ , պատասխանեց անոր Հիւսէյին իշխանն , իմ գացած տեղիս վրայ , բայց կրնամ հաւատարմութեամբ երեք ամիսուան մէջ հասայ : — Եթէ ըսածդ ճիշտ է , յարեց Ալի իշխանն , ըսել է թէ շատ քիչ նստար այն գացած քաղաքդ : — Եղբայր իմ , ըստ անոր Հիւսէյին , կը սխալիս . ես չորս հինգ ամիս բնակեցայ այն տեղ , և ամից տեղի ալ կրնայի նստիլ : — Միայն թէ թուելով եկած չըլլաս , վրայ բերաւ Ալի իշխանը , խելքս չհասնիր թէ ինչպէս երեք ամսէ վեր գարձած կ'ըլլաս , ինչպէս որ ինձ հատուցեցի քո զեռն : — Ես քեզի ճշմարտութիւնը յայտնեցի , յարեց Հիւսէյին իշխանն . և ասի հանելուկով՝ որուն բացատրութիւնը մեր եղբայր Ահմէտին գալէն ետե պիտի տամ , ըսելով միանգամայն թէ իմ ճամբորդութենէս հետս բերած անգլիտ բանս ինչ է : Իսկ դու չգիտեմ ինչ բերիր , կ'երևի թէ մեծ բան մը չէ , քանի որ տեսածէս կրնամ դատել որ բնագ մեծ չէ : — Իսկ դու իշխան , վրայ բերաւ Ալի , բայց ՚ի անշան գորդէ մը դոր բազմեցից վրայ նստեր ես և ըստ երևոյթիւն նոր ծախու առեր ես , քու կատակը կատակով կրնամ պատասխանել : Բայց որովհետեւ ինչպէս որ կ'երևակայեմ , ըրած գիտող գաղտնի պահելու մտածեր ես , կը ներքս ուրեմն ինձ ալ որ ես ալ գաղտնի պահեմ՝ հետս բերած դիտաս :»

Իշխանը պատասխան տուաւ . «Իմ բերած դիտաս ամէն բանէ այնքան մեծ է իմ աչքիս , որ չեմ գժարիր զայն քեզի ցոյց տալու և քու հաւանութիւնը ստանալու , յայտնելով թէ ինչ կողմէ այնչափ յարգ ունի իմ տալէս , առանց վախնալու որ քու բերածդ ինչպէս որ կը կարծեմ , անորմէ նախադաս բան մը ըլլայ : Բայց հարկ է որ մեր Ահմէտ եղբոր սպասենք . այն ատեն տեղի պատշաճ կերպով կրնանք իրարու յայտնել թէ որուն բաղբն աւելի յաջողեր է :»

Ալի իշխանն իր Հիւսէյին եղբոր հետ աւելի ևս միջնորդանիլ չուզեց բերած դիտանի նախադասութեան վրայ . բաւական սեպեց մտածելու որ՝ եթէ իր քովն ունեցած խողովակը նախադաս չէր , դեթ կարելի չէր որ անորմէ վար մնար , և յարմար գտանց զայն ցոյց տալու համար Ահմէտ եղբոր գործին տարանել :

Երբ Ահմէտ իշխանն իր երկու եղբայրց եկաւ միացաւ , գորովային դիրքը համբուրելէն և մի և նոյն տեղը նորէն գտնուելու բարեբաղդութեան վրայ ինդակից գտնուելէն ետե՝ Հիւսէյին իշխանն իր անգրանիկը սկսաւ խօսիլ այսպէս .

«Եղբարք իմ , մեր ուղևորութեան մանր պարագաներուն վրայ խօսելու ատեն պիտի ունենանք . առ այժմ՝ մեզի համար ամենէն կարևոր ինդրոյն վրայ խօսինք . և որովհետեւ հաւատարմ եմ որ դուք ալ ինձի պէս կը յիշէք թէ մեր ուղևորութեան նպատակն ինչնու համար էր , իրարմէ չպահենք մեր բերածն , և իրարու ցոյց տալով ինչ հաղուպիտ բան որ գտանք , կանխաւ գատաստան կարենք և տեսնենք թէ մեր հայրը սուլթանն որը նախադաս պիտի համարի :

Աստի օրինակն անձամբ տալու համար , շարունակեց Հիւսէյին իշխանը , պիտի բռնմնախ որ Ալիսակարի տէրութեան մէջ ըրած ուղևորութենէս հետս բերած անգլիտ առարկաս այս գորդն է որուն վրայ նստեր եմ . հասարակ և աննշան բան մը կ'երևի , ինչպէս կը տեսնէք , բայց եթէ անոր յատկութիւնը ձեզի յայտնեմ , այնչափ մեծ պիտի ըլլայ ձեր զարմանքն որչափ որ ասոր նման բան մը լսած չէք բնաւ , և դուք ինքնին պիտի միայէք . վասն զի՝ սա միջնակին մէջ՝ եթէ գորդիս վրայ նստինք , ինչպէս որ նստած եսք , ու որ և է հեռաւոր տեղ մը մոխարով ուղևոր , նոյն ժամայն մեր փափարած տեղը կը գտնուինք : Քառսուն քսակը չլճարած այս փորձն ըրի , և յօժարակամ այս գոմարը տալով գորդն առի . իսկ երբ Ալիսակարի թողաւ որութեան մէջ ամէն հետսքը բարեբան բաները տեսնելէս ետե՝ ուղեցի ճամբայ ելնել , մինակ այս հրաշալի գորդս կատրի պէս գործածեցի որպէս զի սպասաւորին հետ այս տեղ գտնուամ : Երկու քուղ ալ պիտի ցուցնեմ ըսածին փորձն երբ յարմար գտնիր : Ասպասեմ որ դուք ալ ձեր բերած բաներն ինձի յայտնէք որպէս զի նայինք թէ իմինիս հետ կրնանք բաղդատուիլ :»

Հիւսէյին իշխանն այս տեղ իր գորդին գերադանցութիւնը դուրսէն գաղբեցաւ , և Ալի իշխանը բերանը բանալով խօսքն անոր ուղեց տալէս .

«Եղբայր իմ , պէտք է խոտովանիլ որ գորդդ աշխարհէս հրաշալի

Քաններէն մին է, եթէ, ինչպէս որ կը պնդես, ըսած յատկութիւնդ ունի: Բայց կը խոստովանիմ նաև որ կրնան դանտիլ, չեմ ըսեր աւելի, այլ նոյնչափ հրաշալի բաներ իրենց տեսակին մէջ, և որպէս զի հաւտաս, շարունակեց նա, սա փղովիք խողովակը զոր կը տեսնես, ինչպէս նաև դորդը՝ զբա՛ն որ տեսնես ուշագրովեան արժանի բաներ չին երևիր: Ասկայն ևս ալ քեզի պէս այս խողովակին համար մեծկակ դուանը մը վճարեցի, և քեզի չափ դո՛հ եմ ըրած սակարկութեանս վրայ: Քանի որ իրաւախօս ես, պէտք է վիպես որ չեմ սխալած, երբ ՚ի փորձ տեսնես որ խողովակիս մեծ ծայրէն զխտելով՝ ուզած առարկադ կարող ես նշմարել: Չեմ ուզեր որ լոկ խօսքիս վրայ ինձ հաւտաս, յարեց Ալի իշխանը՝ խողովակը տալով, ահաւասիկ խողովակը, նայէ աչքովդ թէ ըսածս ճշմարիտ չէ:»

Հիւսէյին իշխանն Ալի իշխանին ձեռքէն խողովակն առաւ, և երբ աչքը մօտեցոյց այն ծայրէն զոր տարու աստն Ալի իշխանը ցոյց տուեր էր, «Նուրուննիհար իշխանուհին զխտելու՝ և անոր որպիսո թիւնն իմանալու մտօք՝ Ալի և Ահմէտ՝ որ անոր կը նայէին ակնասիլչ, չափազանց զարմացան երբ զխտեցին որ երեսին զոյնը փոխեց՝ այնպէս որ տարօրինակ զարմանք կը յայտնէր նոյնպէս և վիշտ: Հիւսէյին իշխանը ժամանակ չտալով անոնց որ իր այլայլութեան պատճառը հարցնեն,

«Իշխաններ, դո՛չեց նա, սրարսպ տեղ դուք և ես այսպիսի տաժանեղի ուղեորութիւն մ՝ ըրինք, այն յուսով որ իբր վարձք Նուրուննիհար չքնաղ իշխանուհին սլտի ստանանք. քիչ ատենէն այս սիրտաւն իշխանուհին հոգին պխտի փչէ. դինքն անկողնոյ մէջ տեսայ՝ իր աղախիններով և ներքինիներով շրջապատեալ, որոնք առատ արատք կը թափեն և ժպիւժ ժամկտարասն որ հոգին տայ: Ահաւասիկ դուք ինքնին զխտեցէք թէ ինչ ողբալի վիճակը մէջ կը դանտի իշխանուհին և ինձի հետ վշտակից եղիք:»

Ալի իշխանը խողովակն առաւ Հիւսէյին իշխանին ձեռքէն; նայեալցաւ, և մի և նոյն վշտով իշխանուհին տեսնելէն ետև՝ Ահմէտ իշխանին ներկայացոյց զխտակն, որպէս զի նա ևս նշմարէ այս ախուր և ցաւալի տեսարանս:

Երբ Ահմէտ իշխանն ալ առաւ փղովիք խողովակն և զխտեց որ

Նուրուննիհար իշխանուհին գրեթէ մահտան դուռն էր, ըսաւ՝ խօսքն իր երկու եղբարց ուղղելով.

«Իշխաններ, Նուրուննիհար՝ որ մեր երեքին փափաքանաց նպատակն է, իրօք այնպիսի վիճակի մը մէջ կը դանտի՝ որմէ մահը հեռու չէ, բայց տեսածիս վրայ ցտեղով՝ կրնամ ըսել որ զանի թերևս աղաւելու յոյս կայ եթէ շտապինք անոր քաջն երթալու:»

Այն ատեն Ահմէտ իշխանը ծոցէն հանեց իր դնած ուրհեստական խնձորն, և իր եղբարցը ցոյց տալով ըսաւ.

«Այս խնձորն ալ ձեր երկուքին ստացած գորգին և փղովիք խողովակին չափ թանկագին է ինձի համար: Խնձորին հրաշալի ազդեցութիւնը ձեզի ցոյց տալու առիթը տեսնելով չեմ զզջար բնաւ անոր քառսուն քսակ վճարելուս: Ձեր հետաքրքրութիւնը դո՛հ ընելու համար ահա կըսեմ որ եթէ հողեվար հիւանդ մ՝անգամ դայն հոտուէ խեղոյն առողջութիւնը կը դանէ. արդէն անոր փորձն ըրած և այս յատկութեանը վրայ անխակած եմ՝ ուստի կարող եմ՝ ձեր առջևն ալ փորձն ընել Նուրուննիհար իշխանուհւոյն վրայ; եթէ շտապինք անոր օդնութեան հասնելու:

— Եթէ ըսածդ ստոյգ է, վրայ բերաւ Հիւսէյին, արադութեամբ հասնելու ուրիշ միջոց մը չկայ բայց եթէ դորդս, որով իշխանուհւոյն տեսնակն անմիջապէս կրնանք դադարիլ: Ժամանակ չկորուսենք, մօտեցէք և ինձի պէս անոր վրայ նստէք. բաւական մեծ է և երեքնիս ալ կրնայ ընդունիլ, բայց ամէն բանէ առաջ մեր սպասաւորներուն ըսենք որ միասին ճամբայ ելնեն անմիջապէս և մեզ զան պալատը դանեն:»

Երբ այս հրամանը տրուեցաւ; Ալի և Ահմէտ իշխանները դորգին վրայ նստան Հիւսէյին իշխանին հետ, և որովհետև երեքնին ալ նոյն նպատակն ունէին, երեքնին ալ միասիրտ նոյն փափաքն ունեցան Նուրուննիհար իշխանուհւոյն տեսնակը փոխադրուելու: Իրենց փափաքը կատարուեցաւ, և այնչափ շուտով փոխադրուեցան, որ չզգացին անգամ թէ ինչ կերպով իրենց օթևանէն յանկարծ Նուրուննիհար իշխանուհւոյն տեսնակը գտան իւրգինքնին:

Երեք իշխաններուն անակնկալ ներկայութիւնն իշխանուհւոյն կիներն

ու ներքինները վախցուց , որ չէին կարող բմբուհել թէ ինչ հմայու-
թեամբ երեք մարդիկ յանկարծ իրենց մէջ գանուեցան : Մինչև անդամ
զանոք ջճանչ ցան առաջ՝ և ներքիններն անոնց վրայ սխաի յարձակե-
ին , քանի որ ներքի չէր թող ներս մանկը , նոյն իսկ մտնեալ այն
սենեկին , այլ շուտ մ'իրենց սխալմունքը տեսան և հասկցան որ իշ-
խաններն են :

Այն ինչ Ահմէտ իշխանը Նուբուհնիհարի սենեակը դատա ինքզինքն
և անոր հոգեվար վիճակը տեսաւ , իսկոյն դորդին վրայէն ելաւ , միւս-
ներուն հետ՝ անկողնին մօտեցաւ և հրաշալի խնձորն անոր քթին մօ-
տեցուց : Քանի մը վայրկեան ետքն՝ իշխանուհին աչքը բացաւ ,
զլուին ասդին անդին դարձուց , զինքը պաշարող մարդիկը գիտելով ,
և անկողնին մէջ ելաւ նստաւ . յետոյ ինդրեց որ զինքը հաղուեցնեն
այնպէս որ կարծես թէ երկար քունէ մը կ'արթնար և բնաւ հիւան-
դութիւն քաշած չէր :

Շատ չանցաւ աղախիններն ըսին անոր խնդակցութեամբ որ իր հօր-
եղբորորդիներուն՝ և մամուտրապէս՝ Ահմէտ իշխանին պարսաւոր է
իր յանկարծական առողջութիւնն : Իշխանուհին՝ իր ուրախութիւնը
յայտնելով՝ անոնց շնորհակալ եղաւ և յատկապէս Ահմէտ իշխանին :
Որովհետև իշխանուհին հաղուիլ ուզեր էր , իշխանները բաւական հա-
մարեցին յայտնելու թէ շատ ուրախ են որ աջակից գանուելով՝ զանի
վտանգէ ազատ պահեցին , և անոր կենաց երկարութեան համար իրենց
փափաքը յայտնելէն ետև՝ ձգեցին զայլն :

Մինչդեռ իշխանուհին կը հաղուէր՝ իշխաններն անոր սենեկէն ելան
և զայլն իրենց հօր սուլթանին ոտքն ընկան և իրենց յարգանքը մա-
մատուցին . տեսան որ արդէն ներքինասրահան իրենց դայուսան խնայու-
ցեր էր սուլթանին և իրենց ձեռք իշխանուհոյն անակնկալ բժշկու-
թիւնը : Սուլթանը մեծ ուրախութեամբ համբուրեց զանոք , որովհե-
տեաւ անոնց վերադարձին հետ կ'իմանար նաև իր եղբոր աղջկան
բժշկութիւնը , զոր իր աղջկան պէս կը սիրէր և որ հրաշալի կերպով
իր առողջութիւնը դատեր էր : Այսպիսի պարագայի մէջ սովորական ե-
ղած մարդավարական խօսքերն աւարտելէն ետև՝ իշխաններն իրենց
բերած բաները Սուլթանին ներկայացուցին , այսինքն՝ Հիւսէյին իշխա-

նը ներկայացուց զորզը՝ զոր իշխանուհոյն սենեկէն դուրս ելնելու ա-
տեն հետն աւեր էր , Ալի իշխանը՝ փղոսկրէ խողովակն և Ահմէտ իշ-
խանն ալ արհեստական խնձորն : Ամէն մէկն իր բերած անդիւտ բանին
զովեսան ընեղէն ետև՝ սուլթանին յանձնեց , և յետոյ ամէնքն աղաչե-
ցին որ վճիռ տայ և յոյսնէ թէ նրը նախադատ կը համարի , և հե-
տևապէս նոյն իր խոստման համաձայն՝ Նուբուհնիհար իշխանուհոյն
արժանի պիտի հանդիսանայ :

Հնդկաստանի սուլթանը բարեսիրտարար մտիկ ըրաւ ամէն մէկուն 'ի
նպատակը զիւրաքան ըսած խօսքերը , անդեկացաւ թէ ինչ կերպով՝ Նու-
բուհնիհար իր առողջութիւնը գտեր է , և պահ մը լուռ կենալէն ե-
տև՝ որպէս թէ տալիք պատասխանը կը պատրաստէր և վերջն անոր
խօսքը կտրելով՝ այս իմաստալից խօսքերն ըսաւ .

«Որդեակք իմ՝ ձեզնէ մէկը յօժարակամ յազթական կը հոսակէի ,
եթէ կարող ըլլայի ընել այս բանս իբրևամբ , բայց դուք ինքնին դա-
տեցէք թէ այսպիսի բան մը կարող եմ ընել : Գնա , Ահմէտ իշխան , ի-
բաւ է որ եղբօրս դուստրն արհեստական խնձորից պարտաւոր է իր
բոյժը , սակայն կը հարկնեմ քեզ թէ արդեօք այս բոյժն ընելու պիտի
կարողանայիր , եթէ կանկաւ Ալի իշխանին փղոսկրէ խողովակը չյայտ-
նէր քեզ թէ նա ինչ ծանր վտանգի մէջ է , և Հիւսէյին իշխանին
զորզն ալ իսկոյն անոր օղնութեան հասնելու միջոց մը չըլլար քեզի :
Իսկ դու , Ալի իշխան , քու փղոսկրէ խողովակի քեզ յայտնելու օղ-
նեց թէ հօրեղբորդ աղջիկը կորսուելու վիճակի մէջ կը գտնուի , և
այս մասին՝ պէտք է խստովանիլ որ մեծապէս շնորհապարտ է քեզ :
Սակայն պէտք է որ դու ալ խոտոտվանիս որ այս տեղեկութիւնը ապ-
արդիւն պիտի մնար և իշխանուհին անիկ օղուտ մը չպիտի քաղեր՝ ա-
ռանց արհեստական խնձորին և դորդին : Իսկ դու ալ , Հիւսէյին իշ-
խան , իշխանուհին ասկերախտութիւն մ'ըրած կ'ըլլար եթէ քու գոր-
դիք համար շնորհակալութիւնը չյայտնէր , որ այնչտի դործ տեսաւ
անոր բժշկութիւնը փութայնելու համար : Բայց նկատե՛ անգամ մ'որ
զորզ օղուտ մը չպիտի ընէր եթէ Ալի իշխանին փղոսկրէ խողովակին
միջոցաւ անոր հիւանդութեան չտեղեկանայիր , և Ահմէտ իշխանն ալ
իր արհեստական խնձորով զանի չբուժէր : Այսպէս՝ քանի որ ոչ

դորդն , ոչ փղտկրէ խողովակն , ոչ արհեստական խնձորն ոչ միոյն և ոչ միւսին նախադասութիւն չեն ընծայեր , այլ ամէնքնիդ ալ հաստարապէս իրաւունք ունիք նոյն բանին , մինչդեռ Նորունիհար իշխանուհին լոկ մէկու մը կրնամ տալ , կը տեսնէք որ ձեր ճամբորդութենէ մինակ սա պտուղը քաղեցիք որ անոր առողջութիւն տալու փառքը միապէս ստացաք :

« Եթէ այս ըսածներս ճշմարտ են , յարեց սուլթանը , կը տեսնէք ուրեմն որ պէտք է ուրիշ միջոց մը գտնեմ որպէս զի ձեզնէ մին ընտրեմ Նորունիհար իշխանուհւոյն համար : Արովհետեւ դեռ ժամանակ կայ մինչև զիշեր , այսօր պէտք եղածը պիտի կատարեմ : Աստի դայէք , մէյմէկ աղեղ ու նետ առէք և քաղթէն գուրս ելիք ձիերու միջարանն . ես ալ ձեր ետեէն դայու երթամ պատրաստուիմ պիտի , և ահա կը յայտնեմ թէ ով որ ամենէն հեռու իր նետն արձակէ , անոր պիտի տամ Նորունիհար իշխանուհին իբրև կին :

« Սակայն՝ պարտաւոր եմ ընդհանրապէս ձեզ ամենուն և ՚ի մասնաւորի իւրաքանչիւրին՝ շնորհակալութիւնս յայտնել ձեր բրած ընծային համար : Թանգարանիս մէջ շատ նորանշան բաներ ունիմ , սակայն չկայ բան մ'որ գորդին , փղտկրէ խողովակին և արհեստական խնձորին հետ բաղդատուի , որով իմ թանգարանս պիտի ճոխացնեմ : Այս երեք կտոր բաներն առաջին տեղը պիտի բռնեն և մեծ խնամքով պիտի պահեմ զանոնք՝ չէ թէ պարզ հետաքրքրութեամբ , այլ որպէս զի ՚ի հարկին անոնցմէ օգուտ քաղեմ : »

Երեք իշխանները չկրցան բան մը պատասխանել սուլթանին բրած ուրոշման դէմ : Երբ անոր քովէն հեռացան , ամէն մէկուն աղեղ և նետ մը տուին , սպայի մը յանձնելով , որոնք եկեր գումարուեր էին անոնց գալուստն իմանալով , և ապա իշխանները ձիերու յատուկ միջարանը դացին՝ անհամար բազմութեամբ :

Սուլթանն որոշեալ տեղը հասաւ , և Հիւսէյինի իբր անդրանիկին , իր աղեղն ու նետն առաւ և ամենէն առաջ քաշեց . յետոյ Ալի իշխանը քաշեց , որուն նետը Հիւսէյինի նետէն աւելի հեռու գնաց . Ահմէտ իշխանն ամենէն վերջը նետեց նետը . սակայն անոր նետը աչքէ կորուսին և ոչ ոք անոր վար ինչպէք տեսաւ : Ատեցինի որ փնտռեն , բայց

ինչ փոյթ որ ցոյց տուին՝ նոյնպէս Ահմէտ իշխանն , անկարելի եղաւ զանել նետն ոչ մտա և ոչ հեռու : Թէև հաւանական է որ Ահմէտ իշխանին նետն ամենէն հեռու գնաց և հետևապէս արժանի էր Նորունիհար իշխանուհւոյն , սակայն գործը ստուգելու համար նետը դանել կարևոր ըլլալուն՝ որչափ որ Ահմէտ իր իրաւունքին վրայ սնդեց՝ սուլթանն Ալիին ՚ի նպատակով առաւ : Նոյնպէս հարսանեաց հանդիսին համար պէտք եղած պատրաստութիւնները հրամայեց , և քանի մ'օրէն ետքը՝ մեծ շքեղութեամբ հանգէսը կատարուեցաւ :

Հիւսէյին իշխանն իր ներկայութեամբը չզատուեց հանդէսը : Արովհետեւ Նորունիհար իշխանուհւոյն համար զոչոչած սէրն խիստ անկեղծ և եռանդաղին էր , բաւական ոյժ չունեցաւ համբերութեամբ տեսնելու իշխանուհւոյն ամուսնութիւնն Ալիին հետ , որուն համար կ'ըսէր թէ իրմէ աւելի զանի չէր սիրեր և արժանի չէր : Աստի այնքան մեծ վիշտ մ'զոյց որ Հիւսէյին արքունիքը թողուց և իր հօրենական դահն ելնելու իրաւունքէն հրաժարելով՝ գնաց տեղիշ հղաւ և անուանի շէյխի մը միացաւ , որ մեծ համբաւ ունէր իր վարած անարատ բարուց համար , և իր աշակերտաց հետ , որ բազմաթիւ էին , ախորժեկի վայր մը կը բնակէր :

Ահմէտ իշխանն ալ Հիւսէյինի պէս՝ Ալիի և Նորունիհարի հարսանեաց ներկայ չդնուեցաւ . բայց անոր պէս աշխարհէս քաշուիլ չուզեց : Արովհետեւ չէր կրնար հասկնալ թէ ինչպէս իր նետած նետը կերպով մ'անասանելի զարձեր էր իր մարդիկներէն հեռացաւ , և միաքը դրաւ զանի ամէն կողմը փնտռել . ուստի Հիւսէյինի և Ալիի նետերն ընկած և դոնտած վայրերը փնտռելու ելաւ : Անկից շիտակ քաղեց ալ ու ահեակ նայելով և այնչափ հեռու գնաց՝ առանց որոնածը գտնելու , որ վերջապէս հասկցաւ թէ պարսպ տեղը կ'աշխատի : Սակայն ակամայ յառաջ մղուելով՝ իր ճամբան շարունակեց և հասաւ բարձր ժայռերու , ուսկից կարելի չէր անցնիլ առանց սրոյտ ընելու , իսկ այս ժայռերն՝ որ խիստ սեղաձև էին՝ անբերբի վայր մը իր մեկնած տեղէն չօրս մղոն հետի՝ կը գտնուէին :

Այս ժայռերուն մտնոյալով՝ Ահմէտ իշխանը նետ մը կը տեսնէ ,

զայն կ'աւանտ պետէն, կը քննէ և յետին աստիճան կը զարմանայ որ իր նետած նետն է այն :

«Ճիշտ նոյն նետն է, կը քննէր ինքն իրեն, բայց ոչ ևս և ոչ աշխարհիս մէջ ուրիշ մասկանացու մը կարող է նետ մ'այսքան հեռու նետնել :» Ռոտվիեան անոր զեռնին ընկած դատա և չէ թէ քարին միտում, մտածեց որ ժայռին զարկեր և ետ ընկրկեր է : «Գարձեալ զաղանիք մը կայ, ըստ նա, այս արտաբոյ կարգի դէպքին մէջ, և այս զաղանիքը շատ նորատառ որ կընայ ըլլալ ինձի համար : Քաղոն իս վշտացուց զրկելով այնպիսի էակէ մ'որ, ինչպէս կը յուսայի, իմ կեանցս երջանկութիւնը պիտի դործէր. թերևս իս միթմարելու համար ուրիշ բարիք մը վերատայհամ է ինձի :»

Այս մտածմունքով որովհետև այն ժայռերուն առջևի կողմերը սրածայր էին և ներսի կողմն շատ փաղարներ ունէին, և որովհետև իր աչքովն ամէն խոռոչ կը քննէր, երկաթէ դուռ մը տեսաւ, որ փականք չուներ : Ատպառ որ զոյ չըլլայ, բայց զայն հրեւով բացուեցաւ ներսի կողմն, և առանց աստիճանի՝ սահուն զուռ ի վայր մը տեսաւ և անկից վար իջաւ նետ ՚ի ձեռին : Ահմտ իշխանը կարծեց թէ խաւարին տեղ մը պիտի իջնէ, բայց քիչ ատենէն՝ բոլորովին առջինէն տարբեր լոյս մ'իր աչքին զարկաւ. յետոյ՝ յիտուն վաթսուն ռոք ընդարձակ սրահ մը մտնելով՝ փառաոր պալատ մը տեսաւ, որուն հիանալի շէնքը քննելու ժամանակ չունեցաւ : Ասան զի, նոյն պահուն՝ տիկին մ'որ վնահափառ կերպարան և հասակ ունէր և այնպիսի գեղեցկութիւն մ'որուն փայլ մը չէին տեսցնէր իր հազած պերճ հագուստներն ու դոհարները, մինչև ներքնագալիթը յառաջ ա՛յցաւ՝ շատ մ'աղախիններով՝ որոց մէջ տիրուհին շուտով զանազանեց :

Այն ինչ Ահմտ իշխանը տիկինը տեսաւ, փութաց անոր յարգանքը մատուցանել, և տիկինն ալ իր կողմն անոր մօտենալը անտնելով՝ ձայնը բարձրացուց և ըսաւ. «Ահմտ իշխան, մօտեցիր, բարկ եկար :»

Ահմտ իշխանը չափազանց զարմացաւ երբ իր անունը լսեց այնպիսի երկիր մ'որ իրեն անձանօթ էր, թէև այս երկիրն իր հօրը

մտքաքաղքէն հեռու չէր դանուեր. նոյնպէս չէր կրնար ըմբռնել թէ ինչպէս ծանօթ է տիկնոջ մը զոր չէր ճանչեր : Աերջապէս տիկնոջ կը մօտենայ անոր ոտքն ընկնելով, և ապա կը կանդնի ու կըրտէ :

«Տիկին, այսպիսի տեղ մը հասնելու՝ ուր կը վախնայի հետաքրքրութեամբ անխոհեմ դործ մը չընելու, հազար անգամ շնորհակալ կըլլամ քեզ այդ սիրալիր ընդունելութեանդ համար : Սակայն, տիկին, եթէ անբաղաքաւարութիւն չես համարիր, արդեօք ներելի է ինձ հարցնել թէ ինչպէս կըլլայ որ քեզ անձանօթ չեմ, քեզ՝ որ թէև մեզի դրացի ես, բայց մինչև այսօրս չգիտէի որ այս կողմերս կը բնակիս : — Իշխան, ըստ անոր տիկինը, սրահը մտնենք, այն ատեն իմ և քու փափաքիդ համեմատ կընամ դո՛հ ընել հետաքրքրութիւնդ :»

Այս խօսքերն աւարտելով տիկինն՝ Ահմտին ճամբանցոյց տարուհամար, սրահ մը տարաւ, որուն հրաշալի ձևը, դմբեթաձև կամարը զարդարող սակին և կապոյտը, կահերուն անգին պերճութիւնն, այնպիսի հրաշագան բաներ երեցան իրեն, որ իր հիացումը յայտնեց զոչելով որ ասոնց նման բաներ տեսած չէ բնաւ : «Սակայն կը հաւատամ, վրայ բերաւ տիկինն, որ այս սրահն ամենէն աննշանն է պալատիս մէջ, և զու ալ ըսածիս պիտի վիայես երբ բոլոր սենեակները քեզ պտրոցընեմ :»

Յետոյ տիկինը վեր ելաւ և բաղնիցի մը վրայ նստաւ, և երբ իշխանն անոր մօտ բաղնիցաւ տիկնոջ խնդրոյն համեմատ, «Իշխան, ըսաւ անոր, կըսես թէ կ'աղչիս կը մնաս, որ քեզ կը ճանչեմ, թէև դու իս չես ճանչնար. քու զարմանքդ պիտի դադարի երբ իմ ում ըլլալս իմանաս : Անտարարոյս քաջ գիտես բան մը զոր կրօնդ քեզ կը ստրկեցնէ, այս է թէ աշխարհիս մէջ ճիւղեր կան, նոյնպէս մարդիկներ : Ես այս ճիւղերէն մեկուն աղջիկն եմ, և իմ հայրս ամենէն հզօրն ու երեւելին է : Աստի պէտք չէ զարմանաս եթէ քեզ, սուրբ թանն, եղբայրներդ և նուրաննիհարը կը ճանչեմ : Քու սիրոյդ և ուղեւորութեանդ պատմութեան տեղեակ եմ, կընամ անոնց բոլոր պարագաները պատմել քեզ, բանի որ ես ծախու հանելուուի ՚ի Սըմըր-

զանտ զհաճ արհեստական խնձորդ . 'ի Պիսնակար՝ այն գորզը զոր
 Հիւսէյին եղբայրդ դատու , և 'ի Շիրազ՝ այն փղակրէ խողովակը զոր
 Ալի իշխանն իր հետը բերաւ : Ասոնք բաւական են քեզ հասկցնելու
 համար որ քեզի վերաբերող բաները քաջ գիտեմ : Այս միայն կ'աւել-
 ցընեմ որ զու՛րուսնիհար ատանալու բաղդէն՝ աւելի երջանիկ
 բաղդի մ'արժանի երեցար ինձ , և քեզ այս բաղդին հասցնելու հա-
 մար , որովհետեւ նետ արձակելու ատենդ ներկայ էի , և նոյն նետը
 ձեռքդ բռներ ես ահա , և երբ գուշակեցի որ քուկդ Հիւսէյինի նե-
 տէն անգամ անդին չպիտի անցնի , օղին մէջ բռնեցի և պէտք եղած
 շարժումը տուի անոր որպէս զի զայ զարնէ այն ժայռերուն ուր եկար
 զայն դանկելու : Աստի քու կամքէդ կախում ունի այս նպատաւոր
 պարագայէն օդուտ քաղելով աւելի երջանիկ ըլլալ :»

Բարի-Պանու փէրին այն խօսքերը տարբեր ձայնով մ'արտասա-
 նեց , գորովալիբ դէմքով Ահմէտ իշխանին երեսը նայեցաւ , և ապա
 համեստութեամբ և կարմրելով աչերը վար առաւ . ուստի իշխանն իս-
 կայն հասկցաւ թէ փէրին ինչ երջանկութիւն ըսել կ'ուզէր . հետեւա-
 պէս նկատեց որ հուրուսնիհար իշխանուհին չէր կրնար իր կինն ըլ-
 լալ , որ Բարի-Պանու փէրին թէ դեղութեան , թէ շնորհքի , թէ
 գերիվեր խելքի և անբաւ հարստութեանց կողմէն անորմէ դերազանց
 էր , և այս ճոխութեան վրայ կրնար դազախար մ'ունենալ , պալատին
 շքեղութեան . և իշխանն օրհնեց այն ժամն ուր ելեր էր իր նեան
 որոնելու , և այս նոր էակին համար զղայցած նոր խանդով վառ՝ ա-
 նոր ըսաւ .

«Տիկին , եթէ բոլոր կենացս մէջ քու գերիդ , և իս յափշտակող
 գեղեցկութեանդ զարմացողն ըլլալու բաղդն ունենամ անգամ , դար-
 ձեալ ինքզինքս ամէն մարդիկներէ աւելի երջանիկ պիտի համարիմ :
 'Երբէ ինձ այս համարձակութեանս որով սոյն շնորհքը կը խնդրեմ , և
 անդունելով մի մեքժեր ընդունելու պալատիդ մէջ իշխան մ'որ լիու-
 վին ինքզինքք քեզի կը նուիրէ :

— Եշխան , պատասխանեց փէրին , որովհետեւ շատ ատենէ վեր
 ուրիշէ մը կախում չունիմ բնական , իմ ծնողացս հաւանութեամբ , չեմ
 տուր իրբ գերի իմ պալատիս մէջ ընդունիլ քեզ , այլ իրբ տէր իմ

անձիս և բոլոր ունեցած բաներուս , եթէ ինձ խօսք տաս և իրբ կին
 իս ընդունիս : Յուսամ որ ծուռ չես մեկներ իմ առաջարկութիւնս զոր
 քեզնէ առաջ կ'ընեմ : Արդէն ըսի քեզ որ իմ կամքիս ինքնիշխան
 տիրուհին եմ . այս իրաւ է որ ինձի պէս չեն վարուիր միւս փէրինե-
 րը մարդկան հետ , վասն զի այսպիսի առաջարկութիւններ ընելու սո-
 վորութիւն չունին և մեծ ամծթ կը սեպեն այս վարմունքն : Իսկ
 մենք այսպէս կը վարուինք և կ'ուզենք որ այս մասին մեզ շնորհա-
 պարտ մնան մարդիկ :»

Ահմէտ իշխանը փէրին այս խօսքին պատասխան չտուաւ , այլ ե-
 րախտապիտու թեմնէ շարժեալ՝ նոյնը յայտնելու ուրիշ միջոց չգտաւ
 բայց միայն մօտենալ և փէրին քղանցքը պագնել : Փէրին չսպասեց
 որ քղանցքը պագնէ , ձեռքն երկնցոց անոր , և Ահմէտ իշխանը
 զայն պագաւ : Այն ատեն փէրին անոր ըսաւ .

«Ահմէտ իշխան , միթէ սիրտդ պիտի տնայ ինձ , ինչպէս որ իմն կը
 տամ քեզի : — Է՛հ , տիկին , վրայ բերաւ իշխանն ուրախութեան՝ ն
 յափշտակուած , միթէ առկից աւելի մեծ երջանկութիւն մը կ'ընամ ու-
 նենալ : Այո , իմ սուլթանուհիս , իմ թաղուհիս , իմ սիրտս և խօսքս
 կտամ քեզ աներկիրդ : — Եթէ այդպէս է , պատասխանեց փէրին ,
 ես քու կինդ և դու իմ էրիկս ես : Մեր մէջ ասկէ ուրիշ ամուսնական
 արարողութիւններ չլան . մարդկան մէջ եղած ամուսնութիւններէն
 աւելի հատառտուն և անքակտելի են , թէև անոնք դանազան ձևեր
 կը գործածեն : 'Եսիս և առաջ՝ յարեց նա , այս երեկոցեան համար
 հարսանեաց խնջոյքը պատրաստելու ատեն՝ և քանի որ ըստ երևոյթիմ
 այսօր բան մը կ'երած չես , թեթեւ ճաշ մ'ընելու համար քեզի քիչ մը
 կերակուր պիտի բերեն . յետոյ պալատիս սենեակները քեզի պիտի ցոյց
 տամ , և այն ատեն պիտի դատես ինքնին թէ՛ ըսածիս պէս՝ այս
 սրահն ամենէն աննշանը չէ անոր մէջ :»

Փէրին քանի մ'աղախիններն՝ որ իրեն հետ նոյն սրահը մտեր է-
 ին , իր գիտաւորութիւնն ինչէ հասկցան , դուրս ելան , և քիչ ատե-
 նէն ետքը՝ քանի մը անտակ կերակուր և ըստիր զինի բերին :

Երբ Ահմէտ իշխանն ուզածին պէս կերաւ խոնց , Բարի-Պանու փէ-
 րին սենեկէ սենեակ տարաւ զանի , և անոնց մէջ տեսաւ անգամանդ ,

սուտակն , դմբուխտ եւ ամէն տեսակ ընտիր քարեր , զոր զործածեր էին ակառի , յասպլխի , պորփխրի եւ ամէն տեսակ թանկաղին մարմարիննի հետ , թնդ կահ կարասին որ անհասմամտ պերճութիւն ունէին . եւ ամէնն ալ այնքան առատ էր որ իշխանն ոչ միայն ասոնց նման բաներ տեսած չունէր այլև խոստովանեցաւ որ անանց պէս բաներ տեսնելիք չունի աշխարհիս մէջ :

« Իշխան , ըսաւ անոր փէրին , եթէ այսչափ կ'ըմոյլիս իմ պալատիս վրայ , որ իրօք չքնաղ բաներ ունի , ինչ պիտի ըսես արդեօք մեր ճիններու գլխաւորներուն պալատները տեսնելուդ , որ զերպանց շքեղութիւն , ընդարձակութիւն եւ զեղեցկութիւն մ'ունին : Արնամ նաև ցոյց տալ քեզ իմ պարտիղիս աղ որով թիւնը , բայց այս ալ ուրիշ անդամի կը թողում . զիշերը կը մտանայ եւ սեղան նստելու ատեն է : »

Փէրին ուրիշ սրահ մը մտցուց իշխանն . այս սրահին մէջ գրուած էր սեղանն եւ միւս սրահներէն վար չէր մնար : Ներս մտնելուն՝ Ահմէտ իշխանը հիացաւ սնբաւ մտնելու վրայ , որ յամպարով խնկեալ էին , եւ որոյ շատութիւնն ոչ միայն շփոթութիւն չէին պատճառեր՝ այլ վայելուչ զուգահեռութիւնով շարուած ակնապարար էին . նոյնպէս զմայլեցաւ մէկ մեծ մատանի մը վրայ որ ոսկի անթիւներով լի էր , եւ աւելի թանկաղին էին իրենց բանուածքին քան թէ բուն մետաղին կողմէն . շատ մը երգեցիկ կիներու խմբեր՝ որ ամէնքն ալ չքնաղ զեղութիւն եւ պերճ հազուամներ ունէին՝ համաձայն երգ մ'սկսան եւ սրանչելի ներդաշնակութեամբ նուազարաններ ածեցին : Յետոյ սեղան նստան , եւ որովհետեւ Բարի-Պանու մեծ խնամօք ընտիր կերակուրներէն Ահմէտ իշխանին կը մեծարէր՝ անանց անունը տալով , եւ որովհետեւ իշխանն երբէք այսպիսի անուներ ըսած չէր եւ կերակուրները իրատ համեղ կը գտներ , զանոնք կը գովէր , գոչելով որ այս համազամները մարդկանց կերած կերակուրներէն զերազանց են : Նոյնպէս գովեց զինիին աղարու թիւնն , որմէ խմեց փէրին հետ երբ մրդեղներ բերին , նոյնպէս կարեանդակներ :

Աւրջապէս մրդէն ետքը՝ Բարի-Պանու փէրին եւ Ահմէտ իշխանը սեղանէն ելան , զոր շուտ մը վերադին , եւ իրենք բազմոյցին վրայ նստան հանդիստ՝ կը թնելով մնասքսեղէն բարձեբու վրայ որոնք բազ-

մաղոյն ծաղիկներով բանուած էին փափկօրէն : Բակոյն շատ մը ճիներ եւ փէրիներ սրահը մտան եւ հիանալի պարահանդէս մ'սկսելով շարունակեցին , մինչև որ փէրին եւ Ահմէտ հեռացան դայցին : Այն ատեն նորէն փէրիններու ճիները պարելով դուրս ելան եւ հարսու փեսային սուջէն քաղցին մինչև առապաստի դուռն : Արբ այն տեղ հասան՝ կարդաւ կեցան որ անցնին . յետոյ քաշուեցան եւ թողուցին որ աղատօրէն պատկին :

Հարսանեաց հանդէսը հետեւեալ օրն ալ շարունակեցին , կամ լաւ եւ ըսեմ՝ տօնախմբութեան հետեւեալ օրերն անընդհատ խրախմանութիւններ եղան . այնպէս որ Բարի-Պանու փէրին շատ դիւրին էր նոր նոր համադամներով , խնջոյքներով , նուազածունքով զանազան տեսարաններ , զուարճութիւններ , պարեր ընել տալ , որոնք կարգէ դուրս բաներ կ'երևէին Ահմէտ իշխանին եւ անտարակոյս չպիտի կարենար երեւակայել այս տեսակ հանդէսներ եթէ հազար տարի ալ ապրէր :

Փէրին՝ ոչ միայն իր սիրոյն անկեղծութեան եւ սատիկ տափանայ նշաններն Ահմէտ իշխանին ցոյց տալու միտք ունէր , այլ նաև ասով ուղեց հասկցնել թէ՛ քանի որ իր հօրն արքունիքը յայս մը չունէր , եւ թէ աշխարհիս որ եւ է կողմը՝ թող իր զեղեցկութիւնն ու հրապոյրներն , այս վայելած երջանկութեան նման երջանկութիւն մը չպիտի վայելէր , պարտաւոր էր իրեն միանալ լիովին եւ բնաւ չբաժնուիլ : Բարի-Պանու իր խորհուրդը յաջողցուց . Ահմէտ իշխանին սէրը նպատակին հասնելով չարակեցաւ . այլ օր ըստ օրէ այնքան շատցաւ որ իր ձեռքը չէր այն սէրը դադրեցնել , եթէ իր սէրը դադրեցնելու անդամ փափաք ունենար :

Անց ամէն ետքն՝ Ահմէտ իշխանն որ միշտ սիրած եւ յարգած էր իր սուլթան հայրը , մեծ փափաք ունեցաւ անոր վրայ լուռ առնելու . եւ որովհետեւ չէր կարող իր այս փափաքը ընու դուրս ելնելով Բարի-Պանուի հետ խօսեցաւ այս մասին եւ խնդրեց որ հրաման տայ իրեն իր հօրն երթալու : Այս առաջաբերութիւնը վրդովեց փէրին եւ վախցաւ որ զինքն երեսի վրայ թողլու համար այսպիսի պատրուակ մը հնարած չըլլայ :

« Երգեօք զժոզն հս իննէ որ երթալու հրաման կը խնդրես , ըսաւ .

անոր : Կ'ն չպէս կարելի է քեզ մոռնալ ուխտդ , և չսիրել իս , ևս որ տրփաղին կը սիրեմ քեզ : Պէտք է համոզուած ըլլայիր ցարդ այս մասին ցոյց տուած նշաններէս :

— Թագուհիս , վրայ բերաւ ԱՏմէտ իշխանը , սիրոյդ վրայ կասկած չունիմ , և իրաւի անարժան մարդ մը կ'ըլլայի եթէ իմ երախտագիտութիւնս այս մասին չյայտնէի փոխադարձ սիրովս : Եթէ իմ խնդիրս քեզ վերադարձնէ կ'աղաչեմ ներողամիտ ըլլալ ինձ , պատրաստ եմ ամէն կերպով զոհ ընել քեզ : Ես քեզի անհաճոյ երևելու համար չուղեցի , այլ միայն իմ հօրս ունեցած յարդանքս դողեց իս յայն , քանի որ քաջ զիտեմ թէ մեծ մտատանջութեան մէջ ընկած պիտի ըլլայ իմ երկարատեւ բացակայութեանս պատճառաւ . իրեն վիշտն այնքան ծանր է անշուշտ՝ որչափ որ կարծէ թէ կենդանի չեմ : Բայց քանի որ չեմ հաճիր թողուլ իս անոր այս միտմարտութիւնը տալու , ևս ալ կամքդ կատարելու ընդդիմութիւն չունիմ , և քեզ հաճելի ըլլալու համար ամէն բան ընելու կարճ ու պատրաստ եմ :

ԱՏմէտ իշխանն որ անկեղծ օրէն կը սիրէր Բարի-Պանուն , ինչպէս որ սրտովին ըսած խօսքերէն յայտնի էր , նորէն կանչեց խնդրած հրամանին վրայ , և փէրին անոր հլու թեան համար զօհուանալով ինքը բացատրեց : Բայց որովհետեւ իշխանը բոլորովին չէր կարող իր խորհուրդէն կասիլ , ատեն ատեն Հնդկաստանի սուլթանին ընտիր ընտիր ձրից վրայ խօսք կը բանար և յատկապէս իր վրայ ունեցած գորովաղին սէրը կը գովէր , յուսալով որ օրին մէկը փէրին կը զիջանի երթալու հրաման տալ իրեն :

Ինչպէս որ ԱՏմէտ իշխանը քաջ գուշակեր էր , Հնդկաստանի սուլթանն իրօք մեծ ցաւ զգացեր էր իր երկու սրբոց տարակայութեան վրայ , իր Ալի և Նուրուհիսար իշխանուհոյն հարսանեկան հանդէսներու մէջ անդամ : Շատ չանցաւ Հիւսէյինի աշխարհէս հեռանալու և ճգնութեամբ իր օրերն անցնելու խորհուրդն իմացաւ : Իրբև բարի հայր՝ որ իր սրբոց տեսքն երջանկութեան մէկ մասը կը համարի , մանաւանդ երբ իր սիրոյն արժանի կ'ըլլան , սուլթանն ալ կը փախաքեր որ Հիւսէյին իր քովն արբուհեաց մէջ մնար : Բայց որովհետեւ կատարելագործուելու համար Հիւսէյինի ընտրած աստղերն ալ չէր կա-

րող գարովել , անոր բացակայութիւնը համբերութեամբ տարաւ : Իսկ ԱՏմէտ իշխանին վրայ լուր առնելու համար ամէն ճիղ թափեց , իր անբութեան ամէն գաւառները սուրհանդակներ հանց՝ հրաման տալով կուսակալներու որ զանի բռնն և արբուհիքը դարձնեն , բայց իր ակնկալութեան դէմ չյաջողեցաւ , և իր ցաւերը՝ փոխանակ նուազելու աւելցան : Շատ անդամ իր վէրիքին հետ կը խօսէր այս մասին և անոր կ'ըսէր .

« Աէզիր , զիտես որ ԱՏմէտն իմ որդւոցս մէջ ամենէն աւելի կը սիրէի , զիտես նաև թէ ինչ միջոցներ ՚ի դործ դրի անոր հետքը գտնելու , թէ և ընդունայն : Այնքան մեծ է վիշտս որ վերջապէս չպիտի դիմանամ , եթէ վրաս չլի մաս : Եթէ իմ պահպանութեանս համար թեթեւ հոգ անդամ ունիս , կ'աղերսեմ որ իս օգնես քա խորհուրդդ : »

Աէզիրն՝ որ սրտաղին սիրելէն դատ՝ սուլթանին եռանդաղին կը ծառայէր և տէրութեան գործերն ըրտ օրինի կը կարգադրէր , մտածեց թէ ինչ ձար կրնայ գտնել սուլթանը միտմարտելու համար և կատարուհի մը յիշեց , որուն համար կ'ըսէին թէ մեծ հրաշքներ կը գործէ . ուստի առաջարկեց որ կանչուի և անոր խորհուրդ հարցուի : Սուլթանը հաւանութիւն տուաւ , վէրիքը կանչել տուաւ վճուին և անձամբ սուլթանին ներկայացուց :

Սուլթանն ըսաւ վճուիին , « Ալի իշխանին և Նուրուհիսար իշխանուհոյն ամուսնութենէ վեր՝ ԱՏմէտ իշխանին բացակայութեան վրայ զգացած վիշտս այնքան ծանօթ է ամենուն՝ որ դու ալ անշուշտ անդեակ ես : Արդեօք քու արհեստիդ և ճարտարութեանդ շնորհիւ , չե՞ս կարող բնել թէ ինչ եղաւ որդիս , արդեօք կենդանի է՞ , ո՞ր է . զանի վերապիս տեսնելու յոյս կ'սց : »

Վճուիքը սուլթանը զօհ ընելու համար պատասխան տուաւ . « Տէր իմ , որչափ յաջողակ ըլլամ արհեստիս մէջ , դարձեալ չեմ կարող իսրոյն պատասխանել Ահաբախութեանդ հարցման , բայց եթէ մինչև վաղուան օրը ժամանակ չնորհէ ինձ , այն ատեն պատասխան կը գտնեմ : » Սուլթանն այս պայմանաժամը տալով անոր՝ խոստացաւ վարձատրել զինքն եթէ պատասխանն իր փախաղին համեմատ ըլլայ :

Հետեւեալ օրը վճուին եկաւ և երկրորդ անգամ վէրիքը սուլթանին

Ներկայացուց զանի : Ահա կը սուլ լծանին բառ . « Ահ համար տեր ,
ևս որ ձեզ հնարանդեւու համար ամէն ջանք ՚ի գործ դրի արհեստիս
կանաները գործածելով , սա միայն կրցայ հասկնայ որ Ահմէտ իշխանը
մեռած չէ . այս բանս ստոյգ է , և կրնամ ստրահուլ ըլլալ : Բայց ո՞ր
տեղ կը դանուի իշխանն , ահա այս չկրցայ երևան հասնել : »

Հնդկաստանի սուլ լծանն այս պատասխանով զո՛հ ըլլալու ստիպուե-
ցաւ , թէ և իր որդւոյն վրայ միշտ նոյն անձկու թեան մէջ կը դանուէր :

Ահմէտ իշխանին գալով Բարի-Պանու փէրիին հետ այնքան շատ
խօսեցաւ իր հօրը վրայ , առանց զանի տեսնելու փափաք յայտնելու ,
որ փէրին անոր այս գորովալիք զգոյցումէն միտքը հասկցաւ : Աւտի ,
իրեն անհամոզ չեմեւելու համար բռնած խոհեմ և երկիւղալի ընթացքը
զիտելով փէրին մտածեց թէ նախ իշխանին սէրն իր վրայ , որոց
նշաններն ստեղ կը ցոյցնէր , անկեղծ է . երկրորդ ինքնին գտնելով որ
որդւոյ մ'ի հօրը համար զգացած գորովը բռնաբարել է՝ այս բնական
հակումէն զանի հրաժարեցնելու փորձ փորձելով : որոշեց Ահմէտ իշ-
խանին եռանդազին փափաքածը կատարելու հրաման ապա : Աւտի օ-
րին մէկն անոր բառ .

« Իշխան , հայրդ տեսնելու համար ինչէ ինզրո՞ւ թոյլտուութիւնդ ,
տրդարացի երկիւղ մ'ազդեր էր ինձ որ մի գուցէ պատրուակ մ'ըլլայ
խոյս ապաւ և թեթեամտութեամբ իս թողլու . ահա այս երկիւղով
մերժեցի ինդիրդ . բայց այսօր լիովին համոզուած ըլլալով թէ գոր-
ծերեդ և թէ խօսքերեդ որ կարող եմ քու անկեղծութեանդ և հաս-
տատ սիրոյդ վստահիլ , միտքս կը փոխեմ և պայմանաւ մը միայն հրա-
ման կամ քեզ . պայմանս այս է որ երդում ընես որչափ կարելի է
շուտով ետ դառնալու : Այս պայմանս պէտք չէ որ ծանր երեւի քեզ ,
որպէս թէ անսխտահութեան նշան մ'ըլլայ . կառաջարկեմ զայն , վասն
զի գիտեմ համոզմամբ , ինչպէս որ հիմակ բացատրեցի սիրոյդ անկեղ-
ծութիւնը : »

Ահմէտ իշխանը փէրիին ուղին ընկնել ուզեց իր երախտադիտութիւ-
նը յայտնելու համար , բայց փէրին չթողուց :

« Իմ սուլ լծանուհիս , ըսաւ անոր , այս ըրած շնորհացդ բոլոր ար-
ժէքը զիտեմ , բայց կարող չեմ խօսքով բացատրել և փոխաբիս համե-

մատ իմ շնորհակալիքս արժանապէս յայտնել : Ա՛ղաչեմ իմ անկարողու-
թիւնս դու լեցուր , և ինչ որ դատես մտովին , քաջ համոզուած եղիւր
որ ես աւելի կը մտածեմ : Իրաւունք ունիս հաւապու որ պահանջած
երդումդ ինձ ծանր չպիտի դայ : Յօժարակամ կ'առնում այդ երդումը ,
մանաւանդ որ անհնար է ինձ այսուհետև առանց քեզի ապրիլ : Աւ-
տի կ'իշխեմ մեկնելու . և ետ դառնալու համար ընելիք փոյթս պիտի
հասկցնէ քեզ թէ ոխտաղբու՞ լինելու երկիրդէս չէ , այլ միայն իմ
պրախ իղձերուն հետեւելուս , քանի որ անբաժանելի կերպով քեզի
հետ ապրիլ է իղձս . իսկ եթէ երբեմն հեռանամ , քու հրամանաւդ ,
պիտի ջանամ երկայն բացալիցութեամբ քեզ վիշտ չպատճառել : »

Բարի-Պանու անչափս զմայլեցաւ . Ահմէտ իշխանին այս զոյգանոց
յայտարարութիւնը լսելուն , որով իր բոլոր կասկածները իշխանին հա-
ւատարմութեան վրայ կը վարատելին :

« Իշխան , ըսաւ անոր , երբոր համիս մեկնէ , բայց ներքէ ինձ քու
ուղեորութեանդ մասին քանի մը խորհուրդ տալ քեզի : Նախ՝ հարկ
չէ որ հօրդ սուլ լծանին յայտնես քու ամուսնութիւնդ , ոչ իմ էութե-
թիւնս , և ոչ զանուած տեղդ : Մինակ աղաչէ որ զո՛հ ըլլայ խնամալով
որ երջանիկ ես , թէ բանի մը փափաք չունիս , և թէ մինակ անոր
վիշտը վարատելու մտքով ելեր իր քովը դայեր ես : »

Աերջապէս փէրին քսան հատ քաջակազմ ձիաոր տուտ որ անոր
ուղեկցին : Երբ ամէն բան պտորատու եղաւ , իշխանն իր հրաժեշտը
առաւ փէրիին , զանի համբուրելով և անմիջապէս գալու խօսք առնա-
լով : Յետոյ անոր հեճնելիք ձին բերին , ոչ միայն այս ձին լաւ զար-
դարուած էր , այլ նաև Հնդկաստանի սուլ լծանին ախտին մէջ զանուած
ձիերէն աւելի զեղեցիկ և թանկագին էր : Շնորհքով անոր վրայ հե-
ծաւ իշխանը՝ յուրախութիւն փէրիին , և անոր վերջին բարեւ ապէն
ետև ճամբայ ելաւ :

Արովհետև Հնդկաստանի մայրաքաղաքը տանող ճամբան երկար չէր ,
Ահմէտ իշխանը շատ ատեն չանցուց հստ հասնելու : Այն ինչ քաղաքը
մտաւ որ ժողովուրդը՝ զանի տեսնելուն վրայ ուրախ ցնձու թեան աղա-
զակներով ընդունեց . և շատերը խմբովին անոր ետեւէն դային և մին-
չև թաղաւ որին պալատն ուղեկից եղան : Թաղաւ որն իր որդին ինդա-

դին ընդունեց՝ դանդաղելով սակայն հայրական դորովայի անուշտ-
թեամբ անոր բացակայութենէ որով մեծ մտատանջութեան մէջ ընկեր
էր : «Այս բացակայութեան այնքան ցաւ սրտաձառեց ինձ որչափ որ
բաղդը քեզ անյաջող դառնալէն ետեւ կը վախճայի որ յուսահատական
դործի մը չձեռնարկես :

— Ահ հափառ տէր , վրայ բերաւ Ահմէտ իշխանը , կը թողում
ձեզ մտածել եթէ իմ իղձից միակ նպատակ՝ «ուրուհի-հար իշխանու հին
կորուսելէն ետեւ» կարող էի Ալի իշխանին երջանկութեան ակնաստես
մնալ : Եթէ այսպիսի վատութիւն մ'ընէի , արքունիքն ու քաղքին մէջ
ինչ գաղտնար պիտի ունենային սիրոյս վրայ , նայն իսկ Չեր վեհափա-
ռութիւնն ինչ աչքով պիտի նայէր իս : Յէրը կիւրք մ'է որմէ չարատիր
մարդ երբոր կամի , կը տիրապետէ այն և ճշմարիտ սիրողի մը ժաման-
ակ չտար իր բանակնութեան հետեւելու : Չեր վեհափառութիւնը
քաջ գիտէ թէ նետս արձակելու՝ ինձ անչոր բան մը սրտահեցաւ ,
այսինքն անհար եղաւ արձակած նետս դանկու , թէև միջատեղին
հարթ ու հաւասար ակզ մ'էր . ահա այս սրտաձառաւ կորուսի այն է-
ակն որ՝ որչափ իմ սիրոյս՝ նոյնչափ միւս եղբարցոյ կը սրտակնէր :
Քաղղին այս անհետ թիւթ հարուածէն ընկձեալ՝ սրբապ սեղ տրտուջ-
ներ ընելով ժամակորոյս չեղայ : Կմ միտքս զո՛հ ընելու համար , իմ
ծառաներէս հեռացայ՝ այն արկածին սրտաձառը հասկնալու յուսով , և
նորէն միջատեղին դարձայ նետս փնտռելու համար : Վա՛ն կողմն աջ ու
ահեակ փնտռեցի , նայեցայ նաև Հիւսէյինի և Ալիի նետերուն ընկած
տեղը , կարծելով թէ իմն ալ այն կողմն ընկած է , բայց անողուտ
տեղն աշխատեցայ : Մակայս վրաս վհատութիւն չեկաւ . իմ խուզար-
կութիւնս շարունակեցի , շիտակ քաղելով նոյն հողին վրայ , յուսալով
որ այն տեղ ընկած ըլլայ : Արդէն ասդին անդին նայելով մըն մ'ա-
նաջ գացեր էի , և ստեպ նետի նման բան մ'որ տեսնէի կը դառնայի
քննելու , երբ մտածեցի թէ կարելի բան չէր որ իմն այսչափ հեռու
դացած ըլլայ . ուստի կանկ առի և ինքնովին հարցոյցի թէ արդեօք
խելքս գլխէս թուեր է որ կ'երեւալայիմ թէ այսչափ հեռու արձակած
ըլլամ նետ մ'որ երբէք նոյն իսկ մեր հին և անուանի զխցադուններու
կողմն այնքան հեռու գացած չէ : Այս խորհրդածութիւնն ընելով՝

ետ դառնալու մտաղիւր էի , երբ գաղանի զօրութիւն մը կարծես թէ
խ գէպ յառաջ կը մղէր . չորս մընն քաղելէն ետեւ առջև ժայռեր և-
լան և նետ մը նշմարեցի . վաղեցի վայն առի և զիտեցի որ իմ արձակած
նետս է , բայց չէր գտնուած պէտք եղած տեղն ու ժամանակը :

Ուստի ոչ միայն Չեր վեհափառութեան վճիռն ՚ն նպատակ Ալիի ան-
իրաւ չգտայ , այլ այս գործն ուրիշ կերպով մեկնեցի և աներկիտ եղայ
որ այս բանին մէջ ինձ նպատաւոր գաղանիք մը կար . ուստի ուղեցի
զայն մեկնել . այս մեկնութիւնն ստացայ այն կողմն չհեռանալով :
Բայց այս ալ ուրիշ գաղանիք մ'է որուն համար Չեր վեհափառութիւնը
կաղաչեմ ներել ինձ որ լուռ կենամ և միտակ այսչափ ըսեմ որ իմ եր-
ջանկութենէս զո՛հ եմ : Այս երջանկութեանս մէջ միտակ հող մ'ունէի ,
և այս հողն էր ձեր մտատանջութիւնն որով կը տաղնալէիք անշուշտ
իմ բաղդին և տարակայութեանս վրայ , և մտածեցի որ սարաքս է ձեր
սիրտը հանդարտեցնել և այս սարաքս տհա կատարեցի : Այս փափա-
քով միայն այս տեղ եկայ : Մինակ սա շնորհը կը ինկրեմ Չեր վեհա-
փառութենէն որ տեսն ատեն դամ , իմ յարգանքս քեզ նուիրեմ և ա-
նողջութեանդ վրայ լուրեր առնում :

— Արդեակ իմ , սրտասխանեց Հնդկաստանի Սուլթանը , չեմ
կրնար ինդրած թողտուութիւնդ մերժել , սակայն աւելի փափարելի
կ'ըլլար ինձ որ իմ քովս բնակէիր . զո՛նէ իմացոր ինձ թէ նոյն տեղ
կարող եմ քու վրայ լուր առնուլ , երբ ուշանաս անձամբ գալու ,
կամ քու ներկայութեանդ կարօտիմ :

— Տէր իմ , վրայ բերաւ իշխանը , ձեր խնդիրն արդէն ըսած
գաղանիքիս կը վերաբերի . կը սրտալուր որ ներէք ինձ այս կէտս ալ
լուութեամբ անցնելու . իմ սարաքս տեպ պիտի կատարեմ և կը վախ-
նամ իսկ որ ձեզ գլխացաւ պիտի ըլլամ քան թէ անհողութեամբս մե-
ղապարտ համարուիմ : յ

Հնդկաստանի սուլթանն այս կէտին վրայ աւելի շիտեցաւ Ահմէտ
իշխանին . մինակ ըսաւ անոր . «Որդեակ իմ , չեմ ուղեր գաղանիքդ
թափանցել , քեզ լիովին ազատ կը թողում այս մասին , և մինակ այս-
չափ կ'ըսեմ որ մեծ ուրախութիւն պիտի զգամ երբ գաս ինձ տեսնես և
ամէն անգամուն սրտաբառ պիտի դանես ինձ սիրալիւր ընդունելու :

Թեամբ զրկելու քեզ, առանց գործերուդ և զուարճութանդդ արգելք ըլլալու :»

Ահա իշխանն երեք օրէն առելի չմնաց իր Տօրն արքունիքը . չորրորդ օրն առտու կանտխ ճամբայ ելաւ . իսկ Բարի-Պանու փերին մեծ ուրախութեամբ ընդունեց զանի, վասն զի չէր յուսար որ այնքան շուտով վերադառնայ . այս շտապն առ իժ տուա ինքզինքը մեղադրելու . որ կատկածեր էր անոր հաւատարմութեան վրայ զոր իրեն խոտացեր էր հանդիսաւոր կերպով : Այս կէտն իշխանէն չտահեց, իր ակարութիւնը բացէ ՚ի բաց խոտուլանեցաւ և ներում ինդրեց : Այն ասան սիրահար և սիրուհւոյ միութիւնն այնքան կատարեալ եղաւ որ միոյն ուզածը միւսն ալ կ'ուզէր :

Ահա իշխանն ամիս մը կար որ դարձեր էր, երբ Բարի-Պանու փերին դիտելով որ այն աստեան վեր այս իշխանն որ իր Տօրն բրած այցելութեան պատմութիւնն երկարօրէն ըրեր էր, և հասկցուցեր էր որ հայրը ինդրեր էր որ ամիսն անգամ մը զայ զինքը տեսնէ, այս իշխանը կ'ըսեմ, նորէն Տօրը խօսքը բնաւ չբրաւ . որպէս թէ աշխարհս եղած չըլլայ, մինչդեռ առաջաւէտ անոր վրայ կը խօսէր . և կարծեց թէ իր սիրոյն համար զանց կ'ընէր : Աւտի փերին անոր բաւ .

«Իշխան, ըսէ ինձ, մի՞թէ հայրդ սուլթանը բողբոլին մոռցար, մի՞թէ չէս յիշեր անոր բրած խոտումը, որպէս զի աստեան աստեան կրթաս զանի տեսնես : Իսկ ես այս մասին բաւով չմոռցայ երբ դարձար, և ահա հիմակ միտքդ կը ձգեմ որպէս զի խոտումը կատարելու համար ժամանակ չանցնես :

— Տիկին, վրայ բերաւ փերին նոյն զուարթացին ձայնով, որովհետեւ հայրս չեմ մոռցեր և այս մասին յանդամբ չունիմ, առելի լաւ ունիմ յանդիմանութիւնդ կրել, թէ և արժանի չեմ, քան թէ մերժում մը, եթէ անպատեհ առթիւ եռանդ ցոյց տայի Տօրս երթալու համար, և այս եռանդս թերեւ քեզի ծանր դար :

— Իշխան, ըստ անոր փերին, չեմ ուզեր որ այդ տեսակ քաղաքավարական ձևերով վարուիս ինձի հետ, և որպէս զի ուրիշ անգամ այսպիսի բան մը չպատահի, և քանի որ ամեն վեր հայրդ տեսած չես, կարծեմ թէ առելի ժամանակ անցնել պէտք չէ : Աւտի վազուանէ սկսէ

այցելութիւնդ, և ամէն ամիս շարունակէ, առանց ինձի բան մ'ըսելու կամ հրաման ինդրելու . ես արդէն հաւանութիւնս տուած եմ :»

Ահա իշխանը հետեւեալ օրը մեկնեցաւ, նոյն ուղեկիցներով, բայց ինքն առջի անգամէն առելի թեթեւ, շքեղ կերպով հագուած սղաւած և ձին աշտանակած էր : Սուլթանը մի և նոյն գոհունակութեամբ ընդունեցաւ զանի : Շատ ամիս նոյն կերպով իր այցելութիւնները շարունակեց և միշտ նոր, ձոխ և պայծառ հանդերձանքներով կը ներկայանար :

Վերջապէս քանի մը վէզիրներ՝ որ սուլթանին մտերիմներն էին, Ահա իշխանին ցոյց տուած ձօխութենէ հասկցան անոր մեծութիւնն ու գործութիւնն . և սուլթանին հետ իրենց տեսցած մտերմութիւնը չարաչար գործածելով՝ այնպէս խօսեցան անոր հետ որ Ահա իշխանին դէմ անոր կատկածներ ազդեն : Ըսին անոր որ խոհեմութիւնը կը պահանջէ հասկնայ թէ իշխանին բնակարանն ուր է, ուսկից կ'առնուր այնքան ստակ այնպէս շտայլարար վարուելու, թէ և ոչ կայուած, ոչ հաստատ եկամտ ունէր, և կարծես թէ արքունիքը կզար միայն սուլթանին երկսին տալու որ իշխանական կենսք մը վարելու համար անոր առատաձեռնութենէ պէտք չունէր, և թէ վերջապէս վախնալ պէտք էր որ ժողովուրդն ոտք չհանէ իր հայրը զահէն վար ձգելու համար :

Հնդկաց սուլթանն որ բնաւ մտքէն չէր անցնել իր վէզիրներուն բրած խորհուրդներն Ահա իշխանը դասելու կարող ըլլաց, անոնց բնաւ . «Գուք կատակ կ'ընէք, որդիս իս կը սիրէ, և այնքան ստոյգ եմ անոր սիրոյն և հաւատարմութեան վրայ որ ես ալ իմ կողմէս զժգոհութեան առիթ մը տուած չեմ անոր :»

Այս վերջին խօսքերուն վրայ, վէզիրին մէկն առիթ գտաւ ըսելու . «Վեհափառ տէր, թէ և ամէն ողջամիտ մարդոց դատողութեան համեմատ՝ իսկաւ իրաւացի վճիռ մ'արձակիցիք երեք իշխանները միարանելու . եւրոպայի՛ցար իշխանու հոյն ամուսնութեան մասին, սակայն ո՞վ կ'նայ հաստատել որ Ահա իշխանը շիտակիցին պէս հպատակեցաւ բաղլին այս ծանր հարուածին : Արթէ հաւանական չէ որ երեւակայէ թէ միս եղբայրներէն առելի արժանի էր . եւրոպայի՛ցար իշ»

խանութիւնն , և թէ ձեր վնհատութիւնն անիրաւութիւն մ'ըրած
ըլլայ ասորբեր որոշում մ'ընելով :

«Ձեր վնհատութիւնը կրնայ ըսել , յարեց ննդամիտ վէզիւն , որ
Վհմէտ իշխանը դժգոհութեան նշան մը չյայտնէր , թէ մեր երկիրը
ներն անհիմն են , թէ շուտով կը վրդովինք և թէ իրաւունք չունինք
արքայազն իշխանի մը վրայ այսպիսի կատկածներ ունենալ , որ թերեւ
հիմ չունին , բայց , վնհատութեամբ , շարունակեց նա , կարելի է որ
այս կատկածներն անտեղի չեն : Ձեր վնհատութիւնը քաջ գիտէ որ
այսպիսի փափուկ և կարեւոր խնդրոյ մը մէջ , սպասով ճամբայ մը
բռնել պէտք է , պէտք է նկատէ որ իշխանին կեղծաորութեան կրնայ
խարուիլ և վստանգն այնքան մեծ կ'երեւի որչափ որ Վհմէտ իշխանը
մայրաքաղաքին մօտ կը բնակի : Եւ արդարեւ , եթէ մեզի պէս ուշադիր
նայիք պիտի տեսնէք թէ ամէն անգամուն որ Վհմէտ իշխանն այցի
գայ , ինքն և իր մարդիկը նոր նոր հաղուած սղուած են , և կարծես
թէ իրենց ձիերուն զարդերն արհեստաւորին ձեռքէն նոր ելեր են : Ի-
րենց ձիերն անգամ յոգնած չեն և կ'երեւի թէ ձեռքէն կ'զարն : Վհ-
մէտին մեզի դրացի ըլլալուն նշաններն այնքան յայտնի են՝ որ մեր
սլարտըրն դէմ գործած պիտի ըլլայինք եթէ մեր կարծիքն այս մասին
չյայտնէինք ձեզ , որպէս զի թէ ձեր անձնական և թէ տերութեան
պաշտպանութեան համար պարտ ու պատշաճը անօրինէք :»

Երբ մտերիմ վէզիւն այս երկար ճառն աւարտեց , սուլթանը խօ-
տակցութեան վերջ տալով ըստ . «Կ'նշ որ ըլլայ , չեմ կարծէր որ իմ
Վհմէտ որդիս ձեր ըսածին չափ շարամիտ ըլլայ . սակայն դարձեալ
ձեր խորհրդին համար շնորհակալ եմ , և տարակոյս չունիմ որ բարե-
մտութեամբ կը յայտնէք զանոնք ինձի :»

Հնդկաստանի սուլթանն այսպէս խօսեցաւ իր մտերիմներուն . և
չյայտնեց բնաւ որ անոնց կարծիքն իր մտքին վրայ սպառնորութիւն մը
ըրած ըլլայ : Յակայն դարձեալ վրդով մ'ըզաց , և միաբը գրաւ Վհ-
մէտ իշխանին շարժումները լրտեսել տալ , առանց իր մեծ վէզիւրին
բան մ'ընելու : Աւտի վհուկ կ'ինը կանչել տուաւ , զոր սպասին մէկ
ծածուկ դռնէն ներս մտցուցին և մինչև գահէնը տարին : Սուլթանն
անոր ըստ .

«Գու ինձ սպասով ցուցիր որ իմ Վհմէտ որդիս մեռած չէ , և այս
մասին շնորհատարտ եմ քեզ . հիմակ պէտք է որ ուրիշ շնորհ մ'ալ բ-
նես : Իմ որդիս արքունիքը գալէն և ամէն ամիս ինձ այցելութիւն ընե-
լէն վեր չլլացայ բերնէն առնուլ թէ իր կողմը հաստատուած է , և ես
ալ իր կամաց հակառակ գազանիքը սպասնը չուղեցի . բայց գու ճար-
պիկ ես և կրնաս հնար մը գտնել իմ հետաքրքրութիւնս գոհ ընելու .
միայն չեմ ուզեր որ նա և իմ պալատականներէս մէկն այս բանս իմա-
նայ : Գիտես արդէն որ Վհմէտ որդիս այս տեղէր և որովհետեւ սովոր
է առանց հրամեշտ տալու ճամբայ ելնել , ժամանակ մ'անցնէր , այս-
րէն գնա կեցիր անոր ճամբուն վրայ , և լաւ մը դիտելով հասկցիր ու-
նոր բնակութիւնն և եկուր լուր մը տուր ինձ :»

Սուլթանին պալատէն ելնելով վհուկ կ'ինն խկոյն գնաց պահուրտ-
լու այն ժայռերուն մօտ՝ ուր Վհմէտին նետին ընկնիլն արդէն իմացեր
էր :

Հետեւեալ օրն Վհմէտ իշխանն առտու կանուխ ճամբայ ելաւ , ա-
ռանց խնաց տալու ոչ սուլթանին և ոչ սպալատականի մը , ըստ իր սովո-
րութեան : Վհուկ կ'ինն անոր գալը տեսաւ և անոր ետեւէն նայեցաւ
մինչև որ իր բոլոր մարդկաներով աչքէն կորնցուց :

Արովհետեւ ժայռերն անմատչելի պատուար մ'էին մարդոց , թէ
հետի ըլլային և թէ ձիով , այնչափ սեղանէ ելին , վհուկը մտածեց
որ՝ կամ իշխանը քարայր մը կ'իջնէ , և կամ ձիերու և փէրիներու
բնակարանի տեղ զառ . ի թափ տտրերկրեայ վայր մը : Երբ նկատեց որ
իշխանն իր ձիաորններով քարայրը կամ տտրերկրեայ տեղն իջած պիտի
ըլլայ , սպասած տեղէն ելաւ , և շխտակ անոնց մտած փայտարին կող-
մը գնաց . ինքն ալ մտաւ , և շատ մը պոռոյաներով անոր վերջացած կող-
մը հասնելով , ամէն գին դիտեց , քանի մ'անգամ վեր վար շրջելով :
Բայց թէև շատ ջանայ ոչ քարայրի բացարած և ոչ երկաթէ դուռ մը
տեսաւ որ Վհմէտ իշխանին աչքին արդէն զարկեր էր . վասն զի այս
դուռը մինակ մարդոց տեսանելի էր , և մասնաւորապէս տեսակ մը ան-
ձերու որոց ներկայութիւնն ախորժելի կրնար ըլլալ . Բարի-Պանունն
իսկ կանանց աննշմարելի էր :

Վհուկ կ'ինը տեսնելով որ իր բոլոր ջանքն անօգուտ կ'ընէ , բաւու

կան համարեց իր ըրած զիւտը . զարձաւ . . . սուլթանին խնայուց և իր ուղեորութեան նկարագիրն ընելով՝ յարեց .

«Ա.ե.հասիառ տէր , ինչպէս որ քաջ կինար բմրոնել այս տեսածներուս վրայ՝ ինձ դժուարին չպիտի ըլլայ Ա.հմէտ իշխանի մասին պէտք եղած տեղեկութիւնները ձեզի հաղորդել : Այժմէն չպիտի բռնմ թէ այս մասին իմ կարծիքս ի՞նչ է , այնպիսի կերպով մը կ'ուզեմ անոր յայտնել որ բնառ կասկած չունենայ : Այս նպատակիս հասնելու համար , մինակ քիչ մը ժամանակ և համբերութիւն կը պահանջեմ , նոյնպէս թողութիւն կը խնդրեմ որ ինձ չհարցնէք թէ ի՞նչ միջոցներ պիտի դորձածեմ : »

Սուլթանն վճռական առաջարկած միջոցը լաւ մտքով մեկնեց և անոր ըսաւ . «Գու ազատ ես . դնա և ինչ կերպով որ կ'ուզես այնպէս ըրէ . քու խոստումներդ կատարման համբերութեամբ պիտի սպասեմ : »

Եւ որպէս զի զանի քաջաբերէ , անոր մեծազին անդամանդ մ'ընծայ ըրաւ և ըսաւ որ ետքէն աւելի պիտի վարձաարէ զանի երբ անոր ճարտարակութենէ սպասած կարևոր ծառայութիւնն ընդունի :

Արովհետև Ա.հմէտ իշխանը՝ Բարի-Պանու փերիէն հրաման ստանալէն վեր՝ չէր պակսեր Հնդկաստանի սուլթանին արքունիքն ըստ սովորութեան այցի երթալ , միշտ նոյն սովորութիւնն ամէն ամիս կանոնաորոպէս կը կատարէր . վճռին այս զխնայով տպասեց որ նոյն ամիսը լմնայ : Ամենակէն քանի մ'օր առաջ՝ ժայռերուն ստորոտը փութաց գնաց , ճիշտ այն տեղը ուսկէ իշխանին և ձիաւորներուն հետքը կորուսեր էր , և այն տեղ սպասեց , իր խորհուրդը կատարելու գիտմամբ :

Հետեւեալ օրն իսկ Ա.հմէտ իշխանը դուրս ելաւ երկաթէ դռնէն , իր սովորական ուղեկիցներով , և վճռակին մօտ եկաւ , զոր չէր ճանչեր : Երբ զիտեց որ պառկեր է , զլուխը ժայռի մը կը թնամ՝ և վշտագին անձի մը պէս կը զանդատէր , զթասիրութեանէն անոր մօտ գնաց և անոր հարցուց թէ ի՞նչ ցաւ ունի և ի՞նչ դարման կրնայ տալ :

Նենդամիտ վճռակին՝ առանց գլուխը վերցնելու՝ անոր դուրս աւելի շարժելու կերպով իշխանը զիտեէն հակէ կտրուկ խօսքերով անոր պատասխանեց , և որպէս թէ կարող չէր շունչ առնուլ , թէ դռնէն ելն-

լով քաղաք իջնել ուղած է , և թէ ճամբուն վրայ սաստիկ տենդով մը բռնուած է . վերջապէս ոյժէ ընկեր է , և թէ ստիպուեր է կայ առնուլ և այն վիճակին մէջ մնալու , բնակութենէ հեռի , և օգնութիւն գտնելու բողբոլմիս սնոյոյս :

Բարեմիտ կին , վրայ բերաւ Ա.հմէտ իշխանը , կարծածիք չափ օգնութենէ զուրկ չպիտի մնաս , պատրաստ եմ այս օգնութիւնը քեզի տալու , և քեզ մօտաւոր տեղ մը պատուարելու , ուր ոչ միայն ամէն ինամբ պիտի արուի քեզ , այլև շուտով բժշկութիւն պիտի գտնես : Աւտի հիմակ ոտք եղիր որ մարդերէս մէկը քեզ առնու և իր ձիուն գաւախին վրայ հեծցնէ :

Ա.հմէտ իշխանին այս խօսքին վրայ վճռակ կինն որ կանաւ սուտ հիւանդ եղեր էր որպէս զի իմանայ թէ նա ուր կը բնակի , ի՞նչ կ'ընէ , ի՞նչ վիճակի մէջ կը գտնուի , անոր բարեգործութիւնը չմերժեց , և հասկցնելու համար որ կ'ընդունի անոր այս շնորհալի առաջարկութիւնն , ոչ այնչափ խօսքով որչափ զործով իբր թէ իր սաստիկ հիւանդութենէն լեղուն կտպուեր է , ամէն ճիգը թափեց ոտք ելնելու . «Նոյն միջոցին իշխանին երկու ձիաւորները վար իջան , և անոր օգնելով՝ ուրիշ ձիաւորի մ'ետեւը նստեցուցին : Երբ ձիուն վրայ կը հեծնէր իշխանն՝ որ ետ դարձեր էր , իր գնդին զլուին անցաւ և քիչ ատենէն երկաթէ դրան առջև եկաւ . այս դռուն յառաջ անցնող ձիաւորներ բացին : Իշխանը ներս մտաւ և երբ փերին պալատին բակը հասաւ , առանց վար իջնելու , իր ձիաւորներէն մին զրկեց յայտնելու համար որ կ'ուզէ անոր խօսիլ :

Բարի-Պանու փերին վտրաց Ա.հմէտ իշխանին քովը գալու , վասն զի հետաքրքիր էր իմանալու թէ ի՞նչ պատճառաւ Ա.հմէտ իշխանն այնչափ շուտով ետ դարձեր էր : Իշխանն անոր ատեն չուտաւ խօսելու , այլ իսկոյն ըսաւ , անոր ցոյց տալով վճռակ կինը զոր երկու ձիաւորներ վար գնելով՝ անոր թեւերէն բռներ էին :

«Իշխանուհիս , կ'աղաչեմ , դու աղայս կնկան վրայ ինձի պէս գութ ունեցիր . ահա սա վիճակին մէջ դուայ զինքն , և անոր սէտք ունեցած օգնութիւնն ընել խոստացայ : Զեր ձեռքը կը յանձնեմ զանի , յուսամ որ պէտք եղած ինամբը կը տանիք անոր թէ զթասիրութենէ դ շարժեալ :

և թէ իմ սիրոյս համար : »

Բարի-Պանու փէրին՝ որ ԱՏձէտ իշխանին խօսելու ատեն՝ աչքը սուտ հիւանդին վրայ տնկեր էր, իրեն հետ եկող երկու կանանց ապսպրեց որ երկու ձիառորներու ձեռքէն դանի առնուն պալատին մէկ սենեակը տանին և դանի խնամեն այնպէս որպէս թէ զինքը խնամէին :

Մինչդեռ երկու կանայք այս հրամանը կը կատարէին, Բարի-Պանու ԱՏձէտ իշխանին մօտ եկաւ և ցած ձայնով մ'անոր ըսաւ .

« Իշխան, կը դուրս գլխաւորութիւնդ, արժանի է քու աստիճանիդ և խնդաղին պիտի փութամ կարեկցութեանդ սրտասխանելու, բայց կը վախնամ շատ որ այդ բարի գիտաւորութեանդ փոխարէն չարիք չբնդունին . չեմ կարծեր որ այս կինն այնքան հիւանդ ըլլայ ինչպէս որ կը յայտնէ, և եթէ չեմ սխալիր՝ կամաւ այն դատած տեղը ընկած սուտ հիւանդ եղած է որպէս զի քեզ չարիք հասցնէ : Բայց այս բանս քեզ վիշտ մը թող չսրտաճառէ, և ինչ որ գողտնի գործին քեզի զէմ, համեզուած եղիր որ ամէն դարաններէ կրնամ քեզ աղատել . ուստի դնաւ և ուղեւորութիւնդ շարունակէ : »

Փէրին այս խօսքերը տազնասց մը չառին ԱՏձէտ իշխանին : « Իշխանուհիս, ըսաւ անոր, քաջ յիշելով որ մարդու մը չարիք ըրած չեմ, և լնելու ալ միտք չունիմ, ես ալ չեմ կարծեր որ ինձ չարիք ընող մը գտնուի : Կ'նչ որ է, չպիտի դադրիմ բարիք գործելէ քանի որ առիթը պատահի : »

Այս ըսելով հրաժարական բարե տուաւ իշխանուհոյն և վճուկին պատճառաւ բնդմիջած ճամբան շարունակեց, քիչ ատենէն իր հօրը պալատը հասաւ, որ ըստ սովորականին դանի ընդունեց ըստ կարի ինքզինքը զսպելով որպէս զի իր մտերիմներուն կողմէն իրեն տրուած կասկածներէն զզացած այլայլութիւնն երևան չհանէ :

Սակայն երկու կանայք որ վճուկ կինը վերջուցեր տարեր էին՝ Բարի-Պանուի հրամանաւ՝ զանի խիտ գեղեցիկ զարդարուած սենեակ մը փոխադրեցին : Նախ զանի բազմոցի մը վրայ նստեցուցին, ուր որ ոսկեգոյն երեսով գիւպակէ բարձեբու կոթնած ատենը՝ կանայք անոր առջև՝ նոյն բազմոցին վրայ պատրաստեցին անկողին մ'որուն սնդուսէ մանհիւր միտաբարով բանտած էր, վարչախօսները բարակ շղարէ էին,

իսկ վերականգնին ոսկեգոյն չուխայէ : Երբ անոր օդնեցին որ պատկի, վասն զի վճուկ կինը միշտ այնպէս կը կեղծէր իրը թէ սաստիկ տենդը չներեր իրեն անձամբ ելնել պատկելու, այն ատեն կիներէն մին գօրոս ելաւ և քիչ մը ետքը յախճապակէ ամանով մ'եկաւ, որուն մէջ բմպելի մը կար : Այս բմպելին վճուկ կինին ներկայացուց, մինչդեռ միւս կինն անոր կ'օգնէր որ ելնէ անկողին մէջնատի : « Խմէ այս բմպելին, ըսաւ անոր, Առիւծներու աղբիւրին ջուրն է, և որ և է ջերմի անվրիպելի դարման կը բերէ : Անոր ներդործութիւնը ժամէ մը պիտի զգաս : »

Վճուկ կինն աւելի լու կեղծելու համար ծանրէն քաշեց, որպէս թէ այն զեղջուրն բմպելու մեծ նողկանք մը կ'զգար : Արջապէս ամանն առաւ, և զլուին օրօրելով զեղբ խմեց, իր թէ շատ դառն և ծանր էր իրեն : Երբ նորէն պատկեցաւ, երկու կանայք ըստ մը վրան ծածկեցին :

« Հանդարտ սրտիկէ, ըսաւ զեղջուրը բերողն, և եթէ փախար ունիս, նայէ որ քնանաս : Հիմակ մենք պիտի քաշուինք երթանք, և յօտանք որ ժամէ մը դառնալով քեզ բոլորովին առողջացած պիտի դաննը : »

Վճուկ կինն՝ որ երկար ատեն հիւանդ ըլլալու համար չէր եկած այն տեղ, այլ իր նպատակն էր միայն հասկնալ թէ ուր կը գտնուի ԱՏձէտ իշխանին բնակարանը, թէ ինչ պատճառաւ իր հօրն արքունիքէն հեռացած է, հետեւապէս յօժարակամ իր բժշկութիւնը գտնելը պիտի յայտնէր, քանի որ պէտք եղածն ըստ բաականին իմացեր էր . վասն զի մեծ փախար ունէր Սուլթանին քովը գառնալու և անոր յանձնած հրամանին գործադրութիւնն անոր հաղորդելու, բայց որովհետեւ չէին ըսած իրեն թէ զեղջուրն անմիջապէս կը բժշկէ, քէտք եղաւ ակամայ սպասել երկու կանանց վերադարձին :

Երկու կանայք որոշեալ ժամուն հասան, և վճուկն ելած և բազմոցին վրայ հաղուած դտան, այնպէս որ երբ անոնց ներս մտնելը տեսաւ ոտք ելաւ :

« ՄՏ, ինչ արանչելի զեղջուր էր այն, գոչեց վճուկ կինն, անոր աղբեցութիւնը ձեր օրոշած ժամանակէն տուած զգացի, և անհամբեր կ'սպասի բաական ժամանակէ վեր որ դաք իմ ձեր պաշտելի տիրո-

Հւոյն քովը տանիք՝ որպէս զի անոր բարեխեր խնամոց շնորհակալ ըլլամ, քանի որ յախտեան անոր շնորհակարտ պիտի մնամ, վասն զի գրեթէ հրաշքով մը բժշկութիւն դանելուս, ժամանակ չանցնեմ և իմ ճամբորդութիւնս շարունակեմ:»

Երկու կանայք՝ որ իրենց տիրուհւոյն պէս փէրի էին, վհուկին յայտնեցին թէ անոր բժշկութեան խնդակից կ'ըլլան, և սպա անոր առջևն ընկան որ ճամբան ցոյց տան. և շատ մը սենեակներէ անցնելէ ետև՝ որոնք իրարմէ հոյակապ էին, սպառափն ամենէն փառաւոր և շքեղ սրահը մտան:

Բարի - Պանու ոսկեձող բազմոյցի մը վրայ նստեր էր, որ անդամանդով, սուտակնով և կարգէ դուրս խոշոր մարդարխաներով սլճնեալ էր: Եր աջ ու ձախ դին բազմաթիւ փէրիներ կեցեր էին, և ամէնքն ալ չքնաղ զեղեցիկութիւն և ճոխ հանդերձներ ունէին: Ահուկն՝ ոչսքան շքեղութիւն և վեհափառութիւն տեսնելով՝ ապուշ մնաց և զահին առջև խոնարհելէն ետև՝ կարող չեղաւ բերանը բանալ փէրիին շնորհակալ ըլլալու ինչպէս որ միտքը դրեր էր: Բարի - Պանու անոր այս ծանրութիւնը չտալու համար ըսաւ.

«Բարեմիտ կին, դո՛հ եմ որ քեզ պարտաւորեալ առ իմ ունեցայ, և ուրախ եմ որ այժմ ճամբադ շարունակելու վիճակին մէջ կը դանուխս: Քեզ աւելի չեմ պահեր քովս, քայց յուսամ որ նախ կը վախաբիս սպառտս անանել: Աստի նաժիշտներուս հետ դ'նա սլտըտէ, անոնք ամէն բան կրնան քեզի ցուցնել:»

Ահուկն որ միշտ շուարած կը մնար՝ զահին ստորեւ դանուած գորգին վրայ խոնարհելով ձակատը քսեց և հրաժեշտ տուաւ, առանց խօսք մ'ընելու կարողութիւն և համարձակութիւն ունենալու, և սպա երկու փէրիի հետ դուրս ելաւ: Հիացմամբ և անդադար բացադանչութիւններ ընելով՝ մի առ մի տեսաւ սպառտին սենեակները, նոյն հարստութիւնները, նոյն շքեղութիւնը զոր արդէն ցոյց տուեր էր Բարի - Պանու Ահուկն իշխանին երբ առաջին անգամ անոր առջևն ելաւ, ինչպէս որ արդէն լսինք: Իսկ իր հիացումն աւելի ևս սաստկացաւ երբ երկու փէրիներն իրեն ըսին թէ բոլոր տեսած բաները բան մը չեն բարդատելով իրենց տիրուհւոյն ունեցած ուրիշ մեծութեան, զորու-

թեան և ուրիշ սպառտներուն հետ, որոց թիւը չէր կարող ընել, և թէ ամէնքն ալ տարբեր տարբեր ճարտարապետութեամբ և ձևով շինուած են, և իրարմէ շքեղ ու փառաւոր: Աւրիշ զանազան բաներու վրայ խօսելէ ետև՝ փէրիները վհուկ կինն առին և տարին մինչև երկաթէ դուռն՝ ուսիէ Ահուկն իշխանը բերեր էր, զանի բացին և անոր յաջող ուղեորութիւն մը մտալթեցին, վհուկ կինն մնաք բարև ըսաւ անոնց շնորհակալ ըլլալով անոնց տարած խնամոց համար:

Ահուկ կինը քանի մը քայլ առնլէ ետև՝ դարձաւ որ դուռը տեսնէ և ճանչէ. բայց սարսապ տեղը փնտռեց այն դուռը. վասն զի իրեն, նոյնպէս ամէն կանանց, անտեսանելի դարձեր էր, ինչպէս որ արդէն գիտեցինք: Աստի՛ այս սարսապայէն միայն քիչ մը վշտացած՝ սուլթանին քովը գնաց, ինքզինքէն բաւական դո՛հ ըլլալով որ անոր յանձնարարութիւնը կատարած էր: Երբ մայրաքաղաքը հասաւ, վհուկ կինը ծածուկ փողոցներէ անցնելով՝ եկաւ սպառտին զաղանի դուռն որ ներս մտնէ: Սուլթանն իմանալով որ վհուկը դարձեր է, իր առջևը բերել տուաւ, և որովհետև տեսաւ որ խիստ տխուր դէմք մ'ունէր, կարծեց թէ զործն անյաջող գացեր է և անոր ըսաւ. «Գէմէ՛դ կը գոշակեմ որ ճամբորդութիւնդ անողուտ ըրիր, և քու հնարաղխութեանդ սպասած տեղեկութիւնս չես բերեր ինձի:»

— Տէր իմ, ըսաւ վհուկը, Ձեր վեհափառութիւնը պէտք չէ որ դէմքէս դատէ ինձ սպտուած յանձնարարութեան ելբին վրայ, այլ պէտք է մտիկ ընէ թէ ի՛նչ ըրի իրօք և ի՛նչ սպտահեցաւ ինձ, այնպէս որ ձեր հաճութեան արժանի ըլլալու համար բան մը չմոռցայ: Իմ տիրութիւնս անյաջողութեան արդիւնք չէ այլ ուրիշ բանի մը, վասն զի յուսամ որ Ձեր վեհափառութիւնն ըրածէս զո՛հ պիտի ըլլայ: Ձեմբուսեր թէ ի՛նչ է այս բանիս սխառտը, ձեզի ընելիք սպտմութեանս պիտի հասկնաք, եթէ մտիկ ընելու համբերութիւն ունենաք:»

Այն ատեն վհուկ կինը սպառտն շնորհատանի սուլթանին թէ ի՛նչ կերպով՝ սուտ հիւանդ ձեանալով՝ Ահուկն իշխանին դուրը շարժեր, ստորեւ ըլկեայ վայր մը տարեր և չնաշխարհիկ փէրի մը յանձներ է, ինքզինքով որ իմ առողջութեանս համար պէտք եղած հօգը տանի: Յետոյ սպառտն թէ ի՛նչ բարետիրութեամբ փէրին իր նաժիշտներուն սպ-

տուէր տուեր էր որ իրեն ուղեկցին և մինչև որ առողջութիւն չցանկ
 իրմէ չհեռանան . և ասկից մակարեւեր է որ այսպիսի կամակատարու-
 թիւն մը միայն կին մը կրնար ցոյց տալ իր ամուսնոյն համար : Ահա
 կինը բացատրեց նաև իր գարնանքն երբ փէրիին պալատին ճակատը
 տեսեր է , որուն նման բան մ'աշխարհիս մէջ չցտնուիր իր կարծեօքը ,
 մինչդեռ երկու նաժիշտները ետեւէն ընկած իբր հիւանդ զինքը կա-
 ուջնորդէին , քանի որ այնպէս կը կեղծէր թէ չէ կարող քայլել ա-
 ուանց անոնց օյնութեան : Մանր նկարագրեց թէ ինչպէս իրեն սահ-
 մանուած սենեակը հասնելուն՝ մեծ խնամք տարեր են իր վրայ , ինչ
 դեղջուր տուեր են , թէ ինչպէս շուտով աղէկցեր է , թէ և թէ
 հիւանդութիւնն և թէ՛ բժշկութիւնը կեղծ էին . թէ ինչ վեհափառ
 կերպարան ունէր փէրին , ականակուռ դահի մը վրայ նստած , որուն
 գոհարներն բոլոր Հնդկաստանի ճոխութիւնները կը զերազանցէին . և
 վերջապէս միւս բոլոր անբաւ հարստութիւններն որոնք պալատին ա-
 մէն կողմը պիտեր էին , պատմեց :

Ահա կ'ընէ իր յանձնարարութեան նկարագիրն այս տեղ լմացոյց .
 և այս իր խօսքը շարունակելով՝ ըսաւ . « Աեհափառ տէր , ինչ կը
 մտածէք փէրիին այս անլուր հարստութեանց մասին : Վարելի է ըսէք
 թէ կը հիանաք և կ'ուրախանաք որ ձեր Ահմէտ որդին այսպիսի բաղ-
 դի մը հանդիպեր է և փէրիին հետ նոյնը կը վայելէ : Իսկ ես , վեհա-
 փառ տէր , կ'աղաչեմ ներել ինձ եթէ կը համարձակիմ յայտնելու որ
 ես բոլորովին տարբեր կարծիք մ'ունիմ , նա մանտանդ կը ստեղծեց
 կը խորհիմ թէ ինչ մեծ փորձանք կրնայ հանդիպիլ ձեզի , և ահա այս
 պատճառաւ մեծ անհանդուտութեան մէջ եմ և անշուշտ գուշակած էք ,
 վասն զի իմ արտմութիւնս չկրցայ ծածկել : Առաջին հաստալ որ Ահ-
 մէտ իշխանն , իր ընտիր բնաւորութեամբ կարող չէ Ձեր վեհափառու-
 թեան գէմ՝ շարժուիմ ընել , բայց ո՞վ կրնայ ապահովել որ փէրին իր
 հրատարակելի զգուսնեքով և իր ամուսնոյն մտքին վրայ արդէն ստացած
 ազդեցութեամբ , չպիտի թեւաբէ անոր Ձեր վեհափառութիւնն իր
 սթառէն վար ձգելու և Հնդկաստանի պետութիւնը գրաւելու ֆնասա-
 կար խորհուրդն : Աստի Ձեր վեհափառութեան կ'իջնայ այսպիսի կա-
 րևուր ինքիւր մը նկատողութեան առնուլ : »

Արշափ որ սուլթանն Ահմէտ իշխանին բարի բնաւորութիւնը կը
 ճանչէր , դարձեալ յուզուեցաւ երբ վհուկ կնիսն պատմութիւնը լսեց :
 Աստի անոր ճամբայ տալով ըսաւ . « Շնորհակալ եմ քեզ առած ծան-
 բութեանդ և առած օգտակար խորհուրդիդ համար . անոր կարևո-
 րութիւնը կ'զգամ , որուն վրայ հարկաւ խորհրդով անօրէնութիւն մը
 պիտի ընեմ : »

Երբ եկան սուլթանին խնց առին վհուկ կնիսն զալուստն , Ահ-
 մէտ իշխանին վրայ իրեն կասկածներ ազդող մտերիմներուն հետ կը
 խօսակցէր : Ահա կ'ընէ ըսաւ որ ետեւէն զայ և նորէն սկսաւ իր մտե-
 րիմներուն հետ խորհրդակցիլ : Բոլոր խնցածներն անոնց հաղորդեց ,
 նոյնպէս իր կասկածն որ չըլլայ թէ փէրին Ահմէտ իշխանին միտքը
 գէշ խորհուրդներով լեցնէ , և հարցոյց թէ ինչ միջոցներ կան արդեօք
 այսպիսի մեծ չարեաց առաջն առնլու համար :

Մտերիմներուն մին սկսաւ այսպէս խօսիլ միւսներուն կողմէն . « Քա-
 նի որ , վեհափառ տէր , կը ճանչնաք թէ ո՞վ կրնայ այիպիսի չարիք մը
 գործել , քանի որ ձեր արքունեաց մէջ կը գտնուի այն անձն և անոր
 վրայ իշխանութիւն ունիք , կարող էք սպառնալից չարեաց առաջն
 առնլու համար անմիջապէս զանի ձերբակալ ընել տալ , և չեմ ըսեր
 սպաննել , այսպիսի բան մը մեծ աղմուկ կրնայ հանել , այլ գէթ ցնահ
 բանտի մէջ փակուած դասհէլ : » Միւս մտերիմներն այս կարծիքը հու-
 նեցան միարան :

Ահա կ'որ այս խորհուրդը շատ բուռն գտաւ , հրաման խնդրեց
 սուլթանէն խօսելու , և երբ հրամանը ստացաւ , ըսաւ . « Աեհափառ
 տէր , անտարակոյս եմ որ ձեր սրահպանութեան համար մտերիմներդ
 մեծ եռանդով վառուած ըլլալով՝ կը յորդորեն ձեզ Ահմէտ իշխանը
 ձերբակալ ընել . բայց ներեն ինձ յայտնելու որ Ահմէտ իշխանին հետ
 հարկ պիտի ըլլայ ձերբակալ ընելուս իր ուղեկիցները . բայց այս ու-
 ղեկիցները ճիւններ են : Միթէ կարծեն թէ զիւրի՞ն բան է զանոնք
 բռնել և կասել : Միթէ անտեսանելի դառնալով աներեւոյթ չպիտի
 ըլլան , և նոյն միջոցին չպիտի երթան իմաց տալու փէրիին որ իր ա-
 մուսնիը մեծ նախատիք մը կրեց , և փէրին ալ միթէ կարծէք թէ
 վրէժ չ'ըլուծեր : Բայց եթէ արիւ միջոց մը կայ առելի պարզ՝ սուլթանը

զայն թող ՚ի գործ զնէ Ահմէտ իշխանին սպառայ չար խորհրդոց զէմ՝ սակայն պէտք է որ Չեր վեհափառութեան փառքն այս մասին անարատ մնայ և հասկցուի որ դէշ խորհուրդ մը չունիք . ահա ամենէն յարմար միջոցն այս կը գտնուի :

Այժմէ Չեր վեհափառութիւնն իմ խորհրդիս կարևորութիւն կտայ , պիտի բռնուան թէ՛ ըստ որում ճինքն ու փէրինքը մարդիկներէ աւելի բարձր են , կրնաք Ահմէտ իշխանին ինքնասիրութիւնը պրոպոզիտ որպէս զի փէրինք միջոցաւ օգտակար բան մը ձեռք ձգէք : Օրինակի համար՝ ամէն անգամուն որ Չեր վեհափառութիւնը պատերազմի ելնէ՝ ստիպուած է ոչ միայն իր բանակին համար վրանի և կազմածքի անբաւ ծախս ընել , այլ նաև ուղտեր , ջորիներ և ուրիշ բեռ կրող զբաստներ զնել որպէս զի բոլոր հանգրծանքը կրեն . հիմակ կ'ըսեմ թէ արդեօք Ահմէտ իշխանը չ'կրնար իր ունեցած ազդեցութեամբը վրան մը ձեռք ձգել որ ձեռքի ափի մէջը մի , սակայն ՚ի հարկին բոլոր բանակը անոր տակ պատասպարան մը գտնէ :

Աւելի չեմ խօսիր Չեր վեհափառութեան : Այժմէ իշխանն ըսած վրանս բերէ , ուրիշ ասոր նման շատ խնդիրներ կան ընելու , այնպէս որ զանոնք կատարելու դժուարութեան հանդիպելով պիտի կորսուի , թէ և զանի իր հմայլաքր յափշտակող վէրին շատ հնարք և զիւտ ունեւնայ յաջողութեան : Այսպէս ամօթահար պիտի մնայ իշխանն ու պիտի ստիպուի իր օրերը վէրին հետ անցնել և աշխարհի հետ հաղորդակցութիւնը պիտի կտրէ : Այս միջոցով Չեր վեհափառութիւնն անոր չար խորհուրդներէն երկիւղ չպիտի ունենայ և որդւոյ մը արիւնը թափելու կամ զանի մշտապէս բանտարկութեան դատապարտելու նողկալի գործ մ'ընելու չպիտի ստիպուիք :

Երբ կախարդու հին խօսքն աւարտեց , սուլթանն իր մտերիմներուն հարցոց թէ արդեօք լաւագոյն հնարք մ'ունին առաջարկելու , և երբ տեսաւ որ ամէնք լուռ կը կենային , որոշեց վճուկին խորհրդին հետեւիլ՝ իրր ամենէն բանացի խորհուրդ մը , և որ յարմար էր իր բարեսրտութեան որով միշտ կառավարեր էր իր ժողովուրդը :

Հետեւեալ օրն՝ Ահմէտ իշխանն իր հօրը սուլթանին առջև ելաւ , մինչքեռ նա իր մտերիմներու հետ կը խօսակցէր , և անոր քովը

նստաւ : իր ներկայութիւնն արդեւք սը չեղաւ շատ մ'անտարբեր իրերու վրայ դեռ ևս խօսելու : Ի վերջէ՛ սուլթանը բերանը բացաւ և Ահմէտ իշխանին դառնալով ըսաւ .

«Որդեակ իմ , երբ եկար բացակայութեանդ առ թիւ դրացած խորին տրամութիւնս փարատեցիր , քու բնակութեանդ մայրն իզնէ դողանի պահեցիր . ես այլ չուզեցի այս զաղանկիր թափանցել՝ քու փափաքիդ համեմատ , և զոհ եղայ որ քու վիճակիդ մէջ երջանիկ ես : Չգիտէի թէ ինչ պատճառ ունէիր այսպէս վարուելու հօրդ հետ քանի որ ինչպէս այսօր՝ կրնար յայտնել քեզ թէ որչափ կը խնդակցի քու երջանկութեանդ համար : Գիտեմ թէ այս երջանկութիւնն ինչէ , աւանան հետ իմ ուրախութիւնս կը յայտնեմ քեզի և կը հաւանիմ որ այնպիսի սիրոյ արժանի հարուստ և հզօր փէրի մը հետ ամուսնացար , ինչպէս որ տեղէ մ'իմացայ : Իմ բոլոր զբոսութեամբս չպիտի կարենայի այնպիսի կին մը քեզի գտնել : Այն բարձր դիրքն ուր ելեր ես , որուն վրայ ուրիշ մը կրնար նախանձիլ քան թէ ինձի պէս հայր մը , ոչ միայն կը փափաքիմ որ ինձի հետ սիրով ապրելու շարունակես , ինչ ինչպէս որ ցարդ կը շարունակես , այլ և կը խնդրեմ որ բոլոր ազնեցութիւնդ գործածես այն փէրին օգնութիւնն ինձի համար հաշիւ կարգէ որ պարագայից համար . և այժմէն իսկ կ'ուզեմ՝ այդ ազնեցութիւնդ փորձել : Քաջ գիտես թէ պատերազմի ժամանակ ինչ մեծ ծախք կ'ընենք՝ տանց համար առնլու դժուարութիւնները , զօրապետներս , սպաներս և նոյն իսկ ես , որպէս զի վրաններ և տաղաւարներ հողանք և զանոնք փոխադրելու համար ուղտեր և ուրիշ բեռ կրող կենդանիներ : Այժմէ ինձ հաճոյք պատճառելու փափաք ունիս՝ անտարակոյս եմ որ պիտի յորդորես փէրիդ ինձ վրան մը շտրհելու որ ձեռք մէջը պիտի և որուն ներքև բոլոր բանակս կարենայ պատասպարել , և յուսամ որ խնդիրդ կը կատարէ երբ իմանայ որ ինձի համար է : Չեմ կարծել ընտ որ դժուարին գործ է ըսելով մերժէ , որովհետև ամէն մարդիկ գիտեն թէ ինչ կարգէ դուրս բաներ ընելու կարողութիւն ունին վէրիները : »

Ահմէտ իշխանը չէր յուսար բնաւ որ սուլթանն այսպիսի բան մը պահանջէ իրմէ , որ առջի բերան իրեն՝ չըսեմ անկարելի , շատ դժուար

րին երեցաւ : Եւ արդարեւ որչափ որ փեղիններու և ճիներու կարողութիւնը գիտէր , սակայն կը կատկածէր որ իր հօրը խնդրած վրանին նման վրան մը դանելու չափ կարող ըլլան : Ասկէ վաս Քարի-Պատէն ասոր նման բան մը խնդրած չէր մինչև այն ատենը . բաւական կը սեպէր անոր կողմէ տրուած սիրոյ նշաններն ընդունելով , և ամէն հոգ կը տանէր յայտնելու համար որ ինքն ալ սրտովին մի և նոյնը կ'ըզայ՝ առանց որ և է շահատէր նկատուի : Աւտի շփոթեցաւ և չգիտէր թէ ինչ պատասխան տայ :

« Ա՛ն հափառ տէր , վրայ բերաւ նա , եթէ ինձ հասած բաներն և նետս գտնելէս ետքն ըրած որոշումս Ձեր վեհափառութենէն ծածկեցի , պատճառը սա է որ չէի կարծեր թէ հարկ մը կայ ձեզ գիտնալու : Չգիտեմ թէ ինչ միջոցաւ այս դաղանիքն իմացաք : Սակայն չեմ ուրանար որ բոլոր ձեր բաժնեւոր ստոյգ են : Իրօք ամուսինն եմ այն փեղինն որու վրայօք ձեզի խօսեր են , զանի կը սիրեմ և հաւատարի եմ որ նոյնչափ կը սիրէ իս : Իսկ իմ անոր վրայ ունեցած ազդեցութեան մասին , չեմ կրնար բան մ'ըսել ձեզի : Վասն զի ոչ միայն այս մասին փորձ մը չըրի , այլև մաքէս չանցաւ այսպիսի բան մ'ընելու . մանաւանդ կը փախաքէի որ Ձեր վեհափառութիւնն չ'ընդրէր ինչէ : այս փորձն և իմ առաջադրած նպատակիս համեմատ թողուր որ առանց որ և է շահախնդրութեան սիրեմ փեղին և անորմէ սիրուիմ : Սակայն հօր մը խնդիրն որդւոյ մը համար հրաման մ'է , որ ինձի պէս սրբաւանձին կը համարի ամենայնի անոր հնազանդիլ : Թէև ակամայ և անբացատրելի ընդդիմութեամբ պիտի գիշանիմ Ձեր վեհափառութեան ըրած խնդիրն իմ կնկանս առաջարկել , սակայն չեմ կրնար խոստանալ որ պիտի յաճողիմ , և եթէ իմ յարգանքս ձեզ մատուցանելու համար աքբունիքդ գալէն գաղբիմ , ասկէ կրնաք երեակայել որ խնդիրդ անընդունելի եղած է , և կանխաւ կ'աղաչեմ որ չորհճ ընէք ինձ ներելու և նկատէք որ նոյն իսկ ամուսինս այսպէս վարուելու ստիպած պիտի ըլլայ իս : »

Հնդկաց սուլթանն Ահմէտ իշխանին պատասխան տուաւ . « Որդեակ իմ , շատ պիտի ցախեմ եթէ իմ խնդրոյս վրայ քեզ տեսնելու հաճոյքէս զրկուիմ . կը նայիմ որ տակաւին չես գիտեր թէ ամուսին մ'որչափ մեծ

իշխանութիւն ունի իր կնկան վրայ : Քու կինդ ալ իր ունեցած բոլոր զօրութեամբն եթէ մերժէ իմ սիրոյս համար անորմէ խնդրած այս դուզնաբնայ բանդ , ըսել է թէ քիչ խիստ քեզ սիրելը պիտի յայտնէ : Երկչտու թխնդ մէկդի ձդէ , ասոր պատճառը սա է որ կը կարծես թէ սիրածիդ չափ շես սիրուիր : Գնա , խնդիրդ առաջարկէ և պիտի տեսնես որ քու կարծածէդ աւելի կը սիրէ քեզ փեղին , և քաջ յիշէ որ չխնդրելէն մարդս ստեպ մեծ օգուտներէ կը զրկուի : Մտածէ անդամ մը թէ՛ ինչպէս իր քեզմէ խնդրելէքը դու երբէք չես մերժեր , նայնպէս ինքը չպիտի մերժէ քու խնդրածդ , որովհետեւ քեզ կը սիրէ : »

Հնդկաց սուլթանը չլըցաւ համոզել Ահմէտ իշխանն իր խօսքերովն . Ահմէտ իշխանը լաւազոյն պիտի համարէր եթէ հայրն ուրիշ բան մը խնդրէր , քան թէ անող իր սիրական Քարի-Պատէն անհաճոյք երեւիլ , և այս մասին զգացած տրամութեան պատճառաւ սովորականէն երկու օր առաջամբայ ելաւ : Երբոր քարայրը հասաւ փեղին՝ որ սուվոր էր միշտ զուարթ դէմքով անոր ներս մտնելը տեսնել , հարցոյց թէ ինչ պատճառաւ այն փոփոխութիւնն անոր վրայ կը տեսնէ : Երբ տեսաւ որ պատասխան տալու տեղ իրեն որպիսութեան վրայ հօրց ու փորձ կ'ընէր և այսպէս կը յայտնէր որ չէր ուզեր զինքը գոհ ընել , անոր ըսաւ .

« Քու հարցմանդ պատասխան պիտի տամ երբ դու ալ խմնիս պատասխանես : » Իշխանը բաւական ատեն դէմ կեցաւ ըսելով թէ բան մը չունի , բայց որչափ դէմ կենար նոյնչափ փեղին զանի կ'ստիպէր : « Քեզ այդ վիճակին մէջ չեմ կարող տեսնել , ըսաւ անոր , առանց հասկընալու քու տրամութեանդ պատճառը թէ չեմ կարող փարատել : Եւ եթէ այնպիսի արտաքոյ կարգի պատճառ մ'ունիս որ իմ կարողութենէս վեր է , խօսք չունիմ , կարելի է քու հօրդ սուլթանին մահուան դոյժը պիտի տաս ինձ , և այն ատեն ոչ միայն ձեռքէս եկածին չափ վիշտդ պիտի ամբեմ , այլև ժամանակը քեզ սիտիւմ պիտի բերէ : »

Ահմէտ իշխանը չլըցաւ աւելի դէմ գնել փեղին թախանձանայ և անոր ըսաւ . « Տիկին , Աստուած իմ հօրս սուլթանին կեանքն երկարէ և օրհնէ մինչև վախճանը : Աստարեալ առողջութեան մէջ թողույի

դիւքն, ուստի իմ արտմութեանս պատճառն այն չէ, այլ նոյն ինքն սուլթանն է, և այնքան ցաւ կ'զգամ որչափ որ կը բռնադատէ իս քեզի նեղութիւն պատճառելու: Առաջ սա ըսեմ, տիկին, թէ որչափ զյոյշ եղայ քու խորհրդովդ իրմէ ծածուկ պահելու որ քեզի հետ կը ածնուիմ, քեզ կը սիրեմ և սերտ ու խառով իրարու հետ կատարած ենք. սակայն չցիտեմ թէ ինչ կերպով իմացեր է մեր յարաբերութիւնը:»

Բարի—Պանու փերին Ահմէտ իշխանին խօսքը կտրեց նոյն միջոցին և անոր ըսաւ. «Մէհ, ես քաջ գիտեմ թէ ո՞վ իմացուց անոր այս բանս. յիշէ անգամ մը թէ ինչ ըսի քեզի այն կիսան համար որ քեզ հատուցուց իր հիւանդ ըլլան, և անոր վրայ զթացիր, ահա այս կինը սուլթանին իմաց տուաւ ինչ որ իրմէ պահեր է իր, արդէն ըսեր էի քեզի որ քեզի և ինձի չափ ողջաւորջ կին մ'է, և այս ալ փորձով տեսայ: Այսան զի երբ իմ պատուէրես համաձայն աղախիններս ամէն անակ տեսիլ համար հանրարոյժ ջուր մը խնցուցին անոր, թէ և պէտք չունէր անկից, այնպէս կիզծեց թէ այս ջրով իր բժշկութիւնը գտաւ և իմ առջևս ելաւ որպէս զի երթալու հրահան անու և անմիջապէս հօրդ ամէն բան իմաց տայ: Այնչափ կը շտապէր որ առանց պալատս տեսնելու անգամ մեկնիլ կը պատրաստուէր եթէ անոր չհասկցնէի որ նոյնը տեսնել կարժէ: Բայց խօսքդ շարունակէ, և նայինք թէ հայրդ ինչ կերպով ինձի ծանրութիւն պատճառելու ստիպեց քեզ, թէ և այսպիսի ծանրութիւն մը չկայ ինձի համար և կ'ուզեմ որ այս մասին հանդուած ըլլաս:»

— Տիկին, շարունակեց Ահմէտ իշխանն, անշուշտ դիտած ես մինչև ցարդ որ քու սիրովդ գոհ՝ ուրիշ շնորհ մը քեզնէ չէի խնդրեր: Քեզի պէս սիրանու շին մ'ունենայէն ետև՝ ինչ բանի կրնայի փափաքիլ: Գիտեմ թէ մեծ է զօրութիւնդ, սակայն պարտ համարեր էի դանի չիորձել: Առտի լաւ նկատէ, թաղուհիս, որ չէ թէ ես, այլ նոյն ինքն հայրս սուլթանն անխոհեմարար կը խնդրէ քեզնէ վրան մը որուն սակ իր բոլոր արքունիքն և բոլոր բանակն ամբողջէ և ձեռքի մէջ սղմի երբ պատերազմի երթայ: Նորէն կ'ըսեմ թէ այս խնդիրն առաջարկուին ես չեմ այլ նոյն իսկ հայրս:

— Իշխան, վրայ բերաւ փերին ժպտելով, կը ցտիտ որ այսպիսի փոքրիկ բանի համար հոգիդ ու սիրտդ կը հատցնես, ինչպէս որ կը նայիմ: Քաջ կը դիտեմ որ երկու բանի համար այսպէս կը տաղնապիսնախ՝ առաջինը սա է որ խօսք տուիր իս սիրելով և խնէ սիրուելով, գոհ ըլլալ և որ ե է խնդիր մ'ինձ առաջարկելու չյանդգնիլ: միւսն անտարակոյս սա է՝ թէ և հակառակը կը սնուես, կ'երևակայես թէ հօրդ սուլթանին խնդրած բանն իմ կարողութեանէս շատ վեր է: Առաջին կիսին նկատմամբ քեզ կը դովեմ և ասոր համար աւելի պիտի սիրեմ եթէ հնար ըլլար, երկրորդ կիսին դարով՝ դիւրաւ պիտի համոզեմ քեզ որ սուլթանին խնդրածը չնչին բան մ'է և ի հարկին աւելի մեծ բաներ կրնամ կատարել: Արեւմտ հանդարտէ և վստահ եղիր որ ոչ միայն ինձ ծանրութիւն մը չես պատճառեր, այլև միշտ պատրաստ պիտի գտնուիմ բոլոր փափաքներդ հաճութեամբ կատարել քու սիրովդ համար:»

Իր խօսքն աւարտելով՝ փերին ասպարեց որ իր գանձապետուհին կանչեն, և երբ եկաւ, Վարձիհան, ըսաւ անոր փերին, (այս էր գանձապետուհւոյն անունը) գանձատանս մէջ գտնուած ամենէն մեծ վրանս բեր:» Վարձիհան քիչ մ'ետքն եկաւ և վրանը բերաւ. այս վրանն ոչ միայն մարդուս ափին մէջ կը սղմէր այլև ձեռքը դոյնելով զայն կարելի էր պահել. ուստի փերին ներկայացուց. փերին զայն առաւ և Ահմէտ իշխանին տուաւ որ քննէ:

Երբ Ահմէտ իշխանը Բարի—Պանուի տաղաւարն, իր գանձատան մէջ գտնուած ամենէն մեծ կոչածը տեսաւ, կարծեց թէ իր քթէն կը բռնէ, և իր կերպարանին վրայ երեքսն զարմացման նշանները: Բարի—Պանու այս տեսնելով քահ քահ մը ձգեց: «Ինչ, իշխան, դոչեց նա, կարծես թէ կատակ կ'ընեմ, հիմակ պիտի տեսնես որ ծաղրարան չեմ: Վարձիհան, ըսաւ գանձապետուհւոյն Ահմէտին ձեռքէն տաղաւարն առնելով և անոր տալով, գնա սա տաղաւարը կանգնէ, և թող իշխանն աչքովը դատէ թէ իր հօրն ուղածէն աւելի փոքր է:»

Գանձապետուհին պալատէն դուրս ելաւ և բաւական հեռացաւ որպէս զի տաղաւարը կանգնելուն անոր մէկ ծայրը դայ պալատին դայի: Երբ գործը լնցուց, Ահմէտ իշխանը չէ թէ փոքր, այլ այնքան մեծ

դատաւարացն որ Հնդկաց թագաւորին ունեցած բանակին չափ երկու բանակ կարող էին անոր տակ պատսպարուիլ : Պարսնն , իշխանուհին , ըսաւ Ահմէտ իշխանը Բարի-Պանուին , հաղար անդամ ներողութիւն կը խնդրեմ իմ թերահաւատութեանս համար . այս տեսածէս կրնամ դուշակել որ ամէն ուղած բաներդ կարող ես ՚ի կատար հանել :

— Ար նայիս , ըսաւ անոր փէրին , որ տաղաւարը պէտք եղածէն աւելի մեծ է . բայց բան մը կայ որուն պէտք է տեղեկանաս , այսինքն տաղաւարը սա յատկութիւնն ունի որ՝ պարունակելիք մարդերուն համեմատ կը մեծնայ կամ կը նեղնայ առանց անոր ձեռք դպելու : »

Պանձապետուհին տաղաւարը ծալլեց , իր առջի վիճակին բերաւ և իշխանին ձեռքը յանձնեց : Ահմէտ իշխանը զայն առաւ , և հետեւեալ օրն առանց ժամկարոյս ըլլալու՝ ձի հեծաւ և իր սովորական մարդիկ ներքին իր հօրը Սուլթանին տարաւ ներկայացուց :

Սուլթանն որ իր խնդրած տաղաւարը կարելի բան չէր գտներ , իր որդւոյն արագ վերագարձին վրայ սաստիկ զարմնցաւ : Տաղաւարն առաւ , և անոր պղտիկութեան վրայ զմայլելէն ետեւ՝ անհնարին զարմանք մը պաշարեց զինքն երբ մեր արդէն յիշած դաշտին վրայ կանդնելով զայն տեսաւ որ իրենին չափ երկու մեծ բանակ կրնար անոր տակ հանդիսա պատսպարուիլ : Արովհետեւ այս մեծութիւնը կրնար աւելորդ սեպուիլ և անհանդատութիւն պատճառել , Ահմէտ իշխանը չմոռցաւ ըսելու որ վրանն իր բանակին ընդարձակութեան համեմատ կ'ընդարձակի :

Հնդկաց սուլթանն առ երեսս այսպիսի փառաօր ընծայի մը համար Բարի-Պանու փէրինն շնորհակալ ըլլալ ապարեց իշխանին իր կողմէն , և անոր տուած կարեւորութիւնը հասկցնելու համար , հրամայեց որ այն տաղաւարն զգուշութեամբ պանձատան մէջ պահեն : Սակայն սուլթանը նիստեւելով որ իր որդին փէրինն շնորհիւր կարող էր իրմէ դեր ՚ի վեր բաներ ընել , թէև փառք և հարստութիւն ինքն ալ ունէր , չափազանց նախանձ մ'ըղաց , նախանձ մ'որ իր շողքորթներուն և կախարդուհւոյն սողածէն աւելի մեծ էր : Այսպէս սուլթանին աւելութիւնն աւելի բորբոքեցաւ և որոշեց այնպիսի ճամբայ մը բռնել որ իշխանը բնաջինջ ըլլայ . հետեւեալս նորէն խորհուրդ հարցուց

վհակ կնիան , և այս ալ յորդորեց որ Ասիւծներու աղբիւրին ջրէն անոր բերել տայ :

Երեկոյեան գէմ՝ մինչդեռ սուլթանն իր արքունեաց մէջ սովորական ժողով կ'ընէր և Ահմէտ իշխանն ալ հոն էր , անոր այսպէս խօսեցաւ . « Որդեակ իմ , արդէն տաղաւարին համար իմ անբաւ շնորհակալիքս յայտնեցի քեզ . սակայն իմ սիրոյս համար պէտք է որ ուրիշ հաճեցի բան մ'ընես : Ախմանամ որ քու փէրի սիրտ հիզ Ասիւծներու աղբիւրի ջուր մ'ունի որ ամէն տեսակ տենդ կը բուժէ , որովհետեւ քաջ դիտեմ որ իմ առողջութիւնս քեզի սիրելի է , աներկբայ եմ որ այն ջրէն դաւաթ մը ընցուն կը խնդրես և ինձի կը բերես , իբր սնուլիկելի գեղ մ'որմէ օրին մէկը կարելի է պէտք ունենամ : Աստի այս երկրորդ ծառայութիւնն ալ ըրէ ինձի համար , և ասով քու առ բարի հայրունեցած գորովք լրացուր : »

Ահմէտ իշխանը կարծես էր թէ իր հայրն իր բերած օղտակար և եղական տաղաւարով պիտի շատանայ և ուրիշ բան մը չպիտի պահանջորով թերեւ Բարի-Պանուին հետ առուէր , ուստի չափազանց զարմացաւ սուլթանին այս խնդրոյն համար , թէև փէրին խոստացեր էր իր ձեռքէն ինչ որ դայ անոր շնորհել : Պահ մը լուռ կենալէն ետեւ՝

« Տէր իմ , ըսաւ սուլթանին , հաւատի եղիք որ ամէն բան ընելու պատրաստ եմ ձեր կենաց երկարութեան համար , սակայն կը փափաքէի որ իմ կնիանս միջամտութեան չլիմէի . հետեւապէս չեմ համարձակիր խոստանալ որ այն ջուրը կարող պիտի ըլլամ բերել Ձեր վեհափառութեան : Այսչափ միայն կ'ըսեմ որ խնդիրդ անոր պիտի առաջարկեմ , սակայն առջի անգամնան պէս մեծ դժկամակութիւն պիտի զգամ : »

Հետեւեալ օրն երբ Ահմէտ իշխանն փէրինն բնակարանը հասաւ , տաղաւարը ներկայեցուն՝ իր հօրն արքունիքը պատահած ամէն բաները մի առ մի պատմեց և իր հօրը կողմէն բերած շնորհակալիքը յայտնելով յայտնեց նաև անոր մէկ երկրորդ խնդրուածն և խօսքն աւարտելով յարեց . « Իշխանուհիս , այս ամէնն իբր պարզ պատմութիւն մը քեզի կը յայտնեմ : Քեզի կը թողում ընդունիլ կամ մերժել հօրս խնդիրն , և այս մտայն բնաւ չեմ սնդեր , վասն զի քու ուղածդ իմ ու »

զածս է :

• — Այ, ոչ, վրայ բերաւ Բարի—Պանու փէրին, շատ ուրախ եմ որ Հնդկաց սուլթանը զխտէ թէ որչափ կը սիրեմ քեզ, զանի զո՛հ բնել կ'ուզեմ, և վճուկ կինն ինչ խրատ որ տայ անոր, (վասն զի կը նայեմ որ անոր խօսքին համեմատ կը շարժի) դարձեալ անոր կամքը կատարելու պիտի փութամ : Իրաւ է որ իր խնդրոյն մէջ շարամտութիւն կայ, և իմ ընելիք նկարագրէս դու ալ պիտի խոտտովանիս այն բանն : Առիւծներու ազբիւրը մեծ գղեկի մը դաւթին մէջ կը գտնուի, որուն դուռը չորս հզօր առիւծներ կը պահպանեն, այնպէս որ անոնցմէ երկուքը կը քնանան մինչդեռ միւս երկուքը կը հսկեն. բայց դու այժմ բանէս մի վախճար, ես քեզի պէտք եղած հնարը պիտի իմայնեմ որ անոնց մէջէն անվտանգ անցնիս :»

Նոյն պահուն Բարի—Պանու փէրին կար կը կարէր, և որովհետեւ իր քովը դերձանի շատ մը կծիկներ ունէր, անոնցմէ մին առաւ և Ահմէտ իշխանին ներկայելով, «Նախ և առաջ, բտա, սա կծիկն առ. քիչ ատենէն պիտի ըսեմ քեզի թէ ինչ բանի պիտի գործածես զայն : Երկրորդ՝ երկու ձի պատրաստել տուր, մէկը դու պիտի հեծնես միւսն ալ ետևէդ պիտի քաշես, որուն վրայ չորս կտոր եղած ոչխար մը պիտի դրուի, և այս ոչխարն այսօր իսկ մտրթել պէտք է : Երրորդ՝ դաւաթ մը պիտի տրուի քեզի ջուր լեցնելու : Ապոն առտու կանուխ ձին հեծիք՝ միւսն ետևէդ ձգելով, և երբ երկաթէ գունէն դուրս ելնես դերձանէ կծիկն առջևդ կը նետես. նոյն կծիկը պիտի զլորի և զլորելով պիտի երթայ գղեկին դուռը կենայ : Գու ալ անոր հետևէ, և երբ դադրի, գղեկին դուռը բաց ըլլալուն՝ չորս առիւծները պիտի տեսնես. երկու հսկող առիւծներն իրենց մունչիւնով միւս երկուքն ալ պիտի արթնցնեն : Մի զարհուրիր, այլ ամէն մէկուն կտոր մը ոչխարէն նետէ, առանց վար իջնելու, և սրբնթաց յառաջ անցիր, ազբիւրին մօտեցիր, դաւաթդ լեցուր՝ դարձեալ առանց վար իջնելու՝ և մի և նոյն արագութեամբ ետ դարձիր : Առիւծները նոյն միջոցին իրենց որսն ուտելու դադած ըլլալով՝ քեզ պիտի թողուն որ ազատօրէն դուրս ելնես :»

Միւս օրն Ահմէտ իշխանը մեկնեցաւ, միշտ այն պահունն որ Բարի—

Պանու փէրին որոշեր էր և ամէն անոր ըսածները կէտ առ կէտ կատարեց : Գղեկին դրան առջև հասաւ, չորս առիւծներուն չորս կտոր օչխար բաժնեց, և անոնց մէջէն արագութեամբ անցնէն ետև՝ մինչև ազբիւրը հասաւ և դաւաթը լեցուց : Աւերջը դարձաւ նորէն և ողջ առողջ գղեկէն դուրս ելաւ, ինչպէս որ մտեր էր : Երրորդ փել մը հեռացաւ, ետին նայելուն՝ գիտեց որ առիւծներէն երկուքը դէպ իր կողմը կը վազէին. աներկիւզ իր թուրը քաշեց և ինքզինքը պաշտպանելու պատրաստեցաւ : Բայց գիտելով՝ նորէն ճամբայ ընելու ստանն՝ որ մէկը շրջան մ'ընելով զլուխն ու պոչը կ'օրէր իմացնելու համար որ ֆուսս չպիտի հասցնէ, այլ կ'ուզէ իր առջևէն քաշել, և միւսն ալ ետ մնացեր էր իրեն հետևելու համար, իշխանն իր թուրը պատանը գրաւ, և այս կերպով մինչև Հնդկաց մայրաքաղաքը դնաց, ուր երկու առիւծներով ներս մտաւ, և այս կենդանիները մեկնեցան նորէն մինչև սուլթանին պալատին դուռն իշխանը ձգելէն ետև : Յետոյ նոյն ճամբան բռնեցին, մեծ ահ ու դող ազդելով ժողովրդեան, որոցմէ ոմանք կը պահուէին ոմանք խոյն կտային ատգիս անդին, որպէս զի անոնց չհանդիպին, թէ և միօրինակ քայլով և առանց դաղանութեան նշան մը տալու յառաջ կը քայլէին միատեղ :

Շատ մը սպաներ գիմարորեցին Ահմէտ իշխանն որպէս զի ձիէն իջնելու անոր օգնեն և մինչև սուլթանին սենեակը տարին, ուր որ իր մտերիմներով կը խօսակցէր : Այն տեղ սուլթանին գահին մօտեցաւ, դաւաթն անոր ոտքը դրաւ և ոտնակոխը ծածկող ճոխ զորզը պաղաւ. յետոյ ոտք ելնելով ըսաւ .

«Ահ հափառ տէր, ահա առիկ այն ջուրը զոր կը փափաքէիք ձեր գանձը ճոխայնող և զարդարող անցին և հետաքրքրական բաներուն կարող գնել : Ձեզի համար կատարեալ բարեկենդանութիւն կը մաղթեմ, այնպէս որ այս ջուրը գործածելու պէտք չունենաք :»

Երբ Ահմէտ իշխանն իր մաղթանքն աւարտեց, սուլթանն անոր նստելու տեղ ցցուց աջ կողմն, և այն ատեն ըսաւ. «Արդեակ իմ, չափազանց շնորհակալ եմ քեզի, մանաւանդ անոր համար որ իմ սիրոյս կեանքդ վտանգի մէջ գրիբ այս բնման ձեռք ձգելու համար, (արդէն այս կէտն իմացեր էր վճուկ կնոջ կողմէն, որ Առիւծներու ազբիւրին

և անկից ջուր առնլու համար եղած վտանդին տեղեակ էր) : «Շնորհ
ըրէ , խնդրեմ , յարեց նա , յայտնելու ինձ թէ ի՞նչ ճարպիկութեամբ
կամ ի՞նչ անհաւատալի զօրութեամբ ազատեցար այն վտանդէն :

— Ա՛յ հախառ աէր , վրայ բերաւ ԱՏմէտ իշխանը , ձեր շնորհա-
կալութենէն ես մնա չունիմ , վասն զի բոլորովին իմ փէրի կնիանս
պարտաւոր եմ այս ջուրն , իսկ ես ուրիշ արժանիք մը չունիմ այլ միայն
անոր ընտիր խորհուրդին հետեւիլս :» Այն ատեն անոր բացատրեց
թէ ընտիր խորհուրդներն ի՞նչ էին , և ուղեորութեան նկարագիրն ու
բռնած ընթացքը պատմեց . սուլթանն անոր պատմութիւնն ակնբեր
ուրախութեամբ մտիկ ընելէն ետեւ թէ և գաղտնի կը նախանձէր
միշտ , և այս նախանձն կ'աւելնար , ոտք ելաւ առանձին և ներս պա-
լատը մտաւ , և աստուրեց որ վճուկ կինը կանչէն :

Ահուկն երբ եկաւ ԱՏմէտ իշխանին պատմութիւնն և յաջորդութիւնը
սուլթանին վերստին պատմել չտուաւ որ ծանրութիւն չպատճառէ ,
վասն զի արդէն տեղեկացեր էր հասած համբաւէն , և անվրիպելի
հնար մը պատրաստեր էր : Այս հնարքը սուլթանին հաղցրեց , և
հետեւեալ օրը՝ սուլթանն իր պալատականաց ժողովին մէջ ԱՏմէտ իշ-
խանին յայտնեց զայն սա կերպով .

«Արդեակ իմ , ըստ , լոկ ազաչանք մ'ունիմ քեզ ընելու , և այնու-
հետեւ հնաղանդութենէդ սրահանջելու բան մը չունիմ , և ոչ փէրիէն
բան մը հայցելու . այս է , կ'ուզեմ որ ինձ մարդ մը բերես որ միայն
մէկ ու կէս ոտք բարձր ըլլայ , երեսուն ոտք երկայն մօրուս մ'ունե-
նայ , յիսուն լիար ծանրութեամբ երկաթէ ձող մ'իր ուսին վրայ կրէ ,
և երկծայր գաւաղանի պէս զայն դորձածէ , նաև խօսիլ գիտնայ :»

ԱՏմէտ իշխանը չէր կարծեր որ իր հօրը սուլթանին խնդրած մար-
դուն պէս մարդ գտնուի աշխարհիս վրայ , և զիջանիլ չուզեց . բայց
սուլթանը պնդեց իր խնդրոյն վրայ՝ կրկնելով որ փէրին ասկից աւելի
անհաւատալի բաներ կրնար ընել :

Հետեւեալ օրը՝ իշխանը Յարի-Պանուի ստորերկրեայ թաղաւորու-
թեան հասաւ , անոր խնայուց իր հօրը սուլթանին նոր խնդիրը , զոր
պաշխնէն աւելի անկարելի կը համարէր : «Իմ կարծեօքս , յարեց նա ,
չեմ կրնար երևակայել որ տիեզերաց մէջ գտնուած ըլլան և գտնուին

այն տեսակ մարդիկ : Անտարակոյս կ'ուզէ փորձել թէ արդեօք միա-
մտաբար անկից գտնելու համար հող կը տանիմ , կամ եթէ կը
գտնուին , անչուշա իմ կորուստս կ'ուզէ : Եւ արդարև ի՞նչպէս կ'ուզէ
որ այնպիսի փորքիկ և իր խնդրած կերպով գինուած մարդ մը բռնեմ :
Ի՞նչ զէնք կրնամ գործածել որպէս զի գտնի իմ կառնիս հնազանդեցը-
նեմ : Եթէ հնար մը կայ կը փափաքէի որ յայտնէի ինձ այս վտան-
գէն պատուով ազատելու համար :

— Իշխանդ իմ , վրայ բերաւ փէրին , մի շփոթիր . քու հօրդ Ա-
ուիւծներու աղբիւրէն ջուր բերելու համար վտանդ կար , սակայն
խնդրած մարդը գտնելու համար վտանդ մը չկայ : Այս մարդն իմ
Շախպար եղբայրս է , որ ոչ միայն ինձ ջնամիր , թէ և մի և նոյն հօր
զուակներ ենք , այլև այնպիսի բուռն բնատրուածիւն մ'ունի , որ բան
մը մտիկ չընել իր արիւնուուշտ ռիսակալութեան նշանները յայտնելու ,
եթէ երբէք անոր անհամոյ բան մ'ընէ մէկը կամ թշնամանէ : Միւս
կողմէն խիստ բարի մարդ մ'է և պատրաստ կը գտնուի ուրիշին փա-
փաքը կատարելու : Քու հօրդ նկարագրածին պէս կերպարան մ'ունի .
իւր միակ զէնքն է երկաթէ ձողն որ հինգ հարիւր լիար կը կշռէ , միշտ
անոր հետ կը քալէ , և անով ամենուն յարգանքը կը զբառէ : Հիմակ
պիտի կանչել տամ , և դու անձամբ պիտի գտնես թէ ըսածս ստի՞ղ է
թէ ոչ . բայց ամէն բանէ առաջ իր արտօքոյ կարդի կերպարանէն մի
շրմուր երբ անոր դալը տեսնես :

— Թաղուհիս , վրայ բերաւ ԱՏմէտ իշխանը , կ'ըսես թէ Շախ-
պար քու եղբայրդ է : Որչափ որ աղեղ և տձև ըլլայ , ոչ միայն գտնի
տեսնելով չպիտի վախնամ , այլ քու եղբայրդ ըլլալը բաւական է որ
զանի սիրեմ , պատուեմ և իբր իմ մտաւոր աղցականս նկատեմ :»

Փէրին իր պալատին ներքնագաղութին մէջ կրակով լեցուն օսկի սան
մը բերել տուաւ , և նոյն մետաղէ տուփ մը : Տփին մէջէն անուշահոտ
խուսիկը հանեց և տանին մէջ նետելուն թանձր մուխ մ'եղաւ :

Այս արարողութենէ բանի մը վայրկեան ետքը , փէրին ԱՏմէտ իշ-
խանին ըսաւ . «Իշխանդ իմ , աւասիկ հայրս կզայ , կը տեսնես :» Իշ-
խանը նայեցաւ , և Շախպարը տեսաւ որ մէկ ու կէս ոտք բարձր էր և
երկաթէ ձողն ուսին վրայ դարկած կզար . լեցուն մօրուս մ'ունէր եր-

առն ուր երկայն , որ դէս առաջ կ'երկնար , սեխը համեմատաբար
թանձր և մինչև ականջներն որտաժ և որով դէմքը գրեթէ կը գո-
ցուէր . իր խողի աչքը գլխին մէջ մտած էին , և զլուխն ալ խիստ
խոշոր և սրածայր խոյրով մ'էր . ասիէ զատ առջևէն ու կռնակէն սա-
ղատող էր :

Եթէ իշխանը կանխառ իմացած չըլլար որ Շախար Բարի-Պանուխ
և զբայրն է , սոսկալով անոր պիտի նայէր , ասկայն արդէն ծանօթու-
թիւն ունենալով փերիին հետ անվրդով անոր սրասեց , և առանց եր-
կիւզի զանի ընդունեց :

Շախար՝ որ քանի կը մօտենար Ահմէտ իշխանն այնպիսի աչքով մը
կը նայէր որ անոր հողին անշուշտ սկիտի սառեցնէր , Բարի-Պանուխն
հարցուց թէ ո՞վ էր այն մարդը :

«Եզբայր իմ , պատասխանեց Բարի-Պանու , այս իմ ամուսինս է ,
անունն Ահմէտ է , և Հնդկաց թագաւորին որդին է : Քեզ մեր հարսա-
նեաց հանդիսին չլուծեցի , որովհետև այն միջոցին ըրած արշաւանքէդ
քեզ դարձնել չուզեցի , և ուրախ սրտիւ իմացայ որ անկից յողթանա-
կաւ եկեր ես , ահա անոր սիրոյն համար համարձակեցայ քեզ կանչե-
լու :»

Այս խօսքին վրայ Շախար՝ Ահմէտ իշխանը շնորհալի ակնարկով
մը նայեցաւ , թէև միշտ իր գոռողութիւնն և վայրագ դէմքը կը պա-
հէր և անոր ըսաւ . «Քոյր իմ , միթէ բան մը կից որով անոր ծառա-
յութիւն մ'ընելու կարող ըլլամ , բաւական է որ խօսի . քանի որ ա-
մուսինդ է , պատրաստ եմ յօժարակամ կատարել անոր փափաքածը :

— Իր հայրը սուլթանը հետաքրքիր է քեզ տեսնելու , պատասխա-
նեց Բարի-Պանու . կ'աղաչեմ որ ներես անոր առաջնորդդ ըլլալու :

— Բաւական է որ առջևս ինի , վրայ բերաւ Շախար , պատրաստ
եմ անոր հետեւելու :

— Եզբայր իմ , վրայ բերաւ Բարի-Պանու , այսօր ժամանակն ուշ
է այս ճամբորդութեան համար . ուստի շնորհ ըրէ վաղուան թողլու :
Բայց որովհետև պէտք է որ գիտնաս թէ ինչեր անցան Հնդկաց սուլ-
թանին և իր որդւոյն մէջ մեր ամուսնութենէ վեր , այս իրկուն պիտի
խօսիմ այս մասին :»

Հետեւեալ օրը՝ Շախար պէտք եղած բաներն իմանալէն ետև՝ Ահ-
մէտ իշխանին հետ կանուխիկի ճամբայ ելաւ որպէս զի սուլթանին
ներկայանայ : Մայրաքաղաքը հասան և այն ինչ Շախար դունն մտաւ
որ այսպիսի աղմկալի առարկայ մը տեսնողները պահուեցան՝ ոմանք
խանութներու և տուներու մէջ և դուները գոցեցին , ոմանք խոյս տա-
լով իրենց առջև ելնողներուն սարսափ ազդեցին , և ասոնք ալ առանց
ետև նայելու կծիկը կը գնէին : Այսպէս՝ քանի Շախար և Ահմէտ
իշխանը ծանրաբայ կը յառաջանային մինչև պալատը ամէն հրապարակ
և փողոց անմարդ և ամայի կը գտնէին : Այն տեղ դռնապանները՝ փո-
խանակ Շախարի դէմ դնելու , փախան ամէն մէկը մէկ կողմ և դուն
բաց թողուցին : Իշխանն ու Շախար անաբղել ներս մտան և մինչև
խորհրդարանին դուռը հասան , ուր սուլթանը՝ դահի մը վրայ նստած՝
ունկնդրութիւն կ'ընէր . և որովհետև վարդապետներն իրենց տեղը
ձգելով խոյս տուեր էին Շախարը տեսնելով՝ առանց արդեւրի ներս
մտան :

Շախար՝ բարձրազլուխ և անվախ մօտեցաւ դահին , և առանց
սպասելու որ Ահմէտ իշխանը գինքը ներկայացնէ , Հնդկաց սուլթանին
այսպէս խօսեցաւ .

«Գու իս ուղեր ես , աւասիկ եկայ . ի՞նչ պիտի ընես իս :»

Սուլթանը՝ փոխանակ պատասխան տալու ձեռքը աչաց վրայ դրեր
էր և զլուխն անդին կը դարձնէր , որպէս զի այսպիսի սոսկալի ա-
ռարկայ մը չտեսնէ : Շախար՝ այս անպաղաքավար և թշուանական ընդ-
ունկնութեան վրայ սրտմտած՝ իր երկամէ ձողը վերցուց՝ անոր ըսե-
լով , «Իսօսե՛ նայիմ » և անոր զլուխն իջեցնելով սպաննեց , այնչափ
շուտով որ Ահմէտ իշխանը չկրցաւ անոր կեանքն ազատել : Մինակյա-
ջողեցաւ մեծ վէզիւն ազատելու , որ սուլթանին աջ կողմը նստեր էր ,
ըսելով թէ այս վէզիւրը միայն լաւ խորհուրդներ տուեր էր սուլթա-
նին :

«Ուրեմն այս միւս վէզիւնները դէշ խորհուրդներ տուած են անոր »
ըսաւ Շախար և զանոնք ալ ջախջախեց , նոյնպէս սուլթանին բոլոր
մտերիմներն ու շողքօրթներն որ Ահմէտ իշխանին թշուանեցնէին :
Որչափ հարուած՝ նոյնպիսի մեռել . մինակ անոնք ազատեցան որոնք եր-

կիւղէ քար չէին կտրած և խոյս տալու յաջողեր էին :

Այս սոսկալի ջարդը տալէն ետև՝ Շախար խորհրդարանի սրահէն դուրս ելաւ , և դաւթին մէջ տեղն՝ երկաթէ ձողը կոնսակը զարկած՝ ԱՏՄէտին ուղեկից գտնուող մեծ վէղերին կը նայէր և կ'ըսէր .

«Քաջ գիտեմ որ այս տեղ վՏուկ կին մը կայ որ իմ քեռայրիս տեղի թշնամի է քան թէ պատժուած անարժան շողջորթները . կ'ուզեմ որ այն վՏուկն ինձ բերեն : » Մեծ վէղերը մարդ զրկելով բերել տուաւ , և Շախար իր ձողովն անոր գլուխը ջախջախելով՝ ըսաւ . «Այսպէս սովբէ փնասակար խորհուրդներ տալու համար սուտ հիւանդ ըլլալ : » ՎՏուկ կինը գետին ընկաւ խոխոյն մեռաւ :

«Բայց այս բաւական չէ , յարեց Շախար , բոլոր քաղաքին բնակիչներն ալ պիտի սպաննեմ եթէ իմ քեռայրս՝ ԱՏՄէտ իշխանը Հնդկաց սուլթան չճատարակեն : » Անմիջապէս անոնք որ ներկայ էին և այս վճիռը լսեցին օդը թնդացուցին բարձրաձայն պոռայով : «Ահեցէ ԱՏՄէտ սուլթանը : » Քիչ ժամանակի մէջ բոլոր քաղաքը նոյն աղաղակներով թնուաց : Շախար Հնդկաստանի սուլթանի հանդերձը հաղցնել տուաւ անոր , դահը նստեցուց , և հաւատարմութեան երդումն ու նուէրն անոր մնատցանել տալէն ետև՝ գնաց Բարի-Պանու քոյրն առնլու , մեծ փառքով զանի բերու և Հնդկաստանի սուլթանուհի հրատարակեց :

Իսկ Ալի իշխանին և Նուրունիհար իշխանուհոյն դայով՝ որովհետև ԱՏՄէտ իշխանին գաւազրութեան մէջ մնաւ չունէին , ԱՏՄէտ իշխանն անհող ընդարձակ դաւառ մը շտրհեց որպէս զի այն տեղ սալրին , Նոյնպէս Հիւսէյին իշխանին , իր եղբօրը սպառկամաւոր մը զրկեց որպէս զի տեղի ունեցած փոփոխութիւններն անոր իրանցէ և առաջարկէ որ հաւանած դաւառը դայ առնու : Բայց Հիւսէյին իշխանն այնքան երջանիկ էր իր առանձնութեան մէջ որ սպառկամաւորին ապսպրեց իր կողմն շտրհակալ ըլլալու ԱՏՄէտ իշխանին առաջարկած ընծային համար , իր հպատակութիւնն անոր յայտնել և խոզրիլ որ իրեն մեծ շտրհ ըրած կ'ըլլայ եթէ թողու որ իր ընտրած առանձնութեան մէջ կ'անցն անցն :

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

ԵՐԿՈՒՒ ՔՈՅՐԵՐՈՒ ՈՐ ԻՐԵՆՑ ՓՈՔԻ ՔՈՅՐԵՆ ՆԸ ՆԱԽԱՆՉԻՆ

Շէհէրազատ սուլթանուհին իր վէպերովը՝ Հնդկաստանի սուլթաններ մի և նոյն անստուգութեան մէջ թողլով թէ արդեօք սպաննել տալ պէտք էր զանի թէ ոչ ողջ պահել , նոր վէպ մ'ալ պատմեց սա կերպով .

Ահ հափտու տէր , ըսաւ , Խոսրով շահ անուն Պարսից արքայ մը կար որ մեծ ախորժ կ'ըլլար զիշերային արկածներու հանդիպելով . շատ անգամ իրեն մտերիմ սպանելն մէկուն հետ ծպտեալ դուրս կ'էնէր , և քաղաքին թաղերէն անցնելու ատեն այլ և այլ զիպուածներ կը տեսնէր : Այսօր չղիտի խօսիմ Ձեր վիհափառութեան այս արկածներուն վրայ , բայց յուսամ որ ախորժանօք պիտի մտիկ ընէ այն արկածն որ իրեն հանդիպեցաւ դահակալութենէ քանի մ'օր ետքը , վասն զի իր հայրը խոր ծերութեան մէջ մեռնելով՝ անոր թողեր էր իր դահն իրր ժառանգութիւն :

Գահակալութեան տաթիւ սուլորտիան արարողութիւններն և սուլթանին թաղման հանդէսը կատարելէն ետև՝ նոր սուլթանը Խոսրով շահ անցած դարձածը հասկնալու զխտմամբ պարտ համարեց զիշեր մը սրալատէն դուրս ելնել իր վէղերին հետ որ իրեն պէս ծպտեալ էր : Որովհետև գոհճիկ ժողովուրդ գտնուող թաղէ մը կ'անցնէր՝ ձայն մը լսեց որ բաւական բարձր էր : Չոյնին եկած տան կողմը մտնեցաւ և զբան մէկ ձեղքէն նայելով լոյս տեսաւ և բազմոցի մը վրայ նստած երեք քոյրեր որ ընթրիքէն ետքը կը խօսակցէին : Ամենէն մեծին խօսքէն հասկցաւ որ իրենց խօսակցութեան նիւթը սէրն էր :

«Քանի որ սիրոյ վրայ կը խօսինք , կ'ըսէր նա , ես կը փափաքէի սուլթանին հացագործն էրիկ ունենալ , յյաղուրդ պիտի ուտէի այն փափուկ հացէն որ սուլթանի հաց կը կոչուի : Նայի՛ք թէ ձեր փափաքն ալ իմինիս չափ ընտրէ է :

— Իսկ ես, վրայ բերաւ երկրորդ քոյրը, կը փափաքէի սուլթանին խոհարարապետին կինն ըլլալ. պատուական խորտիկներ կ'ուտէի, և որովհետև քաջ գիտեմ որ պալատին մէջ սուլթանին հայն ամէն մարդ կը ճաշակէ, ես ալ հարկաւ պիտի ուտէի: Ար նայիս, քոյր իմ, յարեց նա իր մեծ քոյրին ուղղելով խօսքն, որ իմ ճաշակս քու կինեդ գեր ՚ի վեր է:

Փոքր քոյրն՝ որ շատ գեղանի էր և իր մեծ քոյրերէն աւելի շէն շորհ և խելք ունէր, խօսեցաւ այսպէս. «Իսկ ես, քոյրերս, այդչափ քիչ բանով գոհ չեմ ըլլար, ես աւելի բարձրէն թուի կ'ուզեմ, և որովհետև լոկ փախաք կը յայտնենք, ես ալ կը փափաքէի սուլթանին կինն ըլլալ. անոր որդի մը պիտի տայի որուն մաղերը մէկ կողմէն ոսկեղոյն և միւս կողմէն արծաթաղոյն պիտի ըլլային. երբ լար, իր թափած արտուքը մարգարիաներ պիտի ըլլային, և քանի ժպտեր, իր կարմրուն շուրթերը նորածիլ վարդի մը կոկոնի պիտի նմանէր:»

Երեք քոյրերու փափաքը՝ մանաւանդ փոքրին այնչափ եղական երեցան Խասրով շահին որ միաքը դրաւ զանոնք գոհ ընելու, և առանց իր խորհուրդը վէճերին յայտնելու, ապստընց անոր որ առնը լաւ միաքը պահէ որպէս զի հետեւեալ օրը դայ զանոնք առնու և իրեն բերէ:

Մեծ վէճերը սուլթանին այս հրամանը կատարելով հազիւ ժամանակ տուաւ երեք քոյրերուն հազուելու որպէս զի զանոնք սուլթանին ներկայացնէ, և ուրիշ բան չըսաւ անոնց եթէ ոչ Նորին վեհափառութիւնը կ'ուզէ զիրենք տեսնել: Աերջապէս պալատը տարաւ զանոնք, և երբ սուլթանին ներկայացուց, սա վերջինն անոնց հարցուց. «Ըսէք ինձ, արդեօք կը յիշէք թէ երէկ իրկուն ինչ փափաքներ կը յայտնէիք, և ուրախ զուարթ կը խօսէիք, մի պահէք ինչն, կ'ուզեմ զանոնք իմանալ:»

Սուլթանին այս հարցման վրայ երեք քոյրերը շփոթեցան մնացին: Աչքերնին վար առին և կրտսերին երեսը կարմրելուն աւելի փայլեցաւ և ասով սուլթանին սիրտը բողբոջին դրաւ: Արովհետև կը վախնային և կ'ամհային որ չըլլայ թէ սուլթանը վիրաւորած ըլլան իրենց խօսակցութեան մէջ, լուռ ու մունջ կը կենային, և սուլթանն այս բանս հասկնալով ըսաւ անոնց սիրտը հանդարտեցնելու համար.

«Ամենին մի վախնաք, ես ձեզ նեղելու համար այս տեղ բերել չտուի, և որովհետև իմ կամեցս հակառակ ձեզի բրած հարցումս կը վրդովիք, և թէ արդէն գիտեմ թէ ձեր ամէն մէկին փափաքն ինչ է, կ'ուզեմ որ այդ ձեր շփոթութեան վերջ տամ: Գու որ կ'ուզէիք իմ կինս ըլլալ, այսօր իսկ գոհ պիտի ընեմ քեզ, և ձեզ ալ, յարեց նա, առաջին և երկրորդ քոյրը դառնալով, իմ հայագործիս և խոհակերտիս հետ կը կարգեմ:»

Այն ինչ սուլթանն իր կամքը յայտնեց փոքրիկ քոյրը միաներուն օրինակ տալով սուլթանին ոտքն ընկաւ որպէս զի երախտագիտութիւնը յայտնէ: «Տէր իմ, ըսաւ անոր, ես իմ փափաքս կատարով յայտնեցի խօսակցութեան ատեն, ես այդ պատուոյն արժանի չեմ, և ներում կը խնդրեմ համարձակութեանս համար:» Միւս երկու քոյրերն ալ նոյն կերպով թողութիւն խնդրել ուղեցին, բայց սուլթանն անոնց խօսքը կտրելով, «Յէ, չէ, ըսաւ, ուրիշ խօսք չեմ ընդունիր, ձեր ամենուն փափաքն իսկոյն պիտի կատարուի:»

Հարսանեաց հանդէսները մի և նոյն օրը տեղի ունեցան, ինչպէս որ Խոսրով շահն որոշեր էր, թէ և մեծ տարբերութեամբ: Պարսից շահին և կողակցին յարմար շքեղութեամբ և խրախճանօք կատարուեցան կրտսեր քոյրը հարսնիքը, մինչդեռ միւս երկու քոյրը հարսնիքը սուլթանին առաջին հայագործին և խոհարարապետին յարմար վայելչութեամբ կատարուեցան:

Երկու անդրանիկ քոյրերը սաստիկ ցաւ զգային թէ ինչ անհուն տարբերութիւն կար իրենց ամուսնութեան և կրտսերին հարսանեաց մէջ: Աւտի ոչ միայն իրենց վայելած երջանկութենէ գոհ չեղան, թէ և այսպէս փափաքեր էին առանց յուսալու, այլ և անզուսպ նախանձով մը պաշարուեցան, և ասով իրենց ուրախութիւնը թունաւորելէն զատ՝ մեծ աղէտից, ցաւերու և կսկիծներու դուռ մը բացին իրենց կրտսեր քոյրը համար: Առջի օրերն երկու քոյրեր ժամանակ չունեցան իրարու հետ հաղորդակցել և սուլթանին իրենց փոքր քոյր տուած նախաստաւութեան վրայ կարծիք յայտնել, վասն զի հազիւ թէ պատարաստուելու ատեն գտեր էին հարսանեաց արարողութեան համար: Սակայն երբ հասարակաց բաղնիք մը՝ ժամադիր ըլլալով՝ մէկտեղ

դանուեցան, մեծ քոյրը միւսին ըստ :

«Այս ուրեմն, քոյր իմ, ինչ կ'ըսես այն մեր պղտիկ քոյրին, մի՞թէ սուլթանուհի ըլլալու երես ունէր : — Իրաւ որ, պատասխանեց միւս քոյրը, ինչքա չհամարիր այս բանին. չլիտեմ թէ սուլթանն անոր վրայ ինչ զեղեցիկութիւն դատու և անորմէ հրատարակեցաւ : Անկատար աղջիկ մ'է, և արդէն դիտես թէ ինչ զիճակի մէջ գտանք զանի : Մի՞թէ աւելի յարմար չէր ըլլար որ սուլթանը քու վրայ նետէր իր աչքն, և անոր մերկնէն փոքր ինչ մատղաշ հասակէն չխորուէր : Գու անոր կողակիցն ըլլալու արժանի էիր, և իրաւունք էր որ քեզ անորմէ նախագաս համարէր :

— Քոյր իմ, ըստ մեծ քոյրն, իմ վրաս մի խօսիր. ես բան մը չէի ըսեր եթէ սուլթանը քեզ ընտրէր, բայց կը վշտանամ որ մեր պղտիկին պէս ջրդիկ մ'առաւ. վրէժս պիտի լուծեմ անպատճառ և այս բանս քեզի ալ կը վերտարելի : Աւստի կ'ազատեմ որ ինձի միանաս որպէս զի միտքսն դործենք այս պարագայիս մէջ, և իրարու հաղորդենք զանի վիրաւորելու համար պէտք եղած միջոցներն. ես ալ կը խոստանամ քեզի յայտնել ինչ որ նախանձն ինձ կը թեւադրէ անոր երջանկութիւնը քեզն հանելու համար :»

Այս ազգատուի գաւազնութենէ ետքն՝ երկու քոյրեր տակ իրարու հետ տեսնուեցան և ամէն անգամուն ուրիշ բանի վրայ չէին խօսակցել բայց եթէ ինչ հնար կար արդեօք իրենց փոքր քրոջ երջանկութիւնը խանգարելու : Շատ մը հնարքներ իրարու առջարկեցին, բայց դործադրութեան վրայ խորհելով այնպիսի մեծ դժարութիւններ գտան, որ չիրցան համարձակիլ անկից օդու ա քողելու : Մակայն ատեն ատեն անոր պոչելութեան կ'երթային, և դատադարտելի կեղծաորութեամբ, ամէն բարեկամական նշաններ կը յայտնէին անոր որպէս թէ չափազանց ուրախ են այն բարձր կայութեան հասնելուն : Միւս կողմէն սուլթանուհին ալ մեծ յարգանք և պատու կ'ընդունէր զանոր, վասն զի իր մեծութեան վրայ զլուխ չէր բռնէր և առաջուանէն աւելի սրտակցութեամբ զանոր կը սիրէր :

Սուլթանուհին իր ամուսնութենէ քանի մ'ափս կտքը՝ յղի եղաւ : սուլթանը մեծ ուրախութիւն յայտնեց, և այս խնդրութիւնն իր արքունի

նեայ մէջ տարածուէն կտակ՝ պարսից մայրաքաղաքին ամեն թաղերն ալ աղմուկ հանեց : Սուլթանուհին երկու քոյրերն և կան զանի շնորհատրելու, և նոյն միջոցին՝ մանկաբարձ կնիկն մը պէտք ունենալը հասկցնելուն՝ երկու քոյրերը խնդրեցին որ ուրիշ մէկը չկանչէ և թէ իրենք պատրաստ են այս պաշտօնը կատարելու :

Սուլթանուհին ըստ անոնց բարեհիւրութեամբ, «Քոյրերս, եթէ այդ ընտրութիւնը կամե՞ս կատարմ ունենար՝ բնաւ ընդդիմութիւն մը չէի ցուցնէր. սակայն այդ ձեր բարեյօժարութենէն չափազանց շնորհակալ եմ. ես պարտաւոր եմ սուլթանին պատուէրին հնազանդիլ : Մակայն դարձեալ աշխատեցէք որ ձեր ամուսիններն իրենց բարեկամաց միջնորդութեամբ սուլթանէն այս շնորհը խնդրեն, և եթէ սուլթանը խօսք բանայ այս մասին, հաւատի եղիք որ ոչ միայն իմ խնդրութեանս սխախտյանեմ այլև շնորհակալ պիտի ըլլամ անոր ըրած ընտրութեան համար :»

Երկու ամուսիններն իրենց պաշտպան պալատականներն աղաչեցին որ բարեխօս ըլլան այս մասին սուլթանին մօտ՝ և իրենց կանանց փափաքած պատիւը ձեռք ձգելու օգնեն. այս պաշտպաններն ալ այնքան երանգով և ազգեցութեամբ աշխատեցան, որ սուլթանը խօսք տուաւ այս կիտին վրայ խորհելու : Սուլթանն իր խոստումը պահեց, և սուլթանուհին հետ խօսակցելու ատեն անոր ըստ թէ քոյրերն աւելի յարմար կը գատի իր ծննդաբերութեան ժամանակ պէտք եղած հոգը տանելու համար քան թէ ուրիշ օտարական մանկաբարձ կին մը. սակայն այս պաշտօնն անոնց չխնայուցած՝ կը փափաքէր հաւանութիւնն ստանալ : Սուլթանուհին Խոսրով շահին այս մարդավարական ընթացքին վրայ զմայլելով՝ ըստ :

«Ահ հափառ տէր, ձեր հրամանը կատարելու այս մասին պատրաստ էի, բայց քանի որ շնորհ ըրիք ձեր աչքը քոյրերուս վրայ նետել, շնորհակալ եմ ձեր ըրած պատուոյն համար՝ ի նշան իմ սիրոյս, և չեմ ուրանար որ ձեր կողմէն անոնց արուած պաշտօնն աւելի սիրով պիտի ընդունիմ՝ քան թէ օտար կնիկն մը :»

Աւստի Խոսրով շահ՝ սուլթանուհին երկու քոյրերը մանկաբարձ անուանեց. երկուքն ալ պալատն և կան ուրախանալով որ իրենց քրոջ

դէմ նիւթած սոսկալի դաւն ՚ի դործ դնելու առիթ պիտի ունենան : Ա երջապէս ծննդարեւութեան ժամանակը հասաւ , և սուլթանուհին արեւուն պէս զեղանի իշխան մը ծնաւ : Ոչ անոր զեղեցիկութիւնն , ոչ փափիկութիւնը կարող եղան այն երկու քարասիրտ քոյրերուն սիրան ամբքելու : Աւան զի վեր ՚ի վերոյ լաթի երով փաթթեցին նորածին տղան , փոքրիկ զամբիւղի մը մէջ դրին և սուլթանուհոյն սենեկին քովէն անցնող ջրանցքի մը հոսանքը նետեցին , յետոյ սատկած շուն մը ցոյց տուին ըսելով թէ սուլթանուհին շուն մը ծներ է :

Այս անախորժ լուրը սուլթանին խնաց տուին . սուլթանն ալ այնպիսի պայտյթ մ՞ղզաց որ թերեւս աղէտաբեր դառնար սուլթանուհոյն , և թէ իր մեծ վէզերն ամէն յորդորական խօսքերով չհամոզեր զանի որ իրաւունք չէ սուլթանուհին սրատասխանատու ճանչել ընտ թեան այլանդակութեանց :

Սակայն զամբիւղն՝ որուն մէջ նորածին մանկիկը դրուած է , ջրանցքին ջրերէն սուլթանուհոյն սենեակը վարէն շրջապատող պատէն սահելով անցաւ և պալատին սրարտիզին կողմը դնաց : Սուլթանին պարտեղներուն վերակացուն՝ որ տէրութեան ամենէն նշանաւոր պաշտօնաւորներէն մին էր , ըստ զիպուածոյ ջրանցքին երկայնքը կը սլաքաէր : Երբ տեսաւ որ զամբիւղը ջրերուն վրայ կը ծփար , այն կողմերը գտնուող սրարտիզպան մը կանչեց և անոր ըսաւ .

«Շուտ մը գնա սա զամբիւղն առ ինձի բեր որ նայիմ՝ թէ ինչ կայ անոր մէջ :» Պարտիզպանը գնաց ջրանցքին եղերէն ճարտիկութեամբ մ՚իւր բրելով զամբիւղը քաշեց և առնելով վերակացուն բերաւ :

Պարտիզպաց վերակացուն չափազանց զարմացաւ զամբիւղին մէջ տեսնելով մանկիկ մ՞որ լաթեքով մէջ փաթթուած՝ ու թէ և նորածին՝ գեղանի գէմք մ՞ունէր : Քաւական աստեղէ վեր սրարտիզպաց վերակացուն կարդուեր էր , և որչափ որ մեծ փափաք ունէր ժառանգ ունենալու՝ Աստուած անոր իղձը չէր կատարած : Ուստի իր ձեմելիքը կը դադարեցնէ , սրարտիզպանին կը պատուիրէ որ զամբիւղն առնու ետեւէն երթայ , և երբ սրարտիզին մէջէն իր ապարանքը կը մանէ , շխտակ կնիկանը սենեակը կը դիմէ :

«Նինս , կըսէ անոր , զաւակ չունէիրք , ահա ստիկ Աստուած մկ

հաս կը դրկէ մեզ . շուտ մը սանտու մը գաիր և մեր զաւակն պէս զանի ինամէ , վան զի իբր որդիս կը նկատեմ զանի այսօրէն իսկ :» Այնը խնդապին առաւ մանկիկն , և մեծ հաճոյք զգաց որ անոր ինամք պիտի տանի : Պարտիզպաց տեսուչը չուղեց խորունկը փնտուել և հասկնալ թէ այն նորածին տղան ուսից կդար : «Քաջ գիտեմ , կըսէր նա , որ սուլթանուհոյն սենեկին կողմէն եկաւ , բայց այն տեղ անցած դարձածն ինձ չվերաբերիր , և չեմ ուզեր վրդովել պալատին մէջ տիրած խաղաղութիւնը :»

Հետեւեալ տարին՝ սուլթանուհին ուրիշ իշխան մ՞ալ ծնաւ : Ապիրատ քոյրերն ասոր վրայ ալ չլծացին , և նորէն զամբիւղով մը ջրանցքին մէջ նետելով՝ ձայն հանեցին որ թաղուհին կատու մը ծներ է : Քարեբաղդօրէն սրարտիզպաց տեսուչը ջրանցքին մօտ էր , նորէն զամբիւղը հանել տուաւ և կնիկանը տանելով աղաչեց որ մի և նոյն խնամքը տանի և այս նորածին մանկիկին վրայ : Այնը սիրով ընդունեց նորածին տղան և ամուսնոյն պատուէրը կատարելու փութաց ոչ միայն իրեն յատուկ յօժարամտութենէ այլ և անոր խնդրոյն հնազանդելու համար :

Պարսից սուլթանն առաջուանէ աւելի այս երկրորդ ծննդեան վրայ զայրացաւ , և անտարակոյս իր բարկութիւնը պիտի լծափէր սուլթանուհոյն վրայ եթէ վէզերին յորդորները զանի համոզելու չափ ազդու չըլլային :

Ա երջապէս սուլթանուհին երբորդ զաւակ մ՞ալ ծնաւ , և այս ալ ալջիկ մ՞էր . այս անմեղ արարածն ալ իր եղբարցը բաղն ունեցաւ : Երկու քոյրերն՝ որ որոշեր էին իրենց դարչելի խորհուրդէն ետ չկենալ , մինչև որ սուլթանուհին անարդուի , նախատուի և պալատէն վաճառուի , նոյն կերպ անդթութեամբ վարուեցան այս երբորդ զաւակին հետ և ջրանցքը ձգեցին : Պարձեալ սրարտիզպաց տեսուչին զթախրութեամբը մահուանէ ազատեցաւ այս մանկիկն ալ , միւսներուն պէս և անոնց հետ մտաւ և ինամուեցաւ :

Այս անօրէնութեան երկու քոյրերը սուտ ու խաբէութիւն աւելցուցին դարձեալ , և փայտի մը կտոր ցոյց տուին հաւատեցնելով որ սուլթանուհին այս անգամ ալ հրէշ ծներ է :

Խոսքով շահն իր զայրոյթը չկրցաւ զսպել երբ այս կարգէ դուրս

ծնունդն իմացաւ և գոչեց . «Ի՞նչ, ուրեմն այս անարժան կինը հրէշ ներձով պիտի լինցնէ իմ պալատս եթէ աւելի ևս ապրի . չէ, այս բանիս չպիտի հանդուրժեմ, նոյն ինքն ալ հրէշ մ'է, կուզեմ զանի սատակել :» Այս մահուան վճիռն արձակեց, և իր մեծ վէզիբին հրամայեց որ զայն 'ի գործ դնէ :

Մեծ վէզիբն ու ներկայ գտնուող պալատականները պաղատեցին սուլթանն որ այն վճիռն ետ առնու, և վէզիբը բերանը բանալով ըսաւ .

«Վեհափառ տէր, ներեցէք ինձ ըսելու որ մահուան դատարարտող օրէնքը հաստատուած են միայն ոճիրները պատժելու : Սուլթանուհոյն երեք ծննդաբերութիւններն որ լիովին անակնկալ էին, ոճիրներ չեն : Ի՞նչ կերպով կարելի է հաստատել որ կամովին ըրած է զանոնք . անհամար կիներ ըրած են և ամէն օր մի և նոյն բանը կ'ընեն . ցաւակցութեան արժանի են, այլ պատժելի չեն : Ձեր վեհափառութիւնը կրնայ անորով հեռանալ . բայց զանի ազատ թողուլ : Իր կենաց ծնացած օրերը ցաւով պիտի անցնէ ձեր շնորհքը կորուսելուն, և այս ցաւն իրեն մեծ տանջանք մը պիտի ըլլայ :»

Պարսից իշխանն ինքզինքին եկաւ, և որովհետեւ նկատեց որ անիրաւութիւն է սուլթանուհին մահուան դատարարտել, «Թող ապրի, ըսաւ, քանի որ ըսածք իրաւացի է : Անոր կենանքը կը բաշխեմ, բայց մէկ պայմանաւ, և այս պայմանն ալ ամէն ժամ մահը փափաքել պիտի տայ անոր : Քլլաւոր մը կ'իջիմ զբան մտա փայտաշէն սենեակ մը թող շինեն՝ պատուհանով մ'որ միշտ բաց պիտի մնայ, այն սեղ հաստ ու կոշտ հագուստով պէտք է փակել զանի, և ամէն անդամ որ մահմ տական մը մը կ'իջիմ մանէ աղօթելու անոր երեսին լքնէ : Եթէ երբէք մէկն այս մասին որարտազանց գտնուի, կ'ուզեմ որ նոյն պատիժին դատարարուի և այն, և որպէս զի այս հրամանն տեղն երթայ, կը հրամայեմ՝ քեզ, վէզիբ, վերակացուներ դնել որ զիտեն :»

Այս վերջին վճիռն այնպէս մարտասանեց սուլթանն որ վէզիբը չկրցաւ բերանը բանալ : Երկու նախանձուտ քոյրերը գոհութեամբ տեսան անոր գործադրութիւնն : Այն խուլը շինուեցաւ, և սուլթանուհին որ իրօք արդահատութեան արժանի էր, անկողնէն ելնելուն պէս

անոր մէջ փակեցին, ինչպէս որ սուլթանը պատուիրեր էր, և բոլոր ժողովրդեան ստակ նշառակի եղաւ . սակայն այս պատիժին արժանի չէր սուլթանուհին, թէ և զայն այնպիսի հաստատամտութեամբ կրեց որ ռամկէն աւելի լուրջ մտք ամէն բան դատող մարդիկ հիացան անոր անոր այս ընթացքին վրայ :

Միւս կողմէն արքունի պարտէզներուն տեսուչն և իր կինն՝ իրբ հայր և մայր՝ գորովանօք մեծցուցին և կը թեցին երկու իշխանն ու իշխանուհին . և իրենց այս գորով կ'աւելնար՝ քանի տարիքնին կ'առնուին որպէս զիրենքն՝ իրենց մեծութեան նշաններով որ միօրինակ կը տեսնուէին իշխանուհոյն և իշխանին վրայ, մանաւանդ իշխանուհոյն դեղահրաշ կերպարանէն, որ օր օրի կը դարդանար, իրենց հլութեամբն, իրենց մեծ բաներու համար ունեցած իղձով, և այնպիսի ընթացքով մ'որ միտակ իշխաններու և իշխանուհիներու կը վայելէր : Այս երկու իշխաններն իրենց ծննդեան կարողով զանազանելու համար, առաջինը Պահման անուանեցին և երկրորդը Փէրվիզ, և ասոնք հին Պարսից թագաւորներու անուններ էին : Իշխանուհոյն անունը Փարսիզատէ դրին, և այս անունն ալ պետութեան շատ մ'իշխանուհիներ և թագուհիներ կրելու էին :

Այն ինչ երկու իշխանները չափահաս եղան, պարտիզաց տեսուչն անոնց դասատու մը բռնեց որպէս զի գրել կարողալ սովորեցնէ, և իշխանուհին ալ որ անոնց դասերուն ներկայ կը գտնուէր՝ այնպիսի մեծ փափաք մը ցցոց կարողալու և գրելու համար, թէ և եղբայրներէն փոքր էր, որ տեսուչն անոր այս արամադրութեան վրայ զմայլելով մի և նոյն դասատուն անոր տուաւ : Բարի նախանձէ շարժելով՝ քիչ ատենուան մէջ իր վառվառն և սուր խելքովը կարող եղաւ իր եղբայրց պէս յառաջ երթալ :

Այն ատենէն ետքն՝ ելրայրներն և քոյր մի և նոյն դասատունն ունեցան դեղարուեստից համար . աշխարհադրութեան, բանաստեղծութեան, պատմութեան և դիտութեանց, նոյն խել գաղանի դիտութեանց համար . և որովհետեւ դժուարութիւն չէին քաշեր սովորելու, այնպէս հրաշալի կերպով յառաջ դացին և քիչ ատենէն խոստովանեցան բացէ 'ի բաց որ իրենցմէ խել պիտի անցնին եթէ աւելի շարու-

նակեն : Հանդստի ժամանակ , իշխանուհին երաժշտութիւն , երգ և զանազան նուագարաններ նուագել սովորեցաւ : Երբ Եղբայրները ձի հեծնել սովորեցան , չուզեց որ անոնք այս առաւելութիւնն ունենան իր վրայ . անոնց հետ կրթութիւնները բաւ , այնպէս որ նոյն ճարտարութեամբ ձի հեծնել , աղեղ լարել , նետ նետել սովորեցաւ , և շատ անգամ ձիարշաւի մէջ անոնցմէ կ'անցնէր :

Պարտէզներու վերատեսուչն անշափս կ'ուրախանար տեսնելով որ իր որդեգիրները մարմնով և սրտով կատարելագործուած են , և իր ակնկալութենէ վեր՝ անոնց դաստիարակութեան համար բրած ծախուց փոխարէնը ստացած է : Ասով չչատանալով աւելի մեծ ծախս մ'ըրաւ անոնց սիրոյն համար : Մինչև այն ատեն պալատին մէջ ունեցած բնակարանով զո՛հ էր և զիւրը տուն չունէր . քաղքէն քիչ մը հետու զիւղատուն մը գնեց , որուն կից շատ հողեր ունէր մշակելի , նոյնպէս մարգեր և անտառներ . և որովհետև տունն իրեն բաւական աղոր և յարմար չգտաւ , զայն փլեց և ստակ չինսայեց շրջակայ տուներէն աւելի փառաւոր ընելու : Ամէն օր անձամբ կ'երթար որպէս զի տան շինութեան համար գործածած աշխատարները փութայնէ , և երբ իրեն յարմար տեսնակ մ'ունեցաւ , գնաց շատ օրեր այն տեղ անցնելու , որչափ որ իր պաշտօնը կը ներէր : Աերջպէս իր հոգատարութեամբ տունը լմնցաւ , և երբոր զայն կը զարդարէին շուտ շուտ՝ չէնքին փառաւորութեան յարմար կարասեօք , նոյնպէս պարտէզն ալ շտիկ տուաւ : Պարկաստանի ազնուականաց շինել տուած պարտէզներուն սովորական ձևով : Նոյնպէս անոր մօտ ծառաստան մը շինել տուաւ , պատով շրջապատել տուաւ , անոր մէջ վայրի կենդանիներ դրաւ որպէս զի իշխաններն ու իշխանուհին ուղած ժամանակնին որսորդութիւն ընեն և դբօնուն :

Երբ զիւղատունը բոլորովին լմնցաւ և բնակելու վիճակի մէջ եղաւ , պարտէզներու վերատեսուչը գնաց սովթանին ոտքն ընկաւ , իր երկար պաշտօնատարութիւնն անոր յայտնեց , նոյնպէս իր ծերութեան վիճակն և աղաչեց որ շնորհ ընէ իր հրաժարականն ընդունելու : Սուրբ թանն անոր շնորհեց խնդիրն այնչափ յօժարութեամբ որչափ որ անոր երկարատե ծառայութենէ զո՛հ էր , թէ իր հօրն իշխանութեան ժա-

մանակէն և թէ իր դահակալութեան օրովը . յետոյ հարցուց անոր թէ ի՞նչ վարձք կը պահանջէ :

« Աեհափառ տէր , պատասխանեց պարտէզներու վերատեսուչը , ձեր և ձեր հօրը բարերարութիւնները մեծ են ինձի համար , այնպէս որ փափաքելու ուրիշ բան մը չունիմ այլ միայն ձեր պաշտպանութեան և շնորհաց ներքև մնունիլ : » Յետոյ հրաժարական բարև տուաւ Խոսրով շահին և Պահման ու Փէրվիզ իշխանաց , նոյնպէս Բարիդատէ իշխանուհւոյն հետ զիւրի նորաչէն տունը գնաց : Իսկ իր կինն արդէն քանի մը տարի առաջ մնուած էր : Հաղիւ թէ իշխանազուններուն հետ ճինգ վեց ամիս անցուց որ յանկարծ մնուաւ , և ժամանակ չունեցաւ անոնց ծննդեան վրայ խօսք մ'ըսելու . թէ և ճշմարտութիւնն անոնց յայտնելու որոշեր էր , որպէս զի մինչև այն ատեն իրենց վարած կեանքը շարունակելու ստիպուին , իրենց վիճակին և կացութեան և իրենց առած դաստիարակութեան համեմատ :

Պահման և Փէրվիզ իշխանները՝ նոյնպէս Բարիդատէ իշխանուհին՝ որ վերատեսուչէն զատ հայր մը չէին ճանչէր , անոր մահուան վրայ լացին և որդիական սիրոյ թելադրած երախտագիտութեամբ անոր թաղման հանգէնն ու պարտաօրութիւնները կատարեցին : Աերատեսուչին թողած մեծ կալուածներէն զո՛հ՝ նոյն միաբանութեամբ մէկտեղ ապրեցան , և իշխանները բնաւ փառասիրութիւն մը չունէին արքունիքն երևելու բարձր պատեոյ և պաշտօններու համնելու մտօք , թէ և զիւրին էր իրենց զանոնք ստանալու :

Օր մ'որ երկու իշխաններն որսի գացեր էին և Փարիդատէ իշխանուհին տունը մնացեր էր , պառաւ բարեպաշտուհի մը տան դուռն երկաւ և աղաչեց որ ներեն իրեն ներս մննելու որպէս զի աղօթքն ընէ , ժամանակն ըլլալուն : Ապաստարները զացին իշխանուհիէն հրաման խնդրեցին : իշխանուհին հրամայեց որ այն պառաւ կինը ներս առնուն և տան կից շինուած աղօթատեղին տանին : Նոյնպէս պատուիրեց որ պառաւն՝ աղօթքն աւարտելէն ետքը՝ պալատն ու պարտէզը պտղացընեն և ապա իր առջևը բերեն :

Բարեպաշտուհի կինը ներս մտաւ , աղօթքն ըրաւ և յետոյ երկու կանայք անոր դուռն ելնելը տեսնելով՝ հրախրեցին որ իրենց միանայ

որպէս զի տունն ու պարտէզը պարտացրնեն : Երբ պատար յօժարութիւն զցոյց անոնց հետեւելու՝ երկու կիները զանի առին և սենեկէ տնեակ տարին . սյառաւն ալ ամէն բան ուշի ուշով գիտեց , այնպէս որ կը ցոյցնէր թէ կա՛հ կարասի և զարդարանքի մասին բանիբուն էր : Նոյնպէս պարտէզը տարին գանի , որուն յատակադիծն այնչափ նորաձե և բնաիր դասու որ անոր վրայ զմայլեցաւ , ըսելով որ զայն կարգադրողն իր արհեստին մէջ շատ յաջողակ մէկն եղած պիտի ըլլայ : Ա. երջապէս իշխանուհւոյն ներկայացաւ , որ մեծ սրահի մը մէջ անոր կ'սպասէր . այս սրահը գեղեցիկութեան , մաքրութեան և ճոխութեան կողմէ միւս բոլոր տեսած սենեակներէն գերազանց էր :

Այն ինչ իշխանուհին տեսաւ բարեպաշտուհի պատուին ներս մաննելն որ անոր ըսաւ . « Բարի մայրս , մօտ եկուր և իմ քովս նստիր : Չափազանց դո՛հ կ'մ'որ առ ի՞նչ ունիմ՝ քեզի պէս անձի մը բարի օրինակէն և խօսակցութենէն օգուտ քաղելու , քանի որ ինքզինքը Աստուծոյ նուիրելով ուղիղ ճամբան բռնեցիր և ամէն մարդ այդ օրինակիդ հետեւիլ պէտք է եթէ խոհեմ է : »

Բարեպաշտ կիներ՝ փոխանակ բազմոցին վրայ ելնելու , ուզեց անոր ծայրը նստիլ , բայց իշխանուհին չթողոյց . իր տեղէն ելաւ , և յառաջ անցնելով՝ անոր ձեռքէն բռնեց և իր քովը նստելու տախտիկ պատու տեղը :

« Տիկին , ըսաւ պատուսն , այսչափ պատուոյ արժանի չեմ , և քու հրամանիդ հնազանդելու համար միայն կ'ընդունիմ քանի որ տան տիրուհին ես : » Երբ պատար նստաւ , խօսակցութիւնը չսկսած իշխանուհւոյն կիներէն մէկն՝ անոնց առջև ցած սեղան մը դրաւ , որ գաղտակրէ , մարդարտէ և եպետտէ գրուադեալ էր . անոր վրայ յախճապակէ անօթ մը կար կարկանդակով լեցուն , նոյնպէս եղանակին այլ և այլ պտուղներով :

Իշխանուհին կարկանդակ մ'առաւ և բարեպաշտ կնիկան ներկայեցելով , « Իմ բարի մայրս , ըսաւ , առ , և հաւանած պատուներդ ընտրէ կեր . սնունդի կարօտ ես , քանի որ երկար ճամբայ մ'ըրիր հօս դալու համար :

— Տիկին , ըսաւ բարեպաշտ տիկինն , ես սցսպիսի փափուկ բաներ

ուտելու վարժ չեմ , և եթէ ուտեմ , մի միայն առատաձեռն ձեռքովդ Աստուծոյ տուածը չմերժելու համար է : »

Մինչդեռ բարեպաշտ պատար կ'ուտէր , իշխանուհին՝ որ քիչ մը բան կերաւ անոր ակորձակ տալու համար , այլ և այլ հարցումներ ըրաւ անոր գործածած բարեպաշտական կրթութեան , անոր կենցաղավարութեան վրայ , և պատուսն ալ համեստութեամբ կը պատասխանէր : Ա. երջապէս խօսքը խօսք բանալուն՝ իշխանուհին հարցուց թէ ինչպէս կը գտնէ այն տունն և թէ արդեօք իր ճաշակին յարմար է :

« Տիկին , ըսաւ բարեպաշտ պատար , շատ բժականդ ըլլալ պէտք է մարդ տունդ չհասնելու համար . շատ աղոր , գեղածիծաղ , վայելուչ շքովութեամբ զարդարուած է , և զարդերն ալ խիստ կանոնաւոր կերպով դրուած են : Իսկ տան դիրքին գալով՝ ակորձելի վայր մը կը գտնուի , և անոր մօտ գտնուած պարտիզին պէս զուարճալի պարտէզ քիչ կայ : Սակայն եթէ կը ներես որ ամէն բան բացէ 'ի բաց ըսեմ , պիտի համարձակիմ յայտնելու , տիկին , որ տունդ անհաման տուն մը պիտի ըլլար , եթէ անոր երեք պակաս բաները գտնուէին :

— Բարեմիտ կին , վրայ բերաւ Փարիզաւտէ իշխանուհին , ինչ են ըսած երեք բաներդ . ըսէ անոնք , յանուն Աստուծոյ կ'աղաչեմ բացատրէ , և եթէ հնար է ձեռք ձգել զանոնք բան մը չպիտի խնայեմ :

— Տիկին , վրայ բերաւ բարեպաշտուհին , այս ըսած երեք բաներէս առաջինն է խօսող թռչունն . եղական թռչուն մ'է որ պիւլպիւլհէզար կը կոչուի , և ասիլէ գատ բոլոր մօտակայ երգող թռչունն են իրեն քովը բերելու յատկութիւնն ունի , որպէս զի իրեն երգակցին : Երկրորդն է երգող ծառն , որուն տերեւները մէյմէկ բերաններ են և զանազան ձայներէ անընդհատ դաշնակաւոր խմբերդ մը կը յօրինեն : Ա. երջապէս երրորդ բանն է գեղին ջուրն , ոսկեոյն , որմէ եթէ կաթիլ մը միայն յատուկ առազանի մը մէջ թափուի , կ'սկսի բղխիլ , այնպէս որ նախ առազանը կը լեցնէ և ապա կը բարձրանայ մէջ տեղէն սիւնակի պէս որ շարունակ վեր կ'երնէ և առազանին մէջ կը թափի աւսոնց ջուրը յորդելու :

— Ա՛հ , իմ բարի մայրս , գոչեց իշխանուհին , որչափ շնորհակալ եմ քեզ որ սցսպիսի բաներու վրայ տեղեկութիւն կտաս ինձի . հիմա-

լի են , և բնաւ լսած չէի որ աշխարհիս մէջ այդպիսի հետաքրքրական և զարմանալի բաներ գտնուին : Քայց հաւաստի ըլլալով որ անոնց տեղը զիտես , կ'աղաչեմ քեզ յայտնել թէ ո՞ր են :

Իշխանուհին զո՛հ ընելու համար պառաւ կի՛նն ըսաւ . « Տիկին , այդ բարեւէր հիւրասիրութեանդ անարժան պիտի ըլլայի եթէ հետաքրքրութիւնդ զո՛հ չընէի փափաքդ կատարելով . ուստի պատիւ ունիմ ձեզ յայտնելու որ ակնարկած երեք բաներս մի և նոյն տեղն , այս տէրութեան Հնդկաստանի կողմի տահմանները կը գտնուին : Այն տեղ տանող ճամբան տունէդ կ'անցնի : Ա՛յ որ այն տեղ զրկես քսան օր շարունակ թող այն ճամբան բռնէ քալէ , և քսաներորդ օրը թող հարցընէ թէ ո՞ր է խօսող թռչունն , երդող ծառն ու դեղին ջուրն : Իր առջևն եհնողն անոր պիտի ցուցնէ զանոնք : » Այս խօսքերն ըսելով պառաւն ոտք ելաւ և մնաս բարև ըսելէն ետև՝ զնաց և իր ճամբան շարունակեց :

Փարիզաւէ իշխանուհին այնչափ զբաղած էր մտովին բարեպաշտ պառաւին ըսածները պահելու որ անոր մեկնիչն այն ատեն իմացաւ երբ նորանոր հարցումներ ընելով՝ կ'ուզէր աւելի բացատրութիւն ինզրել : Իրօք այնպէս կը թուէր իրեն որ պառաւին բերնէն իմացածը բաւական չէր այն երկար և անօգուտ ուղևորութեան ձեռնարկելու , սակայն կանչելու համար անոր ետեէն մարդ զրկել չուզեց , այլ ամէն լսածնեքը յիշելու համար բոլոր ճիզը թափեց : Երբ տեսաւ որ ամէն բան միտքն է , մեծ հաճոյք զղաց մտածելով որ թերևս այն հրաշալի բաները ձեռք ձգելու կը յաջողի . բայց մեծ դժուարութիւն մը տեսնելուն կը վախճար նաև որ չյաջողիք և ասոր համար մեծ մտատանջութեան մէջ կը գտնուէր :

Փարիզաւէ իշխանուհին այս մտմտութիւնը տաղնապէր , երբ իր եղբայրներն որսէն դարձան . սրահը մտան , և փոխանակ՝ ըստ սովորականին՝ զանի ուրախ զուարթ գտնելու , տեսան որ անխօս , արտում էր և ոչ իսկ զուարթ վեր կը վերցնէր յայտնելու համար որ իրենց ներկայ ըլլալը կը գիտէ :

Այն ատեն Պահման իշխանն ըսաւ . « Քոյր իմ , ո՞ր են այն ուրախութիւնդ և զուարթութիւնդ որ քեզնէ ցարդ անբաժանելի էին :

Միթէ անհանդիսա ես , դժբաղդութիւն մը հասան քեզ . միթէ արտմութեանդ պատճառ մը տուող եղանակ : Ըսէ մեզի թէ ի՛նչ է , որպէս զի մենք ալ մասնակից գտնուինք վշտացդ , կամ վրէժ լուծենք , կամ դարման մը բերենք , եթէ երբէք մէկը յանդգնեցաւ քեզի պէս անձ մը թշնամանելու , քանի որ արժանի ես ամէն տեսակ յարգանաց : »

Փարիզաւէ իշխանուհին քանի մը վայրկեան լուռ ու մունջ կեցաւ անշարժ . վերջապէս աչքերը վեր վերցուց , իր եղբարց նայելով և խիոյն վար առաւ , ըսելով թէ բան մը չունի :

« Քոյր իմ , ըսաւ Պահման իշխանը , ճշմարտութիւնը մեզնէ կը պահես . անշուշտ բան մ'ունիս , և թերևս ծանր բան մը : Արարելի բան չէ որ մեր կարճատև բացակայութեան ժամանակ , այդպիսի անակնկալ և մեծ փոփոխութիւն մը պատճառ չունենայ . չես զարմանար ուրեմն թէ այդ պատասխանը զո՛հացուցիչ չենք համարիր : Աւստի զործը մի պահէր մեզնէ , միայն թէ միտքդ գրած չըլլաս մեր մէջ մանկութենէ վեր տիրած սէրն ու միարանութիւնն առ ոչ ինչ գրել և անկից հրաժարել : »

Իշխանուհին որ բնաւ չէր ուզեր իր եղբարց հետ աւուրիլ , փութաց անոնց այս կարծիքը փարատել : « Երբոր ըսի ձեզ , վրայ բերաւ նա , որ իմ վիշտս բան մը չէ , ձեր նկատմամբ ըսի և չէ թէ իմ , քանի որ իմ աչքիս քիչ մը կարևորութիւն ունի , և որովհետև ձեր բարեկամութեան իրաւամբ կ'ստիպէք իս , ահա եղելութիւնը ձեզի պիտի պատմեմ : Գուք կարծեցիք , ես ալ ձեզի պէս կարծեր էի , յարեց նա , որ այս ստուս՝ զոր մեր հանգուցեալ հայրը շինել տուաւ՝ ամէն բանով կատարեալ էր և բան մը պակաս չունէր , սակայն այսօր իմացայ որ երեք բան պակաս ունի , որոնք եթէ ձեռք ձգուին աշխարհիս ամէն զիւղատուններէն զերազանցը պիտի ըլլայ : Այս երեք բաներն են , խօսող թռչունն , երդող ծառն ու դեղին ջուրն ոսկեգոյն : »

Այս բաներուն զերազանցութիւնը յայտնելէն ետև՝ « Այս զխոտողութիւնը բարեպաշտ պառաւ կին մ'ըրաւ , շարունակեց նա , և յայտնեց թէ այն հաղուաղիւտ բաներն ո՞ր կը գտնուին և ի՛նչ կերպով ձեռք կրնան ձգուիլ : Արարի է կարծէք թէ ասոնք կարևոր բաներ չեն և մեր տան զարդ չեն կրնար բերել , քանի որ ստանց անոնց միշտ գեղե-

ցիկ տուն մը կրնայ սեպուիլ : Գուք ինչ որ կ'ուզէք մտածեցէք . սակայն ես իմ մտնս կը պնդեմ թէ խիստ կարևոր են և մինչև որ չտաննամ դոճ չպիտի ըլլամ : Աւտի թէ ինձ համամիտ գտնուիք և թէ ոչ, կ'աղաչեմ միայն ինձ օգնել ձեր խորհրդով և մէկը գտնել որ այս գիւտն ընելու ձեռնարկէ :

— Քոյր իմ, պատասխանեց Պահման իշխանը, քեզի հաճելի երեւցած բանը մեզի ալ հաճելի է : Բաւական է մեզ այն հաղորդութեան բաներու համար փափաքդ իմանալ, որպէս զի մենք ալ անոր մասնակից գտնուինք . բայց այս պարագայիս մէջ ոչ միայն քեզ դոճ ընելու, այլ մեր հետաքրքրութիւնը շատայնելու համար մասնաւոր փափաք մը կ'ըզգանք . վասն զի հաւատարի եմ որ եղբայրս ալ նոյն զգացումը կը տածէ, և պարտաւոր ենք ամէն միջոց 'ի գործ դնել այս յաղթանակը տանելու, ինչպէս որ կը փափաքէս . գործին կարևորութիւնն ու եզակահումութիւնն արժանի են այս անուան : Ես գործը վրաս կ'առնում : Միայն ըսէ ինձ թէ նոր տեղ է, և որ ձառքան բռնել պէտք է . ճամբորդութիւնս մինչև վաղը կրնամ միայն ուշացնել :

— Եղբայր իմ, վրայ բերաւ Փէրվիզ իշխանը, դու որ տան մեծն ու պահապանն ես, դու պէտք չէ որ տունէն հեռանաս այնպիսի երկար ուղևորութեան մը համար, և կ'աղաչեմ քոյրս որ հաճի ինձ միանալ յորդորելու համար քեզ որ խորհրդէդ ես կասիս և յարմար գտնես որ ես ընեմ այս ճամբորդութիւնը : Քեզի չտի եռանդով պիտի ձեռնարկեմ գործին և վայելչութիւնն այս կը պահանջէ :

« Եղբայր իմ, պատասխանեց Պահման իշխանը, քաջ գիտեմ որ բարեյօժար ես և ինձի չտի լաւ կրնաս կատարել ուղևորութիւնը, սակայն արդէն որոշեալ բան մ'է, ես կ'ուզեմ ճամբայ ելնել, և պիտի ելնեմ . դու մեր քրոջ հետ պիտի մնաս, և աւելորդ է զանի քու ինամացդ յանձնել : » Բոլոր օրը պատրաստութեանց զբաղեցաւ Պահման, և իր քրոջէն առաւ պատու կնոջ հաղորդած բոլոր հրահանգներն որպէս զի ճամբան չմոլորի :

Հետևեալ օրը կանուխ Պահման իշխանը ձի հեծաւ, և Փէրվիզ իշխանն և Պարիզատէ իշխանուհին զանի համբուրեցին և յաջող ճամբորդութիւն մնդթեցին : Բայց հրաժարական բարեկեր տալու, տտեն

իշխանուհին բան մը յիշեց որուն միտքն եկած չէր :

« Աղէկ միտքս ընկաւ, եղբայր իմ, բաւ անոր, չմտածեցի թէ մարդ ճամբորդութեան ժամանակ ինչ բաներու կրնայ հանդիպիլ . սի գիտէ, կարելի է նորէն չենք տեսնուիր : Աղաչեմ, վար իջիր ձիէն և ուղևորութիւնդ մէկզի ձգէ : աւելի աղէկ ունիմ գրկուիլ խօսող թռչունէն, երդող ծառէն և զեղին ջրէն, քան թէ քեզ բոլորովին կորուսելու վտանգն աչք առնուլ :

— Քոյր իմ, պատասխանեց Պահման իշխանը Պարիզատէի յանկարծական երկիւղին վրայ ժպտելով, իմ որոշումն սրտումէ, և եթէ որոշած ալ չըլլայի դարձեալ այս խորհուրդն 'ի գործ պիտի դնէի . ուստի թող որ զայն կատարեմ : Ահարկեմ գժբողոքութիւններդ մինակ գժբողոքներուն կը պատահին . իրաւ է որ իմ գլուխս ալ փորձանք կրնայ գալ, բայց կարելի է որ երջանիկներուն մէկն ըլլամ, որոնք գժբողոքներէն բազմութիւ են : Բայց որովհետև պարագաներն անստոյգ են, և թմբեւ ձեռնարկութեանն ժամանակ կորստիմ բան մը միայն կրնամ ընել, այսինքն սև դանակ մը ձգել քեզի : »

Այս ըսելով Պահման իշխանը գանակ մը հանց և պատեանով իշխանուհեոյն յանձնելով անոր բաւ : « Աս այս գանակն և տտեն տտեն շնորհ ըրէ դայն պատեանէն քաշելու, որչափ որ մարտը գտնես, ինչպէս որ է հիմակ, զիտցիր որ կենդանի եմ, բայց եթէ անոր վրայ աւրին տեսնես, այն ատեն հաւատարի եղիր որ մեռած եմ և ինձի համար աղօթէ : »

Պարիզատէ իշխանուհին չկրցաւ Պահման իշխանը համոզել, և այսպէս մերջին անգամ իրարմէ հրածելաւ տալէն հաւա աղևոր ձի մը հեծաւ, սպառազէն ու կազմ : Յետոյ ճամբայ ընկաւ, և առանց աջ ու ահեակ շրջելու, շարունակեց Պարսկաստանի մէջէն անցնելով, և իր ուղևորութեան քաններորդ օրը, ճամբուն եզրը նողկալի անաբով ձերուսի մը տեսաւ, որ ծառի մը ներքև նստեր էր, հիւղէ մը քիչ մը հեռու, և այս հիւղն ալ զինքը դէշօղէն պահպանելու կը ծառայէր :

Իր ձիւնի պէս ունքերը, նոյնպէս մազերը, պիտի ու մօրտալ մինչև քթին ծայրը կը հասնէին . պիտերը զոցեր էին բերանն, և մօրուսին հետ մազերը մինչև ոտքը կ'իջնային : Իր ոտքի և ձեռքի ըզուրդները

չափազանց երկար էին, և տեսակ մը տափակ և լայն գլխանոց մը դրեր էր, որ հովանոցի կերպով գլուխը կը ծածկէր. իսկ իր բոլոր հագուստը խոփր մ'էր որով փաթթուեր էր:

Այս բարի ծերունին տէրվիշ մ'էր, որ երկար առնէ վեր աշխարհէ քաշուած կ'ապրէր՝ մի միայն Աստուծոյ նուիրելով ինքզինքն, այնպէս որ մեր նկարագրած վիճակին մէջ ընկեր էր: Պահման իշխանն՝ որ առաւօտէն վեր չորս դին կը նայէր որ արդեօք մէկը կը տեսնէ որպէս զի երթալիք տեղին վրայ տեղեկութիւն ստանայ, տէրվիշին մօտ գալուն կանկ առաւ, իբր առաջին տեսած մարդն, և ձիէն վար իջաւ որպէս զի բարեպաշտ պառաւին ըսածին համեմատ վարուի: Իր ձիուն սանձէն բռնելով մինչև տէրվիշին քով դնաց, և բարև տալով, «Բարի հայր, ըսաւ, Աստուած երկար օրեր տայ քեզ և փափաքներդ կատարէ:»

Տէրվիշն իշխանին բարևն առաւ, և քանի մը խօսք ըսաւ այնպէս որմէ բան մը չհասկցաւ: Պահման իշխանը գիտելով որ տէրվիշին պիտեբը բերանը դոցելուն, անոր ըսածները չիմանար, և չէր ուզեր հեռանալ մինչև որ պէտք եղած տեղեկութիւնն անորմէ չստանայ, իր քովը դանտած մկրտան առաւ և ձին ծառի մը ձիւղին կապելէն ետև՝ անոր ըսաւ. «Բարի տէրվիշ, քեզ խօսելիք ունիմ, բայց պիտեբը չեն թողուր որ ըսածդ հասկնամ. արդեօք չնորհ կ'ընես որ զանոք շտկեմ՝ ունքերուդ հետ, որոնք քեզ կ'այլակերպեն և որով արջի կը նմանիս քան մարդու: Տէրվիշն իշխանին առաջարկութիւնը չմերժեց, թողուց որ ուզածն ընէ, և որովհետև իշխանը՝ գործը ըմբոսնելուն՝ տեսաւ որ տէրվիշին դէմքը թարմ է և երևցածին չափ տարօք չէ, անոր ըսաւ. «Բարի տէրվիշ, եթէ հայրի մ'ունենայի, քեզ պիտի ցոյց տայի թէ որչափ հիմակ առոյդ կ'երևիս: Ահա հիմակ մարդ ես, մինչդեռ առաջ կարելի չէր հասկնալ թէ ինչ էիր:»

Պահման իշխանին դժուարքը տէրվիշին ժպիտը զրդեցին և քանի մը քաղաքավարական խօսքեր ընել տուին: «Տէր իմ, ըսաւ, ով որ ես, մեծապէս շնորհակալ եմ ինձ մատուցած ծառայութեանդ համար. պատրաստ եմ իմ երախտագիտութիւնս քեզ յայտնելու և ձեռքէս եկածը քեզի համար ընելու: Չիէդ վար իջար, սնշուշտ բանի մը

պէտք ունիս: Ինչդեմ ըսէ ինձ, պիտի ջանամ քեզ գոհ ընել ըստ կարի:»

— Բարի տէրվիշ, վրայ բերաւ Պահման իշխանն, ես հեռու տեղէ կգամ, և խօսող թուունն, երդող ծառն ու դեղին ջուրը կը փնտնեմ: Գիտեմ որ այս երեք բաներն այս կողմերը տեղ մը կը գտնուին, սակայն բուն տեղն ուր է չգիտեմ: Եթէ գիտես, կ'աղաչեմ ցցուր ինձ ձամբան, որպէս զի չմոռորիմ և ձեռնարկած այս երկար ուղեորութեանս պտուղը չկորուսեմ:»

Քանի իշխանն այս խօսքը կ'ըսէր՝ գիտեց որ տէրվիշը գոյնը կը փոխէր, աչքերը վար կը նայէր և ծանրադժուխ կը մնար, այնպէս որ փոխանակ պատասխան տալու ձայն չէր հաներ: «Բարի հայր, յարեց նա, յուսամ որ ըսածս լսեցիր: Ըսէ ինձ թէ արդեօք իմ խնդրածս գիտես, և եթէ չգիտես՝ խօսէ որ ժամանակ չանցնելով ուրիշ տեղ տեղեկութիւն ստանամ:»

Աերջապէս տէրվիշը ըտեթիւնը խղեց և Պահման իշխանին ըսաւ. «Հարցուցած ձամբադ ինձ ծանօթ է, բայց քեզ տեսնելուս այնպիսի բարեկամութեամբ կապուեցայ քեզի հետ որ ինձ ըրած ծառայութեանէդ աւելի զօրաւոր դարձաւ և չգիտեմ թէ արդեօք խնդիրդ կատարել պէտք եմ թէ ոչ:»

— Ինչ պատճառ ունիս ընելու, վրայ բերաւ իշխանն, և իս գոհ ընելու ինչ դժուարութիւն կայ:

— Ահա ըսեմ քեզ, պատասխանեց տէրվիշը. քու կարծածէդ աւելի մեծ է այն վտանգն որու կը դիմես: Ուրիշ շատ իշխաններ որ քեզնէ աւելի յանդուգն ու արիասիրտ էին, ասկից անցան և մի և նոյն հարցումն ըրին ինձ: Ամէն ջանք ի դործ դրի որ ետ դառնալու յորդորեմ զանոք, բայց խօսքիս հաւատ չընծայեցին. ահամայ ցոյց տուի անոնց ձամբան՝ անոնց թախանձազին աղաչանոց զիջանելով, և կրնամ հաւատտել որ ամէնքն ալ անյաջող ելան և անոնցմէ և ոչ մէկուն վերադարձը տեսայ: Եթէ կեանքդ կը սիրես և իմ խորհուրդս մտիկ ընել կ'ուզես, աւելի յառաջ չես երթար և նորէն տեղդ կը դառնաս:»

Պահման իշխանն իր խորհուրդին մէջ անաստան մնաց: Այր հաւտամ որ, ըսաւ, յորդորդ անկեղծ է, և շնորհապարտ եմ քեզ այդ բարեկամութեանդ համար, բայց ըսած վտանգդ որչափ մեծ ըլլայ, դարձեալ

որոշած եմ միտքս չփոխել : Եթէ մէկն իմ վրայ յարձակի , աղոր զէնք ունիմ , և ինձի չափ արի և քաջասիրտ չլինար ըլլալ :

— Հապա եթէ քեզ զորոնդները , յարեց տէրվիչն , ինքզինքնին չյայտնեն (վասն զի բաղմամբու են) ինչպէս անտեսանելի էակներու զէմ ինքզինքդ պիտի սաշտպանես :

— Փոյժս չէ , պատասխանեց իշխանն : Ինչ որ ըսես չսփախ յաջողիս յորդորել իս որ պարտաորութեանս հակառակ վարուիմ : Յրովհետե քեզ հաղցուցած ճամբաս զիտես , նորէն կը պաղատիմ քեզ որ ինձ ցոյց տաս և այս շնորհն իցնէ չզլանաս :

Երբ տէրվիչը զիտեց որ անկարելի է փշխանին միտքը դրոշել , և թէ իր ճամբորդութիւնն ընելու խորհուրդն անսասան է , տուած օգտակար ազգարարութեանցը հակառակ , իր քովը դանձաձ մէկ պարկի մէջ ձեռքը դրաւ և գնդակ մը հանելով՝ իշխանին ներկայացուց :

«Քանի որ իմ խօսքիս շէս անսար , ըսաւ , առ այս գնդակն ու երբ ձի հեծնես , առջևէդ նետէ դայն և անոր հետեւէ մինչև լեռան մը ստորոտն , ուր պիտի կենայ : Երբ գնդակը դազրի , վար կ'իջնես և ձիուդ ասնձը վզին վրայ կը թողուս , ձիդ նոյն վայրը պիտի ստատէ քեզ մինչև վերադարձդ : Լեռն 'ի վեր ելնելու ատենդ աջու ձախ դիդ շատ մը սև խոշոր քարեր պիտի տեսնես , և ամէն կողմէ խառն ու շփոթ ձայներ պիտի լսես , որոնք հազար տեսակ լուսանք պիտի թափեն քեզի դէմ որպէս գի քեզ վճռակցնեն և չթողուն որ մինչև կատարն ելնես , բայց նայէ որ չվախնաս , նա մանուսանդ՝ չբլբլայ որ ետեդ նայելու համար դու խօզ դարձնես . անմիջապէս սև քար մը պիտի կտրիս , քու տեսած քարերու գ նման , որոնք քիզի պէս իշխաններ էին և իրենց ձեռնարկութեան մէջ չյաջողեցան , ինչպէս որ արդէն լսի : Եթէ այս խիստ թեթեւակի նկարագրած վտանդէս ազատելով լեռան կատարը հասնիս , վանդակ մը պիտի գտնես և վանդակին մէջ՝ ինդրած թռչունդ : Արովհետե թռչունը կը խօսի , անոր պիտի հարցնես թէ ո՞ր կը գտնուին երգող ծառն ու դեղին թռչունն , և այն թռչունը քեզի պիտի իմաց տայ : Աւրիշ ըսելիք չունիմ քեզի . ահա ընելիքդ , ահա այն վտանգն որմէ խոյս տալու պիտի աշխատիս : Ըսայ լուսադրն կ'ըլլար և թէ ինձ հատարով կեանքդ վտանդի մէջ չդնէիր : Նորէն

կ'ըսեմ , դեռ խորհելու ժամանակ ունիս , նկատէ որ կորուստդ անդարմանելի է և այնպիսի բանէ մը կախում ունի որ անպարտութենէ կրնայ տեղի ունենալ , ինչպէս որ կարող ես մտաբերել :»

Պահման իշխանը գնդակն առնելէն ետե՛ ըսաւ . «Մեծապէս շնորհակալ եմ խորհրդիդ համար , սակայն չեմ կրնար անոր հետեիլ . դարձեալ պիտի ջանամ աղղարարութենէդ օգուտ քաղել և վեր էլնելու ատեն ետե չնայիլ . յուսամ որ իմ վերադարձս պիտի տեսնես և ես ալ լիովին շնորհակալ պիտի ըլլամ քեզ իմ ինդրած բաներս հետս բերելով :»

Այս խօսքերն աւարտելուն՝ տէրվիչն ուրիշ բան չպատասխանեց եթէ ոչ ինդպիսի պիտի տեսնէ անոր վերադարձը , թէ կը բաղձայ որ ըսածին պէս յաղթանակաւ վերադառնայ : Յետոյ իշխանը ձին հեծաւ , տէրվիչին մնաս բարև ըսաւ . գլուխը ծռելով յարգանք և գնդակն իր առջևէն նետեց :

Գնդակը գլորեցաւ և Պահման իշխանն ինչարագութեամբ որ նետեր էր դայն՝ նոյն արագութեամբ շարունակեց գլորել , ուստի պարտաորեցաւ իր ձիուն վազքն անոր յարմարցնելու որպէս զի աչքէն չկորսնցընէ . նոյն կերպով հետեւեցաւ գնդակին , և երբ տէրվիչին ըսած լեռան ստորոտը հասաւ , կանկ առաւ : Այն ատեն իշխանը ձիէն վար իջաւ և ձին իր տեղէն չշարժեցաւ թէ և սանձն անոր վզին վրայ ձգեց ազատորէն : Երբ զիտեց լեռն ու սև քարերն՝ իշխանն սկսաւ վեր ելնել և այն ինչ քանի մ'ուրք առաւ որ տէրվիչին ակնարկած ձայները լսելի եղան՝ թէ և ոչ ոք տեսաւ : Ոմանք կ'ըսէին . «Մեր կ'երթայ այս թեթեւամիտն , ո՞ր կ'երթայ , ինչ կ'ուզէ . մի թողուք որ անցնի :» Այլք կը պոռային . «Վեցուցէք դանի , բոնեցէք , սպաննեցէք :» Աւրիշներ ալ որոտնդոտս կը դուռնէին . «Մի , անոր միտս մի հասցնէք , թողուցէք որ այս սիրուն պատանին յառաջ անցնի , յիբարև վանդակն ու թռչունն ասոր համար պահուած են :»

Այս դժպիսի աղղարակներուն ակամջ յիպիսելով՝ Պահման իշխանը հաստատանութեամբ բառական ատեն վեր ելաւ՝ առանձին վառուելով . սակայն դու ու դոչումն այնքան սաստկացաւ թէ առջևէն և թէ ետեւէն որ երկիւղը զինքը պաշարեց : Ուրբն ու սրունքն սկսան

դողդողալ, գայթեց, և քիչ ատենէն՝ տեսնելով որ ուժէ կ'իյնայ, տէրվիշին աղաբարբութիւնը մոռցաւ, որպէս զի զէպ'ի վար իջնելով՝ ազատի. սակայն խեղճն սև քար կտրեցաւ. այս այլափոխութիւնն ուրիշ շատ մարդոց պատահեր էր մի և նոյն ձեռնարկութիւնն 'ի կատար հանելու դիտմամբ, նոյն փորձանքին հասաւ նաև ձին:

Պահման իշխանը ճամբայ ելնելէն վեր՝ Փարիզատէ իշխանուհին՝ որ իր գօտիէն կախեր էր պատեանով եղբօրը սուած դանակն որպէս զի անոր կենդանի կամ մեռած ըլլալն իմանայ, ամէն օր շատ անգամ զայն քաշելով կը նայէր: Այսպէս կը ցնծար դիտելով որ տակաւին ողջ է և ստէպ իր Փէրվիզ եղբօրը հետ անոր վրայ կը խօսակցէր:

Այն դժուրակ օրն որ Պահման իշխանը քարի փոխուեր էր, մինչդեռ Փէրվիզ և Փարիզատէ անոր վրայ կը խօսակցէին երեկոյեան գէմ, ինչպէս որ սովոր էին:

«Քոյր իմ, ըսաւ Փէրվիզ իշխանը, քաշէ դանակը, կ'աղաչեմ, և նայինք ի՞նչ լուր կայ վրան:» Իշխանուհին դանակը քաշեց և դիտելով տեսաւ որ ծայրէն արիւն կը հոսի: Իշխանուհին ստիպեմ է վիշտ զգալով դանակը նետեց: «Ա՛հ, եղբայրդ՝ իմ սիրելի, դուչեց նա, ուրեմն քեզ կորուսի, և իմ երեսէս կորուսի: Այլ չսխախտես անտէմ քեզ երբէք. որչափ դժբաղդ եմ: Ինչո՞ւ համար խօսեցայ քեզ խօսուն թուշուրն, երգող ծառին և դեղին ջրին վրայ. կամ ըսեմ, ի՞նչ պէտք ունէի իմանալ թէ բարեպաշտ պառաւն այս տունս աղբոր կամ սոցեղ կը գտնէ, կատարեալ կամ անկատար: Երանի թէ տունս ոտք չկոխէր: Անդժաւոր, խարեբայ, յարեց նա, միթէ նոյսպէս պիտի փոխարինելի քեզի ըրած հիւրընկալութիւնս: Ինչո՞ւ համար խօսեցար ինձ թուշուրն, ծառի, ջրի մը վրայ, որ թէև երեակայական են, ինչպէս որ իմ սիրական եղբօրս կորստեամբ կը համոզուիմ, դարձեալ միաքս կը վրդովենքու հմայութեամբդ:»

Փէրվիզ իշխանն ալ իր քրոջ պէս մէծ վիշտ զգաց իր եղբօրը մահուան վրայ, բայց փոխանակ անօգուտ արտասք թափելու, դիտելով որ իր քոյրը դեռ ևս կը ցաւի և կը փափաքի խօսուն թուշուրն, երգիչ ծառն ու դեղին ջուրը ձեռք ձեռք, անոր խօսքը կտրեց և ըսաւ.

«Քոյր իմ, պարտաւ անդ կ'ողբանք մեր Պահման եղբօր վրայ. մեր

վիշտն ու ողբը չեն կրնար անոր կեանք տալ. այս է Աստուծոյ կամքը, պէտք է անոր հնազանդիլ և անոր պաշտելի վիճիւններն անուշ ունչ ընդունիլ: Ինչո՞ւ համար բարեպաշտ պառաւին խօսքերն այժմ՝ կատարելի կը համարիս, մինչդեռ առաջ իր ստոյգ և ճշմարիտ կը հատարիր: Եթէ կարծես թէ այն երեք բաներուն վրայ քեզ կը խօսէր եթէ գոյութիւն չունենային, և միթէ կամաւ հնարած է քեզ խօսելու համար, քեզ որ այնչափ սիրով և բարութեամբ զինքը ընդունեցար և անոր գանդափ առ ի՞մ մը չտուիր: Այս առեւի կը հատամ որ մեր եղբօրը մահն իր յանցանքին կամ մեզի մոթ պատահարի մը արդիւնքն է: Այսպէս, քոյր իմ, իր մահուան պատճառաւ մեր խուզարկութիւնէ ետ չի նանք. ես առաջարկեցի որ անոր անդ կատարեմ ուղևորութիւնը, մի և նոյն տրամագրութիւնն ունիմ և այժմ, և որովհետև հետեւ իմ փափաքս մարած է իր օրինակէն՝ վաղուան օրն իսկ ճամբայ պիտի ելնեմ:»

Իշխանուհին ամէն ջանք 'ի գործ դրաւ Փէրվիզ իշխանին միտքը փոխելու, պաղատելով որ զինքը մէկ եղբօր անդ երկու եղբայր կորուսելու վտանդին մէջ չդնէ, սակայն իր քրոջը յորդորներն առ ոչ ինչ գրելով Փէրվիզ իշխանն անաստան մնաց. իսկ մեկնելէն առաջ՝ ինչպէս որ միւս եղբայրն ըրեր էր դանակ մը ձգելով իր կենդանութեան կամ մահուան յայտարար, նոյնպէս ինքն ալ հարիւր հատ մարդարտէ վարդարան մը ձգեց նոյն նպատակաւ, և զայն ներկայելով Փարիզատէ իշխանուհւոյն ըսաւ.

«Այս վարդարանը համբէ իմ նպատակիս՝ բացակայութեանս ատեն. համբնու ատենդ՝ եթէ այնպէս մը պատահի որ հատիկները կենան իրարու փակածի պ'ս և անկարող ըլլաս դանտք սահեցնելու, ասկից պիտի հասկնաս որ ես այ իմ եղբօրս բաղդն ունեցեր եմ: Բայց յուսաքի է որ այս դժբաղդութիւնը չպատահիր, և քեզ վերստին տեսնելու ելջանկութիւնը կ'ունենամ քու և իմ փափաքս լրացած տեսնելով:»

Փէրվիզ իշխանը մեկնեցաւ, և իր ուղևորութեան քսաներորդ օրը մի և նոյն տէրվիշին հանդիպեցաւ, ճիշտ այն տեղն ուր Պահման իշխանը գտեր էր: Անոր մօտեցաւ, և բարև տալէն ետև՝ աղաչեց որ իրեն ըսէ, եթէ զիտէ, թէ ո՞ր են խօսուն թուշուրն, երգող ծառն ու

գեղին ջուրը : Տէրվիչը Պահման իշխանին ըսած դժուարութիւններն ու յորդորները կրկնեց , և մինչև անգամ ըսաւ թէ նորափ պատանի մը որ իրեն շատ կը նմանէր՝ նոյն ճամբան հարցոցեր էր , և անոր թախանձողին աղաչանաց զիջանելով՝ տեղը յայտնեց , անոր առաջնորդ մը և պէտք եղած հրահանգը տուեր էր , բայց անոր վերադարձը չէ տեսեր . հետևապէս անկասկած էր որ Փէրվիչ իշխանն ալ առաջիններուն փորձանքին պիտի հանդիսէր :

Յարի տէրվիչ , վրայ բերաւ Փէրվիչ իշխանը , գիտեմ թէ որուն ակնարկել կ'ուզես . այն իմ անդրանիկ եղբայրս էր , և ստուգապէս զիտեմ որ մտած է . սակայն ինչ կերպով մեռնիլը չգիտեմ :

— Ես կրնամ այս մասին անգիտութիւն տալ քեզ , պատասխանեց տէրվիչը , շատերուն պէս սե քար կտրեցաւ , և դու այ մի և նոյն այլափոխութեան պիտի հանդիպես , և թէ անոր սուած խրատներս դու աւելի լաւ չգտահես , ճամբորդութիւնդ շարունակելու պնդելով , և կը յորդորեմ նորէն որ զանց ընես :

— Տէրվիչ , ըսաւ Փէրվիչ իշխանը , չափազանց շնորհապարտ եմ քեզ որ այսչափ հոյ կը տանիս իմ կենացս պահպանութեան համար , թէ և քեզի անձանս թ մէկն եմ , և այդ բարեմիտութեանդ արժանի ըլլալու համար բան մ'ըրած չեմ . բայց սրբաւոր եմ ըսելու քեզի որ այս որոշումն չըրած բաւական խորհեցայ , և անկից կատիլ չեմ կարող : Աւստի իմ եղբօրս բրած շնորհդ ինձ ալ ընես : Արեւի է սուած խորհուրդներդ բռնելու ես աւելի յաջողիմ քան թէ այն :

— Քանի որ անկարող եմ այդ զիտաւորութենէդ կասեցնել քեզ , ըսաւ տէրվիչն , և թէ տարիքս նեղէր ուրի վրայ երկելու՝ սա տեղունեցած գնդակս քեզի պիտի տայի որ առաջնորդէ քեզ :

Փէրվիչ իշխանն այն ինչ տէրվիչին այս խօսքը լսեց որ վար լջաւ , անոր քովը գնաց և տուած գնդակն առաւ : Տէրվիչն այս գնդակը պարկէ մը հաներ էր որուն մէջ ուրիշ շատեր կային և զայն իշխանին տալու ատեն հասկցուց նաև գործադրութեան կերպն , և յորդոցեց որ քնաւ չվախնայ այն ձայներէն՝ զոր պիտի լսէր առանց մարդ տեսնելու , թէ և սպառնալից էին այն ձայներն , այլ շարունակ վեր ելնէ մինչև որ թռչունին վանդակը տեսնէ :

Փէրվիչ իշխանը շնորհակալ եղաւ տէրվիչին , և երբ ձին հեծաւ , գնդակն առաջնետեց և անոր ետեւէն սրբութեաց գնաց : Արջապէս լեւան ստորոտը հասաւ , և տեսնելով որ գնդակը դադարեր է , ձիէն վար լջաւ : Աեր հինելու համար առաջին քայլը շառած՝ մի և նոյն վայրը քանի մը վայրկեան կեցաւ տէրվիչին սուած հրահանգը միտքը բերելու համար : Յետոյ սիրտ առաւ և վեր ելաւ , մինչև լեւան կատարը հասնելու գիտմամբ և հինգ վեց քայլ առաջ գնաց . այն ատեն իր ետեւէն ձայն մը լսեց որ իրեն շատ մտա կերեր էր և մարդու մը ձայնին կը նմանէր որ զինքը կը կանչէր կը թշնամանէր , պրտալով . « Ահ ցիւր , յանդօ գն մարդ , կիցիր որ յանդգնութիւնդ պատժեմ : »

Այս թշնամանքը լսելուն՝ Փէրվիչ իշխանը տէրվիչին խրատը մտացաւ , ձեռքը սրին տարաւ , զայն քաշեց և վրէժ լուծելու համար ետին դարձաւ , բայց հալիւ թէ ետին մարդ մը կայ թէ ոչ հասկընալը , սե քար կտրեցաւ , թէ ինքն և թէ ձին :

Փէրվիչ իշխանին մեկնելէն վեր՝ Փարիզատէ իշխանուհին ամէն օր անվրէպ վարդարանը ձեռք կ'առնուր , և երբ գործ չունենար հատիկները մատերէն սահեցնելով կ'աղօթէր : Այն ատենները զիշերով ալ կ'ըրաղէր , ամէն իրկուն պառկելու ժամանակ իր վրէն անոցներ էր , և արթնալուն ձեռքը հատիկներուն տարեր էր հասկնալու համար թէ արդեօք հատիկներն իրարու ետե կը սահին թէ ոչ : Արջապէս ցորեկ մ'երբ Փէրվիչ իշխանն իր եղբօրը բաղդն ունեցաւ , վարդարանը ձեռք բռնած ասին յանկարծ տեսաւ որ անոր հատիկներն իր ուղածին պէս չին շարժիր , և ասկից հասկցաւ որ եղբայրն իրօք մեռած է : Արովհետև արդէն իր ընելիքն որոշեր էր այսպիսի դժբաղդու թեան մը վրայ , ժամակորոյս չեղաւ իր սրամտութեան արտաքին նշանները տալով . ամէն ձիգը թափեց վիշաբ զսպելու , և հետևեալ օրն իսկ մարդու կերպարանք առնելով՝ զինեցաւ , իր սպասաորներուն ըսաւ թէ քանի մ'օրէն պիտի դառնայ , և ձի հեծնելով մեկնեցաւ իր երկու եղբայրս բռնած ճամբան բռնելով :

Քարիզատէ իշխանուհին , որ որսորդութեան առթիւ ձի հեծնելու վարժեր էր , ուղեորութեան նեղութեանց զխմայաւ թէ և ամէն կրկան գործ չէ այս : Իր եղբարցը չափ ճամբայ ընելով՝ քաններորդ օրը նոյն

տէրվիշին հանդիպեցաւ : Երբ անոր մտ գնաց , երկարէն վար իջաւ , և զայն սանձէն բռնելով՝ դնաց անոր քովը նստելու : Բարև տուաւ անոր ու բաւ :

Բարի տէրվիշ , կը ներես անշուշտ որ քիչ մը քու քովդ հանդատանամ , և շորհ կ'ընես ինձ յայտնելու թէ արդեօք լսած ես բնաւ որ այս կողմերը վայր մը կայ ուր խօսող թուշուհն , երգող ծառն ու դերդին ջուրը կը գտնուի :»

«Տէրվիշը պատասխանեց . «Տիկին , քանի որ ձայնէդ կը հասկնամ որ կին ես , թէև ծայտեալ կ'երևիս ինձ , շորհակալ եմ մարդավարութեանդ և մեծ հաճոյքով կ'ընդունիմ բրած պատեիդ : Երգէն զիտեմ թէ բաժն բաներդ որ կողմը կը գտնուին , բայց այս հարցմունքն ինչ մտօք կ'ընես ինձի :

— Բարի տէրվիշ , վրայ բերաւ Փարիզատէ իշխանուհին , շատ զեղեցիկ բաներ ըսին այն էակներուն վրայ և կ'երիմ կը մերկիմ որ զանոնք ձեռք ձգեմ :

— Տիկին , պատասխանեց տէրվիշը , լսածդ ճշմարիտ է , այն բաներն 'ի լրջ իմացածէդ աւելի հիանալի և եզակիան են , բայց զանոնք վայելելու համար ինչ դժուարութիւններու յաղթել պէտք է , չեն իմացուցած քեզի . այսպիսի ծանր և վտանգալի ձեռնարկութիւն մ'ի կատար հանելու չէ իր երեսը եթէ ամէն բան զիտայիր : Ինդրեմ , խօսքիս միտ զիք , աւելի առաջ մ'երթար , ետ դարձիր և մի կարծեր թէ քու կորստեանդ պատճառ ըլլալու փափաք ունիմ :

— Բարի հայր , վրայ բերաւ իշխանուհին , շատ հեռու տեղէ կը գամ և չափազանց պիտի ցաւիմ թէ որ ձեռնունայն ետ դառնամ : Ինձի կըրես թէ կեանքս վտանգի մէջ պիտի գնեմ , բայց չես ըսեր թէ որոնք են այն դժուարութիւններն ու վտանգն , ահա այս բանս կ'ուզեմ իմանալ , որպէս զի նայիմ թէ կարող պիտի ըլլամ վտահալ իմ զիտաւորութեանս , արիւթեանս և ոյժիս վրայ :»

Այս ասան տէրվիշը կրկնեց իշխանուհիին ինչ որ ըսեր էր արդէն Պահման և Փէրվիզ իշխաններուն , թէ ինչ մեծ դժուարութիւն կար երեսը լերան կատարն ուր վանդակին մէջ կը գտնուէր թուշուհը , զոր հարկ էր ստանալ , և անոր միջոցաւ ծառին և ջրին տեղն ալ իմանալ :

Թէ ինչ տոկայի և սարունալից ձայներու որոտումը պիտի լսէ ամէն կողմէ , առանց մարդ տեսնելու , և վերջապէս շատ մը սև քարերը նկարագրեց , որոնք միայն կարող էին ամենուն սարսափ ազդել , երբ հասկնայ թէ այն քարերը նոյնչափ քաջաօրեա սաստիաներ էին որոնք այլափոխեր էին այս ձեռնարկութեան մէջ առաջին պայմանը չպահելուն , որ էր բնաւ ետին չգառնալ չնայիլ , մինչև որ վանդակը ձեռք չձգուի :

Երբ տէրվիշը խօսքը լսեցուց , Բառ ըսածէդ սա կ'իմանամ , վրայ բերաւ իշխանուհին , որ այս գործին մէջ յաջողելու համար առաջին դժուարութիւնն է աներկիւղ լինելն 'ի վեր երեսը և վայնասունին ականջ չկախել , և երկրորդ՝ ետին չնայիլ : Այս վեղջին պայմանը յուսամ որ կատարելու կը յաջողիմ , իսկ առաջնոյն գալով կը խոստովանիմ որ ըսածիդ պէս այն աղաղակներն ամենէն անվեհեր մարդիկն ահարկելու կարող են , բայց որովհետև ամէն ծանր և վտանգաւոր գործերու մէջ հնարք գործածել արդիւեալ չէ , կը հարցնեմ քեզի թէ այս գործիս մէջ ալ կարելի է գործածել , քանի որ խիստ կարեւոր է :

— Եւ ինչ հնարք կ'ուզես գործածել , հարցուց տէրվիշը : — Արեւի ինձ , պատասխանեց իշխանուհին , որ ականջներս բամբակով գոցելով որչափ ուժեղ և ահաբեկի ըլլան ձայներն՝ այնչափ ազդեցութիւն չեն ունենար մեր վրայ . նոյնպէս իմ երեակայութեանս վրայ այնքան չեն ներգործեր , և այսպէս իմ միտքս իր ազատութիւնը կը պահէ և խելագարելու չափ չվրդովիր :

— Տիկին , ըսաւ տէրվիշը , մինչև այսօր ամէն անոնք որ ինձի դիմեցին քու հարցուցած ձամբաղ հարցիւներու համար , չզիտեմ թէ կնչ անձ մ'որ այդ հնարքը գործածած ըլլայ : Այս միայն զիտեմ որ ոչ ոք այդպիսի բան մ'առաջարկեց ինձ և ամէնքն ալ կորան : Թէ որ զիտաւորութեանդ մէջ հաստատ կիցեր ես , կընաս ասոր փորձն ընել . երանի թէ յաջողիս , սակայն դարձեալ կը խրատեմ քեզ որ ետ կենաս խորհրդէդ :

— Բարի հայր , պատասխանեց իշխանուհին , բան մը չարդիւր իս խորհուրդս 'ի գործ դնելու . սիրտս կը վկայէ որ հնարքս պիտի յաջողի և զայն գործածելու որոշած եմ : Այսպէս կը մնայ ինձ իմանալ

Թէ ինչ ճամբայ բռնել պէտք է : Ահա այս շնորհը միայն քեզնէ կը խնդրեմ :»

Ա երջին անգամ մ'աւ տէրով իշը յորդորեց որ լաւ մտածէ , և տեսնելով որ անասան կը մնայ իր խորհրդին մէջ , գնդակ մը հանեց և անոր տալով ըսաւ .

«Առ այս գնդակն , երիվարդ հեծիր և առջնէդ նետն լին հաւնոր ըրած ամէն պտոյտները նկատէ և ետևէն գնա՝ մինչև այն լեռն ուր կը գտնուի վնասածդ և գնդակն ալ այն տեղ պիտի մնայ : Երբ գնդակը դադար առնու , դու ալ կիցիր , վար իջիր և լեռն ելիր : Գնա ուրեմն , մնացածը գիտես , նայի որ անկից օդուտ քաղես :»

Փարիզաւէ իշխանուհին , տէրով իշին շնորհակալ ըլլալով մնաս բարե ըսելէն ետև՝ ձի հեծաւ , իսկոյն գնդակը նետեց և անոր հետևեցաւ քանի կը զլորէր կերթար . գնդակը զլորելով հասաւ լեռան ստորուն և կիցաւ :

Իշխանուհին վար իջաւ , ախանջները բամբակով զոցեց , և լեռան կատարը տանող ճամբան լաւ մը քննելէն ետև՝ հաւասար և արագ քայլով մ'երևնել սկսաւ : Չայնները լսեց և դիտեց որ բամբակը չափազանց կ'օղնէ իրեն : Քանի յառաջ քալէր , այնչափ աղաղակները կը սաստկանային և կը շատնային , սակայն իր միտքը վրդովելու չափ աղղեցութիւն չունէին իր վրայ : Իր սեռին նկատմամբ շատ մը նախատինք և հեղնութիւններ լսեց , զորս քամահրեց և մինակ խնդաց :

«Ես չեմ սուտ իր ոչ ձեր նախատինքն և ոչ հեղնութիւններն , կըրտէր ինքն իրեն . ինչ որ կ'ուզէք ըսէք , առ ոչ ինչ կը գրեմ ձեր թշնամանքն , և իմ ճամբաս կը շարունակեմ անվրդով :» Ա երջապէս այնքան բարձր տեղ մը հասաւ ուր սկսաւ վանդակն ու թռչուիլ նշմարել , որ միւս ձայներուն հետ զինքն ահարկելու կը ջանար , որոտաւ լիւր ձայնով մը գոչելով , թէ և մարմնով փոքր էր . «Իսնդ , քաշուէ , մի մտանար :»

Իշխանուհին թռչունին տեսքէն աւելի բորբոքելով՝ աւելի արագ քալեց : Երբ իր նպատակին մօտ տեսաւ ինքզինքը , լեռան կատարն ելաւ , ուր դեռ չէր հարթ էր , շխտակ վանդակին վազեց և ձեռքը վրան գրաւ թռչունին ըսելով , «Թռչուն , քու կամեցող հակառակ՝ ահա

քեզ բռնեցի , և ձեռքէս աղատելիք չունիս :

Երբ Փարիզաւէ ախանջները զոյրող բամբակը կը հանէր , «Քաջտիկին , բաւ անոր թռչունն , ինչ մնաս մի հասցներ իմ աղատութիւնս պահելու համար իրենց բոլոր ճիգը թափող է ակնբուն միանալու համար : Թէ և վանդակի մէջ փակուած՝ դարձեալ իմ վիճակէս գոհ էի , բայց հիմակ որ դերիդ ըլլալու սահմանուած եմ , աւելի աղէկ ունիմ քեզ տիրուհի ունենալ , քանի որ այդչափ արիտութեամբ և արժանութեամբ իս ձեռք ձգեցիր , քան ուրիշ որ և է անձ մ'աշխարհիս վըրայ : Եւ այժմէն իսկ քեզի անդրժելի հաւատարմութեամբ կապուելու երդում կըրնեմ , ամենայն հըր թեամբ հրամաններուդ հպատակելու պայմանաւ : Գիտեմ թէ դու ուլես , և քեզ պիտի յայտնեմ որ դու ինքնին չցիտես ան ըլլալդ . բայց օր մը պիտի գայ որ քեզի ընելիք ծառայութեանս փոխարէն ինչ մեծուպէս պալատուոր պիտի մնաս : Իմ անկեղծութեանս նշաններն անմիջապէս քեզի տալու համար , ըսէ ինչ թէ ինչ փափաքներ ունիս , և քեզ հնազանդելու պատրաստ եմ :»

Իշխանուհին այս ըրած դիտարկելով այնքան ուրախ էր որչափ որ զայն ձեռք ձգելու համար իր երկու սիրական եղբայրները կորուսեր էր , և ինքն ալ այնքան նեղութիւն և վտանգ քաշեր էր , անմնաս ելնելով՝ տէրով իշին չարագուշակ աղղարարութեան հակառակ , ուստի թռչունին ըսաւ , երբ նա լուսեց .

«Թռչուն , ես ալ իբրք միտք ունիմ իմ փափաքներս յայտնել քեզ , որոնք մեծ կարևորութիւն ունին . ուրախ եմ որ կանխաւ իմաց տուիր ինչ այդ յօժարակամութիւնդ : «Նախ՝ այս ըսեմ թէ՛ իմացածիս նայելով՝ այս տեղ դեղին ջուր մը կայ որ հրաշալի յատկութիւն մ'ունի . խնդրեմ ըսել ինչ թէ՛ նր կը գտնուի :» Թռչունը տեղը քցուց , որ շատ հեռու չէր . իշխանուհին գնաց այն տեղն , և իր հեռը բերած մէկ սրուակն այն ջրով լեցուց : Յետոյ թռչունին դարձաւ և ըսաւ . «Թռչուն , այս բաւական չէ , նոյնպէս երգող ծառը կը փնտռեմ , ըսէ ինչ նր է :»

Թռչունն ըսաւ . «Գարձիր , ետեղ անտառ մը պիտի տեսնես և այն տեղ պիտի գտնես այն ծառն :» Անտառակը հեռու չէր . իշխանուհին մինչև հոն գնաց , և ուրիշ շատ մը ծառերու մէջ լսած ներդաշնակ

ձայնէն իր փնտռածը գտաւ , սակայն շատ խոշոր էր և բարձր : Գար-
ձաւ ու թռչունին ըսաւ . «Թռչուն , դոսայ երգող ծառը , բայց ոչ ար-
մատէն հասնել և ոչ փոխադրել կարող եմ : — Լարկ չկայ արմատէն հա-
նելու , վրայ բերաւ թռչունը , բառական է փոքրիկ ճիւղ մը փչցնել և
պարտիզին մէջ սնկելու համար փոխադրել . արմատ պիտի ձգէ երբ
դեպիւնը սնկես , և քիչ ատենէն այն տեսած ծառիդ պէս պիտի մեծ-
նայ և աղւորնայ : »

Երբ Փարիզաւէ իշխանուհին ձեռք ձդեց այն երեք բաներն որոյ
փափաքն ուժգին գրգռեր էր սրտին մէջ բարեպաշտ պատար , նուէն
թռչունին ըսաւ . «Թռչուն , բոլոր բրածնեղբ կնձի համար բառական
չեն . զու ես իմ երկու եղբայրցս մահուան պատճառն որ այս միջոցիս
տեսած սև քարերուն մէջ կը դանուին անշուշտ , ուստի կը վափաքիմ
որ անոնց հետ մէկտեղ դառնամ : »

Արեւի թէ թռչունը չէր փափաքեր զո՛հ ընել այս մասին իշխանու-
հին , վասն զի դժուարութիւններ ցցուց : «Թռչուն , կրկնեց իշխանու-
հին , մտածէ անգամ մ'որ ըսիր թէ իմ գերիս ես , և իրօք սյնակ ս ես ,
հետև ապէս քու կեանքդ իմ ձեռքս է : »

— Այդ ճշմարիտ է , պատասխանեց թռչունը , խօսք չունիմ ըսա-
ծիդ , բայց թէ և խնդրածդ մեծ դժուարութիւններ ունի , դարձեալ
քեզ զո՛հ ընելու պիտի ջանամ : Աչքդ չորս կողմը նետէ , յարեց նա , և
տես թէ ստիոր մը չես գտներ : — Տեսայ ստիորն , ըսաւ իշխանու-
հին : — Առ դայն , ըսաւ նա , և լեռնէն վար իջնելով քիչ մը ջուր
թափէ ամէն մէկ սև քարի վրայ , և այս կերպով երկու եղբայրդ
կրնաս գտնել : »

Փարիզաւէ իշխանուհին տախտն առաւ , և վանդակը թռչունին
հետ առնելով , նոյնպէս սրուակն ու ծառին ճիւղը , քանի վար կ'իջ-
նէր՝ ստիորին ջրէն ամէն մէկ սև քարի վրայ կը թափէր , և ամէն մե-
կը մարդ կը դառնար . և որովհետև և ոչ մէկը գոնց ըլաւ , բոլոր ձի-
երը , նոյնպէս եղբարքն և ուրիշ շատ իշխաններ երևան ելան : Այս
կերպով Պահման և Փէրվիդ իշխանները ճանչեց , և ասոնք ալ գինքը
ճանչեցին և զերար համբուրեցին :

Նոյնպէս իշխանուհին զանոնք գրկեց և իր զարմանքը յայտնելով , ը-

սաւ . «Իմ սիրական եղբայրներս , ինչ կ'ընէք այս տեղ : » Երբ ըսին
թէ կը քաննային , «Այո , վրայ բերաւ նա , բայց եթէ ես չըլլայի
զեռ պիտի քաննայիք , և կարելի է միայն վերջին գատաստանին օրը
տեւեր : Կի՞թէ մոռցնո՞ր խօսուն թռչունն , երգող ծառն ու գեղին
ջուրը փնտռելու եկեր էիք , և զալու ատեն ապիս անդին շատ մը սև
քարեր տեսեր էիք . նայեցէք , հիմակ այն սև քարերէն հատ մը կնց :
Մեզ շրջապատող իշխաններն , և զուք էիք այն սև քարերը , նոյնպէս
ձեր ձիերն , որ ահա ձեզի կ'սպասեն , և եթէ կուզէք հասնալ թէ-
այս հրաշքն ինչպէս սկստարու եցաւ , ահա , ըսաւ՝ ցոյց տալով ստիորը
զոր լեռան ստորտար գրեր էր պէտք չունենալուն , ահա անոր ջրին զօ-
րութեամբն է որ կենդանութիւն առիք՝ իւրաքանչիւր քարի վրայ թա-
փելով : Արովհետև խօսուն թռչունն իմ գերիս ըրի , որ ահա սա
վանդակին մէջն է , անոր միջոցաւ երգող ծառը դոսայ , որմէ ճիւղ մը
փրցուցի , նոյնպէս զեղին ջուրն , որով լեցուն է սա սրուակս , չուղեցի
առանց ձեզի դառնալ տեղս , և ստիպեցի թռչունս որ ինձ հնար մը
սովորեցնէ ձեզ ազատելու . իր վրայ ունեցած ազդեցութեամբս ցոյց
տուաւ ինձ ստիորն և անոր գործածութեան կերպը : »

Պահման և Փէրվիդ իշխաններն այս խօսքերէն հասկեցան թէ սր-
չափ շորհասարտ են իրենց քրոջ , և իշխաններն որ անոնց բոլորը կե-
ցեր և խօսքերը մտիկ ըրեր էին , անոնց հետևեցան և ըսին թէ ոչ մի-
այն չեն նախանձիր ըրած յաղթանակին վրայ , թէ և իրենք ալ անոր կը
տենչային , այլև ՚ի նշան երախտագիտութեան պատրաստ են իրենց կե-
նաց ազատարարին գերիները դառնալ և ամէն հրամանները կատարել :

«Իշխաններ , ըսաւ իշխանուհին , եթէ իմ ըսածներու ուշադրու-
թիւն ըրիք , անտարակոյս զխտած էք որ ուրիշ նպատակ մը չունէի այլ
միայն եղբայրներս գտնել . ուստի եթէ ձեր ըսած բարեքն ալ դոսաք ,
այդ բարեքն ինձ պարտաւոր չէք : Աւստի ձեր մարդավարութիւնն իր բև
բարեարտութեան նշան կ'ընդունիմ և իմ շորհակալիքս կը յայտնեմ՝
ձեզ : Ասկէ զատ՝ ձեզ առաջուան պէս ազատ անձեր կը նկատեմ , և
ուրախ եմ որ իմ առ թիւս այդ երջանկութեան հասաք : Սակայն հեռա-
նանք այս տեղէն՝ որ մեզի համար այսուհետև հրապուրելի բան մը
չունի , ձիերը հեծնենք և իւրաքանչիւրը մեր բնիկ երկիրը դառնանք : »

Փարիզատէ իշխանուհին առաջին օրինակը տուաւ, զնաց ձին առաւ, զոր ձգած տեղը գտեր էր: Հեծնեղէն առաջ՝ Պահման իշխանն՝ օր անօր ծանրութիւնը թեթեւցնել կ'ուզէր, աղաչեց որ իրեն տայ վանդակը կրելու: «Եղբայր իմ, վրայ բերաւ իշխանուհին, թռչունն իմ գերիս է, ես կ'ուզեմ կրել զայն, բայց եթէ կ'ուզես երդող ծառին ճիւղն առնուլ, ահա ապիկ առ: Սակայն վանդակը քիչ մը բռնէ որ ձի հեծնեղէս ետքն ինձ յանձնես»: Երբ ձին հեծաւ և Պահման իշխանը վանդակին հետ թռչունը յանձնեց նորէն, իշխանուհին իր եղբօրը Փէրվիզին դառնալով ըսաւ. «Իսկ դու, եղբայր, սա գեղին ջրի սրուակն առնուլ կ'ուզես. քու պահպանութեանդ կը յանձնեմ, եթէ ծանրութիւն չէ»: Փէրվիզ իշխանը յօժարակամ առաւ սրուակն ու պահեց:

Երբ Պահման, Փէրվիզ և բոլոր իշխաններն իրենց ձիերը հեծան, Փարիզատէ իշխանուհին կ'սպասէր որ անոնցմէ մին գլուխ անցնի և ճամբան ցոյց տայ. երկու եղբարք ուղեցին իշխաններուն թողուլ այս պատիւն, իսկ իշխաններն ալ իշխանուհոյն: Երբ իշխանուհին զիտեց որ իշխաններէն և ոչ մէկը յառաջ կ'անցնէր որպէս զի ինքնին այս պատիւն ընդունի, ամենուն դառնալով ըսաւ.

«Իշխաններ, կ'սպասեմ որ քալէք: — Տիկին, ըսաւ ամենուն կողմէն մօտ դանուող իշխան մը, պատրաստ ենք ամէն պատիւ նուիրել քեզ, ձեր մեզի ըրած բարութեան փոխարէն: Չեր համնտութեան չնայելով կը պաղտոխնք որ ձեզի հետեւելու պատիւէն մեզ չզրկէք:

— Իշխաններ, ըսաւ այն ատեն իշխանուհին, այդ պատուոյն արժանի չեմ, և կ'ընդունիմ միայն սա պատճառաւ որ այս է ձեր փափաքն»: Եւ նոյն պահուն ճամբայ ընկաւ, և իր եղբարքն ու իշխանները խմբովին անոր ետեւէն դացին անխտիր:

Այս խումբն անցնելու ատեն ուղեց տէրվիզը տեսնել, անոր հիւրասիրութեան և օգտակար խորհրդոց համար շնորհակալ ըլլալ, որոնք անկեղծ էին: Բայց տէրվիզը մնաւ էր, և չկրցան գիտնալ թէ արդեօք ծերութեանէ մեռեր էր թէ ոչ անոր համար որ պէտք չկար ցոյց տալու այնուհետեւ այն ճամբան որ երեք հազուադիւրս բաներուն յաղթանակին կը տանէր և որմէ իրօք Փարիզատէ իշխանուհին յաղթանա-

կեր էր:

Այսպէս խումբն իր ճամբան շարունակեց, սակայն ամէն օր սկսաւ քիչնալ: Եւ արդարեւ, այն իշխաններն որ զանազան տեղերէ հասեր էին, ինչպէս որ արդէն ըսինք, իւրաքանչիւրն իր յատուկ շնորհակալիքն իշխանուհոյն կրկնեղէն ետեւ՝ անոր և եղբարցը մնաս բարեւ կ'ընէին, քանի իրենց ճամբան դանկէն բաժնուելու համար: Իսկ իշխանուհին և եղբայրներն իրենցը շարունակեցին մինչև որ իրենց բնակարանը հասան:

Նախ իշխանուհին մեր ըսած պարտիզին մէջ վանդակը գրաւ, և որովհետեւ սրահը պարտիզին կողմն էր, այն ինչ թռչունն իր երդն սկսաւ որ սոխակները, սարեկիկներն, արտոյանները, շիկահաւերն, եկքանիկներն և երկրին ուրիշ շատ մը թռչուններն եկան իրենց դայլայիկով անոր ձայնակցել: Իսկ ձիւղն ալ գնել տուաւ իր ներկայութեան ամուլին մէկ կողմը՝ դռնէն քիչ մը հեռու: Այս ձիւղն արմատ ձգեց, և քիչ ատենուան մէջ մեծ ծառ մը դարձաւ, որուն տերեւներն ճիշտ բնիկ ծառին հանած ներդաշնակ ձայները կ'արձակէին: Իսկ սրուակին գալով՝ ամուլին մէջ տեղն աղոթ մարմարէ աւազան մը շինել տուաւ, և երբ լմացաւ, բոլոր սրուակին գեղին ջուրն անոր մէջ թափեց: Ենմիջապէս ջուրն սկսաւ եռալ և ուռիլ, և երբ աւազանին եզրը հասաւ՝ ելաւ, մէջ տեղէն վէտ 'ի վէտ մինչև քսան ոտք բարձրութեամբ, նորէն վար թռփելով և նոյն կերպով շարունակ ցայտելով առանց յորդելու:

Այս հրաշալեաց լուրը մօտակայ տեղերը տարածուեցաւ և որովհետեւ տան դուռը, նոյնպէս պարտիզինն ամենուն բաց էր, շատ չանցաւ անհամար մարդիկ սկսան յաճախել այն տեղ և երեք հրաշալեաց վրայ զմայլել:

Քանի մ'օրէն՝ Պահման և Փէրվիզ իշխաններն իրենց խոնջէնքն առնէն ետեւ իրենց նախկին կեանքն սկսան վարել, և որովհետեւ սրտորդութիւնն իրենց սովորական զրօսանքն էր, ձի հեծան և առաջին անգամ չէ թէ իրենց ծառաստանն, այլ տունէն քանի մը մղն հեռի տեղեր դացին: Մինչդեռ որսորդութիւն կրնէին՝ Պարսից շահը վրայ եկաւ, որ մի և նոյն տեղը կ'որսար: Այն ինչ անոր գերիներէն գիտե-

ցին որ շահն այն կողմերը գալու վրայ է, մտածեցին որ քաշուին երթան անոր չհանդիպելու համար: Բայց ձիշտ իրենց բռնած ճամբուն վրայ անոր հանդիպեցան, այնպիսի նեղ տեղ մը, որ չէին կրնար ոչ առաջ և ոչ ետև երթալ առանց տեսնուելու: Այս յանկարծական հանդիպումէն չկրցան վար իջնել ձիէն և սուլթանին առջև երկիր սրահնել, առանց դուրսնին վերցնելու որ զանի շտիսնն: Բայց սուլթանը տեսնելով որ լաւ ձիեր հեծած և իր արքունեաց մարդոց պէս լաւ հագուած էին, հետաքրքրի եղաւ անոնց երեսը նայելու. ուստի կանկ առաւ և հրամայեց որ կենան:

Իշխաններն ուր ելան և սուլթանին առջև կանդուն կեցան ազատ համարձակ, թէ և յարդական և համեստ կերպարան մը կը ցուցնէին: Սուլթանն անոնց երեսը նայեցաւ պահ մը դիտէն մինչև ոտքն՝ առանց խօսելու, և անոնց շնորհատի կերպարանին վրայ զմայլելէն ետև՝ հարցուց անոնց թէ ո՞վ են և ո՞ սկից կզան:

Պահման իշխանը պատասխանեց. «Ահ հափառ տէր, ձեր պարտիզաց վերատեսչին որդիքն ենք, որ մեռած է, և մահաւանէն առաջ շինել տուած տանը մէջ կը բնակինք, մինչև որ մեր տարիքը ներքէ Ձեր վեհափառութեան ծառայելու և պաշտօն խնդրելու, երբ առիթը պատահի:

- Ար նայիմ որ որսորդութիւնը կը սիրէք, վրայ բերաւ սուլթանը:
- Ահ հափառ տէր, պատասխանեց Պահման իշխանն, այս է մեր սովորական կրթութիւնը, կրթութիւն մ'որ Ձեր վեհափառութեան բանակը ծառայելու համար սահմանուած հպատակ մը զանց չընել, ըստ վաղեմի սովորութեան տէրութեանը:» Սուլթանն այս իմաստուն պատասխանին վրայ զմայլելով՝ անոնց ըսաւ. «Քանի որ այգպէս է, շատ դո՛հ պիտի ըլլամ ձեր որսորդութիւնը տեսնելով. ի՞նչք և ինչ տեսակ որս որ կը հաւնիք ընտրեցէք:»

Իշխանները ձի հեծան, սուլթանին ետևէն գացին, և հազիւ թէ քիչ մը հեռացան որ շատ մը կենդանիներու հանդիպեցան: Պահման իշխանն առիւծ մ'ընտրեց և Փէրվիզ իշխանն արջ մը: Նոյն միջոցին երկու քնին ալ յառաջ անցան այնպիսի արագութեամբ որ սուլթանը զորմացաւ: Միասին իրենց որսին ետևէն ընկան և այնպիսի ճարպի-

կութեամբ իրենց դեղարդն արձակեցին, որ Պահման իշխանն առիւծն, և Փէրվիզ իշխանն արջը զարկին և իրարմէ ետև անոնց ընկնիլը տեսան: Առանց կանկ առնու Պահման իշխանն ուրիշ արջի մ'ետևէն ընկաւ և Փէրվիզ իշխանն ալ առիւծի մը և քիչ ատենէն երկու քն ալ դեռ տին տասպարիցին անկեղոյան: Յետոյ ուղեցին շարունակել իրենց որսը, բայց սուլթանը չթողուց, այլ զանոնք կանչել տուաւ, և երբ եկան անոր մօտ կեցան, անոնց ըսաւ.

«Թէ որ ձեզ թողում որսը շարունակելու բոլոր երէս պիտի սատակէիք. սակայն ոչ այնչափ երէս որչափ ձեզ խնայել կ'ուզեմ, քանի որ ձեր կեանքն այստե՛հ հետև ինձ թանկագին պիտի ըլլայ, համոզուած ըլլալով որ օրին մէկը ձեր արիւթիւնն որչափ այժմ հաճելի նոյնչափ օգտակար կրնայ գառնալ:»

Խոսքով շահ երկու իշխաններուն համար այնչափ սաստիկ համակրութիւն պցաց, որ զանոնք հրախրեց որ անմիջապէս իրեն պալատը դան տեսութիւն ընելու համար: «Ահ հափառ տէր, վրայ բերաւ Պահման իշխանը, մեզի այնպիսի պատիւ մը կ'ընէք որուն արժանի չենք, և կ'աղաչենք որ մեզի ներգրովիտ ըլլաք այս մասին:»

Սուլթանն որ չէր կրնար ըմբոսնել թէ ի՞նչ պատճառաւ իշխանները չեն ուղեր ընդունել անոնց ըրած պատիւը, հարցուց թէ ի՞նչ արդիւք կայ և խնդրեց որ բացատրութիւն տան: «Տէր իմ, ըսաւ Պահման իշխանը, քոյր մ'ունինք մեզնէ փոքր, որուն հետ այնպիսի սերտ յարաբերութեամբ կ'ապրինք որ առանց անոր հրամանին բան մը չենք ընել. նոյնպէս ինքն ալ դործի մը չձեռնարկեր առանց մեր կարծիքը ստանալու: — Ձեր եղբայրական միտ թիւնը կը գովեմ շատ, վրայ բերաւ սուլթանն, ուրեմն հարցուցէք ձեր քրոջ կարծիքն, և վաղն ինձի հետ որսալու համար գալու ատեն, պատասխան մը բերէք:»

Երկու իշխանները բոլորովին մոռցան ոչ միայն իրենց սուլթանին հանդիպին և անոր հետ որսի ել թալու պատիւն, այլև ինչպէս իր պալատը զիբենք հրախրելը: Հետևեալ օրն իշխանները սուլթանին քովը գացին որսավայրն, և սուլթանն անոնց հարցուց. «Ան ուրեմն, միթէ ձեր քրոջ խօսք բացիք, միթէ հրաման տուաւ որ իմ կամքս կատարէք և ՚ի մասնաւորի հետ տեսութիւն ընէք:» Իշխան-

ներն իրարու երես նայեցան և կարմրեցան :

« Ահ հափառ տէր , պատասխանեց Պահման իշխանը , կաղաչեմք որ մեզի ներէք , ոչ եղբայրս և ոչ ես չյիշեցինք այս բանս : — Արեմն այսօր մի մոռնաք , վրայ բերաւ սուլթանն , և վաղն ինձի պատասխան մը բերէք : »

Իշխաններն երկրորդ անգամ մոռցան սուլթանին պատուէրն , և սուլթանն անոնց անհողութեան վրայ շարդողեցաւ , ընդ հակառակն՝ իր քակէն երեք սակի դնդակներ հանեց և Պահման իշխանին ծոցը դնելով , « Այս դնդակներն , ըսաւ ժպտով մը , իմ սիրոյս համար խնդրածս քերտէ պիտի յիշեցնեն . այս իրկուն քու գօտիէդ ինչալով ազմուկ պիտի հանեն , և դործը քեզի պիտի յիշեցնեն եթէ նորէն մոռցած ըլլաս : »

Սուլթանին գուշակութիւնն իրօք կատարուեցաւ . եթէ երեք սակի դնդակները չըլլային , իշխանները նորէն պիտի մոռնային իրենց Փարեղատէ քաջ խնայ տալու այն դէպքը . դնդակները Պահման իշխանին ծոցէն ընկան , երբ անկողին մտնելու համար գօտին քակեց : Անմիջապէս դնայ Փէրվիզ իշխանը գտնելու և միտին իշխանուհոյն սենեակը դիմեցին , որ տակաւին պառկած չէր . ներս մտնողրեցին որ անպատեհ ժամ գինքն անհանգիստ կ'ընեն , և խնդիրն անոր պատմեցին բոլոր պարագաներով :

Փարեղատէ իշխանուհին այս լուրը լսելուն վողովեցաւ : « Սուլթանին հանդիպումը պատուաւոր և բարեբաղդ բան մ'է , ըսաւ նա , և սարգային մէջ կրնայ աւելի օգտակար ըլլալ , սակայն ինձի համար ցաւալի և ախուր դէպք մ'է : Կնչպէս որ կ'իմանամ , իմ սիրոյս համար սուլթանին հրաւերը մերժած պիտի ըլլաք , և ասոր համար չափազանց շնորհապարտ եմ ձեզի , ասկէ կը հասկնամ որ ձեր բարեկամութիւնն իմինիս կը համապատասխանէ : Լաւագոյն սեպեցիք սուլթանին հետ անքաղաքալար կերպով վարուիլ և խնդիրը մերժել , քան թէ մեր եղբայրական միութեան հակառակ շարժիլ . նոյնպէս քաջ մտածեցիք որ եթէ զանի տեսնելու սխեիք , պիտի աշխուհիք անոցա՝ յօրէն իս երեսի վրայ թողուլ , բոլորովին անոր նուիրուելու համար : Բայց միթէ կարծէք թէ կարելի բան է սուլթանին թախանձաղին

պահանջած բանը միշտ մերժել : Սուլթաններու վախաքննը այնպիսի հրամաններ են՝ որոց դիմադրելը վտանգաւոր է : Աւստի , եթէ լրիկ փափաքիս հետեւելով յորդորեմ ձեզ որ անոր կամքը չկատարէք , այն ատեն անոր ոխը դրոպած և ինքզինքս ալ ձեզի հետ դժբաղդ ըրած պիտի ըլլամ : Ահա այս է իմ կարծիքս : Սակայն բան մ'որոշելէն առաջ՝ խօստն թուչո նին խորհուրդ հարցնեմք , և նայինք թէ ինչ կարծիք ունի այս մասին . այս թուչոնր նախատես և սրատես է , և խօսք տուաւ մեզի օրնել երբ դժուարութիւններու հանգիստէք : »

Փարեղատէ իշխանուհին վանդակը բեղել տուաւ , և այս դժուարութիւնը թուչոնին բացատրելէ ետք՝ հարցոյց անոր՝ իշխաններուն ներկայութեան թէ այս դժուարին պարագայիս մէջ ինչ ընծայք բռնել պէտք են : Թուչոնը պատասխանեց .

« Այ՛տք է որ եղբայրներդ սուլթանին կամաց հպատակին , նաև զանի իրենց կողմէն հրաւերն որ գայ տունդ տեսնէ : — Բայց , վրայ բերաւ իշխանուհին , մի և նոյն բարեկամութեամբ մնրք եղբարցս հետ կը սիրուիք , միթէ այս ընծայքով մեր բարեկամութեան քնաս մը չպատահիր : — Ամենէին , պատասխանեց թուչոնը , նա մանաւանդ աւելի պիտի զօրանայ այն : — Արեմն , պատասխանեց իշխանուհին , սուլթանն իս պէտք է տեսնէ : » Թուչոնը պատասխան տուաւ թէ հարկ է որ զինքը տեսնէ , և այս տեսութեան վերջը բարի է :

Նետեալ օրը Պահման և Փէրվիզ իշխաններն որսի գացին , և սուլթանն այն ինչ հեռուէն տեսաւ զանոնք որ հարցոյց թէ արդեօք իրենց քրոջ յայտնեցին խնդիրը : Պահման իշխանն անոր մօտեցաւ և ըսաւ .

« Ահ հափառ տէր , հիմակ ձեր հրամանին պատրաստ եմք , ոչ միայն մեր քոյրը յօժարակամ հաւանութիւն տուաւ , այլև քեզ մը դժկամակեցաւ որ իր կարծիքը կը հարցնեմք այնպիսի առ թիւ որ մեր պարտաւորութիւնն է ձեզի հնազանդիլ : Սակայն , վեհափառ տէր , այնքան արժանի ընծայք մ'ունեցաւ քոյրս , որ եթէ յանցանք մը գործեցինք յուսամ որ Ձեր վեհափառութիւնը ներողամտ կ'ըլլայ :

— Այդ մասին անհօղ եղիք , ըսաւ սուլթանն , ոչ միայն ձեր բրածը չեմ սպասուեր , այլ այնչափ օրինաւոր կը զանեմ որ յուսամ թէ նոյն

նախապատուութիւնը կ'ունենաք և առ իս , եթէ ձեր բարեկամութեան մասնակից գտնուիմ : Իշխանները սուլթանին այս չտալանց բարեւորութենէ շփոթելով խորին ակնածութեամբ պատասխան տուին միայն , ցոյց տալու համար թէ որչափ յարգանք կ'ընդունին իր հրաւերը :

Սուլթանն իր սովորականին հակառակ երկար առեւն որսորդութիւն չըրաւ նոյն օրը : Գուշակելով որ երկու իշխաններն որչափ արի նոյնչափ խելացի պիտի ըլլան , անոնց հետ խօսակցելու անհամբեր էր և այս պատճառաւ որսը իրականացրէր : Սուլթանն ուղեց որ երկու իշխաններն իր երկու կողմէն քաշեն , պատիւ մ'որ՝ թող սուլթանին ուղեկից գտնուող պալատականները , նոյն իսկ մեծ վէզիրին նախանձը զրգոհեց , դիտելով որ իրմէ առաջ կը քաշեն :

Երբ սուլթանը մայրաքաղաքը մտաւ , ժողովուրդն որ վտորցները լեցուեր էր , բողոք ուշադրութիւնը Պահման և Վերվիլ իշխաններուն վրայ դարձուց , և կը ջանար հասկնալ թէ ի՞նչ են , միթէ օտարական են թէ ոչ բնիկներ : « Ինչ և է , կ'ըսէին շատերը , երանի թէ սուլթանն այսպիսի շնորհալի աբքայտըուններ տար մեզի : Եթէ սուլթանն ուզէն՝ որ այնչափ ասեւն կը տառապի , յաջողութեամբ ծնէր , հիմակ իր զուակներն ալ ասոնց տարիքը պիտի ունենային : »

Սուլթանն իր պալատը հանելու՞ն՝ առաջին դործն ըրաւ գլխաւոր սենեակները ցոյց տալ անոնց : Իշխաններն անոնց գեղեցկութիւնը , հարստութիւնները , կահ կորասին , զարդերն և զուգահամեմատութիւնը դովեցին առանց կեղծաւորութեան և այնպէս որ այսպիսի բաներէ հասկցող մարդիկ են : Ահբջապէս փառաւոր սեղան մը պատրաստեցին և սուլթանը զանոնք հրախրեց նստելու , առաջ շուգեցին սեղանակից ըլլալ , բայց երբ սուլթանը պնդեց որ այնպէս կը պահանջէ , հնազանդելու ստիպուեցան :

Սուլթանն որ շատ խելք ունէր և դիտութեանց մէջ մեծ յտաջաւդիմութիւն ըրած էր , մանաւանդ պատմութեան մէջ , դուշակեր էր որ իշխանները՝ համեմատութենէ և ակնածութենէ ստիպեալ՝ չպիտի համարձակին խօք բանալու : Իստեղտ առ ի՞թ տալու համար , ինքը խօսակցութիւնն սկսաւ և մինչև ճաշին վերջը շարունակեց , բայց ինչ ինչորի որ բացաւ , իշխաններն այնպէս հմուտութեամբ , խելքով , դա-

տողութեամբ և ընտրանք պատասխաններ կտային որ սուլթանը հիացաւ մնաց :

« Եթէ ասոնք իմ որդիքս ըլլային անգամ , կ'ըսէր ինքնովին , և անոնց դատարարութիւնն ես տայի , աւելի բան չպիտի սովորէն և ոչ աւելի կիրթ և ոչ ճարտարախօս պիտի ըլլային : » Ահբջապէս սուլթանն այնքան հաճոյք զգաց անոնց խօսակցութենէն , որ սովորականէն աւելի սեղան նստելէն ետէ՝ իր դրասենեակը մտաւ և անոնց հետ նստելէն երկար բարակ խօք ըրաւ : Ի վերջէ սուլթանն անոնց ըսաւ .

« Երբէք չէի երեակցեր որ դիւզը ձեզի պէս բարեկիրթ , ուշիմ և կարող հպատակներ ունիմ : Ահնայս մէջ չեմ ունեցած խօսակցութիւն մ'որ ձեզինն չափ բերկրութիւն տուած ըլլայ ինձ . բայց այսքանս բաւական է , ժամ է արդ որ քիչ մ'ալ ձեր միտքը սփոփէք և զբօսնուք , և որովհետեւ երաժշտութեամբ մարդ իր յոյսութիւնն աւելի շատ կ'առնու , հիմակ պիտի լտէք նուազարանայ և երգերու նեղնաշնակութիւն մ'որ ձեզի շատ հաճելի պիտի գայ : »

Երբ սուլթանը խօսքն աւարտեց , երաժիշաններն՝ որ արդէն հրաման առած էին , ներս մտան և իրենց վարպետութիւնը ցոյց տուին : Զանազան խեղճատակներ խմբերդին յաջորդեցին , և հուսկ ուրմն պարողներ և պարուհիներ այս զբօսանքն աւարտեցին :

Երկու իշխանները տեսնելով որ մութը կոխելու վրայ է , սուլթանին ոտքն ընկան և քաշուելու հրաման խնդրեցին , շնորհակալ ըլլալով անոր լիուրի բարեաց համար , և սուլթանն անոնց հրամանն տալով , ըստաւ . « Ար թողում որ երթաք , և յիշեցէք որ ես անձամբ պալատիս ճամբան ցոյց տուի ձեզ , որպէս զի սաէպ զար իս տեսնէք : Միշտ պատրաստ պիտի գտնէք իս ձեզ ընդունելու , և որչափ յաճախ գար , այնչափ հաճոյք պիտի պատճառէք ինձ : »

Պահման իշխանը հեռանալէն առաջ՝ սուլթանին ըստաւ . « Ահհասփառ աէր , արդեօք ներելի է մեզ պաղատել Ձեր վեհափառութիւնն որ շնորհ ընէիք մեզ և քրոջս և մեր տունը դայիք հանդէս լացրիկան մը՝ երբ որսի առ թիւ մեր շրջականները գտնուիք : Երգարև մեր բնակարանն արժանի չէ ձեր ներկայութեան , բայց երբևէ միտակները կ'ախորժին հիւզի մը տակ պատասխարուելու : » Սուլթանը վրայ բերաւ .

«Չեղի պէս պնտուականներու տունն անտարակոյս զեղեցիկ և ձեզի արժանի պէտք է ըլլայ : Մեծ հաճութեամբ պիտի դամ ձեր տունը , մանաւանդ ձեզ և ձեր քոյրը տեսնելու , որ արդէն առանց տեսնելու՝ սիրելի է ինձ , անոր ընտիր ընտիր յատկութիւնները լսելով . իսկ այս հաճոյքը պիտի վայելեմ որ առաջ՝ այսինքն վաղը չէ միւս օր : Չեզառաջին անգամ հանդիարած վայրս պիտի դամ դտնեմ , դուք ալ այն տեղ զանուեցէք , և իս առաջնորդ եղիք :»

Պահման և Փէրվիզ իշխանները նոյն օրն իրենց տունը դարձան , և երբ հասան , իրենց քրոջը սուլթանին ըրած պատուաւոր ընդունելութիւնը պատմելէն ետե՛ւ ըսին նաև որ զանի հրա իրեցին իրենց տունն անցնելու տունն տեսնելու , և թէ անոր այցելութեան օրը հետեւեալ օրը պիտի ըլլայ :

«Եթէ այդ այդպէս է , վրայ բերաւ իշխանուհին , հարկ է այժմէն՝ Նորին վեհափառութեան խնայք մը պատրաստել , և այս նպատակաւ հարկ է որ խօսուն թուղունին խորհուրդ հարցնենք , կարելի է մեզի կերակուր մը ստլբեցնէ որ ամենէն աւելի՛ Նորին վեհափառութեան ճաշակին յարմար զայ :» Երբ իշխաններն ըսին որ իրեն կը թողուն պարսու պատշաճն ընելու , իշխանուհին թուղունին խորհուրդ հարցոյց ՚ի մանաւորի , իշխաններուն մեկնելէն ետքը :

«Թուղուն , ըսաւ անոր , սուլթանն իր այցելութեամբը մեզ պիտի պատուէ , և հարկ է ըստ արժանւոյն զանի ընդունիլ . ըսէ մեզի թէ ինչ՝ ճամբայ բռնենք որպէս զի անոր հաճելի ըլլանք :

— Իմ բարի տիրուհիս , վրայ բերաւ թուղունն , ընտիր խոհակերներ ունիս , թող իրենց բոլոր վարպետութիւնը բանեցնեն , և մանաւանդ թող անոր պատրաստեն սկաւառակ մը մարդարտով լեցուն վարունդէ խճողակ (տօլմա) զոր սուլթանին ամէն կերակուրէ առաջ մեծարել կը տաս :

— Այդ ինչ կերակուր է , մարդարտով խճողակ , ըսած բան է , դոչեց Փարիզատէ իշխանուհին զարմանօք : Թուղուն , այդ կերակուրն անլուր է , չիւս ըսեր : Թերևս սուլթանն իբր մեծ ճօխութիւն մ'անոր վրայ հիանայ . բայց հիանալու համար սեղան չպիտի նստի այլ կերակուր ուտելու : Ասկից զատ՝ եթէ իմ ունեցած բոլոր մարդարիաներս

դործածեմ , դարձեալ այսպիսի խճողակ մը շինելու չեն բաւեր :

— Տիրուհիս , պատասխանեց թուղունն , իմ ըսածս ըրէ , և հոգ մի ըներ զայիք բաներուն վրայ . մինակ բարիք պիտի ծագի սակից : Իսկ մարդարտին զալով՝ վաղն առտու կանուխ դնա ծառաստանիդ առաջին ծառին , աջ կողմը փորել տուր , և ուղածէդ աւելի մարդարիս պիտի դանես :»

Նոյն օրն իսկ Փարիզատէ իշխանուհին ապսպրեց պարտիզպանին որ պատրաստ դանուխ միւս օրն , և հետեւեալ օրը կանուխ զանի իր հետն առաւ և թուղունին նշանակած տեղը տարաւ . և ապսպրեց որ անոր ստորտը փորէ : Երբ պարտիզպանը բաւական խորունկ փորեց , տեսաւ որ կարծր բան մը կայ , և շատ չանցաւ սակի արկղիկ մը գաւա շուրջ մէկ ոտք քառակուսի , զոր իշխանուհւոյն ցոյց տուաւ : «Ահա ստոր համար քեզ բերի , ըսաւ անոր . շարունակէ և նայէ որ բերելովդ զայն չկոտորես :»

Վերջապէս պարտիզպանն արկղիկը քաշեց և իշխանուհւոյն ձեռքը տուաւ : Արտօճեաւ արկղիկը մանր մաքուր ակիշնեւում զոցուած էր՝ իշխանուհին զայն բացաւ , և տեսաւ որ մարդարտով լեցուն է , բոլորն ալ միջին խօշորութեամբ , բայց հաւասար և իր դործածելիք բանին յարմար : Շատ դոհ ըլլալով այս զանձը գտնելուն , զայն գոցեց , թեւին տակն առաւ և տան ճամբան բռնեց , մինչդեռ պարտիզպանը փորած հողը կը լեցնէր և կը հարթէր : Պահման և Փէրվիզ իշխանները , հաղուելու տունն իրենց յատուկ սենեկէն տեսան առտու կանուխ իրենց քոյրը պարտիզին մէջ , և վար իջնելով անոր միացան . իշխանուհին պարտիզին մէջ տեղն էր , և իշխանները զիտելով որ թեկն տակը բան մ'ունի , և ՚ի մօտուտա տեսան որ ոսկի արկղիկ մ'է , շատ զարմացան : «Քոյր իմ , ըստ անոր Պահման իշխանն՝ անոր մօտեալով , բան մը չէիր կրեր երբ պարտիզպանին հետ պարտեզ էլար , իսկ հիմակ կը տեսնենք որ ոսկի արկղիկ մ'ունիս ձեռքը : Միթէ պարտիզպանը զանձ մը գտաւ և քեզի բերաւ :

— Եղբայրներս , վրայ բերաւ իշխանուհին , ընդ հակառակն՝ ես այս տեղ բերի պարտիզպանն , արկղին տեղը ցոյց տուի և զայն գեանէն հանել տուի : Իմ զիտիս վրայ աւելի պիտի զարմանաք երբ անոր պա-

լուսնակն իմանաք :»

Իշխանութիւն արկղիկը բացաւ . իշխանները հիացան երբ տեսան որ մարդարտով լեցուն է , որ թէև շատ խոշոր չէին զատ զատ , սակայն ընտիր և շատ էին . ուստի հարցուցին թէ ի՞նչ նպատակով այս գանձին տեղն իմացիր է : «Եղբայրներս , պատասխանեց անոր , եթէ դուք երեսուրտ ստիպողական դործ մը չունիք , ինձի հետ եկէք , ձեզ պիտի պատմեմ դործը :» Փէրվիկ իշխանը պատասխան տուաւ . «Ասկից աւելի ի՞նչ ստիպողական դործ կրնանք ունենալ : Մինակ քեզ զիմաւորել էր մեր դործը :»

Այն ատեն Փարիզատէ իշխանուհին երկու իշխաններուն մէջ քալելով տան ճամբան բռնեց , պատմեց թէ ի՞նչպէս թուշուրին խորհուրդ հարցուցեր է , ի՞նչպէս անոր հետ խօսեր , մարդարատ խճողակին վրայ իր զարմանքը յայտնէր , և մարդարիտ գանելու միջոցն անկից իմացիր էր՝ արկղիկին տեղը հասկնալով : Իշխաններն ու իշխանուհին երկար բարակ մտածեցին թէ թուշուրն ի՞նչ պատճառաւ սուլթանին համար այնպիսի կերակուր մը պատրաստել կտայ , զայն շինելու միջոցը կը գտնէ : Բայց վերջապէս այս խնդրոյն ամէն կողմը քննելէն ետեւ՝ խոստովանեցան որ այս բանին խելքերնին չհասնիր , և սակայն հարկ էր այս խորհուրդը կէտ առ կէտ դործադրել առանց զանցառութեան :

Տունը մտնելուն՝ իշխանուհին խոհարարայեւոր կանչել տուաւ , և այն ալ եկաւ զինքը սենեակը գտաւ : Ճաշը պատրաստելու համար իր գիտցած կերպովը հրահանգ տալէն ետեւ՝ «Ասկից զատ , յարեց նա , պէտք է յատկապէս սուլթանին համար կերակուր մը պատրաստես , և ուրիշ մ'անոր ձեռք չբացնէ : Այս պնակը վարժուկէ խճողակ պիտի բլլայ , և խճողակն ալ սա մարդարիտներով պիտի լեցնես :» Եւ նոյն պահուն արկղիկը բացաւ և անոր ցոյց մարդարիտները :

Խոհարարայեան՝ որ երբէք այս տեսակ խճողակ լսած չէր , երկուքայլ ետին քալեց այնպիսի կերպարանք մը ցուցնելով որմէ իր միտքը կ'իմացուէր : Իշխանուհին անոր միտքը հասկցաւ և ըսաւ . «Աը նայիմ որ իս խնդրի տեղ կը գնես , վասն զի այնպիսի կերակուրի մ'անուն կը լսես զոր երբէք լսած չունիս և երբէք ալ չիտուած չէ : Ես գիտեմ որ այդպէս է , բայց խնդր չեմ , ու յատուկ խորհուրդ կը պատուիրեմ քեզ :

որ այս կերակուրն եփես : Գնն , շինէ շտիէ , բոլոր ձիգդ թափէ և արկղիկը հետդ տար . մնացած մարդարտով ետքէն բեր զայն , եթէ աւելնայ :» Խոհարարայեւոր պատասխան մը չտուաւ , տիկինն առաւ ու տարաւ : «Նոյն օրն իսկ , Փարիզատէ իշխանուհին պէտք եղած հրամանները տուաւ որպէս զի ամէն բան տեղիտեղ մաքուր պատրաստեն , թէ տան և թէ պարտիլին մէջ , որպէս զի ամենայն պատուով սուլթանն ընդունին :

Հետեւեալ օրն՝ երկու իշխաններն որսավայրը գացին , երբ Պարսկց շահն եկաւ : Սուլթանն որսորդութեան սկսաւ , և շարունակեց մինչև որ արևուն տասն՝ որ փոքր առ փոքր հորիզոնին կը մօտենար՝ գաղբերելու ստիպել զինքն : Այն ատեն՝ մինչդեռ Պահման իշխանը սուլթանին քով մնաց որ անոր ընկերանայ , Փէրվիկ իշխանն ալ խմբին զուխն անցաւ ճամբան ցոյց տալու համար . և երբ տան առջև հասաւ , ձին մարտկեց որպէս զի ինաց տայ Փարիզատէ իշխանուհուցն թէ սուլթանը գալու վրայ է : Բայց իշխանուհուցն սպասաւորներն արդէն իր հրամանաւ ճամբան զիտեր ու եկեր իմացուցեր էին սուլթանին գալուստն , և իշխանն ալ տեսաւ որ պատրաստ է վեհափառ հիւրն ընդունելու :

Սուլթանը հասաւ , և երբ բակը մտաւ և ձիէն վար իջաւ , Փարիզատէ իշխանուհին անոր ներկայացաւ և անոր սաքն ընկաւ . իսկ Պահման և Փէրվիկ իշխաններն որ ներկայ էին , ինաց տուին սուլթանին որ նա իրենց քոյրն է , և աղաչեցին որ Վարին վեհափառութեան մնաստացած յարգանքն ընդունի :

Սուլթանը ծռեցաւ որպէս զի իշխանուհին օրնէ վեր երեսուրտ , և զանի նկատելէն և անոր անխախտիկ զեղովութեան , շնորհքին , կերպարանին և ազնուութեան վրայ հիանալէն ետեւ՝ ըսաւ . «Եղբարք իրենց քրոջարժանի են , և քոյրն ալ եղբարց արժանի է , և արտաքին տեսքէն ներքին յատկութիւնները դատելով՝ այլ ևս չեմ զարմանար եթէ եղբարք չեն ուղեր առանց իրենց քրոջ հրամանին բան մ'ընելու . բայց քաջայոյս եմ զանի լաւ ևս ճանչել երբ բոլոր տունը տեղը պտտիմ :»

Այն ատեն իշխանուհին խօսեցաւ այսպէս . «Վեհափառ տէր , այս գեղի տուն մ'է , որ մեզի պէս մարդոց յարմար է , քանի որ աշխարհ

Handwritten note: արկղիկը

Հէս Հեռի կեանք մը կը վարենք . քաղքի մեծ տուներու հետ նմանութիւն մը չունի . նա մանաւանդ սուլթաններու բնակած փառաւոր պալատներու հետ :

— Ես բոլորովին քու խօսքիդ չեմ հաւատար այս մասին , ըստ սուլթանը քարեսիրաբար . իմ աչքովս տեսած բաներէս կը կասկածիմ ըսածիդ վրայ : Ես ինքս պիտի գտնեմ երբ ինքնին տեսնեմ . ուստի առջեւ ելիւր և ճամբան ցոյց տուր :»

Իշխանուհին սրահը մէկդի թողլով՝ սուլթանը սենեկէ սենեակ տըրտցոց , և սուլթանն ալ ուշի ուշով ամէն բան մանր քննելէն և զմայելէն ետն՝ «Իմ դեղանիս , ըստ Փարիզատէ իշխանուհւոյն , միթէ այս բնակարանս գիւղատուն կ'անուանես : Ամենէն մեծ ու աղոթ քաղաքները քիչ ատենէն անայի կը դառնային , եթէ ամէն գեղի տուները քուկինիդ նմանէին : Այլ ևս չեմ զարմանար եթէ այսչափ կ'ախորժիս անկից և քաղաքը կ'արհամարհես : Յոյց տուր ինձ պարտէզն ալ , հաւատար եմ որ տանդ յարմար է :»

Իշխանուհին սրբաբոյն վրայ նայող դուռ մը բացաւ , և ամենէն առաջ սուլթանին աչքին զարնողն եղաւ ոսկեջուր շատրուանն : Այս նորանշան տեսարանին վրայ զմայլելով՝ քիչ մ'ատեն դիտեց զայն , և ըստ .

«Ռեւակից է այս հրաշալի ջուրն՝ որ այնքան հաճելի է աչքի . ո՞ր է անոր աղբիւրն , և ի՞նչ արհեստով այսպիսի արտաքոյ կարգի շատրուան մը շինած ըլլան որուն նմանը չկայ կարծեմ աշխարհիս վրայ : Այս հրաշալիքը մօտէն տեսնել կ'ուզեմ :» Այս ըսելով սուլթանն առաջ անցաւ : Իշխանուհին անոր առջեւ ընկաւ և ներդաշնակ ծառին տնկուած տեղը տարաւ դանի :

Սուլթանը մօտենալուն՝ մինչև այն ատեն ըսած դաշնակէ տարբեր դաշնակ մը լսեց , կանկ առաւ և աչքովը փնտռեց երածիշններուն տեղն . և որովհետև մարդ չտեսաւ ոչ մօտ և ոչ հեռու , թէև զմայլելով կը լսէր խմբերը , «Գեղանիս , ըստ Փարիզատէ իշխանուհւոյն դառնալով , ո՞ր են ըսած նուագածուներս , միթէ երկրին տակն են թէ ոչ օդին մէջ անտեսանելի են : Քանի որ այսպիսի սիրուն և ընտիր ձայն ունին , անշուշտ աչքի տեսնուելով բան մը չեն կրուտներ , ընդ

հակառակն մեծ հաճոյք կրնան պատճառել :

— Ահ հափառ տէր , պատասխանեց իշխանուհին ժպտելով , ձեր ըսած խմբերը յորինողներն երածիշններ չեն , այլ առ ծառն է որ ձեր առջեւ կը դանտի , և եթէ կը հաճիք քանի մը քայլ ևս առնուլ , սաքարայտ պիտի փարատի , և ձայներն աւելի որոշ պիտի լսուին :

Սուլթանը յառաջ անցաւ , և խմբերդին անուշ ներդաշնակութեան վրայ այնքան զմայլեցաւ , որ լսելէն չէր կշտանար : Ահ ըջապէս յիշեց որ ոսկեգոյն ջուրն ալ մօտէն տեսնել պէտք է , ուստի լուսութիւնը խղելով ,

«Գեղանիս , շարունակեց նա , ըսէ ինձի , կ'աղաչեմ , միթէ այս սքանչելի ծառը դիպուածնիմ կը դանտի պարտիզին մէջ , միթէ ընծայ մ'ըրին քեզի և կամ հեռուոր երկրէ մը բերել տուիր : Անշուշտ հեռուէն եկած է . վասն զի եթէ այդպիսի բան մ'ըլլար , բնութեան հազար աղիւս բաներուն վրայ հետաքրքիր ըլլալով՝ անտարակոյս անոնց վրայ տեղեկութիւն պիտի ունենայի : Կ'նչ անուն ունի այն :

— Ահ հափառ տէր , պատասխանեց իշխանուհին , այս ծառին անունն է միայն երգող ծառ , այս երկրին մէջ չբուսնիր . երկար կ'ըլլայ եթէ պատմեմ ձեզ թէ ի՞նչ արկածով պարտիզիս մէջ կը դանտի : Այս պատմութիւնը վերաբերուածիւն ունի նաև խօսուին թուրքներն և ոսկեգոյն ջրին հետ , որ մի և նոյն ժամանակ մեր ձեռօքը հասան , և այն թուրքներն ալ կրնաք տեսնել ուղածիդ պէս դեղին ջուրը մօտէն դիտելէն ետև : Եթէ կը հաճիք պատրաստ եմ այս պատմութիւնը պատմել ձեզ երբ որսորդութեան յոգնութիւնն սուսուք , և հիմակ ալ այս տաքին նոր նեղութիւն մը կ'առնուք պարտէզը պարտելով :

— Գեղանիս , ըստ սուլթանը , քու ըսած նեղութիւնդ ո՞ր է չդիտեմ , քանի որ այս հրաշալի բաները տեսնելովս փոխարէն վարձք մը ստացած կ'ըլլամ . թերևս ես չեմ խորհիր որ քեզի նեղութիւն կը պատճառեմ : Ուրեմն կարճ անոյնիք և երթանք դեղին ջուրը մօտէն տեսնելու . նոյնպէս մեծ փափաք ունիմ խօսող թուրքներն ալ տեսնելու :»

Երբ սուլթանն ոսկեջուր շատրուանին մօտ հասաւ , երկայն ատեն ակնապիշ նայեցաւ անոր , որ հրաշալի երևոյթ մը կ'ընծայէր վեր ելնելով և վար իջնելովը : «Գեղանիս , լսիր թէ այս ջուրն աղբիւր մը

չունի և մտասկայ տեղէ մը չհասիր՝ դիտնին տակէն խողովակի մը միջոցաւ, դէժ կը բմբուռնեմ որ օտարոտի ջուր մ'է, երգող ծառին պէս :

— Ա. Ե. Տափառ տէր, վրայ բերաւ իշխանուհին, ձեր ըսածը ճշմարիտ է . և կրնաք հասկնալ որ ջուրը տեղէ մը չզար երբ նկատէք որ աւազանը միակտուր է, ուստի ոչ կողմնակի և ոչ տակէն կրնայ ջուր գալ, և այս ջրին հրաշալիքը սա է որ լոկ սրուակ մը անոր մէջ թափեցի, ինչպէս որ կը տեսնէք փրփրաց իրեն յատուկ մէկ զօրութեամբը :» Ա. Երջասպէս սուլ թանն աւազանէն հեռանալով ըստ . «Առաջին անգամուն համար այսչափ բաւական է . վասն զի միտք ունիմ սաէպ զարու : Հիմակ տար ցոյց տուր ինձ խօսող թուչունը :»

Մրահին մտենալու տանը՝ սուլ թանը ծառերուն վրայ անհամար թուչուններ տեսաւ որ իրենց յատուկ դայլայլ իկով օղբ կը հնչեցնէին : Հարցոյց թէ ինչն համար յատկապէս այն ծառին վրայ դադարեր են այն թուչունները, մինչդեռ միւս ծառերուն վրայ ոչ թուչուն տեսաւ և ոչ երգ լսեց : Ա. Ե. Տափառ տէր իմ, պատասխանեց իշխանուհին, վասն զի խօսող թուչունին ձայնակցելու համար ամէն կողմէ կգան : Ձեր վեհափառութիւնը կրնայ տեսնել այն թուչունը վանդակին մէջ՝ որ մանուկի քրահին մէկ պատուհանին վրայ դրուած է, և եթէ ուշադրութիւն ընէք, պիտի դիտէք որ միւս թուչուններէն, նոյն իսկ սոխակէն աւելի բարձր ու արցծառ ձայն մ'ունի :»

Սուլ թանը սրահը մտաւ, և որովհետեւ թուչունն իր երգը կը շարունակէր, «Իմ դերիս, ըստ իշխանուհին ձայնը բարձրացնելով, ահաւախի սուլ թանը, քու բարեգ. տուր անոր :» Թուչունն իսկոյն երգը դադարեցոյց և բոլոր միւս թուչուններն ալ նոյնն ըրին : «Բարի առաքեցար, սուլ թանս, ըստ նա . Սատուած լիուլի երջանկութիւն շնորհէ քեզ և օրերդ երկարէ :»

Որովհետեւ ճաշը պատրաստ էր թուչունին դանտած պատուհանին մօտ՝ սուլ թանը սեղանը նստելու ատեն՝ «Թուչուն, ըստ, շնորհակալ եմ քու բարեմաղթութեանդ համար, և մեծապէս ուրախ եմ տեսնելով ՚ի քեզ թուչուններու սուլ թանն և թաղաորը :»

Սուլ թանն որ իր առջև տեսաւ վարունդներու արնակը՝ զոր ըստ սուլ թանին լեցուած կարճէր, ձեռքն անոր երկնցոյց, և իր զարմանքը

մեծ եղաւ տեսնելով որ մարդարտով լեցուն էր : «Այս ինչ նորութիւն է, ըստ . ինչ կը նշանակէ մարդարտէ խճողակ մը . մարդարտը չուտուիր :» Երկու իշխաններուն և իշխանուհոյն երեսը կը նայէր և պատասխանի կ'պատէր, երբ թուչունն ընդմիջեց խօսքն ու ըստ .

«Տէր իմ, ինչն համար կը զարմանաք մարդարտէ խճողակին վրայ աչքովդ տեսնելով զայն, դուք որ դիւրաւ հաւատացիք որ ձեր կողակից սուլ թանուհին շուն մը, կատու մը և փայտի կտոր մը ծներ է : — Այն, հաւատացի, պատասխանեց սուլ թանը, վասն զի մանկաբարձ կիներն այսպէս ըսին : — Այն մանկաբարձ կիները, կրկնեց թուչունը, սուլ թանուհոյն քոյրերն էին, բայց անոր նախապատիւ ցոյց տուած սիրտդ և երջանկութեան նախանձող քոյրեր էին, և իրենց կատուութիւնը գոհ ընելու համար, Ձեր վեհափառութիւնը խարեցին : Իրենց յանցանքը պիտի խոստովանին եթէ հարց ու փորձի ենթարկին : Երկու եղբայրներն ու քոյրը՝ զոր կը տեսնէք, ահա քու գաւախներդ են, այս գաւախներդ դուրս նետեցին, բայց քու սրտտէղիքովդ վերաանուջը զանոնք առաւ մեծցոյց կրթեց մեծ ինամօք :»

Թուչունին խօսքը սուլ թանին միտքը բացաւ : «Թուչուն, գոչեց նա, դիւրաւ կը հաւատամ քու ըսած ճշմարտութեանդ : Անոնց համար զգացած զաղանի համակրութիւնս և գորովս արդէն կը յայտնէին ինձ որ իմ արիւնս են : Եկէք ուրեմն, գաւախներս, եկէք որ ձեզ համբուրեմ և իմ հայրական սիրոյս առաջին նշանները ձեզի յայտնեմ :» Սուլ թանն ոտք ելաւ, և երկու իշխաններն ու իշխանուհին համբուրեցին ետեւանոնց հետ յորդ արտասուք թափեց և ըստ .

«Այս բաւական չէ, իմ գաւախներս, պէտք է որ զիւրար ալ համբուրէք չէ թէ իբր իմ պարտիքաց վերատեսչին որդիքն, որուն յախտեան շնորհատարաւ պիտի մնամ ձեր կեանքը պահպանելուն, այլ իբր իմ որդիքս, Պարսից թաղաւորներէ սերած արքայազաններ, և հաւաստի եմ որ անոնց փառքը միշտ պիտի պահէք :»

Երբ երկու իշխաններն ու իշխանուհին նոր գոհունակութեամբ մը զիւրար համբուրեցին, ինչպէս որ սուլ թանը փափաքեր էր, սեղան նստան իրենց Տօրը հետ : Երբ կերակուրը շուտով լմնցուցին, «Չաւախներս, ըստ սուլ թանը, հիմակ իս ձեր հայրը կը ճանչէք, վարն

այ ձեր սուլթանուհի մայրը պիտի բերեմ ձեզ, զանի ընդունելու պատ-
րաստուեցէք:»

Սուլթանը ձի հեծաւ, և շտապաւ իր մայրաքաղաքը դարձաւ: Երբ
պալատը հասաւ, խնայն մեծ վէզիբը կանչեց և ասացրեց որ սուլ-
թանուհւոյն երկու քոյրերը դատաստանի կանչէ: Երկու քոյրերն ան-
միջապէս գացին բերին, զատ զատ հարց ու փորձ ըրին, իրենց յան-
ցանքը խոստովանեցան և մարմննին կտոր կտոր ընելու դատաւար-
տուեցան, և այս դատաստանն ու վճիռը հաղիւ թէ ժամուան մը մէջ
տեսնուեցաւ և դործադրուեցաւ:

Սակայն Խոսրով շահը բոլոր իր ներկայ պալատականներովը մեծ
մեկիթին դուռը դնաց հետի և ինքն անձամբ սուլթանուհին իր նեղ
բանաէն հանելէն ետե՛ ուր այնչափ տարիներ տառապեր էր, «Տի-
կին, ըսաւ լալաղին դրկելով զանի նոյն խակ այն ողորմելի վիճակին
մէջ, եկայ ներսով ինդրելու քեզ ըրած անբարութեանս համար, և
պէտք եղած հատուցումն ընել: Արդէն հատուցումը սկսաւ գարշելի
խաբէութեամբ զիս պատրոջները պատժելով, և յուսամոր նոյնը կա-
տարեալ եղած կըլլայ, երկու կատարուն իշխաններ և գեղանի ու
սիրուն իշխանուհի մը քեզի պարզե տալովս, որոնք քու և իմ զաւակ-
ներս են: Եկուր, և քեզ վայել աստիճանդ ելիր առօք փառօք:»

Այս հատուցումն անհամար բազմութեան առջևն եղաւ, վասն զի
անցած դարձածն ամէն կողմ տարածուելով՝ շատ մարդիկ վազեր հա-
սեր էին որ իրենց աչօք տեսնեն:

Հետեւեալ օրը կանուխ սուլթանն ու սուլթանուհին որ իր քծուծ և
սղալի հագուստը փոխելով փառաւոր և իրեն վայել զգեստ մը հաղեր
էր, բոլոր պալատականներով՝ երկու իշխաններուն և իշխանուհւոյն
բնակարանը գացին: Երբ հասան և վար իջան, սուլթանը սուլթանու-
հւոյն ներկայացուց Պահման և Փէրվիզ իշխաններն ու Փարիզատէ իշ-
խանուհին և անոր ըսաւ, «Տիկին, աւասիկ քու երկու իշխան զաւակ-
ներդ և իշխանուհի աղջիկդ, զանոնք համբուրե ինչ գորովով որ ես
համբուրեցի, թէ ինձ և թէ քեզի արժանի են:»

Այս սրտաշարժ գրկախառնութեանց ժամանակ սուստ առատ արտ-
ասքներ թափեցին ամէնքը՝ մանաւանդ սուլթանուհին, որ անչափ

կր ըստանաւոր երկու որդիքն ու աղջիկը համբուրելուն որոց համար
այնչափ արտասուք թափեր էր արդէն վշտաղին:

Երկու իշխանք և իշխանուհին սուլթանին, սուլթանուհւոյն և բո-
լոր պալատականաց համար փառաւոր հացիկերով մը պատրաստեր է-
ին: Սեղան նստան, և ճաշէն ետքը սուլթանը պարտեղ տարաւ սուլ-
թանուհին, և այն տեղ զցուց անոր ներդաշնակ ծառն ու դեղին ջրին
աղբորութիւնն: Իսկ թուչունն արդէն վանդակին մէջ տեսեր էր, և
սուլթանը ճաշի ժամանակ զայն շատ դովեր էր: Երբ ուրիշ տեսնելիք
բան մը չմնայ՝ սուլթանը ձին հեծաւ, Պահման իշխանն աջ՝ և Փէր-
վիզ իշխանը ձախ կողմն անցան, սուլթանուհին ալ՝ իշխանուհւոյն
հետ սուլթանին քովէն քալեց: Այս կարգով առջևէն ու ետեւէն
պալատական պաշտօնեաներ ըստ աստիճանի քալելով՝ մայրաքաղքին
ճամբան բռնեցին: Մտնելու ատեն՝ ժողովորդը խմբովին քաղքին
դռներէն դուրս ելաւ զանոնք դիմաւորելու, և ամենուն աչքն ոչ միայն
սուլթանուհւոյն վրայ սեւերած էր, և անոր ուրախութեան մասնակից
կըլլային, այլ նաև երկու իշխաններուն և իշխանուհւոյն վրայ, որոց
ցնծութեան աղաղակներով կը բարեկէին: Նոյնպէս ուշադիր կը նայե-
ին՝ Փարիզատէ իշխանուհւոյն առջևէն տարած վանդակով թուչունն
որուն երգին վրայ կը զմայլէին, և բոլոր միւս թուչունները կը հրապու-
րէր, այս թուչունները խօսուն թուչունին կը հետեւէին ծառերուն,
գաշտերուն, և տուներուն տանիքներուն և փողոցներուն վրայ դադա-
րելով:

Ա երջապէս Պահման և Փէրվիզ իշխանները՝ Փարիզատէ իշխանու-
հւոյն հետ այս շքեղութեամբ պալատը բերուեցան և իրկունն ալ մեծ
հանդէսներ և լուսաւորութիւններ եղան, թէ պալատին և թէ քաղ-
քին մէջ և շատ օրեր շարունակուեցան:

Հնդկաց սուլթանն իր կողակցին սուրյիշողութեան վրայ շարունակ
կը հիանար՝ որ ամէն գիշեր նոր նոր գուարձութիւն կը պատճառէր ի-
րեն զանազան վէպեր պատմելով:

Այս անմեղ զբօսանքով հաղար ու մէկ գիշերներ անցեր էին, որոնք



սուլթանին կանանց հաւատարմութեան դէմ ունեցած ծուռ կարծիքներն ալ շտկելու օգնէր էին . իր բարկութիւնն իջեր էր , Շէհէրազատի մեծ իմաստութեան նշանները տեսնելով համոզուել էր անոր արժանեաց վրայ . կը յիշէր թէ ինչ արիութեամբ իր կեանքը վտանգի մէջ դրեր էր կամովին , առանց վախճալու մահուանէ որուն սահմանուած ըլլալը գիտէր իրմէ առաջ սպաննուող կանանց պէս :

Այս նկատումներն և Շէհէրազատի ընտիր ընտիր յատկութիւնները տեսնելով՝ Շահրիար՝ Հնդկաց սուլթանն անոր կեանքը սյարգեց և ըստա . «Քաջ կը դիտեմ , սիրասուն Շէհէրազատ , որ փոքրիկ վէպերդ անսպառելի են . բաւական ատենէ վեր անոնցմով իս կը զուարճացնես . իմ զայրոյթս իջեցուցիր , և յօժարակամ կը ջնջեմ այն անգութ օրէնքը զոր հաստատել էի , և քեզի կեանքդ կը բաշխեմ , կ'ուզեմ որ բոլոր աղջկանց ազատարարուհին համարուիս , որոնք իմ արդար զայրոյթիս զոհ պիտի երթային :» Շէհէրազատ սուլթանին ուղբն ընկաւ , գորովանօք համբուրեց . եր խորին և անչափ երախտաղխտութեան նշանները ցոյց ապլով :

Մեծ վէպերը նոյն իսկ սուլթանին բերնէն լսեց այս ախորժելի ըստը . քիչ ատենէն բոլոր քաղքին և դաւառներուն մէջ տարածուեցաւ , և այս պատճառաւ Հնդկաստանի ամէն ժողովուրդները Շահրիար սուլթանին և իր սիրասուն կողակից Շէհէրազատին անբաւ գովեստ և օրհնութիւններ կը վատնէին :

Վ Ե Ր Զ Վ Ե Յ Ե Ր Ո Ր Գ Ե Ի Վ Ե Ր Զ Ի Ն Հ Ա Տ Ո Ր Ի

Յ Ա Ն Կ Ն Ի Ի Թ Ո Յ

Անաթոլ
Երես

Պատմութիւն Ալի Պասայի և զերիի մը ձեռօք սպաննուած քառսուն գործերու	5
Պատմութիւն Պաղտատի վաճառական Ալի Հօճայի	42
Միւթահար ձիուն պատմութիւնը	56
Պատմութիւն ԱՏմէտ իշխանին և Բարի-Պանու փերիին	93
Երկու քոյրերու որ իրենց փոքր քոյրէն կը նախանձին	155

ԲՈՒԿՆԻՆ
ԳՐԲԵՐ
651
700
4

«Ազգային գրադարան



NL0538632

«Ազգային գրադարան



NL0538631

«Ազգային գրադարան



NL0538630

«Ազգային գրադարան



NL0538629

«Ազգային գրադարան



NL0538628

«Ազգային գրադարան



NL0389782

73.359-
-73.364